

ՀԱՄԱՐԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ԲԱՐՍ ԹՈՒՂԼԱՃԻ

ԿՅԱՆՔԻ ԷՋԵՐ

ԵՐԵՎԱՆ - 2022



**Անուշ Հովհաննիսյան**  
Թուրքագետ: Ծնվել է  
1957թ. Լենինգրադում:  
Անուշ Հովհաննիսյանը  
համալսարանական և  
ասպիրանտական կրթու-  
թյունը ստացել է Լենին-  
գրադի (Ամսկտ Պետեր-  
բուրգ) պետական համալ-  
սարանի Արևելագիտու-  
թյան ֆակուլտետի բուրջա-  
գիտության բաժնում: Եւ-  
րոնի նաև Ռուսալայի  
համալսարանի (Գվեդիա)  
Խաղաղության և հակա-  
մարտությունների կարգա-  
կորման բաժնի դիպլոմ: ՀՀ  
ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտաշխա-  
տող է, ՀՀ ԳԱԱ Միջազգա-  
յին գիտակրթական կենտ-  
րոնի դասախոս: Հաճախ է  
հանդես գալիս հեռուստա-  
տեսային հաղորդումներում  
և պանելներում՝ մեկնաբա-  
նելով հայ-թուրքական  
խնդիրները: Անուշ Հով-  
հաննիսյանը մասնագի-  
տացած է 19-րդ դարի և  
ժամանակակից Թուրքիա-  
յի պատմության, ցեղա-  
սպանագիտության հար-  
ցերի մեջ: Ավելի քան 40  
ակադեմիական հրատա-  
րակումների, այդ թվում մի  
քանի մենագրությունների  
հեղինակ է:

*Գիրքը նվիրում եմ սիրելի եղբորս՝ մարենազիսր*  
**ԱՐՄԵՆ ԳԱՌՆԻԿԻ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ**

*հիշարակին:*

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СТЕПАНЯН АСМИК

**БАРС ТУХЛАДЖИ**  
(Барсех Тухладжян Pars Tuğlacı)  
*Жизнь и труды- Страницы жизни*

(1933-2016)

ЕРЕВАН 2022

016  
Մ-88  
հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

8958



**ԲԱՐՍ ԹՈՒՂԼԱԾԻ**  
(ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԼԱԾՅԱՆ. Pars Tuğlacı)  
*Կյանքն ու սրբեմնագործությունները*  
**ԿՅԱՆՔԻ ԷՋԵՐ**  
(1933-2016)

ԵՐԵՎԱՆ 2022



**Ստեփանյան Հ.**

ԲԱՐՍ ԹՈՒՂԱՆԺԻ (ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԱՆԺԻԱՆ, Pars Tuğlacı), ԿՅԱՆՔԻ ԷՋԵՐ (1933-2016)  
Կյանքն ու ստեղծագործությունները/

Բարս Թուղաճին (Pars Tuğlacı, Parseğ Tuğlacıyan, Բարսեղ Թուղաճյան) հայ, բուրբ, միջազգային գիտական շրջանակներին հայտնի է որպես բազադիկ հունճք ունեցած, հիմնականում բուրբագիր, անգլիագիր բառարանագիր-լեզվաբան, հանրագիտարանների հեղինակ, պատմաբան, մշակութաբան, քարգմանիչ, գրող, որի հրատարակությունները ներստում են նաև հեղինակի կատարած լուսամկառչական հարստ նյութը: Նրա հայ գրատարության, մշակութաբանական հանրագիտարանային ժառանգությունը մեծապես ծառայել է նաև արևմտահայության պատմության ուսումնասիրությանը:

Թուրքիայում ապրող, միջազգային ճանաչում ունեցող մեր ժամանակակից հայ գիտնականների գործունեության, մասնավորապես, Բարսեղ Թուղաճյանի արևելագիտական, հայագիտության ասպարեզում հրատարակությունների մասին սույն ուսումնասիրությունը կենտարբերի գիտական, համալսարանական լայն շրջանակներին:

ՀՏԳ՝ 93/99 (560):941(479.25)  
ԳՄԴ՝ 63.3 (5ՅԹո)+63.3 (2Հ)

ISBN 978-5-8084-1582-9

© Ստեփանյան Հ., 2022

**ԲՈՎԱՆԳՎԿՈՒԹՅՈՒՆ**

1. Հեղինակի կողմից .....	6
2. Ծագումը և կրթությունը.....	10
3. Բառարանագիրը և գիտնականը.....	14
4. Հայկական իրականության հետ կապված ուսումնասիրություններ .....	90
5. Գիտական և դիվանագիտական միջազգային հարթակներում.....	115
6. Բարսեղ Թուղաճյանի ստացած կարևորագույն պարգևները և կոչումները.....	122
7. Գիտական, հրատարակչական ժառանգությունը.....	128
8. Վերջաբանի փոխարեն .....	131





### ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄՑ

Բարս Թուղլաճին (Parseğ Tuğlacı, Parseğ Tuğlacıyan, Բարսեղ Թուղլաճյան) հայ, բուրք, միջազգային գիտական շրջանակներին հայտնի է որպես բացառիկ հունճք ունեցած, հիմնականում բուրքագիր, անգլիագիր բառարանագիր-լեզվաբան, հանրագիտարանների հեղինակ, պատմաբան, մշակութաբան, թարգմանիչ, գրող, որի հրատարակչությունները ներառում են նաև հեղինակի կատարած լուսանկարչական հարուստ նյութը: Նրա հայ գրատպության, մշակութաբանական ժառանգությունը մեծապես ծառայել է արևմտահայության պատմության ուսումնասիրությանը:

Բարս Թուղլաճին բախտ է ունեցել աշխատել արխիվային տարբեր՝ մասնավորապես օսմանյան, բուրքական նյութերի հետ (որն ամհասանելի է եղել մինչ այդ որևէ հայ գիտնականի), հնարավորինս ծանոթացել, հավաքել և օգտագործել պատմական, փաստական, լուսանկարչական հազվագյուտ վավերագրեր: Նա թողել է բարբերեցով, անզեղեցիկ, հայերենով գիտական հսկա ժառանգություն, որի արժեքը գնահատվել է աշխարհի տարբեր պետությունների գիտական հաստատությունների, համրախայտ ամձանց կողմից: Նա գեղուցումներով հանդես է եկել, իր գործերը ներկայացրել աշխարհի ամենաբազմազան համալսարանական, կենսագրական, ակադեմիական կենտրոններում, այդ թվում՝ հյուրընկալվել աշխարհասփյուռ հայ համայնքներում:

Բարս Թուղլաճիի գիտական ժառանգության ընդգրկած շրջանակը չափազանց ընդարձակ է՝ քաղաքական, պատմական երկեր, տնտեսագիտական, բուրբերեն-անգլերեն գիտական, բժշկական տարաբնույթ բառարաններ, կրթական, երաժշտագիտական, կինոյի, թատրոնի, տնտեսական, իրավաբանական, Ստամբուլի, շրջակա կղզիների մասին, Հայաստանի, Թուրքիայի պատմության տարբեր շրջանների, աշխարհագրությանը, մշակույթի տարբեր ասպարեզներին նվիրված պատկերազարդ ուսումնասիրություններ, նշանավոր մարդկանց կենսագրական հատոր-այրյուններ:

Ստեղծագործական կյանքի նման առատությունն ու բազմազանությունը երբեմն դժվարացնում է հետևել գիտնականի հրատարակությունների տրամաբանությանը: Նման պարագաներում հարկ է համադրել զրքի և նրա հրատարակության ժամանակահատվածում որևէ պատմական իրադարձության, միջազգային շրջանակներում Թուրքիայի պատմության հետ առնչվող որևէ երկրի, երևույթի հոբելյանական տարեթիվը, որին հարկ է եղել թուրքական կողմի արձագանքը, այն ըստ իր շահերի ներկայացնելու անհրաժեշտությունը: Այս առումով քաղաքական տեսանկյունից Թուրքիայի հայազան գիտնականի գրիչը կարող էր լավագույնս ծառայել նման միջամտությանը: Ասվածի լավագույն օրինակ կարելի է համարել 1984թ. Ստամբուլում լույս տեսած «Bulgaristan ve Türk-Bulgar İlişkileri» («Բուլղարիան և թուրք-բուլղար հարաբերությունները») գիրքը:

Նման պատվեր-ուսումնասիրությունների փաստը բնականորեն գիտնականի տուրքն է որպես բյրքահպատակ հայ «հայրենակցի»:

Հնդհանրապետ մեքե և՛ այս, և՛ այլ ուսումնասիրությունների ընթացքում առիթ ենք ունենում ականատես լինելու Թուրքիայում, մասնավորապես Ստամբուլում և Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող հայերի (որոնց մեծ մասը ցեղասպանության գոեերի իրական ժառանգողներն են հանդիսանում) լուռ, «հանդուրժող» կեցվածքին: Նրանք ներկայացվում են որպես այդ երկրի «հավասարազոր» իրավունքներով օժտված համերկրացիներ (vatandaşlar), որոնց երկրի պետական քաղաքականությունը հակադրում է սփյուռքահայությանը, իր քաղաքական և հասարակական կազմակերպություններով հանդերձ, որպես բջնամական և բջնամություն ներկրողների: Նմանատիպ վերաբերումը է նաև Հայաստանի ու նրա ժողովրդի նկատմամբ:

**2006թ.** Ստամբուլում, «Ege Basım» (Էգե Բասթմ) հրատարակչության կողմից լույս է ընծայվել վաշինգտոնաբնակ (ԱՄՆ) բեմադրիչ, գրող, նկարչուհի Հիլդա Էքմեքճյանի (Hilda Ekmeçciyan, Witherspoon Ուիթերսպուոն) հեղինակությամբ, 992 էջերից կազմված նկարազարդ շքեղ մի հատոր, նվիրված Բարսեղ Թուղլաճյանի 50-ամյա գործունեությանը: Կենսագրական այս հատորի հեղինակը Թուղլաճյանի «Պոլսի «Նոր դպրոցի» նախակրթարանի, մանկության ընկերուհին է, որոնց բարեկամությունը տարիների պատմություն ունի: Հանձնված ենք, որ Բարսեղ Թուղլաճյանի գործունեության 50 տարիներին նվիրված հատորը շարադրելիս հեղինակը ձեռքի տակ ունեցել է Բարսեղ Թուղլաճյանի օրագիր-ժամանակացույցը, որն ամենայն մանրամասնությամբ ներկայացրել է գիտնականի ողջ օրվա զբաղվածությունը, ամենատարբեր բնագավառի ներկայացուցիչների հետ հանդիպումները: Գրքի առավելագույն մասը կազմում է լուսանկարչական նյութը: Գիրքն աղեղուն է գիտնականի ամենատարբեր վկայականներով, դիպլոմներով, շնորհավորագրերով, նամակներով, անգամ իր աշխատած գրադարանների մուտքի անցագրերով: Թուրք մտավորականների մի մասի լուսանկարների հեղինակը Բարսեղ Թուղլաճյանի բարեկամ, այսօր աշխարհի լավագույն նկարչի համբավ ունեցող Արա Գյուլբեն է: Բազմաթիվ լուսանկարները, որոնց մի մասի հեղինակը Բարսեղ Թուղլաճյանն է, վերջինիս ճանապարհորդությունների, այցելությունների, հանդիպումների փաստերն են հանդիսանում: Դրանց մի մասն ուղղակի այցելած քաղաքների և հայտնի կառույցների լուսանկարներ են (Բարսեղ Թուղլաճյանի կամ առանց նրա, ինչ և նոր ժամանակների), որոնց մի գերակշիռ մասը գիտնականը սեփական գրքերում է նաև օգտագործել: Շատ են ինչ ու նոր փորագրանկարները, իսկ որն առավել կարևոր է՝ առանձին նշանավոր անձերի հետ նկարներն են: Բացի դրանից այդ նկարների կողքին տրվում են կենսագրական առանձին հոդվածներ նկարներում եղած անձանց, նրանց ստեղծագործությունների մասին, որոնք ևս, բնականաբար, կազմվել ու տրամադրվել են Բարսեղ Թուղլաճյանի կողմից: Հատուկ լիք մեզ անվտոմ է նաև Թուղլաճյանի գրքերի հրատարակությունների առթիվ լույս տեսած Թուրքիայի կենտրոնական պարբերականների աղբյուր, երկերի մասին եղած բուրք մտավորականության արձագանք-հոդվածները, գրքերի առաջա-

1 Ամերիկացու նկարչուհի և բուրքագիր պոլոյտսի, հեռուստասերթն: H.Ekmeçciyan, *Pars Tuğlacı'nın 50 Yıllık Çok Yönlü Faaliyet Kronolojisi*, İstanbul, Ege Basım, 2006. 991s., Ujumhban unbu' H.Ekmeçciyan, Pars...: էջ:

քանները, որոնք հիմնականում հեղինակին են, տարբեր հարցազրույցների տեքստեր: Բարսեղ Թուղլաճյանի ընտանեկան այրոմն ամենայն մանրամասնությամբ, ներկայացնում է գերդաստանի ծաղը, մերձավոր հարազատների մասին, նրանց նկարները, բոլոր հնարավոր դիպլոմներն ու այլ փաստաթղթեր, հոդվածներ: Գրքի առավելություններից է թուրքական պարբերականներում արևմտահայության մասին նրա գրած որոշ հոդվածների առկայությունը: Գիրքը շարադրված է ժամանակագրական կարգով:

Ն. Էքնընթացն իր առաջարանում գրում է, որ 1961թ. «İngilizce-Türkçe Deyimler Sözlüğü»-ն (Անգլերեն-թուրքերեն արտահայտությունների բառարան)<sup>2</sup> հրատարակելիս Բարսեղ Թուղլաճյանն իր անունը կրճատեց, դարձնելով «Բարս Թուղլաճի» (Pars Tuğlacı). Այստեղ նա միշտ այս անունով հանդես եկավ: Մենք էլ կհետևենք այս օրինակին, կօգտագործենք նաև այս անունը:

Կան պատմական վայրերի հին փորագրանկարների, փաստաթղթերի, գրքերի, լուսանկարներ: Հարկ կլինի կենսագրությանը նայել գիտական տեսանկյունից, հրատարակությունների մասին խոսելիս ընդգծել նրանց արժեքավոր կողմերը, տարբեր կարծիքներն այդ ուսումնասիրության մասին, հեղինակի ներդրումը տվյալ բնագավառի ուսումնասիրության մեջ:

Չմոռանանք ասել, որ հայկական և թուրքական մամուլում Բարս Թուղլաճիի հոդվածները (որոնց մի մասը ներառված է կենսագրական հատրում) չափազանց կարևոր են իրենց բեմատիկ ընտրությամբ, տվյալ հրատարակության նկատմամբ հայ և թուրք հասարակական ընկալման փաստով: Մենք հավասարապես նկատի ունենք թե՛ հայկական, և թե՛ թուրքական մթնոլորտին վերաբերող նյութերը, հայ և թուրք առանձին դեմքերի մասին հոդվածները: Շատ ափսոս, որ դրանք առանձին և ընդարձակ ուսումնասիրությունների չեն վերածվել: Մեծ մասը հաստոտ և հանրագիտարանային բնույթի են, ինչը բյուրոկրատի էլ չի նվազեցնում նրանց գիտական արժեքը: Ավելին, նրանց մի մասն իրենց բնագավառում առաջին անգամ վեր հանվող նյութեր են, հայտնագործություններ հայ և թուրք մշակութային պատմության համար: Դրանց վրա կարելի է հիմնվել, գիտական աշխատություններ գրել: Այս հոդվածները կարող են գիտնականներին ուղղորդել՝ գրավելու մինչ այդ քիչ արժարժված, սակայն կարևորություն ներկայացնող խնդիրներով: Իհարկե, լավագույն տարբերակը կլիներ կազմելու Բարսեղ Թուղլաճիի հայերեն և թուրքերեն հոդվածների ժողովածուները: Ցավոք սրտի Բարս Թուղլաճիի գրքերի և ուսումնասիրությունների՝ հիմնականում անգլերենով և թուրքերենով հրատարակված լինելու հանգամանքը խոչընդոտել է Հայաստանում, և մասնավորապես հայ գիտական հասարակայնությանը ծանոթ լինելուն նրա ժառանգությանը, այն մասսայականացնելուն, զնահատելուն:

Գալով Թուղլաճիի այն կարգախոսին, թե **Գրասեղանի առջև պապոմություն չես գրի**, մենք համաձայն չենք, ունենալով թեկուզ Դևոնը Ալիշանի օրինակը, որն ի թիվս այլ ստեղծագործությունների, պատմական Հայաստանի նահանգներին նվիրված պատմական, աշխարհագրական հանրագիտարանային գործերը շարունակում են անգզնահատելի աղբյուրներ հանդիսանալ մերօրյա հետազոտողների համար: Ալիշանն իր

գլոխգործոց երկերը ստեղծել է առանց մի քայլ հեռանալով գրասեղանից: Իհարկե, կարևոր է ուսումնասիրության բնույթը ևս:

Ափսոսում ենք, որ Հիլյա Էքնընթացի հրատարակած գրքի 992 էջերում բացակայում է գիրքը կազմողի հեղինակային խոսքը, վերաբերմունքը գիտնականի կամ նրա որևէ գործի մասին: Մեր այս գրքույկը նպատակ ունի նաև մասամբ լրացնել այդ բացը:

Հուսով ենք միջազգային ճանաչման այս ականավոր գիտնականի՝ բառարանագետի, հայագետի, թուրքագետի գործերին ծանոթացնել մեր հայրենակիցներին, արժանին մատուցելով նրա գիտական երկարամյա բեղմնավոր գործունեությանը:

Հասմիկ Ստեփանյան



2 Pars Tuğlacı, İngilizce-Türkçe Deyimler Sözlüğü, İstanbul, 1961.



**Գրասեղանի առջև պատմություն չես գրի  
Քարսեղ թողաճյաճ**

**ՃԱԳՈՒՄԸ ԵՎ ԿԻՓՈՒԹՅՈՒՆԸ**

Թողաճյաճանների գերդաստանը արժատներով մշեցի են, որտեղից էլ 300 տարի առաջ նախնիները գաղթել են Պոլիս և հաստատվել Մամաթիայում:

Հայրը Միքայել Թողաճյաճանը ծնվել է Պոլսում, Բարսեղ Թողաճյաճանի (1869-1927) և Նևեջիհանի (-1916) ընտանիքում:

Մեծ հայրը՝ Բարսեղը եղել է Բաղդատի երկաթուղու գլխավոր հյուսնը, եղել արմատաբար հղկող վարպետ, ինչպես և իր երկու եղբայրները:

Միքայել Թողաճյաճանը սովորել է Մամաթիայի «Մահակյան», ապա Ղալաթիայի «Կեղորմակյան» վարժարաններում: Հայերեն դասավանդել Մամաթիայի «Մահակյան-Վարդուռյան», Բանկալթրի «Նարգիզ» վարժարաններում: 1908-09թթ. Աշխատել է պոլսահայ «Արծիվ» շաբաթաթերթում, Մամաթիայի Ս. Գևորգ եկեղեցում կից 1908թ. հիմնել «Շողովուրդ» հայկական միությունը, եղել եկեղեցու «Երաժշտատեսների միության» երաժիշտներից: 1921թ. Մամաթիայի «Գարոցասիրաց» միության անդամ, իսկ 1922թ. ղեկավարել «Որբերու փրկության կենտրոնական մարմինը»: 1923թ. ամուսացել է: Կինը՝ Սարենիկ-Նվարդը 1915թ. Մեծ եղեռնի ժամանակ (Հ.Էթմեթյաճանը այդ ժամանակը բնութագրում է որպես «tehcir kanunu»-տեղահանության օրենք) կորցրել էր հորը և մնացել մոր հետ:

1927թ. Միքայել Թողաճյաճանը էմինոնյու թաղի «Չամբաջլար յորուշու և Ջուրբյուլ-լու» խանութ մասնաձագործական ֆաբրիկա է հիմնում: 1942թ. «Ունեցվածքի հարկ»-ի<sup>3</sup>

3 1942թ. նոյեմբերի 12-ին Թուրքիայում ընդունվում է «Ունեցվածքի հարկի» մասին օրենքը: Ստեղծվում էին համեմատաբար մեծ, որոնք պետք է որոշվին ոչ մուսուլման քնակչության բարեկեցության չափը, որպեսզի այն հարկատու համարվեր և 15 օրվա ընթացքում վճարեր հաստատված գումարը, այդպես մեկ ամսվա ընթացքում վաճառքի ենթակա էր դառնում հարկատուի ունեցվածքը, իսկ այդպիսի անձը արտոզում էր Աշքալե, Միլիթիիսար: Հարվածի տակ էին հայ և հույն քնակչությունը: Ֆինանսների նախարարության պահանջով գույակներում մուսուլման քնակչությունը նշվում էր Մ, իսկ ոչ մուսուլմանները՝ Տ առտով: Հայտարարվող ընտանիքներ, որոնք կորցրել էին իրենց ունեցվածքը և շարունակում էին ապրել իրենց սեփական տներում՝ ստիպված էին այն ևս լքել, տեղափոխվել, գաղթել արտասահման: Այսպեսով, Պոլսի հայաշատ որոշ թաղեր համարյա զրկվեցին իրենց հայ քնակչությունից: Դրանք հիմնականում Բոսֆորի ծովափյայա շրջել շրջաններն էին, ուր ժամանակին հայ ուները խլակ էր ապրում: Այսպես օրինակ, Թալաթիայի, Ենի գյուղի ծովահայաց ճեղքակ վայրի երեսնասպատված 3-5 հարկանի գեղեցիկ առանձնատները հիմնականում հրածնա տվեցին իրենց հայ տերերին: Այնի շրջանները դարձան կառավարական պատվանդության շենքեր և մեծ մասում հաստատվեց թուրք հարուստ և քարձր պաշտոնյա խավը: Ենի գյուղի խոշոր առանձնատներից մեկում այժմ նախկին վարչապետ Թամար Չիլերը է ապրում: Թուրքական կառավարության այս հերթական հարվածը ողբերգական հետևանքներ ունեցավ պոլսահայ

ժամանակ ընտանիքը կորցնում է ողջ ունեցվածքը և Բարսեղի հայրը՝ Միքայել Թողաճյաճանը հազիվ է փրկվում՝ Աշքալե արտոբկուց: Նրանց ընտանիքի (Միքայել և Սարենիկ-Նվարդ Թողաճյաճանների) համար կարևոր իրադարձություն է դառնում պատրիարքական տեղապահ Գևորգ արք. Արվանյանի գլխավորությամբ պոլսահայ հոգևոր և աշխարհական պատվիրակության հետ 1945թ. մեկնումը ս.Էջմիածին և մասնակցությունը Գևորգ Չ Զորեթյան Ամենայն Հայոց կաթողիկոսի (1945-1954) ընտրությանը:

\*\*\*

Բարսեղ Թողաճյաճանը (1 ապրիլ 1933, Պոլիս – 13 դեկտեմբեր 2016, Պոլիս) ծնվել է Պոլսի Մամաթիա հայաշատ թաղում՝ Միքայել(1892-1970) և Սարենիկ-Նվարդ(1903-) Թողաճյաճանների ընտանիքում: Միակ զավակն է եղել: Մամաթիայի Ս.Գևորգ եկեղեցում նրան մկրտել և Բարսեղ են անվանել ի պատիվ մեծ հոր:

Մեկ տարի սովորել է Բանկալթրի Միքաթյան նախակրթարանում, ապա՝ առաջին և երկրորդ դասարանները սովորել (1939-41թթ) Օսմանբեյի և Նշանբաշի միջև գտնվող Բեզազյան դպրոցում: 1942-45թթ. սովորել է ճշանավոր մանկավարժ, հրատարակիչ, գրող Հովհաննես Հինդլյանի (1866-1950) Օսմանբեյ թաղում հիմնադրած հայտնի «Նոր դպրոցում»:

Հայտնի մտավորական, գրող, բարգձմանիչ, Պերպերյան դպրոցների հիմնադիր, «սերնդակերտ» ուսուցչապետ Ռեթես Պերպերյանի (1848-1907) այս աշակերտը շրջագայել էր եվրոպական երկրներում, մասնավորապես Լոզանում (Շվեյցարիա) և Փարիզում, ծանոթացել դպրոցական կրթական համակարգին, ուսումնասիրել մանկավարժության պատմություն, տեսություն, հանդիպել հայտնի մանկավարժների հետ, ծանոթացել նրանց փորձին, առաջադիմական գաղափարներին և Պոլիս վերադարձին՝ 1909թ. հիմնադրել «Նոր դպրոցը»: Այն երևույթ էր պոլսահայ դպրոցների պատմության մեջ:

1945թ. Բարսեղն ավարտում է Օսմանբեյում գտնվող հինդլյանական դպրոցը և 1946-1951թթ. ուսումնառության մեկնում Կիպրոսի «Մելքոնյան վարժարան»<sup>4</sup>: Ու-

համայնի համար: Հասերը լրեցին երկիրը, համայնը նույնպես, իր քաջասկան ազդեցությունը բողոքելով տնտեսական, մաս դպրոցական, բարեխրական, մշակութային, հասարակական կազմակերպությունների գործունեության վրա: «Ունեցվածքի հարկը» կատարեց իր քաղաքական հետահայաց հերթական «առաքելությունը»: Հայերի մի մասը զրկվեց իր ապրուստից, սարկու վայրի և բողեց երկիրը սցեներով ողջ պոլսահայությանը: Մեծ սնան էր համայնքի ողջնալար կտրուկում: 1943թ. «Նյու Յորք Թայմս» թերթում այս հարկահամոզմունքը քննադատող կիրա Սուլցբերգերի հոդվածից հետո (13 սեպտ.), օրենքը վերանայվեց 1944թ. մարտի 15-ին, ողջ հարկեր կատեցվեցին և արտոբկաններ կենդանի մնացած մասն էլ Աշքալայի և Միլիթիիսարի 10 անաչա արտոբից հետո տուն վերադարձան:

4 Մելքոնյան կրթական հաստատությունը հիմնադրվել է 1926թ. Գրիգոր և Կարակոբ Մելքոնյան եղբայրների կողմից Նիկոմիայում (Կիպրոս), որպես մանկատուն, ապաստան տրամադրելով Հայոց գեղասպանության ճաղարավոր գոհերը: Երբ մեկ դար այս դպրոցում են դաստիարակվել 40 երկրներից ժամանած հայ աշակերտներ: Այդ դարձել է հայ սփյուռքի ամենահայտնի և կրթական բարձր որակ ունեցած դպրոցը, ուր սովորել են հազարավոր հայ երեսնաներ, որոնք էլ իրենց հերթին մեծ նեղություն են ունեցել հայ սփյուռքում մշակույթի, կրթության, գիտության, լեզվի ու նազային ինքնության գաղափարները որոշողները, շնորհիվ ուսուցիչների նմիքյանների կազմի փոփո: 2014թ. մարտի 16-ին Հայկական Բարեփոխման Ընդհանուր Միությունը ինչ-ինչ պատճառներով

սումնատուրյան տարիներին նա աչքի է ընկնում իր ջանասիրտյանը և նույնիսկ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության «Յուշարար» պաշտոնաթերթի անգլերեն տարբերակում<sup>5</sup> (մարտ, հ.3, 1952թ.) Կարապետ և Գրիգոր Մելքոնյան եղբայրների մասին հոդվածում, վերջիններին նկարի կողքին տեսնում ենք Բարսեղ Թուղաճյանի և դասընկերոջ լուսանկարը՝ որպես լավագույն աշակերտների:

«Մելքոնյան» կրթական հաստատությունում Բարսեղ Թուղաճյանը իրեն լավագույնս դրսևորած աշակերտների թվում է եղել: Նա տարեկան իր հաշվետու-նամակներն էր ուղարկում Թուրքիո Հայոց Պատրիարքարան, որտեղից էլ ստանում էր նրա ջանասիրտյունը գնահատող պատասխանները՝ ստորագրված Թուրքիայի Հայոց պատրիարքական տեղապահ Գևորգ արք. Ասլանյանի կողմից: Բարսեղը մեծ ոգևորությամբ մասնակցում է դպրոցական բոլոր իրադարձություններին, այդ թվում նաև երաժշտական, թատերական, մարզական (այդ են հուշում նաև նրա դպրոցական շրջանին վերաբերող լուսանկարչական հարուստ նյութը): Տպավորիչ են աարբեր առիթներով Բարսեղի շնորհավորական նամակներին ի պատասխան պոլսահայ իր նախկին ուսուցիչների, դպրոցի տնօրենների (Հովհ. Հինդյանի) նամակները, պատրիարքական տեղապահ Գևորգ արք. Ասլանյանի հայրական հոգածությամբ ուղերձները, որոնք ապացույց են հեռվում գտնվող իրենց պատանի սանի նկատմամբ հետևողական ջերմ ուշադրության ու շահագրգիռ վերաբերմունքի: Լեզվական ակնհայտ հաջողությունները գրավում են ուսուցիչների ուշադրությունը: Նրան անվանում են «հետաքրքիր երևույթ», որը պիտի զարմացնեի շատերին: Դպրոցի լեզվի ուսուցիչներից մեկը մի առիթով գրում է նրա լեզվական ֆինոմեննալ ընդունակությունների մասին: Դեռևս սովորելու շրջանում Բարսեղ Թուղաճյանը թարգմանություններ է կատարում անգլերենից, ֆրանսերենից և հրատարակում դրանք հիմնականում պոլսահայ պարբերականներում:

Մելքոնյան կրթական հաստատության կողմից տրված վկայականում (1 հուլիս 1950թ., հայերեն և անգլերեն լեզուներով) գրված է, որ ավարտելով «...ճեմարանը և վարժապետանոցի երկամյա շրջանը, հաջողությամբ անցնելով պահանջված քննությունները և արժանանալով վկայականի», նրան իրավունք է տրվում ուսուցչական պաշտոն վարել հայկական նախալրբարաններում:

1951թ. Պոլսի «Նոր Լուր» թերթում լույս է տեսնում Շեքսպիրի «As you wish»-ի անգլերենից հայերեն կատարած Բարսեղ Թուղաճյանի թարգմանությունը՝ «Հանաճայն իժմիդ» վերնագրով<sup>6</sup>: Նրա հաջորդ թարգմանությունը ֆրանսերենից է Պոտապեր Մերիմեի «Կարմեն»-ը<sup>7</sup>: Պատանի Բարսեղ Թուղաճյանը արդեն ճանաչված էր և համակրանք էր վայելում պոլսահայ համայնքում: Պահպանվել է Պոլսո պատրիարքական երկակի տեղապահ եղած (1923-1927թթ. և 1944-1950թթ.) արքեպիսկոպոս Գևորգ Ասլանյանի (1876-1951) մահվան թափոթի լուսանկարը, ուր Բարսեղ Թուղաճյանը թափոթի աջեից տանում է մեր եկեղեցու քարձրագույն պարզևը՝ Ս.Գրիգոր Լուսավորչի

նշանով գույգ խաչերը: Գևորգ Ասլանյանը ժամանակին հիմնադրել էր Պոլսո Պալատ Բաղի և Բեզազյան դպրոցները, իսկ Բարսեղ Թուղաճյանը վերջինիս աշակերտներից էր եղել և Կիպրոսում կրթության տարիներին միշտ նամակագրական կապ ունեցել արք. Գևորգ Ասլանյանի հետ, տեղյակ պահելով իր ուսումնատուրյան ընթացքին: 1951թ. սեպտեմբերին Հայ Բարեգործական Միության կողմից Բարսեղ Թուղաճյանը Կիպրոսից մեկնում է ԱՄՆ, Ան-Էրբորում գտնվող Միչիգանի համալսարան՝ անգլերեն լեզու և գրականություն ուսանելու: 1955թ. ավարտում է Միչիգանի համալսարանի «Անգլերեն լեզվի ինստիտուտը», ստանում անգլերենի մասնագետի վկայական:



որոշում կայացրեց վաակելու դպրոցը...

5 Յուշարար, մարտ, հ.3, 1952թ.

6 Նոր Լուր օրաթերթ, Ստամբուլ, 20-22.07.1951թ.

7 Ժամանակ օրաթերթ, Ստամբուլ, 1953-54թթ. տպագրվել է որպես թերթում:



### ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐԸ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆԸ

ԱՄՆ-ից վերադառնալով Ստամբուլ, **1955-57թթ.** Բարսեղ Թուղլաճյանը ծառայության է մեկնում Անկարա, Մամարի զինվորական դպրոց (Ankara Mamak Muhabere Okulu): Բարսեղի համար ճակատագրական է լինում օրերից մի օր դպրոցում «Գյուլ-հանեյի զինվորական բժշկական Ակադեմիայի» գլխավոր բժշկի, հիգիենայի պրոֆեսոր, գեներալ Իբրահիմ Շեվկի Աբասադունի (İbrahim Şevki Atasagun) հետ հանդիպումը, որի վրա հայ երիտասարդը լավ տպավորություն է գործում: Որոշվում է, որ զինվորական ծառայությանը զուգահեռ Բարսեղ Թուղլաճյանը սկսի հաճախել «Գյուլհանեյի զինվորական բժշկական Ակադեմիան», նրա անգլերեն բաժինը, ուր Իբրահիմ Շեվկի Աբասադունի և Ստամբուլի Ջինվորական Բժշկական համալսարանի պրոֆեսորներ Ֆահրեթթին Քերիմ Գյոթայի և Էրբեմ Շերիֆ Էգեկի (Fahrettin Kerim Gökyay, Ekrem Şerif Egeci) հովանավորությամբ ձեռնարկում է «Անգլերեն-թուրքերեն բժշկական բարարանի» պատրաստմանը:

Միաժամանակ նա անգլերենից և ֆրանսերենից բարձրագույնություններ է կատարում Ստամբուլի «Նոր Լուր» երկօրյա և «Ժամանակ» հայկական օրաթերթի համար:

**1957-61թթ.** Բարսեղ Թուղլաճյանը Պոլսում անգլերեն է դասավանդում Կեդրոնական վարժարանում, ֆրանսիական «Սեն Մըշեյ» և Շիշլիի «Թյուրք Թեռաքը» լիցեյներում:

**1961թ.** հրատարակված բժշկական տերմինների բառարանի տիտղոսաթերթին առաջին անգամ տեսնում ենք հեղինակի **Pars Tuglacı (Բարս Թուղլաճյանի)** կրճատված «նոր ամունք»<sup>8</sup>: Բառարանը 50 000 տերմին է ընդգրկել և մեծ ընդունելություն գտել: Այն լույս է տեսնում նշանավոր թուրք քաղաքական գործիչ, գրող Հալիդե Էղիզի Աղլվարի (1884-1964)<sup>9</sup>



8 Pars Tuglacı. İngilizce Türkçe Tabirler Lügati, İstanbul, 1961. Այս առիվի թուրք բժշկագիտության հեղինակավոր մի քանի պրոֆեսորների կողմից բառարանն արժանորդ հովանավոր են հրատարակվել թուրքական մամուլում. (Ahmet Uysal. İngilizce-Türkçe İdiomlar Lügati, Son Çağ dergisi, Ankara, 1963, N 14, s.35). Ստամբուլի համալսարանի բժշկական ֆակուլտետի ղեկավար պրոֆ. Էրբեմ Շերիֆ Էգեկին (Ekrem Şerif Egeci) և հաճախ է եկել բառարանի առիվի իր մտածումներով, ինչպես նաև գրող, քաղաքական գործիչ Հալիդե Էղիզի Աղլվար (Halide Edib Adivar): Steu H.Ekmekciyan, Pars... էջ 59) և շատ ու շատ ուրիշներ: Գիտնականը իր ողջ կյանքի ընթացքում հաճախ եկավ միայն այս ամվանք և երբեք որպես Բարսեղ Թուղլաճյան:

9 Հալիդե Էղիզի տալյան Արդուսիմի Բ-ի քաղաքացի դուստրն է եղել: Ստացել է ընտանեկան

և բժիշկ-պրոֆեսոր Վահիդ Թուրխանի (Halide Edib Adivar, Vahit Turhan) առաջնորդող հողվածներով: Թուրքիայի Ազգային կրթության նախարարության որոշմամբ խորհուրդ է տրվում բառարանը ներառել երկրի բժշկական բարձրագույն հաստատությունների ուսուցման մեջ:

Թուրքական իրականության մեջ որպես առաջին բժշկական բառարան հիշվում է 1910թ. Կահիրեյում լույս տեսած Շերաֆեդդին Մաղումիի (Dr. Şerafeddin Mağmumi) «Ֆրանսերեն-թուրքերեն բժշկական բառարանը»<sup>10</sup>. Բնականաբար այն օսմաներնով էր արտահայտված և հեռու էր լիարժեք կերպով իր նպատակին ծառայելուց: Իհարկե, լատինատառ թուրքերենով տպագրված բառարանը անհամեմատ մեծ է իր օգտագործման շրջանակով: Լատինատառ թուրքերենի մյուս առավելությունը կարելի է համարել հսկա բառացանցը, որը պայմանավորված էր անգլերեն կամ ֆրանսերենով բառարանների արտահայտած հիմնական բառացանկով:

Բարս Թուղլաճյանի կարևոր ներդրումը բժշկագիտության այս բնագավառում պետք է համարել եվրոպական բառացանկին համարժեք թուրքերեն բառանյութի ստեղծումը: Այն ներառում է օսմաներեն, արաբա-պարսկական բժշկական բառերից բացի նոր հա-

լավագույն կրթություն, ինչպես ընդունված է եղել բարձրաշխարհի ընտանիքներում: Տիրապետել է անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, հունարեն լեզուներին: Հաճախ է Ստամբուլի «Ամերիկյան աղջկանց վարժարան»-ը: Այտովորեն մասնակցել է Ստամբուլի ինտելեկտուալ կյանքին, գրագիտել կամանց իրավունքների պաշտպանության խնդիրներով: Կատարվել է Ստամբուլի համալսարանում, հարկն ազգայնական գաղափարների, տարվել գրող, սոցիոլոգ և քաղաքական գործիչ, պանթյուրիզմի և պանթոթեանիզմի գաղափարախոս Ջիյա Գյոթայի (Ziya Gökalp, 1876-1924) գաղափարներով: Եղել է Ազգային Մեծ ժողովի անդամ: Հալիդե Էղիզի կողմն էր արտահասնամոտ ներկայացնել մայալ ու կրթյալ Թուրքիան, մարդու իրավունքների, կամանց ազատության գաղափարների կողմն ժամանակակից իր երկիրը:

Մեծ Եղեռնի տարիներին ցեղասպանության կրեք դահիճներից Ջենալ փաշայի հրահանգով նա գրադվել է հայ որբերի խնդիրներով, որբանոցներով: Հակառակ իր պնդումներին, Ամբուրի որբանոցում իրապես գրադվել է հայ, քուրդ որբերի իսլամացմանը: Այնպես դաժանագրամ պատվում էին որան հակառակվող կամոայք և երկխոսներ, հայերեն խոսողները: Ինչպե՛ս կարելի է մեղադրել-Աբաթուրքին սիրահարված մի գրագիտ տղվանը, որը պիտի դրոշակ դարձնե Աբաթուրքի «Անառողիան մարտե քրիստոնեաների կամ հավատափոխություն, կամ սպանել» խոսքերը և «հայերը պիտի ստրուկի վիճակում ապրեն» կարգադրությունը: Որոշ տեղեկությունների համաձայն, որոնց հեղինակները հիմնականում պատմաբաններ են, որբանոցների աներիկացի միտուներ-հոգևորականներ, մարդու իրավունքների ռասեանախողներ, լրագրողներ, աներիկյան Կարմիր խաչի սպա, իրենց հուշերում և հողվածներում վկայել են Հալիդե Էղիզի հայալոգ պերսոնալիզմի մասին, անկախ «արյունոտ ներդրումների մասին» նրա հասարակադրոնի արտահասնամոտ «ցավակցական վերաբերմունքի»: Հալիդե Էղիզը 1918թ. «Fakat» օրաթերթում (21 հոկտ.) տպագրված իր հողվածում մեղադրել է հայերի մասսայական ջարդերը. «...Մենք սրի մայրենիքը անճեմ հայ քնակալությանը... Մենք վորձեցիք միջնադարյան մերոններով ոչնչացնել հայերին»:

Համաձայն որոշ տեղեկությունների, նրա շնորհիվ է Կոմիտասը ետ կանգնել արտրից: Մինչ այդ նա դասավանդում էր Հալիդե Էղիզի տանը: Վերադարձին, համոլիաման ժամանակ Տիլիքը խնդրում է մի քան երգել: Կոմիտասը երգում է անմահությունը մի առնու: Հալիդե Էղիզն իր վեպերում հանդես էր գալիս որպես ակնհայտ պանթուրիստ, թուրքանիզմի գաղափարների պաշտպան: Նա «Նոր Թուրան» վեպում երազում էր Կենտրոնական Ասիայի և Կովկասի բյուրքական ժողովուրդների համախմբումը Թուրքիայի գլխավորությամբ: 1926թ., երբ նրան և իր կողմնակիցներին մեղադրեցին պետական դավաճանության մեջ, նա տախրված փախավ Եվրոպա, շրջագայում և դասախոսություններ էր կարդում Ֆրանսիայում, Ամերիկայում, Հնդկաստանում: 1939թ. վերադառնալով Թուրքիա, նա Ստամբուլի համալսարաններում անգլիական գրականություն է դասավանդում: 1950թ. ընտրվում է Մաջլիսի անդամ:

10 Dr.Cherafeddin Magmouny. Dictionnaire Encyclopedique Medical Français-Turc. Le Caire, 1910.


մարտեքների ստեղծումը բուրբակյան բառակազմական գործառույթում: Դրանք մեծ մասը ֆրանսերեն, անգլերեն, լատիներեն տերմինների փոխառություններն ու դրանց ներդրումն է նոր բուրբերենում, նրա լեզվական, բառակազմական մշակություն:

**1964թ.** լույս է տեսնում բուրբակյան բժշկագիտության համար կարևոր ներդրում հանդիսացող հաջորդ քառաբանը: Այն է՝ «Անգլերեն-լատիներեն-բուրբերեն բժշկական քառաբան»<sup>11</sup>: Թուրքիայի բժշկական հանրության ամենահայտնի, շուրջ երկու տասնյակից ավել դեմքեր, այդ բլումն մահ Առողջապահության նախարար պրոֆ. Յահիեթթին Քերիմ Գյուրայը (Fahrettin Kerim Gökyay, 1900-1967) իրենց դրական կարծիքներով հանդես են գալիս երկրի կարևորագույն պարբերականներում, տարբեր հարցազրույցներում: Նախարարը այս քառաբանի առիվ իր «մտորումներում» խոստովանում է, որ մինչ այդ համարյա չեն ունեցել նման քառաբան, շնաչված Եբրահիմյան Մաղմումի օսմաներենով քառաբանը, որը դժվար օգտագործելի է եղել նաև իր արաբերեն տերմինների պատճառով: Այն չի կարողացել համարժեք արտահայտել հիվանդությունների արևմտյան և բուրբերեն անվանումները, ստեղծելով խառնաշփոթ: Եվ ահա Բարս Թուրլաճիի քառաբանը միանգամայն նոր վիճակ է ստեղծում բժշկությանը զբաղվողների համար: Լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն բժշկական տերմինները բացատրվում են պարզ, բուրբերեն համարժեքներով, շնորհիվ փոխառությունների, բառաստեղծ ջանքերի: Ի վերջո այս քառաբանը հնարավոր է դարձնում ավելի դյուրությամբ օգտվել եվրոպական մասնագիտական գրականությունից, քանզի բժշկական տերմինների համար սեղանի վրա է նոր, ընդունելի, հասկանալի, հարուստ բառազանկով բուրբերեն քառաբան: Բառարանների անգլերեն-բուրբերեն, բուրբերեն-անգլերեն հրատարակությունների համար հիմնականում հիմք են հանդիսացել ամերիկացի լեզվաբան և քառաբանագիր Noah Webster-ի երեք քառաբաները՝ *A Dictionary of the English Language* (Մասաչուսեթս, 1877) և *An American Dictionary of the English Language* (1879) և 1877թ. Պոլսի հայկական Ա.Վ. Պոլսյանցի ստվարանում լույս տեսած *A Lexicon English and Turkish*-ը:

Թուրլաճիի քառաբանների հրատարակությունը որպես երևույթ է ընկալվում: Հաջողություն այնքան մեծ էր, որ քառաբանները երկու տարվա ընթացքում 2-3 վերահրատարակություն են ունենում:

Բարս Թուրլաճին ընտրվում է Ստամբուլ-Ջադալոլու, Նուրի Օսմանյե պողոտայում գտնվող «Թուրք հրատարակչական միության» անդամ: Նույն, 1964թ. բժշկագիտության ասպարեզում նկատելի ներդրման համար Անկարայում մա ընդունելության է արժանանում ժամանակի հանրապետության նախագահ Իսմեթ Ինյունյուլի (İsmet

İnönü, 1884 - 1973) կողմից: Այս հանդիպումը առաջինն էր, որին հաջորդել են բարձր մակարդակի ընդունելությունները Թուրքիայի համարյա բոլոր նախագահների ու վարչապետների մոտ:



8539

**1965թ.** Պոլսում հրատարակվում է *«Türkçede Anlamdaş ve Karşıt Kelimeler Sözlüğü»* (Թուրքերենում հոմանիշ և հակահիշ բառերի քառաբան)<sup>12</sup>: Առջևում ամենատարբեր դրսոների քառաբանների հրատարակությունն էր: Եվ այդ սկսա առաքելությունն իր վրա էր վերցրել Բարս Թուրլաճին:

Հաջորդ **1966** թ. լույս են ընծայվում ևս երեք քառաբաններ՝ *«Büyük Türkçe-Fransızca sözlük»* (Թուրք-ֆրանսերեն մեծ քառաբան)<sup>13</sup>, նկարագրող *«Büyük Türkçe-İngilizce Sözlük»*<sup>14</sup> (Թուրք-անգլերեն մեծ քառաբան)<sup>15</sup>, *«İngilizce-Türkçe İktisadi ve Hukuki Terimler Sözlük»* (Տնտեսական և իրավագիտական տերմինների անգլերեն-բուրբերեն քառաբան)<sup>16</sup>: Տարբեր լեզուներով քառաբանների

հրատարակության առիվ թուրք բժշկական ընտրանիի հեղինակին ողջունող գրախոսականների են միանում Թուրքիայի տարբեր համալսարանների ռեկտորներ, լեզվի և գրականության, իրավական գիտությունների ճանաչված մասնագետներ: Նրանք հայ քառաբանագիրն համարում են 19-րդ դարի վերջին տասնամյակներում, Թահզիմարի շրջանի ակնհայտոր մտավորական-լուսավորիչների, բառարանագիտության մեջ մեծ ներդրում ունեցած Շամսեդդին Սամիի<sup>17</sup>, ( Şemseddin Sami Frasçeri, 1850-1904), Ահ-

12 Pars Tuglacı. *Türkçede Anlamdaş ve Karşıt Kelimeler Sözlüğü*. İstanbul, 1965, Թ.պու 1967.  
13 Pars Tuglacı. *Büyük Türkçe-Fransızca sözlük*. İst., 1966  
14 Pars Tuglacı. *Büyük Türkçe-İngilizce Sözlük*. İst., 1966  
15 Pars Tuglacı. *A Turkish-English Comprehensive Dictionary*. İst., 1966  
16 Pars Tuglacı. *İngilizce- Türkçe İktisadi ve Hukuki Terimler Sözlük*. İst., 1966  
17 Շամսեդդին Սամիի 1885թ. «*Թուրքերեն-ֆրանսերեն քառաբան*» (Sh. Samy Bey Frasçery, Dictionnaire Turc-Français, Constantinople, Editeur Imprimerie: Mithran, 1885), քննականաբար օսմաներնով, լույս է տեսել Պոլսում, հրատարակիչ, տպագրամատեր Սիիրանի մոտ:





մեղ Վեֆիկ Փաշայի, Ալի Սեյդիլերի (Ahmed Vefik Paşa, 1823-1891, Ali Seydiler) գործի հետևորդը: Փաստորեն համալսարանական, գիտական, լրագրողական ողջ քանակը միաձայն ողջունում է և շարունակում են ողջունել Բարսեղ Թուղլաճյանի յուրաքանչյուր նոր բառարանի տպագրությունը:

Բարս Թուղլաճին արդեն բավականին հայտնի անձնավորություն էր բուրբական գիտական և համալսարանական շրջանակներում և որպես բառարանագիր զեկուցումով հանդես գալու համար հրավիրվում է տարբեր քաղաքների համալսարաններ գիտա-ծղովների:

Օրինակ, «Yeni Konya» բերրը (5.04. 1965) գրում է «ժամանակի ամենատեղ բառարանագիր Բարս Թուղլաճիի իրենց քաղաք գալու մասին»:<sup>18</sup>

18 Shu՝ H.Ekmeçciyan, Pars... էջ 64.

Անգամ ժամանակի հայտնի ծաղրանկարիչ Ֆարուք (Faruk) իր շարժերում քանիցս ներկայացրել է Թուղլաճիին:

Կիպրոսի անգլիական ռադիոն հաղորդում է նվիրել «Հրաշք բառարանագրին» (muzice sözlük yazarı, 3.05.1974). Այս մասին անդրադարձել է Պուլի «Մամանակ» օրա-թերթն իր էջերում<sup>19</sup>:

«Անգլերեն-բուրբերեն տմբեսագիտական և իրավաբանական տբերնիների բա-ռարանի առաջարկումն տպագրվել են բառարանի մասին Ստամբուլի համալսարա-նի ռեկտոր Օմեր Ջելել Սարչի, իրավաբանական, տմեսագիտական ֆակուլտետնե-րի ղեկաններ, պրոֆեսորներ Բյուլենթ Դավրանի, Հայդար Ֆուրգաճի (Ömer Celal Sarc Bülent Davran, Haydar Furgac) և այլ անվանի մասնագետների հիացական կարծիքնե-րը. Նշենք, որ մակիկնում լույս տեսած նմանատիպ բառարանները սումաներն էին և բնականաբար նրանցից օգտվողների շրջանակը շատ սահմանափակ էր: Վերջիննե-րիս ժամանակաշրջանում դրանց հրատարակությունների կողմին շատ ավելի հայտնի ու գործածական են համարվել հայ բառարանագիրների Պուլսում, Վենետիկի և Վինե-նայի Միսիթարյանների հրատարակած սումաներնով, կամ լատինատառ բուրբերե-նով (երբեմն բուրբերեն լեզուն արտահայտվել է լատինատառ բուրբերենով, սումանե-րենով, ինչպես նակ հայատառ բուրբերենով) արտահայտված երկեզու, բազմալեզու բառարանները և գրուցարանները<sup>20</sup>: Այնպես որ երիտասարդ հայ բառարանագիր Բարս Թուղլաճն ի դենս հայ բառարանգիտական հարստության, ունեցել է հրաշալի հումք իր գործերի համար, հարստագույն լեզվական բառացանկ, արդեն ավանդաբար մշակված և եկրոպական լավագույն հայտնի բառարանների օրինակով իրեն արդա-բացրած բառարանակազմական չավորողիչներ: Հայտնի է, որ մասնավորապես հա-յատառ բուրբերենով, սումաներենով հայ բառարանագիրների հարուստ բառացանկ ունեցող բառարանները օգտագործվել են նակ բուրբերի կողմինց, որոնք սովորելով հայկական տառերը, ազատորեն օգտվել են ժամանակի հայատառ բուրբերեն մամու-լից, գրականությունից:

Հայ և բուրբ հեղինակների բառարանները որպես կանոն լույս են ընծայվել հայ հրա-տարակիչների, տպարանատերերի կողմինց, որոնք տառատեղծ և գրածուլական լա-վագույն տեխնիկայի առաջնեկներն էին Օսմանյան կայսրությունում, Թուրքիայում և իրենց կարևոր ներդրումն են ունեցել գրատպության պատմության մեջ, հրատարակա-կան մշակույթում:

Որպես կանոն, Բարս Թուղլաճիի գրբերը լույս են ընծայվել բուրբական հրատա-րակիչների կողմինց: Պուլսում հրատարակվող «Մամանակ» օրաթերթը գրում է, որ Անգ-լիայի բագուտի Էլիզաբեթ Բ-ն Անկարայում իր երկրի Գլխավոր դեսպան Պ.Ճ.Գոլդե-նի (P.J.Golden) միջոցով իր շնորհավորանքներն է հղել Բարս Թուղլաճիին՝ «Անգլե-

19 «Մամանակ» օրաթերթ, Ստամբուլ, 15.05.1974.

20 Shu՝ Յ.Ստեփանյան, Հայպարտ բուրբերեն գրբիի և պարբերական մամուլի մայրնագիտությունն քաղաքիզու, Ստամբուլ, Թուրքուագ հրատ... 2005, 652 էջ: Shu նակ՝ Հ. Ստեփանյան, Լուսիյանա բազավորական տան հայ ժառանգները. Հուլյամների ժողովամու, Հայպարտ բուրբերեն շնագիր և Հայպարտ բուրբերեն տպագիր բառարանները. Երևան, 2016, էջ 37-50: 216 էջ:


րին-բուրբերեն» և «Թուրքերեն-անգլերեն» բառարանների տպագրության առթիվ<sup>21</sup>: Իհարկե, բոլոր բառարանների հրատարակություններն իրենց արձագանքն էին գտնում նաև բուրբական առաջատար և մասնագիտական մամուլում: Խոստովաններ, որ հեղինակն իր հերթին, սեփական հրատարակությունները լավագույնս մատուցելու, կազմակերպելու առանձնակի շնորհ է ունեցել, որը մեծապես նպաստել է իր անձի գովազդմանը և իր գրքերի մասսայականությանն ու հաջողությանը, տարածմանը, գնահատմանը:

1968թ. վերահրատարակվում է «Թուրք-ֆրանսերեն մեծ բառարանը», կազմված 825 էջերից<sup>22</sup>:

1970թ. Քարս Թուրլաճին ամուսնանում է Պոլսի ամենագեղեցիկ օրիորդներից մեկի, իտալական վարժարանի շրջանավարտ Իռմա Սյուպերոլուի (Տեր-Սարգսյան) հետ: Պոսակի արարողությունը կատարվում է Թուրքիո Վայոց պատրիարք երջանկահիշատակ Ընդրիք Գալուստյանի ձեռնար Գալաթասարայի Սր. Երրորդույում եկեղեցում: Այս առթիվ նույն օրը նա շնորհավորական հեռագրեր, նամակներ է ստանում Թուրքիայի Նախագահ Ջևդեթ Սուճայից (1899-1982), վարչապետ Մուլեյման Գեմիլիբից (1924-2015), Իսմեր Ինյունյուից (1884-1973) (Cevdet Sunay, Süleyman Demirel, İsmet İnönü) և այլ նշանավոր բուրբ բաղաբական այրերից<sup>23</sup>: 1974 թ. օգոստոսին Թուրլաճյան գոյգը որդի է ունենում, անունը՝ Մայաթ: Քարս Թուրլաճին իր հրատարակչությունն է հիմնում Պոլսում (Çağaloğlu, Şeref Efendi 28 հասցեյում), իսկ 1974 թվականից դառնում Ստամբուլի գրողների սինդիկատի անդամ:

1971թ. թվականին, 15-ամյա աշխատանքից, Ռուսաստան, ԱՄՆ և Փարիզ կատարած երկարատև ճամփորդություններից հետո սկսվում է հանրահայտ «OKYANUS Ansiklopedik Türkçe Sözlük» (Օվկիանոս)<sup>24</sup> խորլորտայա ժամանակահատված ընդգրկող բազմահատոր հանրագիտարանի Ա հրատարակչությունը<sup>25</sup>:

Երեք հատորից, 3 099 էջերից, եռալյուանակ և 200.000 բառ ամփոփող գիրքը<sup>26</sup>, դրանց ֆրանսերեն, անգլերեն, օսմաներեն միլիոնի հասնող բացատրական տարբերակները



գրախոսականներում «Օվկիանոս»-ը դնում էին աշխարհի 7 մեծ երկրների հայտնի բառարանների (Webster, Oxford, Robert, Duden, Britannica, Brockhaus, Larousse) հետ նույն շարքում:

- Հ 1-ը ընդգրկում է A - G տառերը (1971թ. հրատարակվել է մարտին)
  - Հ 2-ը ընդգրկում է G - M տառերը (1971թ. հրատարակվել է հոկտեմբերին)
  - Հ 3-ը ընդգրկում է M - Z տառերը (1974թ. հրատարակվել է հունվարին):
- Հատորները նախապես տպագրվել են առանձին պրակների տեսքով, շարունակական էջակալությամբ, ապա միայն որպես ծավալուն հատորներ: Առաջին էջում հեղինակի առաջաբանն է: Այն հանրագիտարանի առջև ծառայած կարևոր խնդիրներն ու դժվարություններն է ներկայացնում: Այն հիմնականում ժամանակակից, կենդանի խոսակցական, գրական բուրբերենը լիարժեք օգտագործելու, դրա լեզվական առավելություններն ու հարստությունը ցուցադրելու ջանքերի մասին է: Մասնավորապես այն արտահայտվել է գիտության տարբեր բնագավառների, արհեստների անունների խնդրում: Հեղինակն փոստում է, որ Թուրքիայում Լեզվի Ակադեմիա դեռ չի հիմնադրվել<sup>27</sup>, որը մեծապես պիտի շրջանցեր հանրագիտարանի լեզվական բառանյութի դժվարությունները: Քարս Թուրլաճին իր երախտագիտությունն է հայտնում համալսարանական, գիտատեխնիկական ֆակուլտետների իր բարեկամ աշակիցներին, այս ոլորտի բառակազմակերպ աշխատանքների կատարման համար: Երախտի հիմնական մասը բաժին է ընկել պրոֆ. Հասան Էրենին (Hasan Eren), պրոֆ. Սեինջ Ջարոլին (Sevinc Karol), «Pars» հրատարակչատան բարեկամներ Սերմեթ Արքադաշին (Semet Arkadas): Առաջաբանի ավարտին հեղինակն իր հանգստունքն է արտահայտում մեծ ծավալուն հրատարակություններում բերությունների առկայության փաստի շուրջ, մտածելով, որ իր աշխատանքը ևս չի կարող գերծ մնալ այդպիսիներից:
- Հանրագիտարանը հարստացված է բազմաթիվ և ու ճերմակ, գունավոր նկարներով:

21 «Մասնակ» օրաթերթ, Պոլիս, 1966թ. 4 հունիսի:  
 22 Pars Tuglaci. Büyük Türkçe -Fransızca Sözlük. İst., 1968.  
 23 Այս մասին գրել է Պոլսի «Արշակ» թերթը 1970թ. հունվարի 16-ի համարում:  
 24 Pars Tuglaci. OKYANUS 20. Yüzyıl Ansiklopedik Türkçe Sözlük, Pars Yayınevi, İst, cilt I, 1.971, 48s.  
 25 CEM հրատարակչություն կողմից P տպ. 1978թ. 6 հատորով: G տպ. 1979թ. 7 հատորով և Գ տպ. 1980 թ. 10 հատորով: VII և X հատորները հրատարակվել են որպես հավելվածներ, կազմված Քարս Թուրլաճինի կողմից բոլոր տառերի ընդգրկմամբ:  
 26 2019թ. նշանավոր հայալեզու, պոստհայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ արք. Լեոն Ջերյանի կողմից Ստամբուլ էինք հրավիրված պոլսախոս նշանավոր բանասեր, պատմաբան Գևորգ Բանվորճյանին նվիրված երկերի մասնակցելու համար, նաև՝ Գևորգ Բանվորճյանի մասին մեր գրքի շնորհանդեսի առիթով: Այդ օրերին Ստամբուլի Կեղոնական վարժարանի երկարամյա սեփանուհի Միլվա Աուլումճյանի շնորհիվ հանդիպեցինք Քարս Թուրլաճինի որդուն, Մայաթին: Թուրքիայի շախմատի չեմպիոնն իր հարազատ հայրույն շարաք մեկ անգամ օգնում էր պոստհայ շախմատասեպներին, դասեր տալիս նրան: Մայաթն ասաց, որ 1970-74թթ. «Օվկիանոս»-ի պատրաստման գործում, մասնավորապես լատիներեն մասերի շարադրման հատվածներում ամուսնուն մեծապես օգնել է կինը, Մայաթի մայրը, որը իտալական լիցեյի շրջանավարտ է եղել:  
 26 Թուրքիայի Լեզվաբանական ընկերության կողմից հրատարակված ամենամեծ բառարանը ներառել է միայն 27 500 բառ:

27 1974թ. Անկարայում ընդունության է հրավիրվում Արագործնախարար Հասան Էսադ Ըջըրի (Hasan Esat İsk 1916-1959), Մեջլիսի նախագահ Թեքին Արքոբուրն (Tekin Arburun 1903-1993 ), Թուրք լեզվի խորհրդի նախագահ Մեհմեթ Աքսոյի մոտ (Mehmet Aksoy).



րով<sup>28</sup>, արյուսակներով, բարտեզներով, սխեմաներով, տարբեր լեզուների այբուբեններով (որոնց ցանկը տրվում է սկզբում), նման հրատարակություններում օգտագործվող տարբեր տիպի բացատրություններով, համառոտագրություններով: Գրքի առաջին էջում սև հովազի (կամ լուսանի) գլուխ է նկարված, որը կարծես թե հրատարակչատան նշանաբանն է:

Առաջին հոդվածը նվիրված է թուրքերեն լեզվի այբուբենի A տառին:

Բառարանում առկա 11 էջեր ներկայացնում են՝ հունա-լատիներեն բառեր թուրքերեն լեզվով, 16 էջ՝ կանացի և արական թուրքերեն անուններ, 149 չիանարակալված էջերում դիագրամաներ են: Յուրաքանչյուր հատորի վերջում վիզիակների շուկուններ են արված, կան 1000 պատկերներ, որոնց մեծ մասը Encyclopaedia Britannica-ից էր, մի մասն էլ ընտրված էր գերմանական հանրագիտարաններից:

Գիրքը տեղեկություններ է պարունակում Հայաստանի և հայերի մասին ևս<sup>29</sup>: «Ermeni» (հայ) բառ-հոդվածի ներքո տրվում է հայկական, մետրոպոլիտանային, տառերի անվանումները, թուրքերենում համապատասխան հնչյուրային տարբերակները:

Հրատարակիչը Բարս Թուղանի սեփական հրատարակչությունն էր, իսկ լույս էր տեսնում «Սերմեր» (Sermet)-ի տպագրատանը: OKYANUS-ը համարվել է թուրքերեն լեզվի ամենաճոխ, համապարփակ բառարանը, որ տարիներ շարունակ ծառայելու էր բազմաթիվ, ամենատարբեր մասնագետների: Բառարանի հրատարակչությունն էր վրա հրավիրեց ոչ միայն մասնագիտական ու լրագրողական շրջանակների բուռն ուշադրությունը, այլև հեղինակով սկսեցին հետաքրքրվել նաև կառավարական շրջանակներում, պետական գործիչները:

**1974թ.** մարտի 17-ին Անկարայում, նախագահական Չանքայա պալատում Թուրքիայի 6-րդ նախագահ Ֆահրի Քորուրյուրը (*Fahri Sabit Korutürk*, 1903-1987) հատուկ ընդունելության է արժանացնում գիտնականին: Դիմելով Բարսեղ Թուղանյանին, նա ասում է, որ անչափ ուրախ է, որ իր երկրում ապող կարևոր համայնքներից մեկում հայկական ծագմամբ հայրենակիցը թուրքական մշակույթին նման խոշոր ծառայություն է մատուցում: Ի պատասխան Նախագահի խոսքերի, Բարս Թուղանին երկ-

րի նախագահին պատասխանում է, որ լուրջ, արդար հիմքեր ունի հայտարարելու, թե հպարտ է իր հայկական ծագմամբ, չնուսանալով իր նախորդների ունեցած ներդրումն այս երկրի կյանքի ուզածը բնագավառում: Այնպես որ ինքն ուրախ է նրանց ժառանգը լինելու համար:

–Բնական է, որ նման բաղաբակիոր ժողովրդի զավակը իրավունք ունի հպարտանալու: Չեք աշխատաբույնը հրաշալի ստեղծագործություն է, գրվածգործոց: Չեք գործը երախտագիտությամբ կիչլիլի հաջորդ սերունդների կողմից: Չեք նվիրած բառարանը, որպես թանկագին մատուց, ես կփոխանցեմ ինձ զավակներին, այնուհետև՝ թոռներին, եղբորսինական է իր խոսքը Թուրքիայի Նախագահը<sup>30</sup>:

Ֆահրի Քորուրյուրը խոստանում է աջակցել օսմանյան Թուրքիայի Գլխավոր արխիվից օգտվելու, հնարավորություն ընձեռնելու գիտնականին նոր հայացքով վերանայելու Թուրքիայի պատմությունը: Հաջորդ օրը, Մասնաբույն, բաղաբակատարանի պարտեզում հրավիրված միջոցառմանը, Թուղանին այս մասին խնդրագիր է պատրաստում երկրի վարչապետ Բյուլենք Էչլիդին<sup>31</sup> ներկայացնելու համար (*Mustafa Bülent Ecevit*, 1925-2006). Հունիսի 18-ին գիտնականին ընդունում են Վարչապետը, Մեջլիսի նախագահ Թեքին Արբուրտը (*Tekin Arburat*, 1903-1993) և Կրթության նախարար Կրոֆի Մուստաֆա Ուստունդաղը (*Mustafa Üstündağ*, 1933-1983):

Բարս Թուղանին վարչապետ Բյուլենք Էչլիդի մոտ (*Mustafa Bülent Ecevit*, 1925-2006) ընդունելության ժամանակ նրան նվիրում է «Օվկիանոսի» հատորները: Փոխարենը Վարչապետը խոստանում է անհրաժեշտ ֆինանսավորում բառարանի տպագրման և պատկերման համար, ինչպես նաև փոխադարձաբար նրան է նվիրում իր սեփական, դեռևս չհրատարակված գրքի ձեռագիրը:

Բարս Թուղանին գրում է, որ շարունակում է ակնավոր լուսավորիչ, լեզվաբան Շամսեդդին Մամիի գործը (*Shemsedin Sami*.1850-1904), որ հիացած է թուրք բառարանագիր Ֆերիտ Դեվելիօղլույով (*Ferit Devellioğlu* 1906-1985) և որ թուրքերենը համարում է աշխարհի ամենահարուստ լեզուներից:

Այս հանդիպումները առատորեն լուսարձակում են թուրք, հայ մամուլում (*Milliyet Magazin*-19.05.1974, *Son Havadis*-20.05.1974, *Cumhuriyet*-21.05.1974, *Tercüman*-23.05.1974, պոլսահայ արվեստի «*Ընչիս*» ամսագրում-15.05.1974):

Միչև 1985 թվականը Բարս Թուղանին երկու շաբաթ մեկ հրատարակում է «Կենսագրական հանրագիտարանի»՝ 64 էջերից կազմված պրակները: Հանրագիտարանը նախատեսվում էր լույս ընծայել 24 հատորներով: Պատմության, արվեստի, գիտության մասին հոդվածներով, գունավոր լուսանկարներով ճոխացված առանձնատիպերը մեծ հաջողությամբ էին վաճառվում:

Բարս Թուղանին Անկարայից Թուրքիայի նախագահ Ջուղետ Սունայից և Թուրք Լեզվի Ընկերության գերագույն տնօրեն Օմեր Ալարն Ակսույից (1898- 1993), հայտնի գրող և գրականագետ, լրագրող Անիեդ Կարակլիցի (1924-2001) շնորհավորական ուղերձներ է ստանում: Նա ընդունելությունների է հրավիրվում նախագահներ ու վարչապետներ

28 Այսպես օրինակ, արտարկտ արվեստին վերաբերող հոդվածում 2 մեծամագաղ էջերում տեսնում ենք տարբեր ժամանակների արտարկտիկոսների *Ջեյկոն Պոլոկի (Jackson Pollock, 1912-1956)* *Վասիլի Կանդինսկու (Vasilii Kandinsky, 1866-1944)*, *Պիեռ Մոնդրիանի (Pier Mondrian, 1872-1944)*, *Կարլո Ապպոլի (Karel Appel, 1921-2006)*, *Ալբերտո Մաննիլլի (Alberto Magnelli, 1881-1971)*, *Էդուարդ Պիկյոնի (Edouard Pignon, 1905-1993)*, *Ռիչարդ Մորտենսենի (Richard Mortensen, 1910-1993)*, *Օգյուստ Հերբինի (August Herbin, 1882-1960)*, *Ալֆրեդ Մաննիսի (Alfred Manessier, 1911-1993)*, *Ռոժե Բիսսիերի (Roger Bissier, 1888-1964 )* գունավոր նկարների իլյուստրացիաները:

29 Առաջին հատորի 3-րդ պրակի 738 էջում Ermeni/Արմեն-ը որպես հատուկ անուն է տրվում, հեղեվորակված ընտանիքին պատկանող մի ուսասյի, որի մեծ մասը Մերձավոր Արևելքում իր սեփական երկրում և կամ այլ երկրներում է ապրում: Հայերենի այբուբենը բաղկացած է 38 հնչյուններից: Տրվում են «Հայ», «Armenian» (անգլերեն) և «Armenien» (ֆրանսերեն) տարբերակները: Լեզուն Ermenice (Հայերեն): Հայերի լեզվի և գրականության գիտնական ճյուղն անվանվում է Armenology. Գաղղի Ermeniler (Հայ) ամբիանը, ապա այն այլապես և ճորիկ ուսասների խառնուրդ է: Այս փոփոխությունն աստիճան է պաշտոնապես ընդունել քրիստոնեական հավատքը: Հայտը անունը Ermenistan (Հայաստան): Այն Սովետական Միության 15 հանրապետություններից մեկն է հանդիսանում: Գտնվում է Կովկասի հարավում, սահմանակից է Թուրքիային, տարածքը 29 000 քառ.կմ է: Մայրաքաղաքն է Երևանը: Երկիրը կոչվում է Հայաստան:

30 Տես՝ H.Ekmekciyan, Pars... էջ 99.  
31 Տես՝ H.Ekmekciyan, Pars... էջ 100.

Ջնդես Սունայի, Սուլեյման Դեմիրելի, Իսմեր Ինճուլի, Բարձրագույն կրթության մա-  
խարաբի, Մեջլիսի նախագահի, քաղաքական և գիտական էլիտան մերկայացնող այդե-  
րի կողմից, որոնք խոսք չէին գտնում արտահայտելու հայրենակցի նկատմամբ իրենց  
երախտազիտությունն այդ տիտանական աշխատանքի համար:

Չմոռանամք նշել, որ XIX-XX դարերը արևմտահայության մշակութային կյանքում  
նշանավորվել են հայ հեղինակների երկերով և բազմալեզու, բառարանների հրատա-  
րակություններով Պոլսում, Վենետիկի, Տրիեստի և ապա մաս Վիեննայի Միլիթար-  
յանների հեղինակությամբ: Այդ բառարաններից շատերում նյութն արտահայտվել է  
օտմաներեմով և հայատառ թուրքերեմով<sup>32</sup>: Այսպես օրինակ, 1871թ. հրատարակված  
(Բ տպ.) Վիեննայի Միլիթարյան հայերից Մրապիոն Եմինյանի «Երեքլեզուեան բա-  
ռագիրք այսինքն գաղղիերեն-հայերեն-տաճկերեն»-ը (1224 էջ), և կամ 1912թ. Պոլսում  
հրատարակված Պետրոս Ջեբի Կարապետյանի «Առձեռն բառարան օտմաներեն (մաև՝  
հայատառ թուրքերեն)-հայերեն» (965 էջ) մեծ ժողովրդականություն են վայելել իրենց  
բառանյութի, բարձր որակի տեսակետից: Բնականաբար այս բառարանների արժեքա-  
վոր լինելը պայմանավորված էր դրանց կազմողների լեզվական էլիտայի կրթությամբ,  
եվրոպական բառարանային ավանդույթներին ծանոթ լինելու հանգամանքով և օգտա-  
գործվող լեզուների կենդանի տիրապետմամբ: Միլիթարյան բառարանային հրատարա-  
կությունների հեղինակները՝ Գաբրիել Ավետիսյանը, Մանուել Ջախջախյանը, Մկրտիչ  
Ավետիսյանը, Սուքիաս Սոմայանը, Սամուել Գանթարյանը, Հարություն Ազգեյանը,  
Հակոբոս Պոզաճյանը, Փիլիպոս Դամճյանը, Եփրեմ Չազըճյանը, Մրապիոն Եմինյա-  
նը, Դևոնդ Հովնաճյանը, Արիստակես և Ստեփանոս Ազարյան եղբայրները, Ամբրոսիոս  
Քուսիեյանը, Ամբրոսիոս Գալֆայանը և ուրիշներ մինչև օրս էիսցանոնք են պատճառում  
իրենց լեզվաբաններից, բառակազմական, ստուգաբանական ստեղծագործ մտքով:  
Մենք նկատի ենք ունեցել այս հեղինակների միայն օտմաներենի, հայատառ թուրքերե-  
նի օգտագործմամբ բառարանները, որոնք պոլսահայ բառարանագիրների հրատարա-  
կությունների հետ կազմում են շուրջ 100 ամուն<sup>33</sup> և ունեցել մի քանի վերահրատարա-  
կություններ: Իսկ դրանց հեղինակների անունների թվարկումը ոչ միայն սուրբ է նրանց  
բառարանագիտությունը ասպարեզում մեծ ներդրումը, այլև հիշեցնում, որ մինչև Թուրքահնի  
և թուրք բառարանագիրների գործերը ի դեմս վերոնիշյալ հայ հեղինակների, ինչպիսի  
սակայական, հարուստ ինքն է եղել հետագա բառարանագիրների համար: Հավելենք, որ

32 Մենք սուրբ չու նեցանք Բարս Թուրյանի բառարաններին վերաբերող ոչ բոլոր մտքերին ծանոթանալ,  
որ նա կիլիստական այս բառարանների արժեքի և ունեցած մեծ ներդրում մասին: Միայն  
երևանում Բարս Թուրյանի հետ մի գլուխի ժամանակ նա խոստովանել, որ լայնորեն օգտվել է  
հայ բառարաններից, որոնք ինքն են համընդհանուր: «Օվկիանոս»-ի համար:  
33 Չմոռանամք նշել, որ տպագիր բառարաններին մախրողը է մասն հայ հեղինակների ձեռագիր  
բառարանի հարուստ շրջանը, որպես սկիզբ ունենալով 13-րդ դարի հեղինակ Կիրակոս  
Գանձակեցու «Պատմություն Հայոց» գործում տեղ գտած սնդղերնմ 50 բառերի բացատրական  
բառարանը: Այս ձեռագիրը (կրկին նկատի ունենալ օտմաներենի, հայատառ թուրքերենի,  
մաս՝ ղղջարների օտագործմամբ) ստեղծվել են ոչ միայն Թուրքիայի տարածքի հայկական  
վանքերում, այլև Հունգարիայում, Լեհաստանում, Արևմտյան Ուկրաինայում, Յրանսիայում,  
Ռուսաստանում և այլուր: Տե՛ս Համբկի Ստեփանյան, *Լուզինյան բազմալեզուական դաս հայ  
ժառանգները (Հովնակների ժողովածու)*, Հայատառ թուրքերեն ձեռագիր և Հայատառ թուրքերեն  
տպագիր բառարանների մասին հոդվածները, եր., 2016, էջ 37-50:

հայերեն ձեռագրերի մեջ որոշակի թիվ են կազմում բժշկական ձեռագրերը, դրանց կից  
կան առանձին բժշկական ու տարբեր տեսակի դեղորայքային երկլեզու և բազմալեզու  
բառարանները, բժշկարանները, հեքիմարանները<sup>34</sup>: Առանձնակի հետաքրքրություն է  
ներկայացնում բժշկական անճախայտի ու անճնավող տպագիր բառարանը՝ Միլա-  
յի Ռեստե Տեր Պետրոսյանի հիվանդությունների, դեղերի, բույսերի, հանճանյութերի,  
կենդանիների, գազերի, հեղուկների անունների 9 լեզվա բառարանը (Վենետիկ, 1822,  
542 էջ): Անվիճելի է, որ հայ հեղինակների այս և այլ բառարաններ են եղել նոր թուրքե-  
րենի կազմավորման, զարգացման, մարմնան, հարստացման իրական ակունքներում:  
Բառային անճախընթաց նյութ պարունակող բազմաբնույթ մեծածավալ բառարանները  
մինչ օրս պահպանել են իրենց գիտական արժեքը և շարունակում են ծառայել իրենց  
նպատակին:

Բնականաբար «Օվկիանոս» բառարանն արժևորող բազմաթիվ հիացական հոդ-  
վածներ են հրատարակվել Թուրքիայի առաջատար մամուլի էջերում, որոնց հեղինակ-  
ները՝ հայտնի գիտնականներ, լրագրողներ, մասնագետներ միաբերան գովաբանում և  
արժևորում էին այդ կորոլային գործը: Թուրքերենի անճնամբ բառարանի և նրա հեղի-  
նակի ճանաչումն ու գովազդն իր քարձակատում էր գտնվում<sup>35</sup>: Նրան համարել են շուրջ  
մեկ դար առաջ ստեղծագործած՝ «20-րդ դարի Մահմուդ Քաշգարցի»<sup>36</sup>, որը մի քանի  
հաճճանճողուկների, ինստիտուտների գործը միայնակ էր կատարել:

«Օվկիանոս» բառարանը մասն հիմնական աղբյուր է հանդիսացել օտմանյան շրջա-  
նի 1914-1918թթ. Ռազմածովային ուժերի մախարաբ. հայերի ցեղասպանության երեք  
գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Սմանդ Ջեմալ Փաշայի (1872-1922) բռնան՝ Մեհ-  
մեդ Ջեմալ Արելի<sup>37</sup> նկարահանած մշակութային, գիտահանրամասնչի, գրտնավոր ֆիլիպի  
համար (Ahmed Cemal Pasa, Mehmed Cemal Arcl), որը մեծ հաջողությամբ ցուցադրվում  
էր Պոլսի հայտնի կինոթատրոններում: Ջեմալ փաշայի բռն, գրող, հրապարակախոս  
Հասան Ջեմալը (Hasan Cemal), որը բազմիցս հրապարակավ ընդունել է ցեղասպանու-  
թյունը և ներողություն խնդրել, ցավակցել է հայ ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության  
102-րդ տարեկից կապակցությամբ և 2017թ. ապրիլի 23-ին գրառում է արել Twitter-ում,  
որն իր երկրում դարձել է բռնի քննաքննած առարկա: Այն սկսվում է «Ես կիսում են իմ  
հայ եղբայրների՝ ապրիլի 24-ի ցեղասպանության ցավը»<sup>38</sup>:


34 ՄՄ ձև. 9583, 203ա-251թ: Տես նաև՝ անդ ձև. 10661, 64ա-71թ, ձև. 10912 Բժշկարան և այլն:  
35 Կենսագրական հատորում Բարս Թուրյանի հայտնի անճնաց հետ լուսանկարների մի մասի  
հեղինակը Արա Գյուլեթն է (1928-2018), որը աշխարհի է որպես «Թուրքիայի աշխարհ», «Ստամբուլի  
կարիչ», «Դարի լուսանկարիչ», արժանացել Թուրքիայի քարձակագրի պարգևներին:  
36 Mahmud ibn Huseyn ibn Muhammed al-Kasgarî (1008-1102). Թուրքական լեզուների և գրականության  
մասնագետ, «Թուրքական լեզուների ժողովածու» բառարանի հեղինակ, լեզվաբան:  
37 Կենսագրական այս հատորում Ջեմալ փաշայի, կնոջ, ընտանեկան, որդու, բռնան ճակարների  
աստատությունը կարծում ենք պայմանավորված է Բարս Թուրյանի «Մահմուդ արիվիվում եզակի  
լուսանկարներն ի ցույց դնելու ցանկությամբ: Ջեմալ փաշան հայ-թուրքական հարաբերությունների  
վարտարացման համար մեղադրել է Ռուսաստանին: Առաջին համաշխարհային պատերազմի  
(1914-18թթ.) տարիներին եղել է Միլիթարյան գործող թուրքական 4-րդ բանակի հրամանատար,  
որ և ճնշել է աղաքների ազգային-սպասարկական շարժումները Միլիթարյան, Լիբանանում և  
Պաղեստինում, համարվել մասն արաբների բողոքարար:  
38 Տես՝ <https://www.aravot.am/2017/04/25/881112/>  
2015թ. ապրիլի 1-ի երևանյան «Առավոտ» թերթում կարդում ենք՝ «Կառը «Մտվիվա» կինոթատրոնում



Մինչ Ֆիլմը երիտասարդ Բարս Թուղլաճի կյանքում զարմանալի կամ կարևոր եղբայրություններից է եղել 1962թ. երիտթուրքերի ղեկավար «եչակի» անդամ, հայերի ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից Ջենալ փաշայի (1872-1922) կնոջ՝ Սեմիհա Հանըմ էֆենդիի (Cemal Paşa, Seniha Hanım Efendi) հետ հանդիպումը 1962 թվականին<sup>39</sup>: Ջենալ փաշայի այրին հայ երիտասարդին պատմում է ամուսնու սպանության «իր» վարկածը: Այն է երբ Ջենալ փաշան «Մուսկվայից Թիֆլիս է գնում, կենտրոնական պողոտաներից մեկում բաց կաբրով շրջելիս ապամվում է ռուսների կողմից արձակված կրակոցից»: Պատմությունը լսեցնելուց հետո Տիլկինը համբուրում է Բ. Թուղլաճի ձեռքը ասելով. «Ինձ համար ծայրաստիճան հաճելի կլինի, եթե այս դեպքը իսկական, համոզիչ Չեր փաստարկներով հանդերձ մի օր ինձացվի...»<sup>40</sup> Թուրքական դիվանագիտության վառ օրինակ, երբ փորձում են արյունից ու մեղքից մաքրագործել գոհի ձեռքերով...<sup>41</sup>

**1973թ.** «*Թուրքիայի պարմության և մշակույթի հանրագիտարան*»-ի<sup>42</sup> հրատարակությանը ձեռնարկելու ժամանակ հեղինակն Անկարայում այցելում է վաղապետ Ֆերիթ Մելեկին (Ferit Sadi Melen (1906 –1988, վաղապետ՝ 1972-1973թթ. ) և պարզաբանումներ տալիս այս առթիվ: Անկարայում, «Բաշնուր» հրատարակչությունը լույս է ընծայում «*Անգլերեն-լարիսներեն-թուրքերեն բժշկական բառարան*»-ի տպագրությունը<sup>43</sup>: 1973 թվականը Բարս Թուղլաճի համար կարևորվում է մշամավոր մտավորականներ, պատմաբան Իբրահիմ Հաքքե Քոնյալի, վիպասան Բենալ Ֆահրիի հետ հանդիպումներով (İbrahim Hakkı Konyalı 1896-1984; Kemal Tahir, 1910-1973)<sup>44</sup>:

Դեռևս **1972թ.** Բարս Թուղլաճին ավելի քան 200 000 գիտական և արհեստներ արտահայտող թուրքերեն բառեր, արտահայտություններ, ասացվածքներ, բառարանի հիմնական նյութից առանձին (ստականիչ, հոմանիչ բառերը հավելվում են «*Օվկիանոս*»-ում, ուր իրենց էրթմոդիական (սակագրանական) բացատրություններն են գտնում օսմանս-



րեն, լատիներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Բառարանագրին Անկարայում ընդունում է վաղապետ Նիհալ Էրիմը (Nihat Erim, 1912 – 1980, վաղապետ՝ 1971-72թթ.):

**1974թ.** լրացումներով հանդերձ վերահրատարակվում է բառարանը՝ 3 հատորով, կազմված 3136 էջերից: Այն համարում են աշխարհի ամենաընդարձակ և նախընտրելի բառարաններից մեկը, որը հեղինակին փաստաբանող և գնահատող հոդվածների նոր տարափ է առաջ քերում: Կենտրոնական թերթերից «*Cumhuriyet*»-ը քանիցս արժևորող հոդվածներով է հանդես գալիս: Այս շքեղ հրատարակության առթիվ Թուրքիայի 6-րդ նախագահ Ֆահրի Բորուբյուրը տիկնոջ՝ Էմել Բորուբյուրիի հետ (Fahri Korutürk, 1903-1987, նախագահ՝ 1973-1980թթ. Emel Hanım Korutürk) Բարսեղ Թուղլաճյանի պատվին մարտի 17-ին հյուրասիրություն են կազմակերպում Անկարայում, նախագահական Չանքայա պալատում: Նախագահը, որ 1960-65թթ. Մուսկվայում Թուրքիայի դեսպանն էր եղել, հիշում է իրենց ծանոթությունը, խոսում Լեհինի գրադարանում Բարսեղ Թուղլաճյանի աշխատելու, նյութեր հավաքելու շրջանի մասին:

«*Türkiye Tarih ve Kültür Ansiklopedisi*»-ի (Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարան) հրատարակության պատրաստելու աշխատանքների ավարտման խնդրով Բարսեղ Թուղլաճյանին Անկարայում ընդունում է Թուրքիայի վաղապետ Ֆերիթ Մելեկը (Ferit Melen, 1906-1988):

Կարծես թե Թուրքիայի բոլոր նախագահները և վաղապետները առիթը բաց չեն բողբել ընդունելու Բարս Թուղլաճիին, իրենց լավագույն վերաբերմունքն արտահայտելու համար Թուրքիայի գիտությանն անճնվիրաբար նվիրված հայ հայրենակցին: Թուրքիայի նախագահ Ֆահրի Բորուբյուրիի հետ Չանքայայի հյուրասիրությունն մեկ ամիս անց, ապրիլի 19-ին Բարսեղ Թուղլաճյանին ընդունում է վաղապետ Բյուլենթ Էջլեիքը (Mustafa Bülent Ecevit, 1925-2006, վաղապետ՝ 1977, 1978-1979թթ.)<sup>45</sup>, որը գիտնականին է նվիրում իր «*Bu Düzen Değişmeli*» գիրքը ջերմ մակագրությամբ: Թուղ-

կցուցադրվի մի ֆիլմ, որի հիմքում Ջենալ փաշային սպանած հայ վրիժառու Արտաշես Գևորգյանի բռնած Արմեն Գևորգյանի և Ջենալ փաշայի բռնած Հասան Ջենալի հանդիպումն է: Խոսքը Հրատմ Հակոբյանի «Հանդիպում» վավերագրական ֆիլմի մասին է, որը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: (Տես՝ <https://www.aravot.am/2015/04/01/556869/>.)

39 H. Ekmekeciyan, Pars... էջ 58.  
40 H. Ekmekeciyan, Pars... էջ 58, 93-96.

41 Մեզ հայտնի չէ այս հանդիպման Բարս Թուղլաճի վերաբերմունքը, որ արտահայտված լինի որևէ հոդվածի կամ էլոյրի տեսքով: 1987թ. սրբախաչ նշամավոր գիտնական մատենագետ Գևորգ Բամպոբեքյան Մասմբոլում լույս ընծայվող գիտահանրամատչելի «*Tarih ve Toplum*» ամսագրի իր (1987, N 84, էջ 16-18) «Ինչպիսի է մասնակցի Էմելի փաշան» հոդվածում խոյս է ցերեցմունք 1915թ. հայերի ցեղասպանության գլխավոր մտնողին ու գաղափարախոսի՝ Էմելի փաշայի մահը հետազոտելու փորձը թուրքական հեղինակներին և ամենընդի փաստելով ներկայացնում իրերի իրական միակն: Այն է՝ Փաշայի գործի դիմաց դուրս է եկել Հակոբ Մեյրումովի շուրջ 10 անգամ փորձարկի բանակը: Թուրքական աղբյուրներում շրջանառվող հայկական 17 հազար զինվորի փոխարեն իրականում հայերն ունեցել են միայն 1500 հեծյակ և 800 հետևակ: Հողվածը հայերն ունեցել է նաև Մոնրեալի «Հորիզոն» թերթում (1985, 4.02) խուճապ առաջացնելով թուրքամետ շրջանակներում: Հողվածի ավարտին Գևորգ Բամպոբեքյանն անդրադառնում է նաև Էմելի փաշայի սպանությունից հետո 10 օր անց Թիֆլիսում Ջենալ փաշայի սպանության փաստին հայ վրիժառուների մեղքով: Տես՝ Հ.Մոնեվանյան, Գևորգ Բամպոբեքյան, եր., 2018, էջ 50-52:

42 Pars Tuglacı *Türkiye Tarih ve Kültür Ansiklopedisi*.  
43 Pars Tuglacı *Tip Sözlüğü*. İstanbul, 2 baskı, Ankara 1973.  
44 Այս հանդիպումների լուսանկարներն արվել են Արա Գյուլբերի կողմից: Վերջինիս հրատարակված պրոմոներում տեղ են գտել նաև բուրբ հայտնի հեղինակությունների լուսանկարները:

45 Ժամանակի պոստայ մամուլը լայնորեն արժագանքել է Բարս Թուղլաճիի և Թուրքիայի կառավարող շրջանակների, ղեկավարության, Թուրք Պատմական և Լեզվի ընկերությունների նախագահների, Արտաքին գործոց նախարարների հետ ունեցած հանդիպումներին:

լաճիին կնոջ Իրմայի հետ Պոլսի Գյոզբեհի բաղի իր սանն ընդունում է Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարը (Celâl Bayar, 1883-1986, նախագահ՝ 1950-1960թթ.)։ Երկրի նախագահների ու վարչապետների կողմից ջերմ ընդունությունները տեսնելով տարբեր նախարարությունների ղեկավարներ (այդ թվում նաև արտաքին հարաբերությունների գերատեսչության ղեկավարները), բարձրագույն ատյանների նախագահներ ևս իրենց պարտք են համարում հանդիպել նշանավոր գիտնականի հետ, իրենց աջակցությունը բերելով նրան իր ուսումնասիրությունների իրականացման գործում։

1974 թվականը կարևորվում է նրա անձնական կյանքում ավագ որդու՝ Սայաթի լույս աշխարհ գալով։

Բարս Թուղլաճին ընտրվում է Թուրքիայի Գլխիների միության անդամ, այցելում գրականության պատմության մասնագետ և բառարանագիր Մուստաֆա Նիհալ Օզոնին (Mustafa Nihad Özön 1896-1980), սկսում ուսումնասիրություններ կատարել Ստամբուլի «Յըլըզ» սուլթանական պալատում։ Երկրի մշակութային կյանքի կարևոր, նշանակալի միջոցառումներում լինի Անկարայում, Ստամբուլում և այլ քաղաքներում, անգլայանմ Բ.Թուղլաճին հրավիրվում է։ Ստամբուլում լույս ընձայվող «*Tercüman*» օրաթերթի արտոնատեր Քեմալ Ըլըջալը (Kemal Ilıcak 1932-1993) նրան ընդունելիս անկեղծանում է և խոստովանում Թուրքիայի նախագահ Մուլեյման Գեմիթի (Süleyman Demirel, 1924-2015, նախագահ՝ 1993 - 2000թթ.) մերձավոր խորհրդական, Ստամբուլից Մեջլիսի հայազգի պատգամավոր Մկրտիչ Շելեֆյանի<sup>46</sup> (1914-1987) նկատմամբ ունեցած երախտագիտական մեծ զգացումների մասին։ Շելեֆյանի կողմից ունեցած ֆինանսական և քաղաքական մեծ օգնության շնորհիվ 1961թվականից «*Tercüman*»-ի հրատարակությանը սկսելու, մեծ դյուրություններ ունենալու համար նա պարտական է եղել Մկրտիչ Շելեֆյանին։ Իր հերթին Թուղլաճին նրան է ներկայացնում իր 24 մասից կազմվելիք «Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարանի» ծրագիրը։ Քեմալ Ըլըջալի հետ այս հանդիպումը նպաստում է, որպեսզի գիտնականը աշխարհի ավելի քան 20 երկրներ դյուրությանը այցելել, անթիվ աղբյուրներ ու հնարավորություններ ունենա իր ուսումնասիրությունների համար։

46 Գրամատիկ զարգացումներով հարուստ իր կյանքի տարբեր փուլերում Մկրտիչ Շելեֆյանը եղել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականության, Ստամբուլի հայ համայնքի, ինչպես նաև գավառներում մնացած իսլամացված հայերի խնդիրների, հեռագալում նաև Հայաստանի խորհրդային հանրապետության և Սփյուռքի հարաբերությունների կիզակալնում։ 1951թ. դարձել է Պոլստ հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանի խորհրդակցանը, 1953թ. ընտրվել է Թուրքիայի հայերի ազգային կենտրոնական վարչության ստեղծագետ։ 1955-57թթ. Մկրտիչ Շելեֆյանն ընտրվել է Ստամբուլի քաղաքապետարանի ավագանու անդամ։ 1960թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջում, ստապիլից Գեմիթի արտաքին կուսակցության իշխանությունը։ Ի թիվ 600 պաշտոնյաների ու պատգամավորների մերթսկալից նաև Մկրտիչ Շելեֆյանը։ Նրան առաջարկվել էր մեղադրանք հակասահմանադրական գործողությունների համար։ Շելեֆյանը դատաւարարվել էր 4,5 տարվա ազատազրկման և տեղափոխվել Կեսարիայի բանտ, իսկ նրա ամբողջ ունեցվածքը բռնագողավել էր։ Հետաքրքիր է, որ Շելեֆյանն ազատազրկումն անցկացրել է Թուրքիայի երրորդ նախագահ Ջելալ Բայարի հետ նույն խցում։ 1970թ. Մկրտիչ Շելեֆյանը հաստատվում է Եվրոպայից, որ և սպառում է մինչև իր կյանքի վերջը։ Տես Ռ.Մեդրոնյան, *Մկրտիչ Շելեֆյան, Վերջին հայ պատգամավոր քաղաքական խորհրդարանում*, «21-րդ դար», թիվ 5 (39), Երևան, 2011թ. էջ 5-19։

Ավելին, 1975թ. մարտի 5-ին Բարսեղ Թուղլաճյանը պայմանագիր է ստորագրում «*Tercüman*» օրաթերթի և հրատարակչության տնօրեն Քեմալ Ըլըջալի հետ, համաձայն որի ձեռնամուխ է լինում 24 հատորներից բաղկացած «Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարանի» լիակատար և որակյալ հրատարակչության աշխատանքներին։ Բարս Թուղլաճին «Հանրագիտարանը» ծանոթացնող զրոյակը ապրիլին ներկայացնում է նաև նախագահ Մուլեյման Գեմիթիին, որը մանրամասնորեն տեղեկանալով, հաջողություններ է մտղթում հրատարակությանը։ Հանրագիտարանը Թուրքիայի պատմության իր տեսակի մեջ առաջինն էր լինելու։ «*Cumhuriyet*» թերթի 1976թ. օգոստոսի 15-ի համարում տպագրվում է Թուղլաճիի հետ լրագրող Քեմալ Օզերի (Kemal Özer) հարցազրույցը։ Գալով Հանրագիտարանին, Թուղլաճին պատմում է, որ արդեն ավելի քան 12 տարի է, որ աշխատում է այս գրքի վրա։ Նյութեր է հավաքել իր այցելած շուրջ 18 երկրներում։ Հավաքել է եվրոպական և իր երկրի լավագույն լուսանկարիչների աշխատանքները, հազարից ավել նկարներ, փորագրանկարներ, քարտեզներ և փաստաթղթեր։ Հեղինակի համար օրինակ է ծառայել է ֆրանսիական 12 հատորից բաղկացած «*Larousse*» հանրագիտարանը։ Իր հանրագիտարանի ժամանակագրական սահմանը սկսվում է 1071 թվականից մինչև մեր օրերը։ Այն իր տեսակի մեջ եզակի ուսումնասիրության մասին երբ սկսեցին խոսել, Թուրքիայի 6-րդ Նախագահ Ֆահրի Հոլուրթյուրքն այս նախաձեռնությունը ողջունող նման է հղում գիտնականին (մարտի 9)։ Գիտնականը 18 տարի աշխատել էր «*Türkiye Tarih ve Kültür Ansiklopedisi*»-ն (Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարան) հրատարակելու համար<sup>47</sup>։ Այն այդպես էլ մնում է գիտնականի սեղանին։

Բարս Թուղլաճին երբ ամառվ մեկնում է եվրոպական երկրներ՝ Գերմանիա, Բելգիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Գանիա, Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Պորտուգալիա, Իսպանիա, Իտալիա, Ավստրիա, Հունաստան՝ աշխատում կենտրոնական և համալսարանական գրադարաններում, քանգարանային արխիվներում, Վատիկանի գաղտնի արխիվում և Վատիկանի եկեղեցիների գրադարանում, անձնական բարեխանական հարաբերություններ հաստատում տվյալ երկրների գիտական, մշակութային սերույցի, քանգարանների ղեկավարության հետ։ Նրա մասին գրում են տեղի գիտական ամսագրերն ու պարբերականները, ռադիոհաղորդումներ նվիրվում նրա գործունեությանը, «Օվկիանոս» հանրագիտարանին, որը «Cem» հրատարակչատան կողմից այդ շրջանում երկրորդ վերահրատարակությունն էր ունեցել։ Որ ոչ մի կարևոր վայր, որ ուսումնասիրությունների համար կարելի էր նյութեր փնտրել ու գտնել՝ չի շրջանցվել։ Բարս Թուղլաճին տուրք է տալիս երաժշտության նկատմամբ իր մեծ սիրուն և այցելած վայրերում լինում թատերական, համերգային, օպերային ու բալետի լավագույն ներկայացումներին։ Նշենք նաև, որ յուրաքանչյուր վայր այցելելիս, ի թիվս օտար, բուրբ և հայ հայտնի անձնավորությունների հետ հանդիպումների, Թուղլաճին որպես կանոն, իր ժամանակի մի մասը հատկացնում է գրադարաններում և արխիվներում փաստաթուղթ աշխատանքներին։ Նրա առաջ բաց են եղել Ստամբուլի սուլթանական «Յըլըզ» պալատ-

47 Այն լույս չի տեսնում հրատարակելի, լրագրող, թիզմենան, «*Tercüman*»-թերթի արտոնատեր Քեմալ Ըլըջալի (Kemal Ilıcak, 1932-1993) մահվան պատճառով, որի հետ կնքել էր հրատարակչության պայմանագիրը։



որ, վարչապետական, ինչպես նաև շատերին ոչ հասու գրադարաններն ու արխիվները, տր պատկանել են տարբեր նախարարությունների, անգամ կառավարության արխիվների կենտրոնական գրասենյակի նյութերը և այլն: Ահա թե ինչ շնորհով է նաև վարձահատույց եղել թուրքական կառավարությունն իր ականավոր գիտնականին:

1975թ. սեպտեմբերի 7-ին Իշխանաց կղզիներից Հեյրեյիում Ռազմածովային դպրոցի հրամանատար, նախկին պատգամավոր և նախկին նախարար Հասան Յունուզի (Hasan Yumuk, 1943-2019) կողմից Բարս Թուղլաճիին և կնոջը մի շարք բարձրաստիճան անձանց հետ միասին Աբարուրքի «Մավարունա» գրտանավի վրա ճաշի են հրավիրում: Սա եզակի շնորհ էր, քանզի մնան հրավերներն ուղղվում էին սովորաբար տարբեր երկրների նախագահներին, վարչապետներին, դեսպաններին: Երկու օր անց, մի քանի թուրք անվանի մտավորականների՝ գրողներ Ազիզ Նեսինի, Յաշար Քեմալի (*Aziz Nesin* 1915-1995; *Yasar Kemal* 1923-2015), գրող, դրամատուրգ, թարգմանիչ Նեշարի Ջումալի (*Necati Cumali* 1921- 2001), գրող, լրագրող, ծախակողմյա քաղաքական գործիչ Շեքին Աթանի (*Şekin Altan* 1927-2015), օպերային երգիչ Աբիլլա Սամեթգոլեյի (*Atilla Manizac* 1945–2016) հետ միասին Բուլղարիայի ազգային տոնի առթիվ Բարս Թուղլաճին հրավիրվում է Ստամբուլ եկող «Վառնա» նավի վրա կազմակերպված պաշտոնական ընդունելությանը:

Եթե արտասահմանյան երկրներում նա քազմաթիվ հանդիպումներ է ունեցել հայ անվանի անձանց հետ, ապա վերադառնալով Թուրքիա, սերտ շփումներ է ունենում թուրքական տարբեր կուսակցությունների, մտավորական, երաժշտական, գիտական, մշակութային շրջանակները ներկայացնող մարդկանց հետ: Հանդիպումներ նախագահ Սուլեյման Դեմիրելի, վարչապետ Նաիմ Թալուի (*Mehmet Naim Talu* (1919- 1998), գրող, դիվանագետ Յակուբ Քարաի Քարասոմանոլլուի (*Yakup Kadri Karaosmanoglu* 1889-1974), հայտնի մանկաբույժ, հասարակական գործիչ, Անկարայի Հաջիթեփե թժշկական համալսարանի ռեկտոր Իհսան Դոդրամաջլուի (*Ihsan Doğramaci* 1915-2010), պոետ, քաղաքական գործիչ Սամեթ Աղաօղլուի (*Samet Ağaoğlu* 1909-1982), իրավաբան, ծախ քաղաքական գործիչ Մեհմեդ Ալի Այբարի (*Mehmet Ali Aybar* 1908 -1995), պատմաբան, սոցիոլոգ, Աբարուրքի որդեգիրներից պրոֆ. Աֆեթ Ինանի (*Afet İnan* 1908-1985), կոմպոզիտոր, ազգագրագետ, թուրք ազգային առաջին օպերայի հեղինակ Ադնան Սայգունի (*Ahmed Adnan Saygun* 1907-1991) և այլոց հետ:

Տարիներ շարունակ Թուրքիայի կենտրոնական մամուլի և հայ պարբերականների էջերում շարունակում են տպագրվել, գիտնականների, մասնագետների և հայտնի լրագրողների կողմից Թուղլաճիի աշխատություններն արժևորող հոդվածներ:

Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտում զեկուցումներ կարդալու հրավերով 1977թ. նա շորթորդ անգամ Մոսկվա է այցելում, շարունակում իր փնտրատվածները Մոսկվայի տարբեր գրադարաններում: Այս հանդիպումները հիմք էին հանդիսանալու նախապատրաստելու նյութեր՝ գիտնականի ծրագրած արևմտահայության հանրագիտարանի համար ևս:

Վերադարձին, 1978թ. «*Cumhuriyet*» թերթի թղթակից Քեմալ Օզդեր ընդարձակ հարցազրույց է հրատարակում գիտնականին հետ<sup>48</sup>: Հիմնական հարցումները նախածե-

նելիք «Թուրքական մեծ հանրագիտարան»-ին էին վերաբերում, արտասահմանյան երկրներում, մասնավորապես ՍՍՀՄ-ում այս առթիվ նրա կատարած ուսումնասիրությունների:

Հուլիսին, ուսումնասիրությունները շարունակելու համար Ռուսիայի Սոցիալ և Քաղաքական Գիտությունների Ազգային Կոնգրեսի հրավերով մեկնում է Բուխարեստ, հանդես գալիս զեկուցումներով, հոդվածներով: Նրա շնորհիվ թուրք-ռուսիական գիտական կապերը ևս աշխուժացում էին ապրում<sup>49</sup>:

Բարս Թուղլաճին զարմացնում է իր աշխատունակությամբ, հնարավոր բոլոր երկրների և քաղաքների հայտնի գրադարանների, արխիվների այցելությամբ ու ուսումնասիրությամբ: Այդ ընթացքում նա նաև զեկուցումներով է հանդես գալիս հայ և օտար գիտական շրջանակներում: Բարսեղ Թուղլաճյանը հյուրընկալվում է սկյուտրի հայկական շրջանակներում, ջերմ հարաբերություններ պահպանում հայ մտավորականների հետ: Այս հանդիպումները երբեմն զարմանալի հայտնագործությունների առջև են կանգնեցնում նրան: Այսպես օրինակ, Բեյրութի Ամերիկյան համալսարանի արխիվներում աշխատելու ժամանակ նա հյուրընկալվում է հայտնի բանաստեղծ Վահե Վահյանին: Վերջինս հյուրին Խորեն Սկրտչյան անունով մեկին է ծանոթացնում: Ջրույցի ժամանակ Խորեն Սկրտչյանը հարցնում է. «Ախ, արդյոք ինչպե՞ս է մեր աղջիկը, վաղուց է նրանից լուր չունենք: Արդյոք ապրո՞ւմ է...»: Ջարմացած հյուրին պատմում են, որ խոսքը «Թուրքիայում և աշխարհում առաջին զինվորական կին կործանիչ օդային Սաբիխ Գյուլչեհի (*Sabiha Gökçen*, Խաբուն Սեներջյանը 1913 -2001) մասին է, որը Աբարուրքի 8 որդեգիր հոգեզավակներից մեկն է եղել: Պարզվում է, որ Սաբիխ Գյուլչեհի հորեղբայրն էր հարցնողը: Աղջնակի իրական անունը Խաբուն է եղել: Երկու տարեկան Խաբուն Սեներջյանը եղեռնի ժամանակ կորցրել էր ծնողներին, հարազատներին և հայտնվել Բուրայի որբանոցում: 1925թ. Բուրսա եղած ժամանակ Մուստաֆա Քեմալը (*Mustafa Kemal Atatürk*, 1881-1938) այցելում է որբանոց և չափազանց հավանելով աղջկան, որդեգրում է, իր հետ տանում Անկարա: Եղեռնից մազապործ ազատված որդուհու հորեղբոր ընտանիքը առիթ է ունենում Բեյրութում գաղտնի հանդիպելու նրան, պատմելու իրենց ընտանիքին հասած դժբախտությունների մասին և շարունակում տարիներ շարունակ գաղտնի հետևել իրենց ազգակառուցու կյանքին: Խեղճ Խորեն Սկրտչյանը ցավով ասում է, թե շուրջ 10 տարի է, որ ոչ չի լուր չեն կարողացել ունենալ իրենց աղջկանից: Կարծելով, որ Թուղլաճին ծանոթ է Սաբիխային, խնդրում են փոխանցել նրան Բեյրութի իրենց հասցեն, որ վերջինս գոնե մի անտորագիր նամակով իրենց լուր տա: Պոլիս վերադառնալով, Թուղլաճին այցելում է մոտիկ բարեկամուհուն, քանդակագործուհի Սիրվաթ Շահբազին, որը 1938թ. նրա կիսանդրին էր արել: Տիկինը նախ մերժում

49 Հրատարակվում են երկու երկրների արխիվային նյութեր: XVII-XVIIIդ. ռուս-մոլդավական քաղաքական գործիչ, գիտնական Դիմիտրի Կանտեմիրի (*Димитрий Кантемиръ*, 1676-1723) «*Օռնանյան պարսկություն*» լատիներեն երկը 200 տարի անց ռուսիացի պատմաբան Նիկոլային Յորգան (*Nicolae Iorga*, 1871-1940) հրատարակում է գերմաներեն թարգմանությամբ: Բուխարեստում 1976թ. 40 000 տպաքանակով հրատարակվում է ռուսիացի քուրթաբեկ Մուստաֆա Մեհմեդի (*Mustafa Mehmed*) «Թուրքիայի պարսկություն»-ը և այլ երկեր: Բարս Թուղլաճին այս մասին հանդես է գալիս «*Cumhuriyet*» թերթում: Pars Tuğlacı, *Ansiklopedisinin Belgesel Olduğumu Söyledi*. «*Cumhuriyet*», İstanbul, 8.02.1978.

48 Kemal Özer. *Tuğlacı, Ansiklopedisinin Belgesel Olduğumu Söyledi*. «*Cumhuriyet*», İstanbul, 8.02. 1978.

է, ապա լսելով Սարիհայի հորեղբոր պատմությունը համաձայնվում է կատարել Թուղլաճիի խնդրանքը: Որոշ ժամանակ անց տիկին Շահբազը զանգահարում է հրավիրում նրան Քուրբուլուշ բաղի իր արվեստանոցը: Նա պատմում է, որ առաջին իսկ Անկարա կատարած այցելության ժամանակ տեսակցել է Սարիհայի հետ: Վերջինս առողջական խնդիրների վատացման և որոշ հարցերի պատճառով չի կարողացել գտնել Բեյրութ տեղափոխված իր հորեղբայրներին: Տիկին Շահբազը փոխանցել էր Բեյրութում նրա հորեղբորը հանդիպած Բարս Թուղլաճիի պատմությունը: Հիլդա Էքմեքճյանի գրքում տեսնում ենք Աբարտյուրին Սարիհա Գյոքչենիի հետ օղաչուի համազգեստով նկարները, ինչպես նաև նրա Սիրվադը Շահբազի քանդակները<sup>50</sup>:

**1980-ական թթ.** Թուղլաճին մի շարք կարևոր հոդվածներ է տպագրում բուրբերեն «*Yillar Boyu Tarih*» հանդեսում: Թուրքիայում արդեն համբավ, կառավարական շրջանակների մոտ առանձնաշնորհյալ հարաբերություններ ունեցող քառաքանակյի կարծես բն որոշ չափով հեռանում է իր հիմնական նախասիրություններից՝ բժշկական, լեզվաբանական տարրեր քառաբանների ստեղծումից և հետաքրքրվում արևմտահայության ստեղծած մշակութային արժեքներով: Իհարկե, սա լավ էր, քանի որ ամեն մեկը համարձակություն չէր ունենա այս մասին բարձրաձայնելու, որքան էլ որ դրանք ակնհայտ արժեքներ էին: Այս հոդվածները հիմնականում վերաբերում են Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում հայերի ունեցած ներդրմանը: Տարբեր քննազավտների, հայ հայտնի անձանց մասին համառոտ գրությունները Բարս Թուղլաճին հրատարակում է հիմնականում Ստամբուլի «*Yillar Boyu Tarihi*» հանդեսում<sup>51</sup>:

Այսպիսիներից է հայտնի քանդակագործ Երվանդ Օսկանի մասին «*Առաջին արչանագործ վարպետը*» հոդվածը<sup>52</sup>: Երվանդ Օսկանը (1855-1914) ոչ միայն իր մասնագիտությամբ է համարվել Թուրքական փառքերից, այլև իր մոտիկ բարեկամի՝ հայտնի նկարիչ, հնետաբան, Օսման Համդի բեյի (Osman-Hamdi-Bey, 1842-1910) հետ համատեղ հիմնադրել են Արվեստների Ակադեմիան (այսօր այն կոչվում է Միմար Սինանի<sup>53</sup> անվան, 1883թ.), թողնելով բազմաթիվ աշակերտներ և սեփական ձեռքբերված պատրաստված Ակադեմիայի արձանների կադավարների ողջ կազմաբաժնով, ինքնին Ստամբուլի Հնագիտության թանգարանը, որ գտնվում է Այա Սոֆիայի մոտ, մասնակցել հնագիտական արշավանքների աշխատանքներին, եղել հավաքածուի լավագույն վերականգնող<sup>54</sup> և այլն:

Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի հրավերով փետրվարին Բարս Թուղլաճին մեկնում է Մոսկվա, շարունակելու իր պրպտումները: Հրավերում մասնավորապես ասվում էր, որ երկու շաբաթվա համար հրավիրվում է Մոսկվա, որի ընթացքում կարող է աշխատել գրադարաններում: Ավելին, ՄՍՀՄ Գիտությունների Ակադեմիան իր վրա է վերցնում Մոսկվայում գտնվելու ընթացքում հյուրի ծախսերը, բացի ճանապարհաձախսից: Նույնպիսի պայմաններով 1981թ. հրավերում հետաքրքիր հավելում կա: Նա հրավիրվում է պրպտումներ կատարելու «Թուրքական մեծ հանրագիտարանի» համար: Իսկ «Մոսկտական մեծ հանրագիտարանի» (ռուսերեն) 26-րդ հատորում տեսնում ենք Բարս Թուղլաճիի կենսագրականը:

Վերջինս կարևոր հոդվածներ է հրատարակում նաև բուրբերեն լեզվի և գրականության մասին: Թանգիմաթի շրջանին նվիրված հոդվածը, որ գիտնականը վերնագրել է՝ «*Արդուլունեջիդ սուլթանի շրջանի լեզուն և գրականությունը*»<sup>55</sup> նոր գրական բուրբերեն լեզվի և գրականության ստեղծման նախապատմությունն է: Լեզուն՝ արաբերեն, գրականությունը՝ արաբա-պարսկական: Այն անգրագիտության էր դասապարտել երկրի գերակշիռ մասին: Այն նաև խոչընդոտում էր երկրի զարգացմանը: Թուլլ չէր տալիս Օսմանյան գրականության և հեղափոխական գաղափարների լիարժեք ներմուծումը եվրոպական կայսրություն:

Թուրբերեն լեզվի հեղափոխական վերածնունդը թուրք երիտասարդ գրողների-լուսավորիչների հիմնական նպատակն ու երազանքն էր: Որքան էլ որ մեծ էր այդ ցանկությունը, բուրբ երիտասարդ լուսավորիչների համար, որոնք տարիներ անց դարձան և այսօր ինչվում են որպես դասականներ՝ նրանց կողմից մնաց և համարյա անլուծելի: Նրանք չկարողացան վեր բարձրանալ դեպի խոսակցական և գրական բուրբերենի ոսկի միջինը: Իսկ օսմաներենով արտահայտվելը կասեցնում էր այդ նպատակի իրագործումը: Չճոռանանք ինչել, որ գրատպության մուտքը Օսմանյան կայսրություն տեղի ունեցավ իրեն և հիմնականում՝ հայ տպագրիչների շնորհիվ: Այս մասին գիտնականը գրել էր հայ հրատարակիչներին նվիրված իր ընդարձակ հոդվածում<sup>56</sup>: Գրատպության Օսմանյան կայսրություն մուտք գործելու շրջանում տպագրել արարատառ գրականություն՝ մեծ մեղք էր համարվում, քանզի այն սուրբ Կուրանի դեմ մեղանչել էր դիտվում:

Հիմնական գերիշխողը՝ դիվանային գրականությունն էր: Իրողություն, որը կասեցնում էր նոր բուրբերեն լեզվի և գրականության զարգացումը՝ որպես ժամանակի պարտադիր պահանջ: Իհարկե, հոդվածագիրը հավեր պատշաճի է ներկայացնում դիվանային գրականության այս շրջանը, նրա կարևոր ներկայացուցիչներին, հավելելով, որ Մահմուդ Բ, Աբդուլ Մեջիդ սուլթանների հայերը՝ սուլթան Աբդուլազիզի պալատում ստեղծագործում էին 20-30 պոետներ, չճոռանալով ժողովրդին սիրելի և հայտնի դարձած մի շարք սբանչելի, հայազգի աշուղների մասին: Այս ամենից հետևում էր, թե իրա-

թանգարանում, որը ճիշտ Այա-Սոֆիայի կողքին է: Այստեղ, երբ դրան մոտ դրված խնդրակալին մի լուսանկարում ենք գտնում Երվանդ Օսկանի մյակ նկարը, միջնուկ թանգարանի իր հիմնադրամք, և գլուխըստեղ հիմնականում պարտավան է նրան և ընկերոջը՝ Օսման Համդի բեյին:  
 55 Pars Tuğlacı, *Sultan Abdülmecid Devrinde Dil Ve Edebiyat*, Milliyet Sanat Dergisi, İst., 1980, nisan.  
 56 Pars Tuğlacı, *Türk Gutenberg’i Mühendissyan Efendi*, İst., Yillar Boyu Tarih, 1980թ..

50 H.Ekmekeçyan, Pars... էջ 253-255.  
 51 «*Yeni Yüzyıl*» պարբերականում Էլիզ Բեհմուարազը (Lizi Behmoaraz) հարցազրույցը վերնագրել է «*Թուրքերին լեզվի հայ ուսուցիչ Բարս Թուղլաճը*» (Türk Dili Ermeni Öğretmeni Pars Tuğlacı, İst., 27.01.1995.  
 52 Pars Tuğlacı, *İlk Heykel Ustamız*, İst., *Yillar Boyu Tarih*, 1980թ., *հունվար*. Երվանդ Օսկանի մասին տես մեր ժամանակի ակադեմիո արվեստագրան Գարո Քյուրյումանի մեծարժեք գրքում (Garo Kürkçan, *Osmanlı İmparatorluğunda Ermeni Ressamlar*, İst., 2004, 2 cilt, 988s. ), ինչպես նաև մեր «*Հայերի ներդրումն...*» գրքում:  
 53 2020թ. Ստամբուլի Աբարտյուրի անվան մշակույթի կենտրոնի բացումը նախատեսվում է անել երաժշտության արդիներ Քերտրան Բոնայի ինդիանակաձ Միմար Սինանին նվիրված (*Berton Ronca*) «*Ənyu Ufünə*» (Մեծ Սինան) ժամանակակից օպերայով, որը պատվիրվել է երկրի նախագահ Թայյիբ Էրդողանի կողմից:  
 54 Ստամբուլ կատարած մեր յուրաքանչյուր այցելության ժամանակ փորձում ենք լինել Հնագիտության



կանում ինչպե՞ս երիտասարդ գրողները հայտնի դարձան և լուսավորչներ հռչակվեցին, ինչպե՞ս ծնվեց թուրք նոր գրականությունը և գրական նոր թուրքերեն լեզուն: Այս հարցերի պարզաբանումները տեսնում ենք Թուղլաճիի հայ քառյուծին, հայ հրատարակիչներին և գրատպությանը նվիրված հոդվածներում: Ավստոս, որ հեղինակը ներկայացնելով հիմնական պատկերը, չի մանրամասնում, բացառում դրանց հիմնական արդյունքը, որպես մշակութային այդ հսկա հեղափոխության գործող շարժիչ ուժ: Գուցե մե՞նք չենք հանդիպել... Մինչդեռ դա այնքան ակնհայտ էր: Երիտասարդ թուրք գրողները, որ համախմբվել էին հայկական բատերախմբերի շուրջը, հայ դեբասանապետների պատվերով եվրոպական լեզուներից թարգմանություններ, աղապատացանք էին կատարում՝ բատրոնի համար, փորձում էին նպաստել թուրքերենով բատերական ներկայացումների լեզվի գրական աստիճանի բարձրացնելուն, գրում և հայկական րեմերում մեծ հաջողությամբ ներկայացնում էին իրենց դրամատիքը՝ եվրոպական համարահայտ երկերի նմանողությամբ. սակայն թուրքագլուխ միջավայրով ու անուններով, իրենց հայրենասիրական, լավագույն զգացումներն արտահայտելով պիեսներում: Իրականություն է, որ մրանք խոստովանում էին, որ եթե չլինեին հայ դերասանապետների իրենց տրված պատվերները, ապա չէր լինի ո՛չ թուրք նոր գրականությունը, լուսավորիչները և ապա ման՝ թուրք դրամատուրգիան, քառյուծը<sup>57</sup>:

Նայ գիտնականը թուրքական, մասնավորապես Ստամբուլի իշխանությունների կողմից դիտվում է որպես հայ համայնքը ներկայացնող հայրենակից: Օրինակ, Ստամբուլի քաղաքապետի հետ միասին մարտի 1-ին նա է կատարում «Մարալ» հայկական պարախմբի համերգի բացումը «Շան» կինոթատրոնի սրահում: Համատեղ այլ հանդիսություններում և ս գիտնականը պարտադիր մասնակից է. գլխավոր բանախոս:

Անգլիացի ազգագրագետ, ճանապարհորդ Ֆիլիպ Մարտենը 1994թ. Ստամբուլ իր այցելության հուշերում, «Խաչմերուկ» գրքում<sup>58</sup> գրում է՝

«Տեսա 19-րդ դարի ստամբուլյան հրաշալի ճարտարապետների Պալյան գերդաստանի մասին մի նոր գիրք»: Ֆիլիպ Մարտենը պատմում է Օսմանյան կայսրության մեծավորման շրջանից արևմտահայության կյանքի մասին, Կայսրության կյանքում հայերի ներդրման և ինտրիկե անդրադասնակով իրեն իրացնումը պատճառած Բարս Թուղլաճիի ուսումնասիրությանը, պատմում է նաև Ստամբուլը աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկը դարձրած պալյանական ստեղծագործությունների, Պալյանների ճարտարապետական գերդաստանի մասին: Նրան ցցեց էր Սինանի հայկական ծագման մասին նյութը: Նա ինչու է նաև ֆրանսիացի ճանապարհորդ նկարիչ Վան Մուրի

(Jean-Baptiste Vanmour, 1671-1737) մի արտահայտությունը, թե 18-րդ դարում Ստամբուլի ճարտարապետները հիմնականում եղել են հայերը:

1981թ. նոյեմբերի 24-ի «Cumhuriyet» թերթը տպագրում է Բարս Թուղլաճիի կողոպույին նոր ուսումնասիրության լույս տեսնելու մասին ազդող: Այն շարունակում էր հատկացնել հեղինակի գիտական ուսումնասիրությունների կարևոր ուղղություններից մեկը՝ արևմտահայության նշանակալի ներդրումը թուրքական կյանքի տարրեր, այս դեպքում՝ մշակույթի, քաղաքաշինության ասպարեզում: Այն Պոլիսը ճարտարապետական հրաշալիքներով ծաղկեցնած Պալյան փառավոր գերդաստանի պատմությունն է, որոնք եվրոպական տիպի առաջին մեծածավալ, հրաշագեղ շենքերն ու պալատները կառուցեցին Եվրոպան և Ասիան միացնող քաղաքում<sup>59</sup>: 352 մեծածավալ, նկարագրող էջերում տրվում է օսմանյան ճարտարապետության համար բեկումնային՝ եվրոպականացման շրջանի պատմությունը, որը կենտրոնանում է Պալյան ընտանիքի մի քանի սերունդների պատմության շուրջ: 615 գունավոր և 374 սև-ճեղքակ նկարները, փորագրանկարները, մանրանկարները, քարտեզներն ու լուսանկարները հյուսում են մի քանի սուլթանների օրոք այս փառավոր ընտանիքի 9 հանճարեղ ճարտարապետների պատմությունը, որն այսօր նույնաման է Ստամբուլի ճարտարապետության լավագույն հուշարձանների պատմության հետ: Մուստաֆա Գ-ից մինչև Աբդուլհամիդ Բ սուլթանների օրոք, շուրջ 90 տարիների ընթացքում կառուցվում է 42 պալատ, 10 գորհանոց, 6 մզկիթ, 11 եկեղեցի, 1 աշտարակ, ժամացույցի 3 աշտարակ, 4 քրատար աշտարակ, 5 ֆարրիկա, 2 իվանդանոց, 4 դպրոց, 3 ոստիկանատուն, դամբարան, թատրոն, արհեստական կղզի, զինանոց և այլն: Պալյանների ընտանիքի հետ և կապված Թուրքիայում ճարտարապետության, քաղաքաշինության արևմտյան, եվրոպականացման սկզբնավորման պատմությունը: Գիրքը մեծ ոգևորությամբ է ընդունվում: Այն համարվում է օսմանյան մշակույթի պատմության կարևորագույն մի շրջանի մասին կարևոր և լավագույն ուսումնասիրությունը: Սա նաև մաս է կազմում հայ ժողովրդի ճարտարապետության արևմտահայ հատվածի հարուստ պատմությանը: Հեղվածներ են լույս տեսնում կարևոր պարբերականներում, մասնագիտական հանդեսներում<sup>60</sup>: Թուղլա-



57 Տես՝ մեր «Հայերի ներդրում...» գրքի քառյուծի և երաժշտության մասին գլուխները՝ 505-566 էջերում:

58 Անգլիացի գրող, ճանապարհորդ Ֆիլիպ Մարտենը (Philip Marsden, ծն.1961), հեղինակ է «Հանդիպման վայրը. ուղևորություն հայության մեջ» գրքի, որն արժանացել է Սոմերսեթ Մոեմի անվան մրցանակի (1994): Գիրքը արևմտահայերեն լույս է տեսել Անթրախայում 1999թ.-ին: Գիրքի ուսուցիչն արագամտությամբ Փոլոու Մարսեն, «Nepcekarok» լույս է տեսել Մոսկվայում, 1995թ., «Ֆենիքս» հրատարակչության կողմից: Այս նամակի մասին տես՝ 108-109 էջերում (թարգմ. Моква, «Феникс», 1995 է., էր. 108-109): Philip Marsden, «International Herald Tribune» (01.06.2001թ.) «1915-1917 թվականներին Թուրքիայի իշխանությունները հայ ժողովրդի նկարմանը ...» հոդվածը Մեծ Եղեռնի մասին հրապարակախոսության ազնված օրինակներից է:

59 Pars Tuğlacı, *Osmanlı Mimarlığında Battalya Dönemi ve Balyan Ailesi*, İstanbul, 1981, 352s. Այսինքն տես՝ Pars Tuğlacı, *Osmanlı Mimarısını...* İst. Հեղինակը համառոտ հոդված է հրատարակում նաև *Yıllar Boyu Tarıh* պարբերականի փետրվարյան համարում: Տես՝ Pars Tuğlacı, *Osmanlı Mimarısını...* İst., *Yıllar Boyu Tarıh*, 1983, 38ab.

60 İbrahim Taarı, *Osmanlı Mimarlığında Battalya Dönemi Üzerine Geçmişte Dayalı Bir Araştırma*, İstanbul, *Milliyet Sanat Dergisi*, 10.09.1982. Գրքի մասին հոդվածներ և հարցազրույցներ հեղինակի հետ շարունակվում են հրատարակությունը տարիներ անց եւ. Ապազա օրինակ, «İnce Ruhlu Mimarlar» (Օլուրը, ոգեղեն ճարտարապետները) վերնագրված «Cumhuriyet»-ի հարցազրույցը մեկ

ճին այստեղ հիշատակում է Թուրքիայի ամենամեծ ճարտարապետի՝ Սինանի ծագումով հայ լինելու, մանկության տարիներին տղահավաքի (դևլչորմե) գոհ, ապա՝ ինչպես պարտադիր արվում էր, բռնի մուսուլմանացված լինելու մասին: Իհարկե, այս խնդիրը չափազանց ցավոտ էր թուրքական շրջանակների համար<sup>61</sup>: Այս հրաշալի իրատարա- կությանն անորադատուն են նաև հայկական պարբերականները: Իրար են հաջոր- դում Բարս Թուղլանին ուղղված շնորհավորագրերն ու շնորհակալագրերը Թուրքիա- ի ամենատարբեր բնագավառի անվանի մարդկանցից՝ Ռազմաժողպին ու ռեժիսի հրա- մանատարից, Թուրքիայի օդային ուժերի հրամանատար Թահսին Շահինթայայից (Tahsin Şahinkaya, 1925-2015) սկսած մինչև հայտնի մտավորականների հողվածները կենտրոնական մասնաճյուղ, կարևոր հանդեսներում: Այս հողվածներն արժանահիշա- տակ են նաև այն առումով, որ խոսելով և գնահատելով տվյալ իրատարակությունը, յուրաքանչյուր հեղինակ այս կամ այն կերպ, ակամա կամ ստիպված է լինում հիշել հայերի ունեցած ներդրումների մասին, մասնաճյուղ տարբեր բնագավառներում իրենց կարևոր հետքը թողած մի շարք հայ անուններ: Թուղլանի գրքի մասին ընդարձակ հող- վածաշար է տպագրվում «Yıllar Boyu Tarih» պարբերականի տարեկերչյան համա- րում<sup>62</sup>: Հողվածագիրները առանձնացնում են այս գիրքը, ճմառ թեմայով մինչ այդ լույս տեսածներից, մատնանշելով թուղաչիական ուսումնասիրության առավելություննե- րը: Որոշ հեղինակներ եղջուրնելով հանդերձ գրքի լույս աշխարհ գալը, նաև նշում են, որ լուրջ ուսումնասիրության և ուշադրության են արժանի նաև օսմանյան ճարտարա- պետության «Թուրքական բարոկկո» (1740-1810թթ.), «Թուրքական ամպիր» (1860- 1910թթ.), Էլեկտիկի շրջանները (1860-1910): Մինչ այսօր Ստամբուլի ճարտարապե- տությունը հանդիսանում է գիտական ուսումնասիրությունների առարկա, դոկտորա- կան թեզերի նյութ: Այս գործերում անպակաս են հիշումները Բարս Թուղլանի Պալան գերդաստանի մասին գրքին<sup>63</sup>:

անգամ ևս հնարավորություն է տալիս տպագրությունից շուրջ 8 տարի անց կրկին անդրադառնալ 17-րդ դարից սկսվող Օսմանյան կայսրության հայ հայտնի ճարտարապետների պատմությանը, ամուսն ատ ամուսն հիշել նրանց ոչ միայն քաղաքաշինական, նաև այլ բնագավառներում նրանց ներդրումների մասին (բարտրոնի և գրողների) հովանավորություն, արևմտյան սպանների մասնորոշող արտասահմանից եկած անվանի մարդկանց և երկրի մշակույթի հայտնի մարդկանց կապերը, անգամ իրենց տներում համերգներ, ներկայացումներ կազմակերպելու, միմյանց քայքայեցնելու, ոգեշնչելու և նրանց ծյալերիին հովանավորելու, Բաղդադի երկաթուղին հիմնելու համար ընկերություն հիմնադրելու, անգամ Սուլթան Աբդուլազիզի օրոք Ալվազովսկուն Թուրքիա հրավիրելու նախաձեռնությունը և այլն և այլն: Հեղինակն օրախ է, որ կավառյան ընդունելության է արժանացել և հասցրել իր երկր քարգմանել տարբեր լեռներով: Անհնավարտեղը, որ այս շրջանը եղել է թուրք-հայ մերձեցման շրջան և ցավալի է, որ այսօր դրա դեմ շքրեստացողներ կան: Թուղլանը հուսով է, որ այս գիրքը կարող է նպաստել թուրք-հայ հարաբերությունների լավագույն ժամանակների վերականգնմանը: Şbu Alpay Kabacalı, *Ince Ruhlu Mimarlar*, « Cumhuriyet» օրաթերթ, (Ստամբուլ, 7.12.1990թ.):

61 Այսօր Թուրքիայում ճարտարապետության ասպարեզում միջազգային ավանդական մրցանակաբաշխությունը Միմար Սինանի անվամբ է հայտնի: 2020թ. 17-րդ մրցանակաբաշխության մրցանակակիրների թվում պոլսահայ նշանավոր ճարտարապետ Լուան Յալուզյանն արժանացել է «Միմար Սինան մեծ մրցանակին»- Տես *Uşaklılar* օրաթերթ, (Ստամբուլ, 16 հունիս, 2020թ.):

62 *Osmanlı Mimarlığında Batılılaşma Dönemi ve Balvan Ailesi*, İst., Yıllar Boyu Tarih, 1982. Aralık.  
 63 Mehmet Çağlayan ÖZKUR, *Tanzimat Cumhuriyet'e Başkent İstanbul'da Ekonomi, Siyaset ve Mimarlık İlişkileri*. (1839-1923) Doktora Tezi, İst.,-2016, 696s.

Այսօր Թուրքիայում ճարտարապետության ասպարեզում միջազգային ավանդա- կան մրցանակաբաշխությունը Միմար Սինանի անվամբ է: Բարս Թուղլանին հեղի- նակում է «Հայկական Սովետական Հանրապետության» 9-րդ հատորում երկէջանոց Պալան գերդաստանի ճարտարապետների մասին հողվածը: 1990թ. լույս է տեսնում գիրքը անգլերեն լեզվով<sup>64</sup>: «Hürriyet» օրաթերթի հավելված «Dateline» պարբերա- կանն ընդարձակ կերպով ներկայացնում է խոշոր մի հողված (5.05.1990թ.) Պալան ճարտարապետական գերդաստանի մասին գրքի անգլերեն տարբերակի հրատա- րակման առթիվ, տեղադրելով Օրբազյուղի հիարանն՝ մգկիրի նկարը<sup>65</sup>: Տարեկերչին Թուրքիայի Հանրապետության Վարչապետարանի Պետական Արխիվների Գլխավոր տնօրինությունը գիտնականին քոչյ է տալիս շարունակելու իր ուսումնասիրություն- ները Օսմանյան շրջանի արխիվներում: Հեղինակը բազմաթիվ հրավերներ է ստանում արտասահմանից, մասնավորապես հայկական շրջանակներից: Հետաքրքրական է, որ Պոլսահայ միությունը իր հերթին նպաստում է այդ ճանապարհորդությունները կազմակերպելուն: Անգամ հանձնարարվում է, որ Էսայեան դպրոցի հանձնախումբը հրավիրյալ երկրում կազմակերպի մի խումբ, որն իր հերթին կազմակերպելու է գիտնա- կանի երեկոները, կարևոր անձանց հետ հանդիպումները:

Համընդհանուր գնահատման ու ոգևորության այս շրջանում հակասակ տրամադ- րության մի ալիք է քարծրանում: Սևա առաջին արձագանքներից մեկի վերնագիրը, որ տպագրվել էր Անկարայի «Yeni Düşünce» թերթում «*Ո՞ր է Բարսի Թուղլանին և ո՞րդեղից է համարչակություն ստացել իրարարակելու այս գիրքը*»<sup>66</sup>: Հողվածագիրն անամոթաբար հերքում է այն ամենն, ինչ ստեղծել են հայերը և ինչը կապված է հա- յերի հետ: «...Չկա հայ երաժշտություն, չկա հայ բանաստեղծություն: Հայերի ձեռքից ոչինչ չի գալիս, միայն կոպիտ գործեր...»: Հողվածը լի է անգատով, զագրելի արտա- հայտություններով ու մեղադրանքներով:

Հուճիսի վերջին «Güneş» թերթը գրում է, որ Թուրքիայի «Turing» ընկերության գլխավոր քարտուղար, փաստաբան Չելիք Գյուլբարաջ (Çelik Gülersoy) դատի է տվել Բարս Թուղլանիին, վերջինիս մեղադրում Պալանների մասին գրքում որոշ կառույց- ներ հայ ճարտարապետների վերաբերյալ, օսմանների բոլոր շեքերը հայերի կողմից կառուցված լինելու գրելու համար:

«Altayhan» իրատարակությունում տպագրվում է Թուղլանիի գրքույկը, որը պա- տասխան է հեշեցված ծանր մեղադրանք-հանցանքներից: Պոլսոս գրքույկի բնաբան ընտրված է Աբաթուրիի «Tarih Hayal Mahsulü Olmaz» (Պատմությունը երևալայա- կան բան չի կարող լինել) խոսքերը: Ասվում է նաև, որ պատմությունը գրելիս պետք է փնտրել, գտնել անցյալի եղելությունները: Երե չգտնենք, ապա ստիպված ենք խոս- տովանել այս հարցում մեր անտեղյակ լինելը: Պալանների մասին գրքի հեղինակը մանրամասնորեն ընմուրյան է առնում յուրաքանչյուր մեղադրանք: Որպես հաստա- տումն իր ուսումնասիրության, նա բազմաթիվ հայ, թուրք և օտար աղբյուրներ է ներ-

64 Pars Tuğlaçlı, *Role of The Balvan Family In Ottomann Architecture*, İst., 1990. 744p.  
 65 Nükte Devrim *Bouvard Balvan family mark all over Istanbul*, «Dateline», İst. 5.05.1990.  
 66 Ramazan Özkan, *Pars Tuğlacı Kimdir ve Nereden Çüret Alarak Bu Kitabı Yayınlamıştır*, Ankara, «Yeni Düşünce», 18. 05.1984.



կայացնում: Բարս Թուղանի-գիտնականը, իր ուսումնասիրություններում թերությունների դեմ բողոքողների, նույնիսկ ծայրահեղ, անտեղի և կոպիտ վերաբերումներին ի պատասխան միշտ հարգանքով և բացատրություններ ներկայացնելով, ներողամտությամբ է վերաբերվում, շնորհակալ է լինում, եթե դրանք ճիշտ դիտողություններ, ուղղումներ են պարունակում: Այս ընթացքում և հետագայում ևս, գիտնականի դեմ ծանր զավախությունների շրջանում, լույս են տեսնում Պալյանների հսկայական ներդրումն աթժևորող, հեղինակին երախտի խոսքեր ասող հեղաղծներ<sup>67</sup>, որոնք շարունակվում են հաջորդ տարիների ընթացքում՝ որպես կանոն մեղադրելով գրքի վրա հարձակում գործողներին, կոպտորեն փոխադարձում են նրանց, փորձելով փակել նախանձ գազախոսների հաջորդ հարձակումները<sup>68</sup>, համարելով այն աններելի՝ Ստամբուլի պատմության նկատմամբ<sup>69</sup>:

**1985 թ.** հունվարին Չելիք Գյուլբրտյի հայրը դատարանի կողմից անհիմն է որակվում և դատական գործն ավարտվում է ի շահ Բարս Թուղանիի:

Գիտնականն ընտրվում է Ստամբուլի «Թուրք հրատարակչական միության բարձրագույն խորհրդի» անդամ:

**1983 թ.** լույս է տեսնում մեծ ծովանկարչի Հովհաննես Այվազովսկուն (1817-1900) նվիրված «Այվազովսկին Թուրքիայում»<sup>70</sup> գիրք-ալբոմը: Գիրքը ջերմորեն ողջունել են հայտնի մտավորականներ, քաղաքական գործիչներ, ինչպես օրինակ հայտնի ինտելեկտուալ, քաղաքական, դիվանագիտական գործիչ, բազմաթիվ կարևոր պաշտոններ վարած Քասըմ Գյուլեթը (Kasım Gülek 1905-1996), գրողներ և այլք:

Եվրոպանեստ սուլթան Աբդուլմեջիդի և արյունաքրո Աբդուլհամիդ Երկրորդի հրավերով Այվազովսկին 8 անգամ այցելել է Ստամբուլ: Այստեղ նա առատորեն ստեղծագործել է թուրքական պալատի համար<sup>71</sup>, բողնելով հրաշալի մեծածավալ կտավներ նաև հայկական Պատրիարքարանում: Գիրքը խանդավառ գրախոսականների է արժանանում ոչ միայն Թուրքիայում, այլև արտասահմանյան հեղինակավոր հրատարակություններում<sup>72</sup>:

Իհարկե այս գիրքը, ինչպես որոշները, հանդիպել է հայկական ամեն ինչը թուրքացնելու մրցույթով տարվածների դիմադրությանը: Այվազովսկուն «հարավային Սկյուտարից» հայ վանառականի ընտանիքում կիսով չափ թուրք հոգեբորի տեսնելու պնդմանը Բարս Թուղանին շատ լրջորեն է հակադարձել: Ամենակարևոր փաստարկը, որ

67 Mustafa Cezar, *Osmanlı Mimarlığında Balyan Ailesi'nin Rolü*, Tarih ve Toplum, İst., 1991թ. փետրվար.  
 68 Hasan Pulur, *Dalan-Balyan Kupçusması*, Milliyet, İst., 12.01.1994. & Hasan Pulur, *Dalana Sert Tepki*, *Hürriyet*, İst., 14.01.1994.  
 69 Selçuk Erez, *Dalan'ın İstanbul Öyküleri*, Cumhuriyet, İst., 23.01.1994. Պոլսահայ մեր օրերի արվեստագետ Էլուն Հանչեթը կազմել է Պալյանների մասին պարբերականների և գրքերի 8 էջանոց մատենագիտություն: Sbu Elmon Hançer, *Batılılaşan İstanbul'un Ermeni Mimarları*, İstanbul, Uluslararası Herat Dink Vakfı Yayınları, 2010, 654 Views, 8 Pages.  
 70 Pars Tuğlaci, *Avazovski Türkçüde*, İstanbul, 1983.  
 71 Միայն «Կոլմարսիչ» պալատի ցուցադրության համար բուլղարված սրահներում մեք հաշվեհիմք 20-ի մոտ Այվազովսկու կտավներ, իսկ մի հնավաճառի փակ գրախոսորի ցուցադրությունում տեսանք պատի օրացույց, կազմված Այվազովսկու Թուրքիայում արված կտավների լուսանկարներից: Տալոք սրտի չկարողացար այն ունենալ:  
 72 *Revue des Etudes Balkanique*, Sofya, 1984, մարտ-ապրիլ:

նա ներկայացրել է գրքի առաջին գլխում, դա «Հովհաննես» անվամբ հայ քրիստոնյա մանկան մկրտության փաստաթղթի լուսանկարն է եղել: Այս և մնացած ապացույցները գեղծարարների հնարովի կարծիքները ծիծաղելի են դարձնում<sup>73</sup>:

**1984թ.** «Сем» հրատարակչությունը լույս է ընծայում Բարս Թուղանի բառարանագրի հեքրական՝ «*Թուրքանգլիերեն*» և «*Անգլիերեն-թուրքերեն*» բառարանները<sup>74</sup>:

Այս բառարանների տպագրության առթիվ («*Türkçe-İngilizce Sözlük*», «*İngilizce- Türkçe-Sözlük*»)


«Cumhuriyet» հեղինակավոր թերթի լրագրող Շենյա Քալքանի (Senay Kalkan) այն հարցին, թե ո՞րտեղից է առաջացել բառարանակազմության նկատմամբ սերը, բառարանագիրը պատասխանում է, որ այն ժամանակ է հորից, որն ազատ տիրապետում էր մի քանի լեզուների (գրեթե, կարողալ, խոսել): Գեռես նախակրթարանում նա որդուն ծանոթացնում էր տարբեր լեզուների բառարաններին, սովորեցնում նրանցից օգտվելու ձևը: Անգլիերենի ուսուցիչ Շիլլիթոն (Mr. Shillito) դասարան էր մտնում թեի տակ ունենալով Օքսֆորդի (Oxford) բառարանը և դասի ժամանակ հաճախ կրկնում էր՝ «... տեսներ ինչ է գրում այս մասին Օքսֆորդ-ը»: Հենց նա էլ անգլիերենի, բառարանների նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացրած երկրորդ անձն էր, որին պարտական եմ<sup>75</sup>,- իշյում է բառարանագիրը:

Նույն թվականի մայիսին Ստամբուլի «Polat Ofset Matbaası» լույս է ընծայում Բարսը Թուղանյանի «*Bulgaristan ve Türk-Bulgar İlişkileri*» (Թուրքարիան և թուրք-բուլղարական հարաբերությունները, 558 էջ) հատորը<sup>76</sup>: Այն նվիրված էր Բուլղարիայի կազմավորման 1300-ամյակին: Գիրքը 1923-30թթ. Բուլղարիայի և Թուրքիայի Հանրապետության փոխհարաբերությունների պատմությունն է:

Գրքի հրատարակության առթիվ հեղինակի հետ արված հարցազրույցի ժամանակ Թուղանյան ասում է, որ բացի բառարանգիտությունը գրազվելուց, երբ այցելում էր տարբեր երկրներ, միշտ ցանկացել է ուսումնասիրել հարևան երկրների հետ Թուրքիայի ունե-



73 Չմտանաք, որ երկար տարիներ ուսական մրնուրաում ևս փորձել էին արվում Այվազովսկուն որպես ուս ներկայացնել: Ռուս արվեստագետներից Լև Վազնըն առաջինն էր, որ Այվազովսկու հայ ինելու մասին գրեց իր «*Носетъ о зыдохъе Амазокеази*» գրքում: Այն հրատարակվել է Մոսկվայում, 1958թ.: Ինչպես հեղինակն էր իշյում երևան իր այցելության ժամանակ, գիրքը հարձակումների մեծ ալիք էր բարձրացրել Լև Վազնիի դեմ:  
 74 Pars Tuğlaci, *Türkçe-İngilizce Sözlük*, İst., 1984; Pars Tuğlaci, *İngilizce-Türkçe Sözlük*, İst., 1984.  
 75 Senay Kalkan, *Bir Sözlük Yazarı: Pars Tuğlaci*, Cumhuriyet Kitap Klobü'nün aylık katalogu, İst., 1984.  
 76 Pars Tuğlaci *Bulgaristan ve Türk-Bulgar İlişkileri*, İstanbul, Polat Ofset Matbaası, 1984, 558s. Գրքի հրատարակության մասին զովագրը լույս է տեսել *Cumhuriyet* օրաթերթում (30.05.1984):



ցած փոխարարությունները: Այդ առումով քաղաքային երկրներից ամենամոտոց Բուլղարիան էր: «*Բուլղարիան և բուրբ-բուլղարական հարաբերությունները*» այս առումով առաջին գործն է: Բուլղարական կողմը սիրով ընդունաջել է գիտնականի ցանկությանը, հրավիրել աշխատելու իրենց երկրի գրադարաններում, արխիվներում: Այս առիվ ուսումնասիրողը 1976, 1981-82թթ. այցելել է Բուլղարիա, եղել տարբեր քաղաքներում: Թուրք և բուլղար ժողովուրդների միջև դարերից գոյություն ունեցող պատմական, լեզվական, հոգևոր և էթնիկ կապերը բազմազան են: Օսմանյան կայսրության լծի ներքո 482 տարի նրանք միասին են ապրել: Բուլղարիայի ազգային և քաղաքական անկախության շրջանում բուլղարների Ստամբուլում և Անատոլիայում տեղավորելը, Բուլղարիայում բուրբերի ներկա և ապագա վիճակը կարող է ուսումնասիրության: Բուլ-

ղարական արխիվներում հարուստ նյութ կա Օսմանյան շրջանի մասին: Այն կարիք ունի կանոնավոր դասակարգման:

Բուլղարիան, որ դարեր շարունակ մեծ դժվարությունների միջով է անցել, այսօր աշխարհի երկրների շարքում տնտեսապես, գիտության, մշակույթի նոր շրջան է ապրում<sup>77</sup>:

Որպես գրքի փաստական հավաքածուի աղբյուր՝ նշվում է նաև Թուրքիայի Հանրապետության Վարչապետական արխիվը<sup>78</sup>:

Աղբյուրների մի մասը վերցված է *Hakimiyet-i Milliye* թերթի 1923-27թթ. համապատասխան հոդվածներից, որոնք հիմնականում վերաբերվում են բուրբ-բուլղար հարաբերությունների առաջին տարիներին՝ 1923-1930թթ.: Այս ընթացքում երկու պետությունների միջև երկու կարևոր համաձայնագրեր են կնքվել.

1. «Համաձայնագիր քարեկանության մասին-1925թ.
2. «Պայմանագիր չեզոքության, հաշտության, դատական կարգավորման և արբիտրաժի մասին»- 1929 թ.

1976 թ. սկզբներից Բարս Թուղանյան սկսում է աշխատել բուրբ-բուլղարական հարաբերությունների մասին ուսումնասիրության վրա: Այս առիվ ի պատասխան բուլղարական Ակադեմիային արված իր դիմումների, նա հրավիրվում է Բուլղարիա, ապրիլին մեկնում Առֆիա, լինում երկրի մյուս կարևոր քաղաքներում: Նա ամենուր ջերմ ընդունվելու է և արժանանում, հյուրընկալվում Բուլղարիայի Գիտությունների Ակադեմիա-

77 *Varlık Edebiyat ve Sanat Dergisi*.1985.0cak.  
78 T.C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü Cumhuriyet Arşivi (Dosya No 42632, 42673, 4262-4, 42646, 400-24, 1157, 33-13, 400-370. Bınyek №: 7840, r. 8959)

յի նախագահ, մասնագիտությամբ ինժեներ-գյուտարար Անգել Բալևսկին (Angel Balevski 1910 –1997), հանդիպում Ակադեմիայի 1983-88թթ. փոխարեզիդենտ, պատմաբան, դիվանագետ Նիկոլայ Տոդորովին (Nikolay Todorov 1921-2003), 1947-1962թթ. Բուլղարիայի Գիտությունների Ակադեմիայի նախագահ, փիլիսոփա, ակադեմիկոս Թոդոր Գիմբուրով Պավլովին (Todor Dimitrov Pavlov 1890-1977), անվանի դրամատուրգ, ֆանտաստ գրող Նիկոլայ Հայտովին (Nikolay Haytov 1919–2002), Սովետական Միության հերոս, Բուլղարիայի սոցիալիստական աշխատանքի հերոս, բանակի գեներալ մայոր, վինիվրական հետախույզ Գաբրիել Սարգիսի Գաբրիելովին (Գաբրիելյան, Gabriel Sarkiz Gabriyelov 1904-1978): Բուլղարիայի կազմավորման 1300 ամյակի ազգային տոնի առթիվ և բուրբ-բուլղարական հարաբերությունների շուրջ ուսումնասիրությունները շարունակելու համար Բուլղարիայի Գիտությունների Ակադեմիայի կողմից նա երրորդ անգամ Առֆիա է հրավիրվում և 1980թ. բուլղարական կառավարությունը Բարս Թուղանյանին շնորհում է Ոսկե մեդալ<sup>79</sup>:

Բուլղարական և բուրբական արխիվներում կատարած փաստահավաք ուսումնասիրության արդյունքում հրատարակված այս գիրքը ի տարբերություն նախորդ գրքերի միանշանակ չի ընդունվում բուրբական որոշ շրջանակների կողմից:


«Cumhuriyet» թերթում լույս է տեսնում Oktay Akbal-ի «*Komşularımız İyî Tanımak*» (Մեր հարևաններից լավ ճանաչենք...) հակադարձող հոդվածը<sup>80</sup>: Հեղինակը՝ Oktay Akbal-ը (1923- 2015) բուրբ գրականության և լրագրության անվանի անուններից էր, նշանավոր վիպասան: Հոդվածագիրը նշում է Թուղանյանի կատարած հսկա աշխատանքը, գնահատում ուսումնասիրության ճանաչողական արժեքը և պատմական նշանակությունը: Նա ռզլումում է Թուղանյանի բուրբ-գերմանական, ամերիկյան, ֆրանսիական, Իրանի, Իտալիայի, Ռուսաստանի, խորհրդային հանրապետությունների, Հունաստանի, Հարավսլավիայի իր երկրի հետ հարաբերությունների, դրանց ուսումնասիրություններին ուղղված ջանքերը:

Չի բացառվում, առավել ևս հավանական ենք համարում՝ բուրբական կառավարող շրջանակների կողմից ուսումնասիրության պատվիրված լինելու հանգամանքը, քանի որ նշված ժամանակահատվածում Թուրքիան փորձում էր «ջերմացնել» հարաբերությունները այդ հարևան երկրի հետ, ուստի անհրաժեշտ էր «մեղմել» բուրբ-բուլղարական հարաբերությունների օսմանյան բազմադարյա լծի բացասական էջերը, ի ցույց դնելով դրականը:

**1984թ.** Ստամբուլում լույս է ընծայվում «*Arpaçay ve Yöresi*» (Արփաչայը և նրա շրջակայքը) արժեքավոր ուսումնասիրությունը<sup>81</sup> քաղաքական և կուսակցական գործիչ, հայտնի մտավորական Քասըմ Գյուլեթի (Kasım Gülek) առաջաքանով: Գյուլեթը կարևոր է համարում Անատոլիական տարածքի քաղաքակրթության խառնարանի մասին այս ուսումնասիրությունը: «Հարավային, միջին և արևմտյան անատոլիական շրջաններում մի շարք անվանի գիտնականներ ուսումնասիրություններ են կատարել: Հնագիտական

79 Այս մասին տեղեկացնում է նաև *Yillar Boyu Tarih*-ը. 1984թ., հունիսի.  
80 «Cumhuriyet», 9.06.1984թ.  
81 Pars Tuğlacı. *Arpaçay ve Yöresi*, İst., «Polat Ofset Matbaası» 1984.






պեղումների, հայտնագործությունների մասին տարբեր լեզուներով մի շարք ուսումնասիրություններ են հրատարակվել: Բարս Թուղլաճին լեզուների ու պատմության գիտակ է: Նրա «Arpaçay ve Yöresi» գործը մշակութաբանական գրականության համար նվեր է: Ավելի վաղ հրատարակել է նաև նրա Անիի մասին կարևոր ուսումնասիրությունը և այս գրքերը առաջարանի հեղինակի կարծիքով հրաշալի կերպով կդիմագրավեն տարիներ ի վեր իրենց երկի մեկուսացման դեմ նպատակասլաց կերպով ակտիվ գործունեության ծավալմանն ուղղված պրոպագանդային»-գրում է Քասրճ Գյուլբեր:

Բարս Թուղլաճիի հաջորդ հրատարակություններն են «Օսմանյան շրջանի Ստամբուլի կանայք» և «Օսմանյան պալատի կանայք» բոլորքերն էլ անգլերեն լեզուներով<sup>82</sup>

գրքերը<sup>83</sup> հրատարակված «Altay Han» հրատարակչության անդրադարձանքները նախ և առաջ մատնանշում են հրատարակչական հրաշալի որակը:

Սուլթանի հարեմը փակ է եղել օտարի աչքի համար: Տարբեր երկրներից, տարբեր ժողովուրդների, տարբեր կրոնների պատկանող պալատ ըշված օրիորդները վանդակում փակված բռնակների են մնաճվել: Միշտիս պալատի, հարեմի նկատմամբ հետաքրքրությունն անշափ մեծ է եղել օտար բարձրաստիճան ճանապարհորդների, պալատի հյուրերի, ինչպես նաև այն հեքիաթների գաղտնիքների մտան գայթակղիչ է եղել գրողների և նկարիչների համար: Հարեմի թեմաներով ստեղծված օպերաները, գրական ստեղծագործությունները և գեղանկարչության զարդեր հանդիսացող կտավները հարեմի գեղոհների ու նրանց ճակատագրերի

կատի հյուրերի, ինչպես նաև այն հեքիաթների գաղտնիքների մտան գայթակղիչ է եղել գրողների և նկարիչների համար: Հարեմի թեմաներով ստեղծված օպերաները, գրական ստեղծագործությունները և գեղանկարչության զարդեր հանդիսացող կտավները հարեմի գեղոհների ու նրանց ճակատագրերի



82 Pars Tuglacı. *Osmanlı Döneminde İstanbul Kadınları*. İstanbul, 1984, 215s.  
83 Pars Tuglacı. *Osmanlı Saray Kadınları*. İst., 1985. 351s.

նկատմամբ մեծ հետաքրքրության արդյունքն են և մինչ օրս հիացնում են իրենց երևակայությանը: Եվրոպացի, տարբեր երկրների ու ազգությունների 50-ից ավել նկարիչների փորագրանկարներ, մանրանկարներ, կտավներ պատկերել են հարեմի կանանց և նրանց առօրյան: Այստեղ է հարճեր են, ստրկոհիներ ու ներքինիներ, միջավայրը, հայտնի կանայք, սուլթանների մայրեր, քույրեր, արքայադուստրներ... Մինչ այդ հայտնի էին միայն երեք՝ Հյուրբեմ, Քոնսեմ և Գյուլնուշ դիմանկարները: Հեղինակների թվում են 16-րդ դարից սկսյալ ճանաչված վարպետներ՝ Էժեն Դեկարուան, Ժան Բատտիստ Վան-Մուրը, Գաուտտ Չոնարոն, Ջոն Ֆրեդերիկ Լեվիսը և այլք: 19-րդ դարի վերջից, «Եվրոպասեր» սուլթանների՝ Աբդուլպահի, Աբդուլմեջիդի, անգամ «արյունոտ» հռչակված Աբդուլհամիդ Բ-ի ժամանակ հայտնի են դեպքեր, երբ հյուր թագավորներ, թագուհիներ, նկարիչներ եղել են պալատում, սեփական աչքերով տեսել հարեմի գեղեցկուհիներին, նրանց կենցաղը: Արոմի լուսանկարչական նյութը Բարս Թուղլաճին բաղել է տարբեր երկրների թանգարաններից, գրադարաններից, թեմային վերաբերող գրքերից ու այնտեղ առկա փորագրանկարներից: Հարեմի մասին պատմությունները զբաղեցրել են եվրոպական թագավորական պալատների, սալոնների մարդկանց, դրանց մասին թագմաթիվ գրական ստեղծագործություններն են ծնվել, որոնք լսածի և տեսածի վառ երևակայության արդյունք են եղել: Տղամարդիկ արևելյան գեներտ ու հագուստներ, խալարներ են սկսել կրել<sup>84</sup>, մեմանկելով հեքիաթային ու վայրագ Արևելյի նկատմամբ տալածվող հետաքրքրության նորաձևությանը, իսկ կանայք՝ սկսել են պաշտել մետաքս և շղարշե թափանցիկ հարեմական ոճի հագուստները, կրել չավա հիշեցնող գլխարկներ: Առաջին գրքում 360 սև ու ճերմակ, գունավոր նկարներ, փորագրանկարներ կան, որոնք էսթետիկական հաճույք են պատճառում իրենց բովանդակությամբ ու գեղեցկությամբ, սուրբ տալով խորհրդավոր, գրավիչ ու մեղկ ցանկությունների երևակայականությամբ: Դրանց մեծ մասում ավազաններում լողացող կամ տիրակալին վզարճացնող հուրի փերիներ են:

Գիրքը հետևյալ բովանդակային բաժանումներից է բաղկացած.

1. Հարեմ (23 էջ)
2. Հարեմի կյանքը նկարներում (30 էջ)
3. Հարեմի կանանց առաքելությունը (15 էջ)
4. Հարեմի կյանքը, զվարճությունները, արարողակարգը (23 էջ)
5. Երաժշտությունը Օսմանյան պալատում (40 էջ)
6. Առաջին հարճը և սեմյակները (50 էջ)
7. Տիկնայք և սուլթանի կանայք (32 էջ)
8. Կանայք օսմանյան գերդաստանում (32 էջ)
9. Օսմանյան պալատական կանանց նկարած նկարիչները (2 էջ)

84 Ստամբուլի եվրոպական կնոստրոնում, Պերայում գտնվող Թուրքիայի ամենահարուստ ընտանիքներից մեկի «Sema & İnan Kiraç Foundation» մասնավոր «Pera Museum» պատկերասրահի իմնական ցուցադրության մեջ որոշակի թիվ են կազմում ժամանակի հայտնի նկարիչների՝ եվրոպացի հայտնի քաղաքական ու գեղավորական անձանց արևելյան ոճով հագնված մեծ կտավները, արևելյան կենցաղային թեմաներով յուրակարգերը:

«Cumhuriyet» օրաթերթում գրքի մասին գրած Միդիատ Սերթոլուն (Midhat Sertoğlu)<sup>85</sup> նշում է ուսումնասիրության փաստաթղթերում ներշնչող բազմազան ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, լատիներեն, բուրբերեն հարուստ, լուրջ աղբյուրները: Հողվածագիրը մանրամասնում է, որ հեղինակն օգտագործել է 14 լեզուներով օտար պարբերականներ և 6 ձեռագիր մատյաններ: Օգտագործված են նաև թուրքական պետական արխիվի նյութերը:

Այս առթիվ հիացական բազմաթիվ հոդվածներ են լույս տեսել բուրբ մտավորականների կողմից երկրի կարևոր պարբերականներում, մաղթելով, որ լրացվի 4 հատորների նյութը և արագ հրատարակվի: Մա Բարս Թուղլանի հերթական հաղթանակներից էր, որը բազմապատկում էր Թուրքիայի նկատմամբ հետաքրքրությունը, այն էլ մեծ գեղարվեստական սքանչելի օրինակ հանդիսացող հրատարակությունների շնորհիվ: Գիտնականը գրելով կամանց մասին, փորձել է ինչ որ չափով վարձահատույց լինել պատմության մեջ իր կարևորագույն դերակատարություն ունեցող «ԿՆՈՋԸ, որը տղամարդու ամենամտախի բարեկամն է, նրա համախոհը, որին երբեք հնարավոր չէ «վերադարձնել պարաբը»:

Թուղլանին այս մասին խոսել է Ստամբուլում հրատարակվող «Kadın» (կին) ամսագրի ապրիլյան ընդարձակ մի հարցազրույցում, որ վերնագրված է եղել «*Տուկյա վանդակ հարեն*»<sup>86</sup>: Հեղինակին ուղղել են հարցեր՝ 500 տարի առաջ հարեն ունեցող երկրի մուսուլման կնոջ նկատմամբ վերաբերմունքի, տարբեր երևույթների մասին: Ուստի «հարենի պատմության և կենցաղի հետ կապված, մտքով անցած բոլոր հարցերը շտապել ենք սույլ թուրք-օսմանյան պատմությանը գրադրվող և խնդիրը ուսումնասիրած վարպետներից Բարս Թուղլանին»,- գրում է հողվածագիրը:

Հարցազրույցը հետաքրքիր է և ներառում է մեծ և փոքր հարեմների (որոնց կամանց թիվը ժամանակ առ ժամանակ փոխվում էր, հասնելով կամ անցնելով 300-ը), հարեների, նրանց կենցաղի, կրթության, արվեստների ու արհեստների հետևելու, կրոնափոխ լինելու, զգվառությունների, սուլթանների մահվանից հետո նրանց ճակատագրերի, կայսրության գործերում, քաղաքականության մեջ մաս ունեցած սուլթանների մայրերի և կամանց, արքայադուստրների, հայտնի կամանց մասին կատարված ուսումնասիրություններ, որոնք լրացվել են նրանց նկարներով, 98 մանրանկարներով:

Օսմանյան կայսրությունում հարեմների առաջացումը սովորաբար կապվում է սուլթան Սեհմեղ Ֆարիհի անվան և նրա ժամանակի հետ: Հարեմների հիմնական աղբյուրը աղջկահավաքներն էին: Աղջկահավաքը սկզբում կատարվում էր գրավված վայրերից, որտեղից գեղեցկուհիներն ընտրվում էին հարեմների համար, մնացածներին վաճառում էին: Հետագայում, ստրուկների շուկաներից արված գնումներից հետո բազմազգ գեղուհիներն ուղարկվում էին հարեմներ: Հարեմում ամենապատվավոր և տիրող կինը սուլթանի մայրն է եղել, հետո սուլթանի կամայք (որոնք նաև որոշ չափով «հսկել»

են մնացյալներին), ապա հետո միայն հարճերը, որքան էլ որ նրանցից ոմանք սիրելի են եղել միապետին: Մեծ հետաքրքրությամբ են կարդացվում հարեմի կամանց մասին պատմությունները, սուլթանի կողմից հարճին ընտրելու, ամուսնանալու և կենցաղային այլ մանրամասներ: Հետաքրքիր է անգամ սուլթանի մահվանից հետո նրա ողջ ընտանիքի և հարեմին այլ պալատներ ուղարկելու, շատերին ամուսնացնելու մասին սովորությունը:

Պալատում սուլթանների մայրերը, կամայք հաճախ պայքարի մեջ են մտել երկրի կառավարման հարցերում: Հայտնի են տասնյակի չափ անուններ, որոնք մեծ ազդեցություն են ունեցել պալատում: Այսպես օրինակ Մուրադ Գ-ի սիրելի գեղուհիներից սուլթանի վրա ունեցած Մաֆիյե Սուլթանի ազդեցության մասին հայտնի է եղել նույնիսկ նվիրական բազմաթիվ տներում: Հայտնի է Ֆրանսիայի բազուի Եկատերինա Մեդիչիի ճամակն, ուղղված Մաֆիյե Սուլթանին, խմորելով իր երկրի դեսպանի պաշտպանությունը սուլթանական պալատում:

Հարեմի այլադավան, այլազգի կամայք ծանոթացել են իսլամական մշակույթին ու կրոնին, ընդունել մուսուլմանություն, հետևել երաժշտության, պարի, նկարչության, սովորել են սազ նվագել, կարել: Երբեմն հարճերին ամուսնացրել են, նվիրել, որը ազատություն տալու մեծն է եղել և ընդհակառակը, երբեմն նրանց վաճառել են: Հայտնի է գեղուհիների ուսուցիչներին սիրահարվելու, նրանց հետ հարճերին ամուսնացնելու, կամ դրա պատճառով պալատից վտարվելու օրինակները, պատժվելու՝ ինչպես Սադուլյախ Ալայի և Հաջը Արիֆ բեյի<sup>87</sup> պատմությունները: Հարեմի շուրջ երեք տասնյակ կամանց անուններ են հայտնի, որոնք մեծ ազդեցություն են ունեցել: 19-րդ դարի կեսերից, Թանզիմատի շրջանում հարեմի կամայք ևս մասնակից են դարձել նվիրականացման հոսանքին, որի հիմնական աղբյուրը հայկական թատերախմբերի բուրբերեն ներկայացումներին հաճախելն է եղել: Նրանք նույնիսկ հատուկ օրյակներ են ունեցել թատրոնում: Հարեմի գեղուհիների բարձր թիվը տակ հաճախ կզտների ֆրանսիական մոդայիկ սիրային, արվածային վեպերը, որոնք այդպես առատորեն թարգմանվել են ու հայատառ բուրբերենով լույս տեսել հայ հրատարակչիների կողմից: Նրանք լուսանկարչության են զբաղվել, հեծանիվ թշել, նաև եվրոպական հագուստներ կրել...

Հարեմների վերակազմները, լինեն սպիտակամորթ թե սևամորթ, անվանվել են «դարյուսառեղ պալ» (Darüssaade ağa): Երբեմն նրանք կարևոր դեր են խաղացել երկրի կառավարման հարցերում: Սպիտակամորթ ներքինապետները անգամ մինչև ստորագամոթյան են հասել, ղեկավարել արարողակարգային խնդիրներ:

«Այսպիսով Թուղլանի այս գործը մի կարևոր բաց է լրացնում և դժվար թե մի այլ մեկը կհաջողեր 500-ամյա հարեմի մասին մեծ լուրջ աղբյուրներով ուսումնասիրություն տեսող՝»-եզրափակում է իր խոսքը հողվածագիր Միդիատ Սերթոլուն: Հեղինակն արժանի է գովասանքի և գնահատականի: Միդիատ Սերթոլուն մեղադրում

85 Midhat Sertoğlu, *Pars Tuğlacı'nın İstanbul'da yayımlanan Osmanlı Döneminde İstanbul Kadınları*, «Cumhuriyet», İst., 12.09. 1986. Գրախոսը «Cumhuriyet» օրաթերթում անդադարձվել է Թուղլանի նյութ գրքիին ևս, ինչպես օր «*Mehterhane'den Bando'ya*» երաժշտականների մասին ուսումնասիրությանը (1985թ.):

86 Tuna Scrim, *Altın Kafes: Harem*, «Kadın» dergisi, İst., 1986.

87 Հաջը Արիֆ բեյը եղել է (1831-1885) իր ժամանակի ամենաշնամարդ երգահանը և երգերի կառավարը: Նա եղել է պալատական երաժիշտ, կասաբանդի հարեմի գեղուհիներից: Նա համարվել է նեոլատինիզմի և ռոմանտիզմի ինժեներ, հավաքել, կատարել ավելի քան 1000 մուղամներ, երգեր, հիմներ: Միդիատը վերջինից է հարեմի իր աշակերտուհիներից մեկին, որի պատճառով վնդվել է պալատից:



է նախանձ մարդկանց, որոնք գրքում որևէ սխալ գտնելով անտեղի չարախոսում են, մինչդեռ մինչ օրս չեք գտնի առանց սխալի որևէ գործ: Ուստի շնորհավորելով 18 գործեր ստեղծած Թուղաճիին, մարթենք, որ օր առաջ լույս տեսնեն մնացած II-IV հատորները, մասնավորապես «Օսմանյան կայսրության կամայք» գիրքը<sup>88</sup>:

Մի քանի տարի անց «Vizyon Dekorsyon» ամսագրին տված հարցազրույցում<sup>89</sup> գիտնականն ասում է, որ արդեն հրատարակության համար պատրաստ են գրի մնացած երկու հատորները ևս: III հատորը նվիրված է լինելու ասիական, եվրոպական և աֆրիկյան երկրների կամանց, իսկ IV հատորը կոչվելու է՝ «Թուրքիայի կինը պատմության ընթացքում և այսօր»: Որքան էլ որ իսլամական աշխարհում կնոջը երկրորդ պլան են մղել, գիտնականը ուսումնասիրելով տարիների աղբյուրները, հնարավորինս արել է, որպեսզի ցույց տա բոլոր կանանց ներդրումը տարբեր ասպարեզներում, մասնավորապես մշակույթում:



**1985թ.** բուրբերեն լեզվով լույս է տեսնում «*Osmanlı Şehirleri*» (Օսմանյան քաղաքներ) գիրքը<sup>90</sup>: Հեղինակը պատմական ակնարկով է սկսում գիրքը՝ հռոմեաբյուզանդական շրջանից, ապա անցնում Օսմանյան կայսրության հիմնադրման շրջանին: Ուսումնասիրությունն իրենից ներկայացնում է քաղաքների մասին քաղաքական, տնտեսական պատմության հետաքրքիր ուրվագիծ:

Փետրվար ամսին «Milliyet» թերթն ազդարարում է Բարսեղ Թուղաճյանի նոր գրքի՝ «Օսմանյան քաղաքների» լույս աշխարհ գալու մասին<sup>91</sup>: Ազդարարում գրվում է «Հանրագիտարանային, հսկա ռեսուրսի (kaynak) աշխատանք: Ասիա, Եվրոպա, Աֆրիկա մայրցամաքների և Թուրքիայում գտնվող ավելի քան 350 քաղաքների մասին: Արվեստից քաղաքականություն, մզկիթներից մինչև, բաղնիքներ, իջևանատներ: Օսմանյան քաղաքները բոլոր առումներով՝ սկսած իրենց ավանդույթներից մինչև առօրյա կյանք: Գիրքն իրենից ներկայացնում է պատմության գանձարան»: Շատ բան է ավելում այս ազդարարի միջոցով:

«Milliyet»-ը տպագրում է հեղինակի առաջարանը, որին հետևում են այս և նախորդ գրքի հրատարակության առիվ հեղինակի հետ կատարված տարբեր հարցազրույցները<sup>92</sup>: Ընդարձակ առաջաբանում ակնհայտ է հեղինակի ջանքերը Օսմանյան

88 Նույն տեղում:  
89 Nur Nirven, «Pars Tuğlaci: « Masa Başında Tarih Yazılmaz. «Vizyon Dekorsyon» ամսագիր, Ստամբուլ, 1992թ. հունիս:  
90 Pars Tuğlaci, *Osmanlı Şehirleri*՝ İst., 1985. 411 sayfa.  
91 Pars Tuğlaci, *Osmanlı Şehirleri*, İst., 1985.  
92 Հարցազրույցներ են հրատարակվում Ստամբուլի «Hürriyet» թերթում, «Yillar Boyu Tarih» և «Mil-


կայսրության պատմությունը սուլթանականից ավելի վաղ՝ հռոմեա-բյուզանդական և գիպի օլուգական, Գյունդուզավիի որդի Էրթուրուլ բեյի շրջան (Gündüzalp, Ertuğrul Bey-1231թ.) ընդարձակելու ուղղությամբ: Պատմական հասնառտ ակնարկը վերաբերում է ապագա Օսմանյան կայսրության տարածքում ապրող պետությունների և ժողովուրդների, նրանց միջև բախումներին, նաև նվաճումներին, այդ ընթացքում որոշ քաղաքների հիմնադրմանը և նրանց դերին: Որոշ ժամանակ բուրբական տիրապետության տակ գտնվելով, Բալկանների՝ Մակեդոնիա, Թեսալիա, Բուլղարիա և հարակից շրջանների մասին գրելիս հեղինակը նշում է, որ այդտեղ ապրել են նաև բյուրջական ժողովուրդներ և մյուս ազգերը ևս իմացել, խոսել են բյուրջական լեզուներով: Օսմանյան կայսրությունն իր լավագույն շրջանում ընդգրկել է Ասիայի, Աֆրիկայի և Եվրոպայի որոշ քաղաքներ, սակայն գրքում խնդր առարկա են հիմնականում Կայսրության տիրապետության տակ գտնվողները, ուստի ներկայացվում է նաև նրանց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավիճակը:

Մեզ համար անկեղծ հետաքրքրություն է առաջացնում գիտնականի այդչափ արագ հրատարակելու, գրելու տաղանդը, երբեմն միմյանցից ծայրահեղորեն տարբեր նյութի ու ասպարեզների անդրադառնալը:


Պիտի խոստովանել, որ Բարս Թուղաճին հատուկ նախընտրություն է ունեցել գիրք-ալբոմների շքեղ հրատարակության հարցում: Այս առումով հետաքրքրական է Խյանդաջի հայտնի գիտնական-աստվածաբանների, գրողների ու միսիոներ քարոզիչների ընտանիքից Ջմյուռնիայում ծնված, ամերիկյան կրթությանը բողոքական միսիոներ, նկարիչ Հենրի Ջոն Վան Լեննեփի (Henry John Van- Lennep, 1815-1889) մասին «Արևելյան այլուն» գիրք-ալբոմը, որ հրատարակվել էր Նյու-Յորքում: Նկարիչը շատ է ճանապարհորդել Արևմտյան Հայաստանում, հայաշատ վայրերում քարոզել ու նաև գրել հայերեն: 1840-1869թթ. ծառայել է Թուրքիայում և կուրանալուց հետո մեկնել Ամերիկա: Հենրի Ջոն Վան Լեննեփը հրաշալի նկարել է: Ալբոմում տեղ գտած 20 յուրանկարները, մատիտանկարները, գրչով և սուշով գործերը (գարբբաժ) նրա ճանապարհորդությունների հանելիքն են: Մյուս մասը աստվածաշնչական բեմաներով նկարներ են: **1985թ.** Բարս Թուղաճին բարգմանել, հրատարակել է Թուրքիային վերաբերող չափազանց հետաքրքիր այս ալբոմը՝ ներառյալ բացատրական տեքստերը<sup>93</sup>: Սա օտարի աչքերով մայրավա կայսրության մի հատվածի գեղեցիկ պատկերն է: Ալբոմն, իհարկե, մեծ աշխույժություն է առաջացրել:

Արվեստի և կնոջ մասին հաջորդ գործը նվիրված է եղել բուրբական զարդարվեստը, ավանդական դեկորատիվ արվեստը ներկայացնող մանրանկարչուհի Արշալույս Ուրունյանին (1903-1982)<sup>94</sup>: Գիրք-ալբոմը (48 էջ) լույս է ընծայվել երկլեզու՝ բուրբերեն-անգլերեն, որին հետևել է հայերեն լեզվով հրատարակությունը:

*İlyet Sanat Dergisi*՝ հանդեսներում: 1985թ.  
93 H.J.Van-Lennep, *The Oriental Album*. İst., 1985.  
94 Pars Tuğlaci, *Geleneksel Türk Süsleme Sanatı'nda Bir Kadın Sanatçı, Arşaluyis Üticiyan, Arşaluyis Utudjian A Female Artist in the Turkish Traditional Decorative Art*, İst., Yatkin Ofset», 1985. 48 sayfa.



Առաջարձում հեղինակը համառոտագույն անդրադառնում է անատոլիական սելջուկների, օսմանյան շրջանից սկսյալ, 13-20-րդ դդ. բուրբական մանրանկարչության պատմությանը, մանրանկարիչներին և որ շատ կարևոր է հայ վարպետներին, որոնք եղել են պալատական նկարիչներ: Այսպես օրինակ, 13-րդ դ. ծագումով հայ Այնել Դեվլեն (Aynel Devle), որը Կոնիայի Գնրն Sultan-ի պատվերով հեղինակել է անվանի սուֆի բանաստեղծ Մեվլանա Ջելալեդդին Ռոմիի (Celâleddin Rûmî, 1207-1273) մանրանկարը, իսկ Վելի Չելեբիի (Veled Çelebi, 1867-1950) մանրանկարի գծագրության հեղինակը կոնյացի վարպետ Սոլաբանն է և այլն:



18-րդ դ. նկարիչների մեջ նշում է Ահմեդ Գ սուլթանի պալատական նկարիչ Բարսեղին, Մահմուդ Ա, Օսման Բ և Մուստաֆա Գ սուլթանների պալատական նկարիչ Ռաֆայելին<sup>95</sup>, Արդուլհամիդ Ա-ի նկարիչ Միհասին, Արդուլմեջիդ սուլթանի շրջանում Մանանների

փաստվոր գեղաստանի անդամներ Ջենոբին և Ռուբեն Մանանների, Սուլթան Աբդուլբակի նկարիչներ Անդրանիկ Ֆենդյանին, Գասպար և Սեպուհ Մանաններ եղբայրներին, Արդուլհամիդ Բ-ի նկարիչներ Հոսեփ Մանասին, Ժոզեֆ Արդուլպահին, Մտեփան Արայանին, Սիմոն Հակոբյանին, Շաղ Ալամյանին: Ահա այս ցուցակը շարունակում է գրքի հերոսուհին՝ Արշալույս Ռոբոյանը<sup>96</sup>:

«Tarih ve Toplum» գիտահանրամատչելի հանդեսի տարեկերջյան համարում Թուրքիան անդրադառնում է բուրբերի համար ամենացավոտ հարցերից՝ Միմար Սինանի (Mimar Koca Sinan, 1490-1588) ազգային պատկանելության խնդրի<sup>97</sup>: Անվանի բուրբ գիտնականներ են անդրադարձել այս հարցին, փորձելով իրենց հաստատուն խոսքն ասել: Անգամ դիպեցողության է ենթարկվել ճարտարապետի գանգը. «Էքնոգենեզի ընդունված բուրբական չափորոշիչների համաձայն» այն համարելով «քրիստոնյա-բուրբի գլուխ»: Հայտնի է, որ Մուստաֆա Քեմալը տևական ժամանակ մանրակրկիտ ուսումնասիրում էր ռափստ մտածողներ Gobineau-ի ու Pittard-ի աշխատությունները: Նրա հրահանգներով շարժվող՝ 1925թ. հիմնադրված Թուրքական ճարտարաբանության հետազոտությունների կենտրոնի առաջին աշխատանքներից են «Քարաջաահմեդի գերեզմանոցից հավաքված գանգերի չափման» ու «ցեղական տարբեր արմատներ ունեցող բուրբ, հայ, հույն և հրեա երեխաների» հետ համեմատական հետազոտությունները: 1932թ հուլիսի 2-11 կայացած Պատմության առաջին համագումարին քննարկման էր դրվել բուրբական պատմական բեզը, ըստ որի աշխարհում բոլոր քաղաքակրթություններն առաջացել են բուրբերից: Այդ համագումարում «գեղարվեստ բուրբ ցեղը» Ռեշիդ Գալիփի կողմից հետևյալ կերպ բնորոշվեց. «Բարձրահասակ, սպիտակ դեմքով, ուղիղ կամ կամարածե բարակ թրով, համաչափ շրթունքով, շատ անգամ կապուտաշյա և կպեղեն ուղիստիայաց քաղցիդ "ալպյան ցեղից"»: Նա պատկանում է արյան Ա խմբին, օժտված է մի շարք հատկություններով՝ քաղաքակրթական, հերոսական, արվեստագիտական ընդունակություններով և այլն»: Աբաբուրքի աջ թևը Աֆեթ Ինանը «Թուրքերի բրախիկենիալ (կարճազուլի) ալպյան ռասայի կատարյալ ներկայացուցիչներ լինելն ապացուցելու համար» շվեյցարացի մարդաբան Pittard-ի հսկողության ներքո կատարած դոկտորական հետազոտության ընթացքում՝ Աբաբուրքի հրամանով 64 հազար մարդու անթրոպոմետրիկ չափումների ենթարկեց: «Ռասիստական» այս հսկա աշխատանքը (նացիստական Գերմանիայում անգամ մնան բան չէր կատարվել) կառավարության, Ազգային անվտանգության նախարարության, Առողջապահության նախարարության և Կրթության նախարարության աջակցությամբ էր իրականացվել: Չափումներն արվել էին քաղաքացիական և ռազմական բժշկների, առողջապահության պաշտոնյաների, ֆիզիկուլտուրայի ուսուցիչների կողմից: Փորձարկումները կատարվել էին Աֆեթ Ինանի տրամադրության տակ դրված զինմատայողների վրա: 1925-1939թթ. հրատարակված և կրթության նախարարների «պատվավոր նախագահը» համարվող Թուրքական մար-

95 (Օսմանյան) հայ Ռաֆայելն այնքան հայտնի է եղել, որ նրան համարել են իր դարի Ռաֆայելը: Հայաստանում չկա այս նկարիչի և ոչ մի կտավ: Ժամանակակից նշանավոր արվեստաբան Գարո Բյուրքանի գրքում տեսնում ենք Ռաֆայելի մի քանի սրանշի կտավներ: Այս նկարչի մասին տես նաև մեր «Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում» գրքի գեղանկարչությանը նվիրված քաճումն:

96 Հայազգի նկարիչների մասին մանրամասն տես մեր ժամանակի ակնանկոր արվեստաբան, բուրբական արվեստի լավագույն գիտնականից Գարո Բյուրքանի գրքում (Garo Kürkman, *Armenian Painters in the Ottoman Empire, 1600-1923*, Matısalem Uzmanlık ve Yayınclık, 2004, 988 pages.), ինչպես նաև մեր «Հայերի ներդրումն...» գրքի նկարչությանը նվիրված գլխում:

97 Pars Tuğlaci. *Sinan'ın Kimliği ni doğru Saptayabilmek Atatürk' tür.* «Tarih ve Toplum». İst., N.12 1985.



դարանական հանդեսը մարդաբանությունն օգտագործելով որպես գիտական գործիք, այդ տարիներին կաշվից դուրս էր գալիս ապացուցելու համար բուրբական ցեղի գերակայությունը:

1935 թվականի ապրիլի 6-ին Պատմական ընկերության գիտնականների խումբը պեղեց հայտնի ճարտարապետ Սինանի գերեզմանը, որպեսզի «ուսումնասիրվի նրա գանգի և կմախքի կառուցվածքի մոդիֆոլիան»: Կոնգրեսի պատվիրակների հետ գոյացում է Աֆեթ Ինանը ճշել է. «Ինչ է, թե այդ համակարգով ինչպիսիք են պեղումները հաստատել են այն փաստը, որ ժամանակակից բուրբերի և առաջին վերաբնակիչների միջև Անատոլիայի տարածքում գոյություն ուներ ուղղակի կապ, այսինքն այնտեղ «ձևավորվել է ի սկզբանե եղել է բյուրբական միջուկ: Չնայած Անատոլիայի տարածք գաղթի պարբերական ալիքներին և այն հանգամանքին, որ նորաբնակները տարբեր անուններ էին կրում, խոսում էին տարբեր լեզուներով և բարբառներով, բոլորն էլ այսպես թե այնպես միանշանակ պատկանում էին բյուրբական ռասային. և՛ քրդերը, և՛ հայերը, և՛ լալզերը՝ բոլորը:

Ոմանք էլ քննության առարկա են դարձրել նրա ծննդավայրի, Կեսարիայի գյուղերի անունները, ոմանք էլ լեզվաբանական քննության համար հարմար են նկատել նրա հարազատների անունները և այլ և այլն: Որպես կանոն այս քննություններից հետո «մերժվել» է նրա հայկական ծագումը, պնդելով Սինանի դեշիքների պատճառով մուսուլման դարձած լինելու հանգամանքը: Հայ լրագրողներ և գիտնականներ ևս անդրադարձել են այս խնդրին, ապացուցելով Սինանի հայկական ծագումը: Այսպիսի մի վիճարանության առիթով է, որ Բարսեղ Թուղլաճյանը իր ծանրակշիռ խոսքն ասելու համար պատասխան հողվածով է հանդես եկել, հաստատելով Սինանի հայկական ծագումը, մատնանշելով բուրբ հեղինակների աղբյուրների սնանկությունը, սխալ կարդալ-մեկնաբանելը, լսածուկայ ոչ թե տեսածով կողմնորոշվելը և այլն:

Օսմանյան կայսրության համար մեկ ճարտարապետ-շինարար և ինժեներ Սինանի կառույցների թիվը որոշ մասնագետներ 400-ից ավելի են հաշվում: Դրանց աշխարհագրությունը տարածվում է ներկայիս Թուրքիայի սահմաններից շատ հեռու՝ մինչև Բոսնիա և Մակեդոնիա:

Հայկական ընտանիքից իսլամ, դեշիքների գոն այս պատանին, շինարարական գործերում իր առանձնահատուկ աշխատանքների պատճառով դեռևս բանակում մտայնած շրջանում բոլորին զարմացրել և իր վրա է գամել հրամանատարների ուշադրությունը: Տաղանդավոր երիտասարդը կարճ ժամանակում դարձել է անվանի մասնագետ, իր ձեռքը կենտրոնացնելով բարձրագույն կառույցների շինարարական աշխատանքները: Նա իսլամացված երեխաների այն խմբին է պատկանել, որոնք մանկա-



հասակ տարիքում չէ որ տղահավաքի են ենթարկվել: Տարիքով մի քիչ մեծ երեխաների մի մասը չնայած ենչիերական զորքերում դաժան և խիստ, հակաքրիստոնեական դաստիարակությամբ, որը նրանց սեփական ժողովրդի նկատմամբ արյունաբու կեղեքիչների ու դաիհների էր վերաձեռն, չեն մոռացել իրենց ծագումը: Ոմանք մինչև Մեծ վիզիրի պաշտոնին են հասել, սակայն միշտ հիշել են իրենց հայկական ծագումը և նույնիսկ կարողացածի չափ ակնբեր կամ գաղտնի փորձել են օգտակար լինել իրենց ծնած ժողովրդին: Իր մեծ հեղինակություն չնդրիվ Սինանը սուլթանական պալատին մտ կանգնածներից է եղել: Ընդրիվ այս մեծ համբավի էլ նա կարողացել է փրկել իր ծննդավայրի մի քանի գյուղերի բնակիչներին, որոնց, ի թիվս այլ գյուղերի, հարկերը վճարել չկարողանալու պատճառով բռնագաղթի էին ենթարկում Կիպրոս: Խոսքը Կեսարիային կից Աղբրնաս քաղաքի և հարակից մի քանի **հայկական գյուղերին** է վերաբերում: Սինանը հարկերի վճարման ժամկետը երկարաձգելու խնդրագրով դիմել է սուլթանին, որպեսզի խնայի իր հարազատների երեք ընտանիքներին, անվանաբար ճշելով ընտանիքների հայկական անունները: Սուլթանը չի մերժել իր հավատարիմ ճարտարապետին:

Մևա՝ 1573թ. (հ.951թ.) քվազրված սուլթանական հրամանն է հայտնաբերել Բարսեղ Թուղլաճյանը պետական արխիվում աշխատելիս:

Բարձրագույն արժույթի, դատական սպառնալիքների ժամանակ հաճախ է հնչել «իսկ ինչպե՞ս է պատահել, որ հայ բանասերին թույլ է տրվել աշխատել արխիվում» հարցը: Բարսեղ Թուղլաճյանը պատասխանել է, որ հատուկ թույլտվություն է ունեցել:

Թուրքիայում մեծ ոգևորություն առաջացրած «Օվկիանոս»-ի հրատարակությունից հետո Բարսեղ Թուղլաճին երկրի նախագահի հրավերով Անկարայում ջերմ ընդունելության էր արժանացել: Նախագահը հետաքրքրվել էր գիտնականի ապագա ծրագրերի մասին: Նրա վրա մեծ տպավորություն էր բողել, որ երկար տարիներ աշխատում է «Օսմանյան կայսրության հանրագիտարանի» վրա: Նախագահը սիրալից դիմել էր նրան, ասելով, թե նրա պարտքի տակ են և արդյոք որևէ կերպ կարո՞ղ են աջակցել գիտնականին:

-Թույլ տվե՛ք աշխատել օսմանյան արխիվներում,- եղել էր հեղինակի պատասխանը: Ի պատասխան այս բացատրության՝ «Մեա թե ինչու եր պետք հային տպագրել «Օվկիանոս»ը,- եղել է չարամիաների եզրակացությունը:

Սինանի հայկական ծագման մասին բացատրական հողվածը Թուղլաճին ավարտում է Արաբոլի գիտնականների հետ մի համադրյալման ժամանակ նման թեմայով խոսակցությունն ամփոփող խոսքերով, որը մուսուլմանական այսպես է հնչում, թե «Սուլթանը մեծ էր. քանզի ամեն ինչից առավել անկրկնելի լավ մարդ է եղել...»<sup>98</sup>

Հաջորդ հրատարակությունը նվիրված է Թուրքիայի անցյալի և ներկայի երաժշտականերին՝ «*Mehterhane'den Bando'ya*» (Mehterhane-ից դեպի նվագախումբ): Ինչպես միշտ, այս հատորը ևս անգլերենով և բուրբերենով է լույս ընծայված «Onur Grafik Ltd. Şirketi» հրատարակչատանի կողմից<sup>99</sup>: Այս հատորի գրախոսողները համակարծիք են իրենց երկիրն ինչ որ պատկան «տարօրինակ» համարելու: Մեա այդ տարօրինակ երևույթ-

98 Սինանի հայկական ծագման մասին տես մեր «Հայրիկ ներդրում...» գրքի 430-431 էջերում:  
99 Pars Tuğlaci. *Mehterhane'den Bando'ya, Turkish Bands of Past And Present, Pars Tuğlaci*. Cem Yayinevi, 1986, İstanbul, 248 s.,



ներից է զինվորական, պաշտական երաժշտականերից (որոնց հիմնական երաժշտական գործիքները տարբեր չափսերի թմբուկներն են եղել) մինչև 18-19-րդ դդ. դասական նվագախմբերի կայացումը, տարբեր գործիքների ավանդույթները, և իհարկե «Չիլճյան» ծննդանրերի հայտնագործումն ու աշխարհով մեն տարածումը, դրանց անվտիսարիների որակը, գնահատումը: Հիմքն իհարկե, դեռևս Սուլթան Բայազիդ Բ-ի շրջանում (1481-1512), ամենատարբեր տրամաչափերի թմբուկների մշակույթն է սուլթանական զինվորական նվագախմբերում, ենիչերական գործերին ուղեկցող նվագախումբը (մեթերանե), ըսյելեզերի ստեղծումը և այլն: Ավելի ուշ թմբուկներին են միացել նաև այլ գործիքներ: Իհարկե, հանրահայտ փաստ է ոչ միայն «Չիլճյան»-ների ստեղծողների հայ լինելը, այլև դասական, ըսյ-

լերգային, լարային, սինֆոնիկ, օպերային ու երգախմբային մշակույթի ասպարեզում արևմտահայության անուրանալի ներդրումը: Բոլոր մեծ ու փոքր ըսյալքներում 18-19-րդ դարերից սկսյալ, հայկական դպրոցների, մշակութային միությունների մաս են կազմել տարբեր երաժշտական խմբերը, մասնավորապես դասական, լարային գործիքների ներկայությունը: Գրքի մասին բուրք մտավորականները չեն դադարել ժամանակ առ ժամանակ գրախոսականներով հանդես գալ մամուլում, գիտահանրամատչելի պարբերականներում: Նրանցից մեկը Բարսեղ Թուղայճյանի՝ օսմանյան շրջանից ի վեր թուրքական և Թուրքիայում եվրոպական երաժշտության պատմության մասին այս ուսումնասիրությունը «Tarih ve Toplum» ամսագրում համարել է թուրքական պատմության համար նշանակալի ներդրում<sup>100</sup>: Հեղինակն անդրադարձել է Չիլճյան ընտանիքի պատմությանը, միջազգային ցուցահանդեսներում նրանց հաջողություններին և հաղթանակներին<sup>101</sup>:

Օսմանյան կայսրությունում եվրոպականացման շարժման մեջ իր որոշիչ դերն է ունեցել մասոնական օրյակների ստեղծումն ու տարածումը 19-րդ դ. կեսերին<sup>102</sup>: Դրանցում կարևոր դերակատարություն են ունեցել հայերը: Ինչպես հայտնի է, երբ Օսմանյան կայսրությունը սկսեց մուտք գործել Եվրոպա, փոխադարձաբար հիմնել իր դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները, դրանց հիմնական անձնակազմը կազմեցին հայերը: Դեռևս 1793 թ. փոխադարձության հիմքի վրա եվրոպական հիեզ սաաջասար մայրաքաղաքներում թուրքերը մշտական դիվանագիտական ներկայացուցչություններ հիմնադրեցին: Օսմանյան պատվիրակները հրահանգ էին ստացել ուսումնասիրել այն երկրների դիվանագիտական փորձը, այդ թվում և առևտրային իրա-

վական պաշտպանության, որտեղ իրենք հավատարմագրվել էին: Սակայն այդ գործում լուրջ բարդություններ ի հայտ եկան: Քանի որ ման պաշտոնները կարող էին միայն օսմանցի մուսուլմանները գրադեցնել, շատ դժվար էր գտնել մարդկանց, ովքեր դիվանագիտական աշխատանք կատարելու համար ունեին անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ, օտար լեզուներ գիտեին և ամենակարևորը՝ համաձայն կլիներին երկաթուղի ընկալել «գյավուրների» երկրներին: Այնպես որ Սեյիտ III-ի այդ նախաձեռնությունը հաջողություն չունեցավ, և շուտով օսմանյան ներկայացուցչությունները փակվեցին: Օսմանցի թուրքերի համար այս պաշտոններով գրավվել անհարկ էր համարվում իրենց գրաված դիրքին: Մյուս կողմից, դիվանագիտական ծառայությունը ակնկալում էր ուսյալ, կրթյալ, եվրոպական լեզուների գիտակ, արտասահմանյան երկրներում եղած և այն քիչ բն շատ ճանաչող, արարողակարգային վարվելաձևին գիտակ, կապեր ունեցող մարդկանց: Արդյունքում սուլթանական պալատի բարձրաստիճան մի քանի փաշաներ դարձան դեսպաններ, որպես կանոն իրենց կողքին ունենալով հայ մասնագետների: Չկար մի դիվանագիտական կամ հյուպատոսական ծառայություն, որի կամ դեսպանը, հյուպատոսը, խորհրդականը, բժիշկը ու քարտուղարները հայ չլինեին: Ահա դիվանագիտական հայ անձնակազմի որոշակի մասը (գերակշիռ տոկոս են կազմել) հարել է ֆրանսիական և շոտլանդական մասոնական օրյակներին դեռևս Պոլսում, իսկ մնացած մասը անդամագրվել է արդեն եվրոպական երկրներում: Պոլսում հիմնադրված հայկական «Սեբ» մասոնական օրյակի հայտնի անդամների թվում են եղել թուրք արքայազաներ, վեզիրներ, արքայազաններ, փաշաներ, գրող-լուսավորիչներ: Նրանց հիմնական հասարակություններն են եղել հայտնի հայ մասոնների հյուրանոցները, ճաշարանները (Թուրքյան): Ակնհայտ է, որ կայսրության անկումն այս օրյակների գործունեությունը ոչ բն վերացրել է, ինչպես շատ երկրներում արգելվեց, այլ նոր թափ է հավաքել ու ճյուղավորվելով հզորացել Թուրքիայի Հանրապետության հաստատումով: Ահա, հանրապետական շրջանի, մասնավորապես 1923-35թթ. մասոնական օրյակների պատմության մասին է եղել Բարսեղ Թուղայճյանի զեկուցումը Ստամբուլի «Müsavat Muhterem Mason Loca»-ում 1986թ. հոկտեմբերի 10-ին<sup>103</sup>: Այն չափազանց հետաքրքրական է արքայության Թուրքիայում մասոնական օրյակների ցանցի և գործունեության փաստի առումով: Բարսեղ Թուղայճյանի հաղորդումը հիմնվել է «Cumhuriyet» օրաթերթի հավաքածուների ուսումնասիրության հիման վրա: Այս ամփոփ պատմությունը առաջինն է իր տեսակի մեջ: Օսմանյան կայսրությունում մասոնական տարբեր օրյակների ներթափանցումն ու տարածումն իր զարգացումն ապրեց Թանգիմաթի տարիներին, եվրոպական եղափոխական զոլափարների ներթափանցմանը զուգահեռ: Օրյակներին անդամագրվեցին ոչ միայն հայ նորաթուխ թուրքազիան, հայտնի մտավորական, մշակութային, ֆինանսական գործիչներ, այլև թուրք գրող-լուսավորիչներ, սուլթանական ընտանիքի անդամներ, արքայազաններ, փաշաներ, ամենաբարձր պաշտոններ կարող անձինք:

1923-1935թթ. ստեղծված մասոնական օրյակները որպես կանոն բազմապես չեն եղել և գործել են տարբեր միությունների, կազմակերպությունների և անվանումների ներքո: Միայն Ստամբուլում ակտիվորեն գործել են 31 օրյակներ: 24-ի աշխատանքային լեզուն

100 Arif Hikmet Par, *Mehterhane'den Bando'ya* . İst. Tarih ve Toplum, 1990, mart.  
 101 Նկատի ունի Լոնդոնի (1851թ., 1862թ.), Փարիզի (1867թ.), Վիեննայի (1873թ.), Բոլոնիայի (1888թ.), Չիկագոյի (1893թ.) միջազգային ցուցահանդեսները, «Գրան Պիլ» մրցանակը (1907թ.) և այլն:  
 102 Այս մասին տես մեր «Տարիքի ներդրում...» գրքի 245-252 էջերում:

103 H.Ekmecciyen Pars... էջ 314-323. Sbu' Huroel Tasdelen, Osmanlı'da Mason Locaları. Ankara 2019.



եղել է բուրքերենը, 6-գործել են իրաներենով և 1-ը՝ գերմաներեն: Դրանցից միայն «Ռենսանս»-ը գործել է «Ֆրանսիական մեծ օրյակի» հովանու ներքո: Մնացածը գործել են «Շտալանդական Մեծ Օրյակի» հովանու ներքո: Հանրապետական շրջանում, տարբեր տարիներին մատուցված օրյակներ են հիմնվել և գործել Իզմիրում, Անկարայում, Գազիանթեպում, Մասնունում, Բուրսայում: Դրանց ցուցակներում կտոնեթ Թուրքիայի ամենահայտնի մարդկանց, ամենահայտնի մտավորականների, գիտության, կուսակցական, զինվորական, քաղաքական գործիչներին: 1923-35թթ. հրատարակվել է «Büyükle Şark»-ի (Մեծ Արևելք) 19 համարներ: Արաբուրը, որ այս երևույթի մյուս կողմում է եղել և շատ լավ է այն ճանաչել, բխում է «տեսնելով այս ոճը, չի գտնել այն, ինչ հույս ուներ տեսնել...»: Այնուհետև հավելվել են ամերիկյան մատուցները: «Թուրք մատուցվածությունը աշխատում է թուրք ազգի բարգավաճման համար»: Այսպիսին է եղել հիմնական կարգախոսը: Ժամանակ առ ժամանակ Թուրքիայում են կայացել մատուցված միջազգային կոնգրեսները<sup>104</sup>, հավաքները, տարեկան պարահանդեսները, միավորելով տարբեր օրյակների, նրանց վարպետներին, աշխարհը կառավարող ուժերի ներկայացուցիչներին<sup>105</sup>: Թուրքիան պարարտ միջավայր է եղել և ներկայումս էլ կա մատուցված օրյակների համար: Արևելյան բռնակալ կայսրություն, հանրապետական շրջան, որն իր կամքով և դրանից անկախ մտրճվել է աշխարհի հնագույն ու խորհրդավոր ուժային կազմակերպության մեջ, դրա մի մասը դարձել: Մատուցված օրյակների ինստիտուտի ուսումնասիրությունը, փաստերին տիրապետելն ու միմյանց կապելը միայն հնարավոր կդարձնի հասկանալ երկրում կառավարող շրջանակների քաղաքականությունը, արտաքին հարաբերությունների շատ բացատրություններ փնտրել այդ համատեքստում:

**1982թ.** հունիսի 1-ի ամսավավ 3 տողանոց մի հաղորդագրություն<sup>106</sup> կա, որը կարելի է համարել Բարս Թուրքաճիի ստեղծագործական կյանքի, հաջողությունների, տարբեր երկրներում չափազանց մեծ ճանաչում ունենալու շուրջ բազմաթիվ հարցազննների, գաղտնիքների համար հնարավոր բանալիներից: «Hür ve Kabul Edilmiş Masonlar Büyükle Locası. Müsavat Locası» օրյակը Բարսի Թուրքաճյանին «ԱՄՊԵՏԻ» աստիճան է շնորհում, տեղադրելով նաև դիպլոմի նկարը, ուր նրա հերթական համարն է 5905-ը: Ֆրանսիական հովիանո տակ գործող այս օրյակը միավորել ու միավորում է Թուրքիայի ամենահայտնի և ամենահարուստ մարդկանց՝ անկախ ազգային պատկանելությունից՝ երկրի ղեկավարներից մինչև հայտնի մտավորականների:

Իսկ թե ե՞րբ է Բարս Թուրքաճին անդամագրվել այս օրյակին, չգիտենք: **1987թ.** հուլիսին Թուրքահին հրաժարվում է «Մյուսավաթ» (Müsavat) մատուցված օրյակում իր անդամակցությունից: Կենսագրական հատորում որպես հրաժարականի հիմնական պատճառ գրվում է՝ «Թուրքիայի և Գերմանիայի միասնությամբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հարյուր հազարավոր մարդկանց մահվան

104 Ավտոարար Ստամբուլի «Uşaklı»-ի ստղծներում են կազմակերպվել պարահանդեսները, կոնգրեսները (6.09.1933թ.):  
 105 13.10.1935թ. ներքին գործերի նախարարության մի հրամանով Թուրքիայի տարբեր քաղաքներում Մատուցված, Անկարայում, Բուրսայում, Իզմիրում, Մուղլայում, Գազիանթեպիում, Ադանայում գործող մատուցված օրյակների գործունեությունը կանգնեցվել:  
 106 Şbu H.Ekmekciyan, Pars... էջ 266.

պատճառ հանդիսացած Թալեթ փաշայի նկարը օրյակի պատին կախված լինելն էր<sup>107</sup>»: Չճայած դրան, 1989թ. օգոստոսին «Tarih Boyunca İstanbul Adaları»<sup>108</sup> (Մատուցված կղզիները պատմության ընթացքում) գրքի հրատարակության առիթով կղզիների «Ռուբրի» մատուցված ակումբի հավաքի ժամանակ գիտնականին շնորհավորագիր է հանձնվել:

Երբ Մատուցվում էինք, մենք առիթ ենք ունեցել օրեր շարունակ անցնել այս օրյակի միշտ փակ դռների առջևից<sup>109</sup>:

Բարս Թուրքաճիի այսպիսի մեծ ժողովրդականությունը, երկրի առաջին այրերի հետ լավագույն հարաբերությունները, ընդունելությունները, ոչ թուրք արգասաբեր գիտնականի փառքը չէր կարող որոշակի հակազդեցության, բողոքի, խանդի ու չարության, որոշակի շրջանակներում նրա դեմ ուղղված գաղափարական կամ շինծու խտրերի առջև չկանգնեցնել: 1983թ. վերջից Բարս Թուրքաճին բույ չի արվել հեռանալ երկրից և չնայած Մատուցվածի ուսիկանության արված դիմումներին, նրա անձնագրից չի վերադարձվում: Հ. Էքմեքճյանի գրքում գտնում ենք այս առիթով Թուրքիայի նախագահ Թուրգու օզալին ուղղված՝ հարցին միջնորդելու խնդրանքով Թուրքաճիի նամակը<sup>110</sup>:

**1987թ.** «Cem» հրատարակչական տունը հրատարակում է «Çağdaş Türkiye» եռաշաբաթյակի V գիրքը: Հրատարակչական տունը հանրագիտարանային ծավալի, փայլուն բովի վրա տպագրված այս գործի մասին ազգային անդամները ներկայացնում է 7 գլուխների հետևյալ բովանդակային ուղղություններ՝

1. Մուսաֆա Էմնալի ծնունդից մինչև Ջինադադարի շրջան (Mütareke dönemi, 1881-1918)
2. Ջինադադարի շրջան (1918-1919)
3. Ազգային ազատագրական պայքարի շրջան (1919-1923)
4. Հանրապետական շրջան (1923-1938)
5. Արաբուրքյան Թուրքիայի արտաքին քաղաքականությունը (1918-1938)
6. Արաբուրքյան Թուրքիայի փոխաբարությունները օտար երկրների հետ (1918-1938)
7. Արաբուրքյան Թուրքիայի կառավարման համակարգը և հաստատությունները
8. Արաբուրքյան Թուրքիայի արևմտականացման ուղղված շարժումները
9. Արաբուրքյան Թուրքիայի տնտեսությունը
10. Արաբուրքյան Թուրքիայի գիտությունը
11. Արաբուրքյան Թուրքիայի կրթական գործը

107 H.Ekmekciyan, Pars... էջ 428.  
 108 Pars Tuğlacı. Tarih Boyunca İstanbul Adaları. İst., İc. 1989. 576 s., P հատորը՝ 1995թ. 576էջ.  
 109 Այն գտնվում է Մատուցվածի կենտրոնում, Բեյջողիյում, ճիշտ TRT թուրքական ռադիոհեռուստակայանի դիմաց, Nur-i Ziya փողոցի անկյունային բառամարկ տանը: Մատուցված մյուս «դուրք» տեսել ենք նույն Բեյջողիյում, Թունելին հարակից պոլտոսայի շենքի առաջին հարկում:  
 110 Անամուցված 22 աշխատությունների ներմանակ իր զարմանքն ու փոստասանը է հայտնում այս առիթով: Նա օրինակ է բերում Ֆրանսիական կառավարությանը, որն անկախ ազգությունից գիտությունը նպաստ բերելու համար պարզապեսում է «Պատվո Լեկտոնի» շքանշանով, իսկ Թուրքիան, ավելի քան 30 տարիների ողջ գործունեությունը Թուրքիայի նշակալիին ու գիտությանը նվիրած իր քաղաքացու հետ նման ծնով է վարվում: Şbu H.Ekmekciyan Pars... էջ 323.

- 12. Արվեստը Աբաբորքյան Թուրքիայում
- 13. Գրականությունը Աբաբորքյան Թուրքիայում
- 14. Տպագրական հրատարակչական գործը Աբաբորքյան Թուրքիայում
- 15. Հաղորդակցությունը և փոխադրումը Աբաբորքյան Թուրքիայում
- 16. Զինվորականությունը Աբաբորքյան Թուրքիայում
- 17. Սպորտը Աբաբորքյան Թուրքիայում

Վաժու է նաև, որ Բ<sup>111</sup> և Գ<sup>112</sup> հատորները լույս կտեսնեն երկու ամսվա ընթացքում: Էջերի ընդհանուր քանակը 1978 էջ է: Գիրքը հարստացվել է 3764 սև ու ճերմակ, գունավոր նկարներով:



1989 և 1990թթ. լույս են տեսնում «Çağdaş Türkiye» (Ժամանակակից Թուրքիա) բուրբերեն գրքի երեք հատորները «Cem» հրատարակչության կողմից<sup>111</sup>: Գրքի նպատակն էր առավելագույնս ներկայացնել Օսմանյան կայսրության ժառանգորդ Հանրապետական Թուրքիայի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացման պատմությունը: Գիրքը ներկայացնող տեքստն ավարտվում է Աբաբորքի խոսքերով, որը է՝ քննարան և՛ ուղղորդող է եղել «Թուրքական պատմական ընկերության» համար: Այն է՝ «Պատմություն գրելը նույնքան կարևոր է, որքան պատմություն ստեղծելը»: Գիտնականը տարբեր առիթներով կրկնում է այս կարգախոսը<sup>114</sup>:

111 «Cem» հրատարակչական տունը հրատարակել է Բ հատորը 1989թ. նոյեմբերին:  
 112 «Cem» հրատարակչական տունը հրատարակել է Գ հատորը 1990թ. ապրիլին:  
 113 Pars Tuğlacı, Çağdaş Türkiye. İst., 1987, c.1, 669s.  
 Pars Tuğlacı, Çağdaş Türkiye. İst., 1989, c.2, 805s.  
 Pars Tuğlacı, Çağdaş Türkiye. İst., 1990, c.3, 543s.  
 114 Այս խոսքերը «Թուրք Պատմական Ընկերությունը» ընտրել է որպես իր նպատակի և գործողությունների նշանաբան: Ցավոք սրտի այս նշանաբանը միշտ չէ, որ աղբյուրացնում է ներդաշնակությունը իրական գիտության հետ: Շատ ու շատ ընկերությունների և հեղինակների գրքեր, որոնք առաջնորդվել են այս կարգախոսով գիտությանը հակառակ ուղիով են գնացել: Տրամաբանությունը հասակ է՝ «գրի ինչ որ ուզում ես, խեղաթուրի պատմական իրականությունն ի շահ թուրքականի և ժամանակը կանգնել, կնճազ վզով: Այն կոխով ոչ թե պատմության լուսարձակի տակ, այլ շատ բաներ ջնջող ժամանակի»: Այս խոսքերը իրենց համար առաջնորդող և որպես մեղր քավող դրոշք ընդունել են անգամ արտասահմանյան որոշ թուրքալի գիտնականներ, սեղանին դնելով պատմությունից շատ ինտու աշխատություններ, նպատակ ունենալով հիմնականում անգլիագիր իրենց «աշխատություններով» մեափոխել թուրքագիտությունը, նրան հացաբլիթի առաջադեմ մարդկությանը հարի՛ր «հագուտունը»: Այս բոլոր եղևինակները (մասնավորապես թուրքական միլիտանտի ողջարևերով սնվող ամերիկյան թուրքագիտական կենտրոնները ներկայացնող պատմաբանները) երբ իրենց գործունեության առաջին շրջանում կարճակյալ հայտություն են ունեցել միջազգային փոսական շրջանակներում, ապա շատ շուտով դրանք համարվել են զեղծարարությանը հարող ու ստանձախություններ, քննադատությունից քաջի առաջացնելով «մախու թուրքագիտության» անշնորհալիլ համարում:

Հեղինակն առաջարանում գրում է, որ գրքի հիմնական նպատակն է եղել գրել Թուրքիայի ազգային ազատագրական շարժման առաջնորդի՝ Գազի Մուստաֆա Քեմալ Աբաբորքի ընդարձակ պատմությունը սկզբից մինչև վերջ, մասնավորապես վեր հանելով 1917-38թթ. իրադարձությունները, Աբաբորքի հետ կապված հնարավոր բոլոր շրջանները, կյանքի ամենատարբեր ասպարեզներում նրա ունեցած դերը, ներքին և արտաքին քաղաքականության մեջ խաղացած մեծ դերը: Հրատարակչության տրամադրում ազդում տրվում են գրքի բոլոր 7 գլուխների վերնագրերը, խոստանալով առաջիկա երկու ամիսներին լույս տեսնել գրքի Բ և Գ հատորները ևս: Ա հատորը Բարսեղ Թուրյանյանը ուղարկում է ոչ միայն իր երկրի, այլև Ֆրանսիայի և Գերմանիայի նախագահներին, քանզի գրքում լայնորեն անդրադարձ կա Աբաբորքի շրջանում բուրբ-ֆրանսիական և բուրբ-գերմանական հարաբերություններին: Բնականաբար չեն ուշանում այդ երկրների նախագահների աշխատակազմերից Բարսեղ Թուրյանյանին ուղղված շնորհակալության քաղաքավարական պատասխանները:

Չեն ուշանում նաև հայտնի պատմաբան, լրագրող Միդիաթ Սերբողլուի (Mithat Seretgün 1913 - 1995) և քաղաքական գործիչ, լրագրող, գրող Ալթան Օյմենի (Altan Öymen, 1932-) դրական գրախոսականները «Cumhuriyet» (7.07.1987), «Milliyet» թերթերում (16.08.1987): Մանրամասն վերլուծելով հատորը, օգտագործված բուրբերակն և օտար աղբյուրները, Միդիաթ Սերբողլուն Բարս Թուրյանիին համարում է Աբաբորքի իսկական մասնագետ, ողջունում հրատարակությունը, մաղթում մյուս երկու հատորների արագ լույս ընծայումը: Երկրորդ հոդվածագիրը՝ Ալթան Օյմենը ևս ողջունում է գիրքը<sup>115</sup>: Եռաստորյակի փաստական նյութը, ժամանակագրական մոտեցումը, հեղինակի հանրագիտարանային փորձը գիրքը դարձնում են կարևոր և պետական, - գրում է գրող Հայրախ Աղբյաղջըն<sup>116</sup>:



Բնական է, որ Թուրյանին իր էությունը հակված է եղել նաև հետաքրքիր, արտառող, սենսացիոն, պայթյուն-հայտնագործությունների: Նման օրինակ է Հալիդի Էդիփի մասին որպես Մուստաֆա Քեմալի կինը ներկայացնող ֆրանսերեն արխիվային մի հոդվածի բացահայտումը:

2005թ. Cumhuriyet-ում հրատարակվում է Աբաբորքի և գրող, հասարակական գործիչ Հալիդի Էդիպ Աղբյալի փոխհարաբերությունների մասին Թուրյանիի կողմից հայտնաբերված և ֆրանսերենից թուրքերենի թարգմանված 1924թ. հունվարի 20-ի մի փաստաթուղթ<sup>117</sup>: Հոդվածագիրն այս թարգմանությանն ուղեկցող տեքստում գրում է, որ եվրոպական երկրներում գիտնականն իր շրջապայությունների և արխիվներում ուսումնասիրություններ կատարելու արդյունքում է հայտնաբերել ի իրև այլ փաստաթղթի նաև այս կարևոր փաստաթուղթը: Սակայն կարևորը հայտնաբերված ֆրանսերեն փաստաթուղթն է, որի ֆարսիմիլին է հրատարակել պարբերականը:

115 2005թ. Esra Sarıkoyuncu Değerli -ի կողմից Անկարայում 1913-1938թթ. Աբաբորքի, թուրք-թուրքարական հարաբերությունների մասին համապատասխան գիտական թեզ է պաշտպանվել՝ «Mustafa Kemal Atatürk'ün Sofya Askeri Atatayeliğinden Ölümine Kadar Türk-Bulgar İlişkileri (1913-1938)» վերնագրով:  
 116 Hayati Asilyazıcı, Çağdaş Türkiye. Bizim Gazete, İst., 12.08.2001.  
 117 1924 Tarihihi Belgenin Çevirisi Halide Edip Adıvar 'a Övgü. Cumhuriyet, İst., 21.05.2005.



Այն կոչվում է՝ «Հայոց Էդիպ Խանումը, Մուստաֆա Քենալ Փաշայի կինը»։ Հողվածի բովանդակությունը մուսավորապես հետևյալն է. «Պիեռ Լորրին»<sup>118</sup> մահացել է և հիսարավվածներ այլևս չկան։ Ետևում է մնացել հարեմի շրջանը։ Կյանքն այնտեղ անցել է փակ պատուհանների ետևում, վանդակ դարձած պալատներում, մետաքս բաժերի մեջ բաղված, աչքերը տարնայով գծված. «Հաջի Բեբիր» հայտնի ծաղարանի վարդի օշարակով շաբարեղեններ վայելող այդ կանանցից այլևս ոչինչ չի մնացել։ 20-րդ դարասկզբին, եվրոպական հովերի ներթափանցման հետ միասին այդ կանայք էլ սկսեցին փոխվել, կրթվել, չլիվելով մասնավորապես ֆրանսիական գրականության հետ, դաժանով առաջադեմ գաղափարների կրողներ։ Ափսոս, որ մեծ գեղեցկությունն ըստ մուսուլմանական սովորության, դուրս գալիս պիտի բարձր շղարչի ներքո։ Հայոց Էդիպը դեռևս



պատերազմի սկզբից հրաժարվել էր այդ բողից և այլևս երբեք այն չի կրել։ Մուստաֆա Քենալի «կինը», որ տաղանդավոր գրող էր, հանդիսացել է Մուստաֆայի բարձր հասարակության անդամներից։ Իր առանձնահատուկ գեղեցկության համար Հայոց Էդիպն անվանվել է «Մուստաֆայի վարդ» անունով։ Քենալիզմի հարած այս կինը մասնակցել է

118 Պիեռ Լորրի (Pier Loti, Лют Марин-Жюльен Буаго 1850-1923), ֆրանսիացի գրող, ակադեմիական։ Այնչեղ է Կոստանդնուպոլիս, որչա ժամանակ մնացել, հայ քահանայի մոտ սովորել հայերեն, երկ ընդունելի հայ ամիրայական գերդաստաններից հայտնի Էդգար թեյ Տյուզի կնոջ (որը Հովհաննես ամիրա Ալլահադեղիի դուստրն էր) ստղծում, որը Մուստաֆայի երկրորդ հայտնի ստղծ էր, որ հավաքվում էին հայ և բուրբ մուսավորականության և արվեստագետների սերունդը, արտասահմանյան ղեկավարներ, հայտնի ճանապարհորդներ։ Իր հայաստաց կույրի համար Պիեռ Լորրիի առջև փակվել են տիկին Տյուզի ստղծի դրեքը։ Տես նաև՝ Հ.Ստեփանյան, *Հայերի ներդրումը...* էջ 196.

մարտերին նրա ամենաթեժ տեղերում, օգնել վիրավոր զինվորներին, որի համար էլ երկ մեծանցվել է բուրբական ժամանա դԱրկի։ Նա շրջել է տարբեր շրջաններով և ոգևորել մարտիկներին։ Նա բեմալիզմի շրջանի մասին նույնիսկ մեծ ֆիլմի սցենար է գրել։ Գեղեցկության բազուկի, բարձրաշխարհիկ կին, գրության բուրբ, պատերազմող մարտիկ, գրող, բեմադրիչ։ Նա երազել է ակտիվ, լիարժեք ազատ կանանց երկրի համար։ Արդյո՞ք՝ բուրբ կանայք կհասնեն դրան առաջիկա տաս տարիներին...»

«Հողվածը ստորագրված է R.M. Ֆրանսիացի»՝ թե՛ բուրբ է Հայոց Էդիպին չափազանցության աստիճանի գովեթգած հողվածագիրը...

Թուրքիա կատարած իր այցելության ժամանակ Մեծ Բրիտանիայի վարչապետ Մարգարետ Թեյչերը (Margaret Thatcher, 1925-2013) հետաքրքրվելով Բարսեղ Թուղլաճյանի գործերով, որոշ գրքեր է ընտրում Թագուհուն նվիրելու համար (1987թ. օգոստոս)։

Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալի (Halil Turgut Özal, 1927-1993) անունից, հասարակայնության հետ կապի նախարարությունը արտասահման մեկնելու արգելքի հարցով Թուղլաճի պարիլյան դիմումին ի պատասխան անձնագիրը գիտնականին կրկին տրամադրելու հրահանգ է տրվում (սեպտեմբեր 1987թ.)։

«Milliyet» թերթի խմբագրությունը հրատարակում է «English-Turkish Comprehensive Dictionary»<sup>119</sup> (Անգլերեն-բուրբերեն համապարփակ բառարան)ը և տպարանակը բաժանվում է դպրոցներին։

Բարս Թուղլաճին Ռազմաճովալյան նախարարությանն է դիմում բուրբական Յասսը և Սիվիի կղզիներն (Yassıada, Sivriada) այցելելու թույլտվություն ստանալու համար։ Նա հայագի առաջին պատմաբանն է, որ 1974թ. ստացել է Թուրքիայի (6-րդ) նախագահ Ֆահրի Զորուբուրքի (Koruturk Fahri) թույլտվությունը Օսմանյան արխիվները ուսումնասիրելու համար<sup>120</sup>։ Կղզիների այցելությունները պիտի հինք ծառայեն 1989թ. (578 էջ) դրանց մասին հրատարակվելիք հատորների։ Այս մտահղացման վրա գիտնականը սկսել էր աշխատել 1963 թվականից, երբ ուսումնասիրում էր հետբյուզանդական օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի 470-ամյա պատմությունը։ Չպետք է մոռանալ, որ այս հանգստավայր 9 կղզիներից որոշները ժամանակ առ ժամանակ օգտագործվել են նաև որպես արքայի, քանապի, տանջանքների դժիտային կալանավայրեր։

Բարս Թուղլաճին տարիներ շարունակ պրպտումներ է կատարում Հեյրեի կղզում։ Մարմարա ծովի Իշխանաց կղզիներից մեծությամբ երկրորդը հանդիսացող, ափամուտքը հունական համարվող այս վայրում, Հուստ բարձունքում Փոք (Poht, IX դ.) պատիարքի կողմից 9-րդ դարում հիմնադրված Ս.Տրորդոսյան եկեղեցին է, Հակիկյան աստվածաբանական ճեմարանը<sup>121</sup>, որը հայտնի է իր հարստագույն եզակի գրադարան-

119 Pars Tuğlaci, *English-Turkish Comprehensive Dictionary*, İstanbul, 1987, 573s.  
 120 Ավելի ուշ, 1979թ. Նախագահը ոգևորված «Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարան» հրատարակությանը, գիտնականին է ուղարկում գիրքն արժեքող գրությունը, որը նախատեսված էր լինելու գրքի առաջին էջում տեղադրվելու համար, որպես առաջնորդող։ «Milliyet» օրաթերթը հրատարակում է Բարս Թուղլաճիի հետ այս առթիվ կատարված հարցազրույցը (25.06.1979թ.)  
 121 1971թ. Հեյրեիի հունական հոգևոր դպրոցը փակվել է բուրբական կառավարության կողմից։ Այն կողմն էր կարողել պատրաստելու Կոստանդնուպոլիսի Հուսանց Տիբեթական պատրաստության համար։ Ս.Տրորդոսյան եկեղեցու բարձունքից բացվում է Մարմարա ծովի, Իշխանաց կղզիների,

նով<sup>122</sup>: Բարսեղ Թուղլաճյանը տարիներ շարունակ աշխատելով արխիվներում, եկեղեցիների գրադարաններում, բանգարաններում և մասնավոր հավաքածուներում, անբարեկ էր փաստական հնարավորինս հարուստ նյութ, նկարներ, փորագրանկարներ, փուտային բացիկներ: Թվում է կղզիներին վերաբերող ամեն ինչ...

Արջապես մայիս ամսին նա հրատարակում է 14 տարիների ուսումնասիրության արդյունք հանդիսացած «*Tarih Boyunca İstanbul Adaları*»<sup>123</sup> (Ստամբուլի կղզիները պատմության ընթացքում) գրքի առաջին հատորը: 1671 գունավոր և սև ու ճերմակ նկարներ և 66 փաստաթուղթ և պարունակում գործը: Հեղինակն օգտվել է գերմաներեն, հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, լատիներեն, հունարեն և բուրբերեն լեզվով գրերից և 21 անուն բազմալեզու պարբերականներից:

Առաջին հատորը նվիրված է Մեծ կղզուն, իսկ երկրորդ հատորը՝ Հեյբելի<sup>124</sup>, Բուրգաս, Քընալը, Քաշըք, Սիվրի, Թավա Սաղեֆ և Յասսը կղզիներին:

Կղզիների պատմությունը, մասնավորապես Մեծ կղզին, ներկայացվում է սկսած բյուզանդական շրջանից մինչև Օսմանյան կայսրության ժամանակները և հետո: Մինչ այդ կղզիները գրավել են մի շարք հայ, բուրբ, օտար ճանապարհորդների, պատմագիրների ուշադրությունը, տարբեր առիթներով անդրադարձել դրանց<sup>125</sup>: Այն կղզիներում մշակութային կյանքի, երաժշտության, հնագիտության, ճարտարապետության, սպորտի, սոցիալական վիճակի, նաև հարուստ բնակչության (այնտեղ կզուցեք հայ անվանի ճարտարապետների, փաշաների, ամիրաների, մտավորականության, ինչպես նաև հույն կղզիաբնակներից մինչև բուրբ մտավորականության ու քաղաքական գործիչների ամենախայտնի անունները) մասին է: Բոլոր այս հարցերին են անդրադառնում գրախոսողները, միաբերան ողջունելով ուսումնասիրությունը, համարելով այն կղզիների մասին լավագույն ուսումնասիրություններից: Գիրքը մեծ արժեքներ է գտնում ոչ միայն Ստամբուլի բուրբ, այլև օտար մամուլի լրագրողների, պատմաբանների, կինոյի

և հեռուստատեսության մարդկանց շրջանում: Լույս են տեսնում գիրքը ողջունող բազմաթիվ հոդվածներ, հեռուստատեսային հաղորդումներ, կազմակերպվում մեծարանքի հարցազրույցներ:


Գերմանական USTAD հեռուստաալիքի (միաժամանակ այն հեռարձակվում էր գերմանական, շվեյցարական և ավստրիական հեռուստատեսություններով) Թուրքիայի բյուրակիցը հարցազրույց է վարում ճանաչված պատմաբանի հետ (21.09.1989): 1998թ. գերմանական նույն USTAD հեռուստաալիքը մի ռեպորտաժ է պատրաստում Բարսեղյանի հետ, հիմնականում Իշխանաց կղզիների մասին: Այս հաղորդումը Գերմանիայից բացի հեռարձակվում է նաև Ավստրիայում, Շվեյցարիայում: Թուրքերենով «Չեր հայրենիքը մեր հայրենիքն է» հաղորդաշարը կղզիների մասին գրքի առիթով ֆիլմ է ցուցադրում: Ողջ ֆիլմն ընթացքում հնչում է պոլսահայ անվանի կոմպոզիտոր Էդգար Մանասի «*Իշխանաց կղզիներ*» ստեղծագործությունը: Այս հանգամանք էս իր արձագանքն է ունենում Ստամբուլի կենտրոնական «*Cumhuriyet*», «*Milliyet*» պարբերականներում (1989թ. դեկտեմբեր), տպագրելով նաև հեղինակի հետ տարբեր հանդիպումների լուսանկարներ: Գրքում եղած լուսանկարներն արժավ են կրկին Արա Գյուլերի կողմից:

Շարունակվում են գիրքը ներկայացնելու բազմաթիվ հրավերներ: Նույնիսկ «Թուրք կյանքից միության» Ստամբուլի մասնաճյուղը Մեծ կղզու «Սպլանդոր» հյուրանոցում իր խորհրդաժողովին մասնակցելու և գիրքը ներկայացնելու համար իրավիճում է Բարսեղյանին, ի թիվս կղզու ղեկավարության և պաշտոնյա այլ հյուրերի: Նա չեքս վերաբերմունքի և պատվոգրի է արժանանում<sup>126</sup>: Մի քանի օր անց (25.08) մեծան հանդիպման է հրավիրվում Մեծ կղզու «Ակադիա» կազմակերպում, տեղի «*Adalar*» պարբերականի 40-ամյակի հոբելյանական երեկոյին, ուր որպես գլխավոր խոսնակներից մեկը, պատմում է կղզու, նրա հայտնի բնակիչների մասին, իր ելույթը համենեղով կղզիների մասին սիրված գրողների բանաստեղծություններով: Սեկը նյուսի հետևից հարցազրույցներ և հոդվածներ են հրատարակվում Թուրքիայի տարբեր պարբերականներում, որոնք բոլորն էլ ողջունում, շնորհավորում և բարձր գնահատանքի են արժանացնում գիրքը և հեղինակին<sup>127</sup>: Բարսեղյանին Գիրքը ներկայացնում է նաև Ստամբուլի Հարբիբ քաղաքացու անունով «Մաչկա» հյուրանոցում «Լայնե Կլոբ» մասոնական ասոցիացիայի հավաքին<sup>128</sup>: Նույնիսկի ոգևորությամբ հոդվածներ են տպագրվում Ստամբուլի այլալեզու պարբերականները: Անգլերեն բերքն անդրադառնում է Թուղլաճի կյանքին, գործունեությանը, վերնագրելով իր հոդվածը՝ «*Բարսեղյանը, Արսլանի ժամանակի մարտ*»<sup>129</sup>: Նմանատիպ վերնագրով գիտնականի մասին ընդարձակ հոդված է նվիրում

122 Ստամբուլի կղաչալի տեսարան:  
122 Եկեղեցու ծովահայաց կողմում, Փոք պատրիարքի վտորիկ եկեղեցու մոտ փրփրի երկաթե կտր, իհի կապարիչի վրա տեսնում ենք հայերեն արձանագրություն, որը վկայում է դրա հայերի կողմից նվիրված լինելու մասին:  
123 Pars Tuğlaci, *Tarih Boyunca İstanbul Adaları*. İst., 1c. 1989. 600 s., P հատորը 1995թ. 576ջ.  
124 Հեյբելի կղզին առաջինն է բնակեցվել:  
125 Օտար ճանապարհորդներից կղզիների մասին տեղեկություններ և հուշեր են բողի XVII դ. ֆրանսիացի ճանապարհորդ Պիեռ Ժիլը (Pierre Gilles), որը Ֆրանսիայի քաղաքների կողմից Կոստանդնուպոլիս էր ուղարկվել մտադրելու ձեռք բերելու նպատակով: Թեև չի կարողացել կատարել իրամանը, սակայն ճանապարհորդելով քաղաքում և նրա մերձակայքում, նա ցուցակագրել է հոմեմա-բյուզանդական շրջանի հնամիտական հետաքրքրություն ներկայացնող հուշարձանները, կառույցները, որոնց մի մասն այսօր չի պահպանվել և այդ իսկ առումով էս մեծ այբեր է ներկայացնում: Սա նաև պատմություն է 10-րդ Մուլլան Մուլլեյան Փատահեղի (Օրնեմաղիի, 1494-1566) տիրակալության շրջանի մասին:  
Մյուս օտար հեղինակը, որի հուշերը և զեկուցագրերը հետաքրքրություն են ներկայացնում, Մուլլան Սևալի Գ-ի (1673-1736) կատարածն է շրջանում (1703-1730) Ատտանդնուպոլիս Անգլիայի վրաստ Էդվարդ Բարտոնն է (Sir Edward Barton): XVII դ. օսմանցի գրող, ճանապարհորդ, ռազմական գործիչ, Էվիյա Չեֆեբի (Evliya Çelebi, 1611 - 1682) «Ճանապարհորդությունների» 10 հատորյա «*Սիպահնամե*»-ում բավականին մանրամասն անդրադարձել է նաև հայ ժողովրդի կյանքին, կենցաղին: Մյուս հեղինակը Էրնեստ Չեֆեբի Քյոնուրթյանն է (1637-1695,) XVII դարի արևմտապա նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, մատենագիր:

126 «*Milliyet*» 9.08.1989 և «*Güneş*» օրաթերթը 21.09.1989  
127 Տարբեր տարիներ կղզիներ այցելողները նորից ու նորից վերըներեցնելով Թուղլաճի գիրքը, իրենց ստագրությունները և գրքի շնորհիվ շատ ու շատ վաստեր, նորություններ իմանալով ավելի ոգևորությամբ են վերաբերվում իրենց այցելություններին, ամեն մեկն իր համար բանկազան ու հետաքրքրիչ, կղզիներում փնտրելով այս կամ այն պատմական անձի հետ կազմած վայրեր: Անձեից առավել մտավորականները, մասնավորապես գրողներն են, որ ներշնչվում են դրանք: Տես գրող Tarik Dursun, *Pars Tuğlaci Adına Biri, Dünya*, İst., 11.01. 2001.  
128 Հնագիրք տեղի է ունեցել 6.03.1995թ.: Հետաքրքրիչ է, որ մասնավոր օրյակները նույնիսկ Թուղլաճի հրավերակապից հետո, նրան ուշադրության կենտրոնում են պահում:  
129 Pars Tuğlaci, *A contemporary Renaissance man*. Life style/Books, İst., 13.09. 1989.





անգլիագիր մի այլ «Turkish Times» պարբերականը<sup>130</sup>:

Շատերի բվում գիրքը կենտրոնական օրաբերքերից «Sabah»-ում, ողջունել է Թուրքիայի լավագույն կինոբեմադրիչներից Շաքիր Սըրմալը (Şakir Sirmalı 1916-2004), գրելով, որ կղզիները համարվում են Ստամբուլի ամենառոմանտիկ վայրերից: Դրանց մասին գիտնականի 14 տարիների ուսումնասիրության 576 մեծադիր էջերում հավաքած լուսանկարների և պատմությանը միախառնված փաստերի արդյունքում մի շարք բանկազին հուշեր ու փաստեր վերահանող գործ է ներկայացվել, մանավանդ կղզիները չճանաչողների համար<sup>131</sup>: Հայտնի մտավորական գործիչը շատ ավելի ընդարձակ հոդված է տպագրել «Cumhuriyet»-ում<sup>132</sup>, ընդգծելով նաև կղզիների ֆիզիկական, աշխարհագրական, սոցիալական, մշակութային, տնտեսական, պատմական, քաղաքական դեմքի նորոժի նկարագրությունները: Այս հատորների մասին հիացական հոդվածները շարունակում են լույս տեսնել հետագա տարիներին ևս<sup>133</sup>: Արվեստագետը հիշեցնում է 1891թ. Քընալը կղզում Ադամյանի թատերախմբի, ժամանակի նշանավոր դերասանների (բնականաբար հայերի մասին է խոսքը) շարքակազմ երկու ներկայացումները: Շաքիր Սըրմալըն հիացրել են գրքերում մեկը մյուսին հաջորդող լուսանկարների մեջ եզակի, պատմական նկարների աեկայությունը: Որպես օրինակ նա բերում է Թուրքիայի և Հունաստանի վարչապետներ Ինոնյուի և Էլենիքիոս Վենիզելոսի (Eleftherios Kyriakou Venizelos, 1864-1936) «...ռոմանտիկ մթնոլորտում, կողք կողքի քաղաքական գրույցի» նկարը: Ընթերցողները յուրաքանչյուր կղզու նկարագրության մասում նոր, մինչ այդ անհայտ փաստերի են հանդի-

130 Pars Tuğlacı, Çağdaş Renaissance Adami, Turkish Times., İst., 13.09.1989.  
 131 Şakir Sirmalı, Adaları Katlettik, «Sabah», İst., 30.08.1992.  
 132 Şakir Sirmalı, Tarih Boyunca İstanbul Adaları, «Cumhuriyet», İst., 8.10.1992.  
 133 Engin Sunar, Prof.Dr. Pars Tuğlacı'dan Tarihe Tutulan Bir İşik İstanbul Adaları, Cumhuriyet», İst., 12.06.1995.

պում»: Բեմադրիչի համար նորություն էր, որ դեռևս 1860-ականներին Ստամբուլում Անգլիայի հյուպատոս Հենրի Լիթոնը (Sir Henry Bulwer Lyton) Յասարալայում, ափամերձ բլրի վրա երկու դղյակ է կառուցել:

Հետագա տարիներին ևս գիտնականը հանդես է գալիս Մարմարա ծովի «Իշխանաց կղզիների» մասին հոդվածներով, հավելելով նորանոր հետաքրքիր փաստեր<sup>134</sup>:

Դեկտեմբերին Բարս Թուղլաշը այցելում է Փարիզ: Փարիզյան օրերը հարուստ են հայ և քուրդ ականավոր մտավորականների, դիվանագետների հետ հանդիպումներով, այցելություն Պեր Լաշեզ գերեզմանոց, Կիլիկյան թագավորության արքա Լևոն VI-ի դամբարան՝ Սեն Դենիի արքայական դամբարանների տաճարում:

Թուրքիայում Բարս Թուղլաշը «Հրատարակչական միացյալ բարձրագույն խորիզի» անդամ է ընտրվում:

Բարսեղ Թուղլաշյանը իր ողջ ստեղծագործական կյանքում առանձնահատուկ սեր է տածել դեպի գեղարվեստը, դրա ամենալայն առումով՝ մասնավորապես գեղանկարչության, մանրանկարչության, լուսանկարչության նկատմամբ:

Լույս է ընծայում ֆրանսիացի գեղանկարչուհի Իվոնի և նրա ամուսնու, քուրք նկարիչ, մշակութային գործիչ Ալի Քարսանի<sup>135</sup> մասին «Karsanların Dünyası» (Քարսանների աշխարհը) գիրքը<sup>136</sup>: Գրքում ներկայացված է արվեստագետ զույգի նկարների պրոֆ. Էրդոգան Յալքընի (Prof. Erdoğan Yalkın) հավաքածուն: Գեղանկարիչ այս զույգի պատմությունը արվեստասերների կողմից չեքո ընդունելության է արժանանում: Հարցազույցներ, գրախոսականներ, երախտիքի խոսքեր ...

Բարս Թուղլաշը սովորաբար «Cumhuriyet» քերթում է (27.11.1988). ազդարարել իր հեթրական հրատարակության մասին, համառոտ հոդվածով նկարագրելով գիրքը: «Լեշարիի ամենամեծ ծովանկարիչ Ալյազուվսկին կրկին Սրամբուլում է»: Այսպես է վերնագրել իր հոդվածը Բարս Թուղլաշին Ալյազուվսկու նվիրված իր այբումը ներկայացնելիս: Գիրք-այբումը լավագույնս ներկայացնում է նկարչին, պատմում է մեծ ծովանկարչի մանկության, ուսումնառության, հաջողությունների, աշխարհի լավագույն թանգարաններում նրա ցուցահանդեսների, 1874թ. Թուրքիայում անվանի ճարտարապետ Մարգիս Պալյանի կողմից նրան Քուրուչչենի իր արհեստական կղզակում հյուրընկա-

134 «Atlas» անասիր, İst., 1989 հոկտեմբեր. Սա բյուզանդական շրջանից ի վեր հայտնի անձանց, ժամանակավիթների Կղզիներ կառարած այցելությունների և նրանց բոլած արդյունքների մասին է:  
 135 Yvonne (1907-1986) & Ali Karsan (1903 -): Ամուսնացել և Անկարա են տեղափոխվել 1928թ.  
 136 Pars Tuğlacı, Karsanların Dünyası, İst., 1988, 95s.

լելու մասին: Ռուսաստանի ամենահայտնի պալատներում, մասնավոր հավաքածուներում և թանգարաններում, ապա նաև Թուրքիայում Դումարահեյուն 48, Թուրքախու պալատում 1, Զոյուլուխյի ապարանքում 1, Շալե ապարանքում 1, Ջինվորական թանգարանում 1, Մոլվախի թանգարանում 3, Հայկական պատրիարքարանում 5, Ազգային հիվանդանոցի թանգարանում 1, Անկարայի նախագահական Չանքայա պալատում 10 կտավների գտնվելու և տարբեր վայրերի գեղագրությունների մասին է պատմում հոդվածը: Այվազովսկիի Ստամբուլ է այցելել շուրջ 8 անգամ 1845, 1857, 1858, 1874, 1880, 1886, 1888 և 1890 թվականներին: 1888թ. նրա վերջին ցուցահանդեսն է բացվել Ստամբուլում: Ահա այդ օրվանից 100 տարի անց, և Ստամբուլում 143 տարի առաջ ունեցած առաջին այցելության առթիվ որպես հորեյանական հրատարակություն Բարսեղ Թուրլանը իր գիրք այրոմն է լույս ընծայել:

Արդյունքիդ սուլթանի օրոք ստամբուլյան օրերի ընթացքում Այվազովսկին բարեկամացել է մի շարք թուրք լուսավորիչների, հայտնի մարդկանց, արվեստագետների հետ: Նա հյուրընկալվել է պալատում, պատվերներ ունեցել, քաղմարիվ շքանշաններ և մեդալներ ստացել: Շիլլիի «Քայմեն» գեղարվեստի ցուցադրահամու ցուցադրվել են նրա նկարները, այդ թվում նաև պատմական թեմայով նրա գործերը, հայտնի ծովանկարները, ծովամարտերը, տեսարաններ Պոլսից, դիմանկարներ<sup>137</sup>: Բարս Թուրլանին հրատարակել է նաև դիմանկարների նախատիպերի, որանցից ոմանց հետ նկարչի նամակները: Հրատարակել է Օսմանյան կայսրության պետական գործիչ, մեծ վեզիր, գրող Ջեչեչիզադե Ֆուատ փաշայի (Keçecizade Fuat Paşa: 1814-1869) ֆրանսերենով նամակը (24.11.1857, ուղղված նկարչին, երբ նա Թեոդոսիա էր վերադարձել: Հայտնի է, որ Թուրքիայում նա բազմաթիվ երկրագրություններ է ունեցել, որոնցից արյուսահայ ակամավոր նկարիչ Արտիչ Ջիվանյանը ոչ միայն տարվել է ծովանկարչությանը, այլև Ս. Պետերբուրգ գնացել՝ ռուսական մրենդորտում ակադեմիական կրթություն ստանալու համար:

Թուրլանին գրքերի հրատարակությունների միջև ընկած ժամանակաընթացքում շրջագայել է, հյուրընկալվել սփյուռքի հայ գաղթօջայիներում, տարբեր թեմաներով դասախոսություններ կարդալու հրավերով: Աշխարհի տարբեր անկյուններից, հայկական և մասնավորապես այդ երկրներում «Պոլսահայերի միություն»-ներից մեծարարների երեկոների, հանդիպումների, զեկուցումների կարդալու հրավերներն անպակաս են եղել:

**1989թ.** հունվարին «Doğru yol» (DYP ճիշտ ուղի) կուսակցության ղեկավար, վարչապետ Սուլեյման Դեմիրելի կողմից հեռավաճյով առաջարկ է ստանում (Süleyman Demirel, 1924-2015) անդամակցել Ստամբուլի Կոզիմների ղեկավարության վարչությանը, ընտրվել վարչության ղեկավար: Բարս Թուրլանին պատասխանում է, որ նախընտրում է զբաղվել գիտությամբ: Եվս 2 անգամ վարչապետ Դեմիրելը զանգահարում և կրկնում է առաջարկը: Բարս Թուրլանին թվում է, որ Ստամբուլի քաղաքի ընտրություններում DYP -ի կողմից եթե առաջադրվի այդ պաշտոնում, ընտրվելու դեպքում պիտի կարողանա պայքարի կողմնորդ պատմական, նախնական, մարտնչական տեսքը պահպանելու, փայտե տները չաղբղում և

որպեսզի դրանք չփոխարինվեն բետոնե տեղեկատվացներով: 1989-1994թթ. համար նա չանդամակցելով և ոչ մի կուսակցության, մարտ ամսին կայանալիք ընտրություններում առաջադրվում է Կոզիմների վարչության ղեկավարի պաշտոնում՝ սեփական բարենորոգումների ծրագրերը «ձեռք ձեռքի տված» իրագործելու հույսով: Նա ներկայացնում է 27 կետերից բաղկացած իր ծրագիրը: Բնականաբար այս ամենը լայնորեն քննարկվում և լուսարձանվում են կենտրոնական մամուլում:

Վերադարձին, մարտ ամսին Ստամբուլի «Շերատոն» հյուրանոցում մինչընտրական միջոցառման ժամանակ արված լուսանկարներից մեկը ներկայացնում է երկրի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ Բարս Թուրլանին ողջագրվելու, համբուրվելու պահը: 496 ձայն հավաքելով գիտնականը չի ընտրվում:

Հետաքրքիր է, որ որոշակի սահմանափակումներ պարտադրված տարիներին նա համարձակվում է հանդիպումներ ունենալ, գրել Ստամբուլ ժամանած, Ռուսաստանում իր վերջին տարիներն անցկացրած թուրք նշանավոր «ռոմանտիկ» գրող, Խաղաղության միջազգային մրցանակի դափնեկիր (1950), Նազիմ Հիքմեթի (Nâzım Hikmet Ran 1902-1963) վերջին կնոջ՝ Վերա Տուլյավովայի հետ: Նրանք հանդիպել էին Թուրլանին 1976թ. Մոսկվա այցելության ժամանակ: Վերա Տուլյավովան Ստամբուլ էր եկել նոյնները ամսին Թեֆեբաշլիի «Գրքի միջազգային տարբերակ ցուցահանդեսին» ամառում գրքեր ներկայացնելու համար: Թուրլանին «Cumburiyet» քերթում հանդես է գալիս հոդվածով և վերնագրում՝ «Բարով եկար Վերա»:<sup>138</sup> Պատասխանը՝ «Ես թեզ սիրում եմ, քանի որ թեզ սիրում էր Նազիմը»<sup>139</sup>:

Ռուսական այս սիրալիք տրամադրությանը գիտնականը «Cumburiyet» օրաթերթում «*Aşk, şîir, müzik ve güzelliik ülkesi Rusya bir başka âlemdir*» (Սիրո, քանաստեղծության, երաժշտության և գեղեցկության երկիր Ռուսաստանը մի այլ թագավորություն է) վերնագրով հոդված է տպագրում<sup>139</sup>, արտահայտելով իր լավագույն զգացումները մի երկ-

138 Նազիմ Հիքմեթի քաղաքին նկատմամբ նորը զգացումներ սկսվել են պետի պատանեկան տարիքից, երբ նա հայկական քառասյուսերի ներկայացուցիչների հավասարիմ քարեկամն էր: Հանդիպումն արված շրջանում, երբ կառավարիչ թուրքական քաղաքում և դիտասանական խմբում մնացին միայն հայ դերասանուհիները, քանզի թուրք կինը դեռ ընդ որսը չէր եկել, բնօրն շարունակել է փայլել արհմատման Էլիզ Գովան Պինմեմիդյանը: Հենց վերջինիս խելանեղ սիրահարված է եղել երիտասարդ Հիքմեթը: Նրան միայն տեսնելու, մտորիկից չըվելու համար պիտի է գրում, որտեղ գլխավոր դերասանուհին արհմատման էր լինելու: Հեղինակը հնարավորություն կունենար անձնապես չիվելու իր պետի դերասանադուռի հետ: Այս մասին նա լսել էր Գասմինի Սուսվանյանից: 1970-ական թթ., ճիշտ թվականը չեմ հիշում, երևան մեկ համերգի համար Թուրքիայից հյուրանոցով եկան ժողովրդական գործիչների համույրը գեղեցկուհի երգչուհի Էմել Սալջուհի հետ և Խաղաղային խումբը հայ թմբակահարի հետ: Հյուրերը ապշած էին անմատախեղ ցեքո ընդունելությունից: Գասմինում ասել ցգետի տեղ չկար եղևնից մազապոք իրվված արևտախայերից, որոնք այքան կարտուս էին իրենց երգերին և այս կամ այն եղբղ կատարելու խնդրանքները, մաղիկները, արտասուքները անպակաս էին: Երգերի մեծ մասին մայնակցում էր ողջ դասիկոն (թուրքերեն): Խմբին ուղեկցում էր Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնից պրոֆ. Բարսանը: Հիքմեթն մասին իմն նկրած նրա գրքի մի մասնորոգությունում էլ գրա ակամավոր գրողի Էլիզ Գովանով մարված լինելու պատմություն: Գրողը ինչ որ առիթով խաղեղ երիտասարդական այս սիրո մասին, խառնովանել է, որ այս պատմաճաղ է նա դրամատուրգ դարձել: Ավետ, որ այդ գիրքը կորցրի և ավելին չեմ կրտ գրել:

139 Pars Tuğlalı. «Aşk, şîir, müzik ve güzelliik ülkesi Rusya Bir Başka Âlemdir». «Cumburiyet», İst., 22.10.1992.

137 «Այվազովսկին Թուրքիայում» գրքին է անդրադարձել Թեոդոսիայում Այվազովսկի ֆոնի 1995թ. մարտի 6-ի «Федосюсовская Памятка» քերթն իր քաջամիլի համարում ֆոնի նախագահ Օլեգ Առուշանյանի ստորագրությամբ:



րի մասին, ուր ակադեմիական շրջանակների կողմից բազմիցս հրավիրվել էր ուսումնասիրություններ կատարելու, գեկուցումներ կարդալու: Այս ընթացքում նա հաջողել էր հանդիպումներ ունենալ ոչ միայն Մոսկվայի, Լենինգրադի գիտական շրջանակների հետ, այլև հանդիպումներ ունենալ այս քաղաքներում ամենատարբեր ասպարեզներում աշխատող, ապրող և ստեղծագործող հանրահայտ հայ անձանց հետ: Ի լրումն այս ամենի, նա այցելել է քանդակարաններ, եղել համերգային լավագույն դահլիճներում, ներկա գտնվել օպերային և քառերական ներկայացումներին: Թուղանին միշտ էլ ձգտել է միջնորդ հանդիսանալ Թուրքիայի և Ռուսաստանի միջև մշակութային հարաբերություններ հաստատելու գործում: Նա մի առիթով պատժում է Թուրքիայի նախագահ Ֆահրի Հոթրոթուրքին Արամ Խաչատրյանի մասին և Նախագահը համաձայնվում է Թուրքիա հրավիրել աշխարհառեչակ կոմպոզիտորին: Թուղանին փոխում է, որ չի հաջողվում իրականացնել այդ հրավերը, քանզի Արամ Խաչատրյանը Փարիզում «նեֆրիտ» հիվանդության պատճառով վերադառնում է Մոսկվա և կնքում մահկանացու 1978թ.: Ափսոս, արժեք, որ թուրք-ռուսական հարաբերությունները զարգանային, ավելի մտտիկեց ճանաչելիս ռուսական մշակույթը, քանզի «Ռուսաստանը մի այլ երկիր է»:

1992թ. «PARS» հրատարակչությունը թուրքերեն և անգլերեն լեզուներով (առանձին առանձին) լույս է տեսցնում «*Çırağan Palace*» (Չրաղան պալատը) գիրք-ալբոմը<sup>140</sup>: Այս մասին գրում են Ստամբուլի թուրքերեն, անգլերեն և հայերեն պարբերականները:

1863-67թթ. Բոսֆորի նեղուցի եվրոպական ափին գտնվող Սուլթան Աբդուլազիզի համար կառուցված Չրաղան պալատը, Ստամբուլին ճաշակ և արվեստի նրբություն հարդարած ճարտարապետական հրաշալիքներից է, որի հեղինակներն են Պալյան անվանի գեղարտասանից Սարգիս (1835-1899) և Հակոբ (1838-1875) Պալյանները: Պալատի նախագիծը մինչ այդ կազմել էր Նիկողոս Պալյանը (1826-1858): Այստեղ ապրել է նաև Սուլթան Աբդուլհամիդ II-ը, երբ մեկուսացված էր և գտնվում էր զինվորական հսկողության ներքո: 1909թ. այստեղ են անցել թուրքական Մեջլիսի առաջին նիստերը:

Այս պալատը չարաբաստիկ համբավ ունի: Սուլթան Աբդուլ Ազիզը երկար չապրեց իր հոյակապ պալատում: Նրան մահացած գտան ներսում 1876 թվականի մայիսի 30-ին, գահընկեց անելուց անմիջապես հետո: Նրա իրավահաջորդը՝ Սուլթան Մուրադ V-ը, տեղափոխվեց Չըրաղանի պալատ, բայց թագավորեց ընդամենը 93 օր: Նրան ենթադրյալ հոգեկան հիվանդության պատճառով գահընկեց արեց իր եղբայրը՝ Աբդուլ Համիդ II-ը և այնտեղ ապրեց տնային կյանքի տակ մինչև իր մահը՝ 1904 թվականի օգոստոսի 29-ը:

1909 թվականի նոյեմբերի 14-ին Երկրորդ սահմանադրական միապետության ժամանակ սուլթան Մեհմեդ V-ը թույլատրեց Օսմանյան խորհրդարանին իրենց ժողովներն անցկացնել այս շենքում: Ընդամենը երկու ամիս անց՝ 1910 թվականի հունվարի 19-ին, մեծ հրդեհն ավերեց պալատը՝ անձեռնմխելի թողնելով միայն արտաքին պատերը:

1910 թ. վառարանից բռած կրակից 5 ժամվա ընթացքում հիմնական այրվում է հրաշակերտ պալատը: Չարաբաստիկ այս հերթիցից ծագեց «*Չրաղանի սկսա սյրվում է*» դարձվածքը, երբ խոսքը վերաբերվում էր կրակի կործանիչ տարրերին: 1989թ. պալա-

տը հանձնվեց ճապոնացիներին, որոնք այն վերականգնեցին, ծառայեցնելու որպես 5 աստղ ունեցող *Kempinski* բրենդի բարձրակարգ հյուրանոց: Ափսոս, որ մեր կարծիքով 2007թ. փորձերը՝ վերարտադրելու, վերականգնելու պալատի պատճառան, նախկին տեսքը այնքան էլ չի հաջողվել: Արևելյան զարդանախշերի չտիպազանցված առատությունը, որմնանկարների գույները հեռու են այն ստեղծած ճաշակավոր հեղինակների, խաղաղ և չբանսիական ճարտարապետության ավանդույթներով կրթված ու այն Ստամբուլում ներդրած ջանքերից<sup>141</sup>:

Ուշագրավ է «*Vizyon Dekorsyon*»-ում Nur Nirven-ի տպագրված հարցազրույցը<sup>142</sup>: Այն վերնագրված է «*Գրասխանի առջև նստած պարմություն չես գրի*»<sup>143</sup>: Լրագրողն անդրադառնում է զխանական մանկույթանը, կրթությանը, նրա առաջին քառարանին՝ («*İngilizce-Türkçe Deyimler Sözlüğü*»-ը (Անգլերեն-թուրքերեն իդիոմների բառարան, 1961թ.), որն արդեն 16 վերնագրություններ էր ունեցել, ուսանողության համար այդքան կարևոր բժշկական բառարաններին: Բառարանակազմությանը զուգահեռ լրագրողին հետաքրքրում է գիտնականի պատմական ուսումնասիրությունները, 24 գրքերը և դրանցից ո՞րն է ավելի սիրելի հեղինակին, ի՞նչով է գրադվել հայր Թուղանյանը, Ստամբուլում 250-ամյա անցյալ ունեցող նրանց ընտանիքում ճանաչված մարդիկ եղե՞ն և հարցեր, որոնք վերաբերում են առանձին հրատարակություններին: Պատասխաններում երևում է և՛ մարդ, և՛ գիտնական Թուղանին: Նա 11-12 տարեկանում սկսել է կարդալ ֆրանսիացի դասականներին, ֆրանսիական հեղափոխության մասին, լաց եղել Վիկտոր Հյուգոյի «Թշվառների» Ժան-Կարմանի և Կոզեթի հետ միասին: Իրենց գեղարտասանը ծագումով Մուշից է: Հայրը ուսուցչություն է արել, նրա հին, ձեռագիր դիպլոմը որդին պահում է մինչ օրս: Սակայն հայրը ստիպված է եղել բողոք ուսուցչությունը և 5-6 հոգիանոց ընտանիքը պահելու համար սկսել է գրադվել վաճառականությամբ: Շատ չի հաջողել այս քնազավառում: Ընտանիքի հայտնի անդամներից կարևոր է հոր



140 Pars Tuğlacı. *Çırağan Palace*. İst., 1992, 10+72p.(սով.) & Pars Tuğlacı. *Çırağan Palace*. İst., 1992, 69s. (թուրք.)

141 Մեզ ապշեցրեց ամենաբարձր կարգի հյուրանոցի ծովահայաց 5 աստղանի ռեստորանի իրմական քրտի պատերի նկարազարդ թղթի պատաստապատ լինելը, որը էժանագին ճաշակի ստանդարտություն է նկատվում: Այն նույնպես անհարիր էր կերակրացանկի բարձր գնելի հետ:

142 Nur Nirven, «*Pars Tuğlacı: «Masa Başında Tarih Yazılmaz. «Vizyon Dekorsyon»*» ամսագիր, Ստամբուլ, 1992թ. հունիս:

143 Այդի առաջ ունենալով անգամ Մյուխրայան միաբնակության պատերի ներսում ստեղծված մեծաթեք գիտական կրթության գրականությունը, ստիպված ենք շնամանյակ Բարս Թուղանիին հետ:

գարմիկը Լևոն Լարենցը, որը բարգձման է «Հյուզդի «Թշվառները» և «Ֆրանսիական հեղափոխությունը», Լինչի «Հայաստանը», Ստամբուլում և Բուստոնում հրատարակել օրաթերթ: Թուղլանցիին թվում է, թե որոշ բաներ ժառանգել իր այս բարեկամից: Առանձին հպարտությամբ խոստովանում է, որ իր որդին Սայաթը 18 տարեկանում միջիջեչյական շախմատի մրցույթների չեմպիոն է եղել: Ահա իր գերդաստանի հայտնիները: Իսկ գիտնական դաստիարակ համար անհրաժեշտ է իմանալ, որ ամեն մեկը չի կարող գիտնական լինել: Միայն գրասեղանի առջև նստելով պատմություն չես գրի: Պիտի աշխատես և ծեծես բոլոր անհրաժեշտ դոնորը: Պիտի շարժում լինես, սիրես քո գործը: Ես շատ եմ գնահատում ժողովուրդների միջև բարեկամությունը: Դրանց բոլորի պատմության մեջ եղել են սխալներ, որն իմանալով, գիտակցելով է, որ կարելի է խուսափել դրա կրկնությունից: Այս առթիվ Աբարտըն ասել է՝ «Պատմությունն աներևակայելի է: Պատմությունը գրելիս մենք պետք է փորձենք գտնել իրական իրադարձությունները: Եթե չենք գտնում, ապա այս պահին եկեք չիսապղծել ընդունել մեր անորոշությունն ու անտեղյակությունը» («Tarih hayal mahsulü olamaz. Tarih yazarken gerçek olayları bulmaya çalışmalıyız. Eğer bulamazsak meçhuliyeti ve bu noktada cehaletimizi itiraf etmekten çekinmeyelim»): Այս մտքին հավելվում է մի այլ առիթով «Պատմությունը գրելը նույնքան կարևոր է, որքան պատմությունը իրագործելը»<sup>144</sup> ասվածը, «...բանգի այն մնացու է և կարող է ստեղծել հուսալի և առողջ աղբյուր այնքանով, որքանով դա հիմնված է արխիվներում առկա փաստաթղթերի վրա» («Arşivlerdeki belgelere dayandığı ölçüde güvenilir ve sağlamlı bir kaynak oluşturabilir»): Ահա գիտնականի հիմնական հավատածներից կարևորագույնը<sup>145</sup>:


- 144 Այս խոսքերը «Թուրք պատմագիտական ընկերության» (Türk Tarih Kurumu) նշանաբանն է:
- 145 Այս էջերը գրելիս նա չգիտեի, թե գարծանքը այդքան դեմք ունի: Չարձանում էի Թուղլանցիի աշխատասիրության, տաղանդի, ստեղծագործական նման հունքն ունենալու, մարդկանց դեպի իրեն և իր գործը լավագույնս տրամադրելու, իր բոլոր ծեծած դոնորը բացելու և իր ցանկացածը ստանալու, միաժամանակ սիրելի ու հարգելի լինելու բոլոր ազգերի, աշխարհապաշտ հայերի, գիտական միջազգային հասարակագիտության, Թուրքիայի դեկադալության ու իր հայրենակցային համայնք, Սան Ֆրանցիսկոյում Ստրանո Թեկիլյանցիի եղբոր դատելը հյուրընկալվելը, նրա բազմակողմանի զարգացած լինելը և այն գիտական ուսումնասիրություններ դարձնելը, գիտական աշխարհի հնարավոր բոլոր կողմերից ու շնորհների արժանանալը և այլն: Այս ամենը հնարավորին կարողացա բացատրել, մարտել, հպարտանալ, սակայն մի բան անհասանելի մնաց ինձ համար: Այն է՝ հայածին գիտնական, հայկական կրթություն ստացած, աշխարհի ամենատարբեր անկյուններում գոյություն ունեցող գրադարաններում, արխիվներում աշխատած, մասնավորապես Թուրքիայի ամենափակ արխիվներում ուսումնասիրություններ կատարած մեկը, ինչպես կարող էր և կարողացել է գրել, հրատարակել իր հետաքրքրությունների շրջանակում եղած և նրանց որոշ, պատմելով կամ հավեր պատշաճի «ստիպալական», կամ ներքին մոտով գրված աշխատանքները: Միայն թե հարցազրույցների ժամանակ Թուղլանցի «խոստովանությունները» Աբարտընի նկատմամբ «երկնագույրային» առիթով անբացատրելի մնաց: Դեփոք թե գտնիլի հայազետե, բոլորապես կամ ժուխտե մի ուսումնասիրող, որ Հայաստանի և հայերի նկատմամբ Աբարտընի հայաչեմը, Աբարտը-Լենինը մարձագրի դերը մեր նկատմամբ անտրոսյան, հեռուդրակներին կրթմանը չվկայելու: Ինտրվե, Բարս Թուղլանցյանը մի առիթով բացատրում է, որ «բուրքերի հոր» նկատմամբ հպարտության զգացումը դեռևս մասնավոր է գալիս: Մա Թուրքիայի քաղաքացու դաջողական տարիքի սկսած իրավիճակի արդյունք, հավեր պատշաճի, կոտկտ սաված խտր կամ զգացում չի: Թուղլանցի մի առիթով պատմում է, որ Աբարտընի նկատմամբ սերը նա ժառանգել էր հորից, որը հաճախ էր խոսում առաջնորդի մեծ անհատականությունից: Այո, սխղող ողբու մանկության այս զգացումներին նա հավատարիմ է մնացել նաև իր ստեղծագործական կյանքում: Ահա ինձ և՛ գիտակցություն և՛ հոգով անհասկանալի ու անլուծելի հարցականներով մնացած խնդիրը...

Գալով նախակրթարանից հետո ունեցած կրթությանը, ապա Կիպրոսի հետ որևէ կապ չունենալով, մեկնել է այնտեղ, կրթություն ստացել Մելքոնյան վարժարանում: Պատմական ուսումնասիրություններ կատարելու համար շրջել է 24 երկրներ, աշխատել տեղի արխիվներում, գրադարաններում: Աշխատել է Թուրքիայի վարչապետարանի արխիվում և առանց իր հավաքած նյութերի անհնարին կլիներ հրատարակել, այս 24 գրքերը և մյուսները ևս, որոնք սպասում են լույս ընծայման: Այստեղ կատարած իր արպատմանը օգտակար են եղել պատմության մեջ հայ-բուրքական հարաբերությունների մասին գրելիս: Իրականում, եղել են «ժամանակներ, երբ բուրքերի ամենամոլորի բարեկամները, գործակիցները եղել են հայեր: Դա անցյալ է, սակայն երանի թե մի օր առիթ ունենամ այն սպագուցելու»:

Գիտնականը 24 գրքերից առավելագույնը նախընտրում է «Çağdaş Türkiye»-ն<sup>146</sup>: Աբարտընի նկատմամբ սերը նա ժառանգել է հորից, որը հաճախ էր խոսում առաջնորդի մեծ անհատականությունից: Երեք հաստը արդեն հրատարակվել է, իսկ 4-րդը նվիրվելու է Իսմեր Ինյունյուկ ժամանակաշրջանին, 5-րդը՝ Դեմոկրատական կուսակցության շրջանին: Այս բոլոր հատորներն արդեն պատրաստ են հրատարակության: Գալով անգլերենով բառարաններին, ապա բառարանգիրն ուղարկել է ժամանակին Անգլիայի Թագուհուն և ի պատասխան՝ Թագուհին նամակով շնորհավորել է եղիմակին:

Բացի կանանց նվիրված երկհատորյակի շարունակությունը կազմող ևս երկու հատորների, պատրաստ է հրատարակության նաև «Թուրքիայի պատմության և մշակույթի հանրագիտարանը»։ Այն սկսվում է 1070 թվականից: 1993թ. Թուղլանցիի վաղեմի բարեկամ, «Tercüman»-ի արտոնատեր Քեմալ Ըլըջալը (Kemal Ilıcak) ապրիլի 5-ին ծննդարկում է հանրագիտարանի հրատարակությունը: 3 օր անց՝ ապրիլի 9-ին Անկարայում նա հանկարծամահ է լինում: Հեղինակը մեծ ցնցում է ապրում, իսկ հանրագիտարանը չի հրատարակվում:

Հարցազրույցի ժամանակ Բարս Թուղլանցին ուսումնասիրողի իր 35 տարիներից ներկայացրել է Թուրքիան միջազգային գիտական շրջանակներում և ճանաչել տվել իր երկրի մտավոր ուժը: Նա թվում է իր միջազգային դիպուկները, շնորհները: Օրինակ, Բուլղարիայի Հանրագիտության կենտրոնում ևս տարեդարձի առթիվ Թուղլանցին արժանանում է «Ոսկե մեդալ»-ի, իսկ ԱՄՆ -ի Հյուսիսային Կարոլինայում գտնվող «Ամերիկյան կենսագրական ինստիտուտը» նրան Ինստիտուտի ցմահ անդամ է ընտրում և «Միջազգային մշակույթի պատվով դիպլոմ» շնորհում<sup>147</sup>:




146 1-3 հատորները լույս են տեսել 1987-1990թթ. Ստամբուլում՝ CEM հրատարակչության կողմից:  
 147 Մնացած պարգևների մասին տես՝ գիտնականի միջազգային ճանաչման մասին գլխում:



1993թ. անգլերեն և թուրքերեն լեզուներով լույս է տեսնում Օսմանյան կայսրության Արքունի վառողապետների գերդաստանի մասին «*Dadyan Ailesinin Osmanli, Toplum, Ekonomi ve Siyaset Hayatindaki Rolü*» (Տառյան ընտանիքի դերը Օսմանյան հասարակության սոցիալ, տնտեսական և քաղաքական կյանքում) գիրքը<sup>148</sup>։ Նրանք 140 տարի վառող էին պատրաստում ողջ օսմանյան բանակի համար։ Ինչպես Պալան գերդաստանի, այնպես էլ Տառյան ամիրայական գերդաստանի անունը և գործը հավերժ կպահված է Օսմանյան կայսրության պատմության, գիտության, մշակույթի և հարցանակների հետ։ Շուրջ 500 սև-սպիտակ, գունավոր նկարներ, 300-ի չափ փաստաթղթեր ներկայացնում են 18-19դդ. Կայսրությունում տեխնիկական զարգացման և ամենակարևորը՝ երկրի անվտանգության կարևորագույն օղակի՝ վառողի արտադրության պատմությունը, նրա ստեղծողներին։ Սա պատմություն է նաև լավագույն վառողի սեփական արտադրությանը պայմանավորված<sup>149</sup> Օսմանյան կայսրության բանակի հարթանակների<sup>150</sup>։ Այն մասամբ երաշխավորված է եղել «պալատական վառողապետի»՝ Տառյան ամիրաների գերդաստանի օսմանյան պետությանը 140 տարիների ծառայությամբ։ Այս գերդաստանի անդամները Տառյան Արքին փաշան (1830-1901) վեզիրության աստիճանի հասած դիվանագետ է եղել։ Այս գերդաստանը տվել է նաև տաղանդավոր ինժեներ-մեխանիկներ, մշանավոր դիվանագետներ, Պետական Խորհրդի անդամներ։ Տառյաններից շատերն իրենք բարձրագույն կրթությունը ստացել են Փարիզում, Վիեննայում, Լոնդոնում։ Տիրապետել են մի քանի լեզուների։ Վառողի քաղաքակրթական գործարաններ են հիմնադրել, զարգացրել թոթի արտադրությունը։ Բանակի հանդերձանքի, դիվանագիտության, հանքարդյունաբերության բնագավառում Տառյանները եվրոպական գնահատման արժանացած լավագույն որակ են ապահովել։ Այդ ամենն ուղեկցվել է տեխնիկական քաղաքակրթության նորարարությունների, գիտական հայտնագործությունների ներկայացմամբ և դրանց կիրառմամբ։ Ամիրայական երկու հայ ընտանիքների մասին ուսումնասիրությունները կոչված էին հեքրական անգամ հիշեցնելու պատմական իրականությունը, նաև նպաստելու թուրքական մթնոլորտում հայերի նկատմամբ բարյացակամ հարաբերություններ ներշնչելուն։

1995թ. ազգությամբ իրեն Lizi Behmoaraz-ը Ստամբուլում տպագրվող «Yeni Yüzyıl» թերթում հրատարակում է «*Թուրքերեն լեզվի հայ ուսուցիչ Բարս Թուղլանին*» ընդարձակ

հարցազրույցը<sup>151</sup>։ Հողվածում հիշվում են անուններ, որոնք նպաստ են բերել թուրքական ժողովրդական երաժշտությանը, նաև Լինչի «Հայերը» գրքի շրամատերեցի հայերեն բարձրագույն մասին։ Այն հարցին, թե Թուրքիայում հայկական մշակույթը կկորչի, Թուղլանին պատասխանում է, որ 70 000 հայեր այսօր Ստամբուլում 20 դպրոց ունեն, 5 լիցեյ, 4 միջնակարգ դպրոց, 11 նախակրթարան, համայնքային 3 միություն։ Հանրապետության հեշակումից ի վեր անհամար հայեր գործում են գիտության և արվեստի, թատրոնի, օպերայի, կինոյի, երաժշտության, իրավաբանության, բժշկության բնագավառներում։ Հողվածագիրը կարծում է, որ Բարս Թուղլանին Հակոբ Մարթայանից (Դիլաչար, 1895-1980 թթ.) հետո, կարևորագույն հայ անձանցից է, որին նա թուրքերեն լեզվի ուսուցիչ են անվանում և այս «կոչումը» անչափ ղեկավարի ու համարված «վիրահատություն էր»՝ իսլամի մի ժողովրդի կազմադրյալների, կրոնի նկատմամբ։ Լատինատառ այբուբենի ներմուծումը, «Նորանի» ամեն մի սուրան սրբազան համարող ժողովրդի սուրբ գիրքը լատինատառ բարձրանել և հրատարակության ներկայացնելը հեքրության հավասար քայլ էր։ Իհարկե, եթե դրա նախաձեռնողը Աբաթուրքը չլիներ և սիրիական հանդիպման ժամանակ չհանձնարարեր Հակոբ Մարթայանին կազմելու լատինատառ թուրքերենի հնչյունակազմությունը (Ֆոնետիկան), իսկ լեզվաբան-Դիլաչարը չափազանց մեծ հաջողությամբ չգործադրեր այդ հանձնարարականը, ապա Թուրքիայում պատմա-մշակութային այս հեղափոխությունը երևի թե դեռ շատ տասնամյակներ պիտի ուշանար<sup>152</sup>։ Թուղլանին համարվել է պոլիգլոտ, որը եղավ հայ բառարանագիրների և



148 Prof. Pars Tuğlaci, *The Role of The Dadyan Family in Ottoman Social, Economic and Political Life* (460p.) & *Dadyan Ailesinin Osmanli, Toplum, Ekonomi ve Siyaset Hayatindaki Rolü*, İst., 1993, (743s.) XVIII—XXIXդ. պետական, հասարակական, ազգային գործիչների, մշանավոր մտավորականների տոհմ Կ. Պոլսում։ Ուսումնասիրողները սուրբան Մահմուդ Ի-ի գլխավորությամբ շրջան անվանել են «Տառյանական դար»։ Ամիրայական այս գերդաստանի անդամները ազդեցիկ դեր են խաղացել Օսմանյան կայսրության ռազմա-արդյունաբերական, ինժեներական, մշակչություն, տնտեսական և մշակութային կյանքում։

149 Ֆրանսիական վառող արտադրողների և Տառյանների ստեղծած վառողի ընտրության ժամանակ պալատական հանձնաժողովը հայկականը ճանաչեց լավագույնը և Տառյան ամիրաներին հանձնվեց դրա արտադրությունը։ Այս հարցախոսակցությունը «վառողի» հարթանակ չէր։ Այն նկարավոր էր դարձնելու «հաղողի»՝ ազդեցությունը պալատում, երկրի օտար պետությունների հետ փոխհարաբերություններում, անգամ Մուլքանի վրա։

150 Մանվաճող Կրիմի պատերազմի ժամանակ այն կարևորագույն դեր խաղաց։ Իր որակով ստառյանական վառողը չի զիջել անգամ անգլիականին։ Այս մասին տես մեր «Հայերի ներդրում...» գրքի 204-212 էջերում։

151 Lizi Behmoaraz, *Türk Dilinin Ermeni Öyretmeni Pars Tuğlaci*, İst., 27.01.1995.

152 Հակոբ Մարթայանը թուրքական իրականություն մտալ որպես «*լեզու սրեղծող Հակոբ*»։ Պոլսեցի այս ակամավոր լեզվաբանը մասնագիտությամբ ինժեներ էր, 1915թ. ավարտել էր «Ռոբերտ կոլեջ» ուսումնական հայտնի հաստատությունը։ Շատախ էլ րանակում, ապա բնակվել Սիրիայում, տարվել լեզուների ուսումնասիրությանը։ 5 տարվա ընթացքում նա տիրապետել էր 17 լեզուների, կատարելագործվել ոչգրքերնում և հին թուրքերենում (օսմաներենում)։ Ավարտելով թուրքերեն լեզվի լատինատառի վերածման գործը, տեղափոխվել էր Բուլղարիա, աշխատել Մոխիայում։ Աբաթուրքի պնդմամբ նա 1932թ. մասնակցում է Ստամբուլում, Դոմարասի պալատում հրավիրված Թուրքալեզուների համաշխարհային կոնգրեսին։ Մարթայանն այստեղ հանդես է եկել իր հայտնի «*Թուրքերեն լեզվի հնչյունային և հնդեվրոպական լեզվաբանի նրա մոդ լինելու մասին*» զեկուցմամբ։ Թուրքական իշխանությունը նրան խնդրեց ընկալվարել «Թուրքերեն լեզվի ինստիտուտը», գլխավորել «Թուրքական հանրագիտարանը»։ Նա համապարանի պրեզիդենտ է ընտրվում։ Նրա գրչին են պատկանում «*Թուրքերենի մինչիշխանական գրության նշանները*», «*Թուրքերեն լեզվի անալիզ*», «*Թուրքերեն գրականության 1200 տարին*» և այլ կարևորագույն ուսումնասիրություններ, քաղաքակրթական հոդվածներ, գրականակազմեր։ Մյուս հայ ակամավոր մտավորականը, ծագումով Բուրայայից, Սեֆվան Կուրտլիյանն է (1865-1944)։ Նա շուրջ 40 տարի թուրքերեն է դասավանդել թուրքական համալսարաններում, կոլեջներում, լիցեյներում։ Նա հայտնի է, որպես ժամանակակից թուրքերենի քերականության ճանաչված մասնագետ։

բուրբագետների արժանավոր ժառանգը: Նրա ազգանունը բուրբերենից թարգմանում են «պատ կառուցող»:

Lizi Behmoaraz-ն իր հաջորդ՝ «Մշակութային փոխարանների թուրքիայից» հանրագիտարաններում անմահ մարդկանցից՝ Բարսեղ Թուղյանին» հարցազրույցը տպագրում է Ստամբուլում լույս տեսնող հրեական «Şalom» շաբաթաթերթում<sup>153</sup>:

Հետաձայլվ «Մուսավար» (Müsavat) մատակալան օրյակում իր անդամակցությունից, նա հարաբերություններ է պահպանում մյուս օրյակների հետ, չանդամակցելով և ոչ մեկին: Ստամբուլի Հարբիյե թաղամասի մասնակալան «Lions klübü»-ն ներկայացնում է իր «Ստամբուլի կղզիները» գիրքը:

Մարտի 23-ից ապրիլի 4-ը, Այվազովսկու ֆոնդի և թանգարանի հատուկ հրավերով Թուղյանին լինում է Թեոդոսիայում: Հանդիպում է ռուս այվազովսկիացուների<sup>154</sup> հետ, հարցազրույցներ տալիս, հանդես գալիս գեկուցումներով, ռուսումնասիրում մեծ ծովանկարչի կյանքը և այդ քաղաքում նրա հետ կապված պատմական վայրերը, հայկական հուշերը: Նա քարձր կարգի ընդունելության է արժանանում Ղրիմի մահանգապետարանի, Թեոդոսիա քաղաքի ղեկավարության, ռուս, հայ մամուլի ներկայացուցիչների, հեռուստատեսության կողմից<sup>155</sup>: Այս ընթացքում նա իր պրպատումներն է կատարում Այվազովսկու թանգարանում, ժամերանում կարևոր վավերագրերի:

**1996թ.** ապրիլին հույն օրթոդոքս եկեղեցու Հունական Տիեզերական պատրիարք Բարրոլունոսի հրավերով Ստամբուլ է ժամանում Ամենայն Հայոց նորընտիր կաթողի-

153 ԱՄՆ-ի Պետ. դեպարտամենտի օտար առարկությունների (միսիաների) քարտուղար Ջեյմս Բարտոնը դարասկզբին գրում է. «Երե շինքը այնպիսի քանասեր, ինչպիսին էր Կորսիկյանը, բուրբերը չէին ունենա իրենց քերականությունը»: Նա 1901թ. միայնակ ստեղծել է մի ողջ գիտական անձնակալանի համագոր գործ «Օսմաներին քերականություն» (680 էջ) և 1909թ. հեղինակել «Որվագիծ օսմանյան գրականության պատմության» (570 էջ): Նա պարսիկ գրականության լավագույն մասնագետներից է եղել:

154 Եզգի իմաստարանության ռուսումնասիրության ասպարեզում որպես հայտնի բուրբերանները ճանաչում են ունեցել Ստամբուլի համալսարանի պրոֆեսոր Հուսեֆ Ջիլյալյանը, բուրբերենի կազմաբանության մասնագետ պրոֆ. Գեղոր Սյունջյանը: Ընդհանուր լեզվաբանության պրոֆեսոր է եղել Գրիգոր Կլյունոբյանը: Հայտնի գրականագետ էր պրոֆ. Պետրոս Ատրոնյանը: Եզգի պատմության պրոֆեսորներից գնահատվել են Ավետիք Մեսրոպյանը և Անկարայի համալսարանից Հերմինե Գալուստյանը և ուրիշներ:

155 Այս նշանավոր մասնագետները ստեղծեցին ժամանակակից բուրբերենը: Իհարկե, նրանք տիրապետում էին սեփական մայրենի լեզվին և քիչ քան շարիցին նաև դրա համար, սակայն այն ներշնչումը, որ ունեցան բուրբերեն ժամանակակից լեզվի զարգացման համար՝ անհերքելի է և անհամեմատելի:

156 Lizi Behmoaraz, *Türkiye'den Kültür Manzaraları. Kültürümü Ansiklopedilerde Ölümsüzleştiren Adam Pars Tuğlaci*, İst., 2.08.1995.

157 Առաջինը, ով սովետական երկրում համարձակվեց գրել Հովի. Այվազովսկու հայկական ծագման մասին, ռուս արվեստագետ, ազգությամբ հրեա Լև Վազներն էր: Նա 1971 թ. 1972 Հայաստան այցելության ժամանակ եկել էր հորեղբորս Գեոտոսի ափի տուն և պատշգամբում երկար-երկար զրուցում էին: Վազները պատմում էր Այվազովսկու հայկական ծագման առթիվ իր դեմ ուղղված հետազոտումների, հապամանքի մասին: Նա նվիրեց իր 1970թ. «Կյանքը արվեստի մեջ» շարքում լույս տեսած «Այվազովսկի» գիրք-սյուրեռը: տես. Alec Barner, H. İrşatçıoğlu, A.İsmailoğlu, M.1970.

158 Ստամբուլում լույս տեսնող «Զոյիս» գրական-գեղարվեստական ամսագրերի 1995թ. օգոստոսյան համարն ընդարձակ հովիվաձայար է նվիրել Բարս Թուղյանի թուրքիաց, Հայաստան և ակա՝ Մելքունի Միջազգային ակադեմի և հայորդակության 22-րդ միջազգային համաժողովի մասնակցությանը:

կու Գարեգին Ա-ն: Ստամբուլահայության համար պատմական այս այցելության առթիվ Բարսեղ Թուղյանյանը «Uçou» բուրբակազու հայաթերթում հրատարակում է «Աշխարհի հայերի կարողակուցը» հոդվածը, որը ընթերցողներին նաև հիշեցնում էր հայ եկեղեցու, քրիստոնեության ընդունման համառոտ պատմությունը<sup>156</sup>:

«Արվեստի և հաղորդակցության» 230 ամվանի գիտնականների մասնակցությամբ միջազգային 22-րդ կոնգրեսին Բարս Թուղյանին է տրվում է կոնգրեսի բացման խոսքի և փակման պատիվը<sup>157</sup>: Օգտվելով առիթից, նա արպատման է կատարում Մելքունի, Սիդնեյի պետական և համալսարանական գրադարաններում: Նա կուրընկալվում է Մելքունում Թուրքիայի գլխավոր հյուպատոսի ընտանիքում, հրավիրվում Սիդնեյի ուղիտի հայերեն, բուրբերեն և կիարաթուրքերի հաղորդաժամերին<sup>158</sup>, հանդիպումներ ունենում Սիդնեյի, Մելքունի հայ համայնքների հետ:

Հուլիսին, խաղաղության և պատմագրության բնագավառում գործադրած ջանքերի համար գիտնականին շնորհվում է Շոտլանդիայի «Լորդ»-ի կույում<sup>159</sup>:

Ստամբուլ վերադարձին Բարսեղ Թուղյանյանը մասնակցում է քաղաքապետարանի կողմից կազմակերպված Թարսիմում գտնվող Աբարուրի անվան գրադարանի հավաքին, որ քաղաքապետի անունից ստանում է շնորհակալական մետաղե հուշագիր:

Հունիսին Բարսեղ Թուղյանյանը 160 անվանի գիտնականների հետ միասին հեթրական անգամ մասնակցում է Սան-Ֆրանցիսկոյում հրավիրված «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 23-րդ կոնգրեսին: ԱՄՆ այս այցելության օրերը գիտնականը օգտագործում է Բերկլիի համալսարանի, քաղաքային գրադարանի ֆոնդերում աշխատելու համար: Ինչպես միշտ, գիտաժողովների մասնակցությունից հետո Ստամբուլի պարբերականներում գիտնականը մանրամասն հոդված-հաշվետվություն էր հրապարակում<sup>160</sup>:

Տարեվերջին սիրված գիտնականը 3 հազար կտոր գիրք է նվիրաբերում Ստամբուլի քաղաքապետարանի Թարսիմում գտնվող Աբարուրի անվան գրադարանին: Իր տեսակի մեջ սա ամենամեծ նվիրատվությունն էր այս գրադարանին, որի համար քաղաքապետ Ռեջեֆ Թայիք Էրդողանի կողմից շնորհակալական մետաղե հուշագիր է հանձնվում նրան: Մի քանի օր անց, «Cumhuriyet» օրաթերթը նրան նվիրված հարցազրույց է տպագրում «Բարսանակազիր վարպետը՝ Բարսեղ Թուղյանին»<sup>161</sup>:

1997թ. Բարս Թուղյանը Պեշիկբաշում գտնվող Թուրքիայի Հանրապետության Ծոփային ուժերի թանգարանին կարևոր նվիրատվություն է կատարում: Դրանք պատմա-

156 Pars Tuğlaci, *Dünya Ermenilerin Gotoğigosu, AGOS*, İst., 24.05.1996.  
157 Մոլոն տեղում, 1990թ. ի վեր Իսախլայի-Ալպահոլության և խաղաղության խորհրդարանի» Թուրքիայի դեսպան պրոֆ. Բարս Թուղյանը, որպես Թուրքիայի միակ ներկայացուցիչ, հուլիսի 2-8-ը մասնակցում է Սիդնեյում Միջազգային Արվեստի և հաղորդակցության 22-րդ համաժողովին: Գիտաժողովի փակման 15 թույլ տևած նրա խորմատ խոսքը մեծ տպավորություն բուղեց աշխարհի 5 մայրցամաքներից եկած թագմազ պատվիրակների վրա:  
158 Այս հաղորդաժամին նա ցավով տեսնվում է իր գլխամի քաղեկանների հայտնի գրող Ազիկ Նեյսինի և Սեմեդ Ալի Աբարուրի մահվան մասին:  
159 Այս կարևոր շնորհին անդադարանում են Ստամբուլի «Cumhuriyet» (28.06.1995) և «Yeni Yüzyıl» (26.07.1995) պարբերականներն իրենց էջերում:  
160 Pars Tuğlaci, *Sanat ve İletişim Kongresi ve San-Francisco Notları. «Cumhuriyet»*, İst., (11.09.1996).  
161 Feridun Andaç, *Bir Sözlük Ustası: Pars Tuğlaci. «Cumhuriyet»*, İst., (15.12.1996).



կան կարևորության մի շարք փաստաթղթեր էին:

Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինենյուի որդին՝ պրոֆ. Էրզալ Ինենյուն (Erdal İnönü, 1926-2007) հրավիրում է գիտնականին Էրիլերի իր տունը (ապրիլի 1-ին, գիտնականին ծննդյան տարեդարձի օրը):

Պոլսապա հայտնի նկարիչ Էրոլ Սարաֆյանի նկարած Թուրքահրի դիմանկարը նմիքում են Թարսիմի քաղաքապետարանի պատկերասրահին:

Սեպտեմբերի 6-ին Լոնդոնում նա ներկա է գտնվում իշխանուհի Դիանայի ողբերգական մահվան քառման արարողությանը Բուկինգհեմյան թագավորական պալատում:

Սեպտեմբերի 19-ին Օքսֆորդի համալսարանում Թուրքահրի մասնակցում է ԱՄՆ Կենսագրական Ինստիտուտի և Քենդրիջի Միջազգային Կենսագրական Կենտրոնի «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 24-րդ հերթական կոնգրեսին: Չմտանանք ասել, որ այս օրերին նա այցելում է երկրի ամենահայտնի թանգարանները, համերգասրահները, տաճարները, պատմական այլ վայրեր, ապա մեկնում Գերմանիա, Բելգիա:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանու ներքո Թեոդոսիայում կազմակերպված «Ալվազովսկի եղբայրների շարքի» (13-18.09.1997) օրերին թանգարանում անցկացված սեմինարի ժամանակ քանախոսները բազմիցս անդրադառնում են Բարս Թուրլանցիի «Ալվազովսկին Թուրքիայում» գիրք-արթոմին:

1998թ. սեպտեմբերի 13-18-ը Բարս Թուրլանցի մասնակցում է Դրիմի Յալտա, Սիմֆերոպոլ և Թեոդոսիա քաղաքներում ՅՈՒՆԵՍԿՈ-ի հովանու ներքո անցկացվող «Ալվազովսկի եղբայրներին» նվիրված շարքին, սեմինարին, ընտրվում Դրիմի «Ալվազովսկի» միջազգային հիմնադրամի փոխտնօրեն:

Լույս է տեսնում «Անգլերեն-թուրքերեն փոքրահատիցի, առևտրական, իրավաբանական փոխընկերների բառարանը»<sup>162</sup>:

Հոկտեմբերի 28-ին Բարսը Թուրլանցիանը այցելում է Թուրքիայի առաջին կին ռազմական օդաչու Սարիհա Գյուլչեհնին Անկարայի նրա տանը և ջերմ ընդունելության արժանանում:

Իսպանիայի նախագահ ժողով Մարիա Ազնարի Թուրքիա պաշտոնական այցի շրջանակում Իսպանիայի Գլխավոր հյուպատոսության հրավերով պաշտոնապես հրավիրված Բարս Թուրլանցիին ժողով Մարիա Ազնարին է նվիրում Պալյանների մասին իր գիրքը: Այն, մինչ այդ նվիրել էր նաև Անգլիայի թագուհուն:



162 Pars Tuğlacı, İngilizce - Türkçe İktisadi Ticari Hukuki Terimler Sözlüğü, İstanbul, 1998, 639 s.

1999թ. հուլիսին «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 26-րդ կոնգրեսը կայանում է Լիսաբոնում, ուր 42 երկրների 147 գիտնականներ են մասնակցում. Թուրլանցին իր գեկուցումը նվիրում է ծնունդով պոլսեցի «Նավթային արքա» Գալուստ Գյուլբենկյանի կյանքին ու գործին: Պորտուգալական օրերը և երկրով մեկ շրջագայությունները բարձրախիղճ լուսանկարներ են ավելացրել գիտնականի արխիվին: Իհարկե թուրլանցիանակա և այլ լուսանկարիչների կողմից արված նկարների կողքին տեսնում ենք անցյալ դարերի եզակի փորագրանկարներ: Նա Գյուլբենկյան կենտրոնին է նվիրում պոստ-հայ նշանավոր նկարիչ Էրոլ Սարաֆյանի վրձնի պատկանող Գալուստ Գյուլբենկյանի նկարը:


«Արևմտահայերը պարսկական ընթացքում» (387թ. մինչև մեր օրերը) գիքը երբ պատրաստ էր հրատարակության, Բարսը Թուրլանցիանը դիմում է Լիսաբոնում գտնվող «Գյուլբենկյան հիմնադրամին», խնդրելով նրանը հովանավորությունը: Յոնդի տնօրեն Ջոզեֆ Եկավյանը նամակով մերժում է իրենց հովանավորության հնարավորությունը (22.02.2001թ)<sup>163</sup>:

Սյոլիիայում կայանալիք «Ապահովության և խաղաղության միջազգային խորհրդարանի» հրավերով մեկնում է Պալերնո: Նա «Մարդկանց իրավունքը» զեկուցումը մասնակցում է «Ապահովությունը Միջերկրականում» 10-րդ կոնֆերանսին, որին հրավիրված էին 38 երկրներից 85 գիտնականներ: Կոնֆերանսի ղեկավարության կողմից նա պարզևատրվում է «Խաղության ոսկե մեդալով» (13.10.1999):

Այնուհետև Կահիրեյի ՀՅԸՄ հրավերով մեկնում է Եգիպտոս: Չեկուցումներ է կարդում Կահիրեյի Ամերիկյան համալսարանում:

2000թ. Վաշինգտոն էր հյուրընկալել «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 27-րդ կոնգրեսի 45 երկրների 179 մասնակիցներին: Թուրքիայի միակ ներկայացուցիչ Բարս Թուրլանցին զեկուցում է թուրք-ամերիկյան 170-ամյա հարաբերությունների մասին: Հետևելով գիտական մտաշրջաններին նրա մասնակցությանը, ստացած տարբեր շքանշաններին, ականա տեղեկանում ենք նաև գոյություն ունեցող ամենատարբեր մրցանակների, շնորհների, մեդալների գոյության մասին: Այս գիտաժողովին Բարս Թուրլանցին շնորհվել է «20-րդ դարի ակամավոր խոսնակ»-ի մեդալ և հայտարարվել «20-րդ դարի մարդ»: Որպես ավանդույթ, այս անգամ ևս, Թուրլանցին իր քարեկամ, ընկեր, անվանի նկարիչ Էրոլ Սարաֆյանի վրձնի պատկանող ԱՄՆ-ի առաջին նախագահ Ջորջ Վաշինգտոնի նկարը նվիրում է «Ապիտակ տանը»: Վաշինգտոնում նա հյուրընկալվում է Թուրքիայի դեսպանի և գլխավոր հյուպատոսի կողմից, ինչպես նաև այցելում է Հայաստանի դեսպանատնում, հանդիպում դեսպան, բորքսպետ, ժամանակին ՀՀ արտգործնախարար, ակամավոր պատմաբան Ջոն Կիրակոսյանի որդու, պրոֆ. Արման Կիրակոսյանի հետ: Մինչ գիտաժողով մեկնելը նա հանդիպում է Թուրքիայի արտգործնախարար Աֆեհսահ Օչաքի (Vefahsan Ocak) հետ, իսկ գիտաժողովի օրերին՝ Վաշինգ-

163 Մերժման իրական պատճառը չգիտեմ: Կարծում եմ Հիմնադրամի հայկական թաժամնմմրն ի վիճակի չէր կարող լինել նման իսկալական նյութական գոհաբերության, որը նրանց մի քանի տարիների գոմարը կարող էր լինել: Գոյություն ունի որոշակի սահման՝ հրատարակությունների հովանավորման համար: Այսինքն, ընթացիկ և հետագա ծախսերի համար Հիմնադրամը գտնվելու էր անկախանի իրավիճակում: Սակայն գուցե ծախսերի դուր՝ նա՛նք ապահովեր...



տոնում Թուրքիայի Գլխավոր հյուպատոս Բաքի Իլչի-նին (Baki İkin)<sup>164</sup>:

**2000թ.** Ստամբուլում լույս է տեսնում Բարս Թուղ-լաճի «*Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü*<sup>165</sup>»ը (Թուրք-անգլերեն գիտական և տեխնիկա-կան տերմինների բառարան):

**2001թ.** Ամենամյա ավանդական «Արվեստի և հա-րողակցության» միջազգային 28-րդ կոնգրեսին, որ հյուրընկալվել էր Քենեթիջում (հուլիսի 15-22-ը) Բարս-նեղ Թուղլաճյանը մասնակցում է «Թուրք-անգլիական սոցիալ-մշակութային հարաբերությունները պատ-մության ընթացքում» զեկուցմամբ: Հանրագիտարա-նային հարուստ տեղեկություններով զեկուցման մեջ անդրադարձ կա 1582 թվականից Անգլիայի հետ հայե-րի առևտրական կապերին, 1580 թվականից Սուլթան Մուրադ Գ-ի (Sultan Murad III, (գահակալել է 1574— 1595թթ. ) կողմից անգլիացի առևտրականներին Օս-մանյան կայսրության տարածքում առևտուր անելու րոյլովություն տալու մասին, իսկ 1580թ. սեպտեմբե-րին Լոնդոնում անգլիացի առևտրականների հիմնա-ծ «Turkey Company»-ի մասին: Հինգ տարի անց Անգլիա-յի գլխավոր հյուպատոսարաններ են բացվում Եգիպ-տոսում, Սիրիայում, Ալժիրում, Հինյո կղզում (Sakiz ada), և այլուր: Անգլիայի Էլիզաբեթ Առաջին թագուհին Սուլթան Մեհմեդ Գ-ին<sup>166</sup> երգեհոն է նվիրում: Սկսվում է Օսմանյան կայսրություն խանդավառ ճանապարհորդ-ների, միսիոներների հուշագրությունների, անգլիացի հեղինակների թուրքական թեմաներով երկերի, հայտ-նի նկարիչների ստեղծած զեղարվեստական ալբոմնե-րի շրջանը:

**2001թ.** սեպտեմբերի 10-ին Ստամբուլում Մոսկվայի Մեծ քաղաքի «Սպարտակ» քա-լետի ներկայացումից առաջ Բարս Թուղլաճին «*Cumhuriyet*» օրաթերթում Արամ Խաչ-ատրյանին ու նրա անմահ գործը ծանոթացնող հոդված է հրատարակում, կարևորե-լով երաժշտության, երաժիշտների, ընդհանրապես արվեստեղետների դերը և տեղը մարդկության պատմության մեջ: Այն տարբեր ժողովուրդներին մտռեցնող, կապող ընել

164 Կարծում ենք շրջագայությունների ժամանակ տարբեր երկրներում Թուրքիայի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների հետ հանդիպումները նաև Արտգործնախարարության կողմից պարտադրված են եղել:

165 Pars Tuğlacı. *Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü*, İst., 2001 & 2002.

166 Սուլթան Մեհմեդ Գ-ն (1566-1603) պատմության մեջ հայտնի է եղել որպես եղբայրասպան: Գ-ի քաղաքացուցից հետո նա սպանել է իր 19 եղբայրներին, քառի նկատմամբ ոտնձգություններից խուսափելու համար:

ին Թուրքիան այս երևույթից անմասն չմնալու համար պետք է հրավիրի և իր համեր-գասարանները տրամադրի նրանց: Հարկ է տարբեր մրցանակաբաշխություններ կազ-մակերպել, սահմանել Աբաբուրքի անվան մրցանակներ, կարծում է գիտնականը՝ հիշե-լով Թուրքիայի 6-րդ նախագահ, ծովակալ Ֆահրի Զորուբուրքին (*Fahri Korutürk*, 1903- 1987): Վերջին 1960-64թթ. Թուրքիայի Արտակարգ և լիազոր դեսպանը էր Մոսկվայում: Նա փորձեց 1978թ. Աբաբուրքի մշակութային կենտրոնի բացումը կատարել «Սպար-տակ» քալետով և պաշտոնապես հրավիրել հեղինակներ՝ Արամ Խաչատրյանին: Ավեսոս, որ այն չհաջողվեց, քանզի մեծ կոմպոզիտորը Փարիզում ամառաչափ վերահաստեղծումից հետո մահացավ: Ասում են, որ հեռուստատեսությամբ այս գույժը լսողներից ամենից շատ տխրեց Արմիրալը<sup>167</sup>, - գրում է գիտնականը:

**2002թ.** փետրվարին Թուրքիայի ազգային հերոս, օսմանյան և թուրքական ռազմական և քաղաքական անվանի գործիչ Քյազըմ Քարաբեկիր փաշայի (Musa Kâzım Karabekir; 1882-1948) կրտսեր դուստր Թիմսալ Հանըմը (Timsal Hanım) հրավիրում է Բարս Թուղ-լաճին Էրենբոյի (İstanbul-Erenköy) հայրական ապարանը:

Մշակույթի նախարարությունը 2005թ. Էրենբոյում թանգարան էր հիմնադրել<sup>168</sup>:

Բարս Թուղլաճին Թուրքիայի գիտական սերույցի մաս էր կազմում, որին ընդունում էին երկրի նախագահներն ու վարչապետները, դիվանագիտական բարձրաստիճան կազմը, մտավորականությունը: Նա ցանկալի հյուր էր թուրք հայտնի արվեստագետնե-րի մաս: Նրան նկատում էին, քանդակում: Նրա հայտնի դիմաքանդակներից մեկը հեղի-նակել է հայտնի քանդակագործ, օպերային քաղաքացիական հեղինակուհի Հալիս Բաշարըրը (Halis Başarır):

Հարկ է նշել, որ թուրքական քաղաքական մեթեմա ժամանակ առ ժամանակ որոշ սրբազրույցներ է մտցնում իր «հայկական քաղաքակա մուրյան» մեջ: Թուրքիան, հաշ-վի առնելով աշխարհում և հենց իր ներսում տեղի ունեցող գործընթացները, ձգտում էր հից՝ «կացնային» մեթոդին զուգահեռ մշակելու և կիրառելու ավելի նուրբ, ճկուն քա-ղաքականություն, որը շատ հաճախ քողարկվում էր «պրոհայկական» միջոցառումնե-րի անվան տակ: «Թարաֆ» թերթի սյունակագիրներից Ալշե Հյուրը, օրինակ, գրում է, որ նման գաղափար ծագել էր դեռևս Թուրգոթ Օզալի կառավարման տարիներին: Իր հրապարակման մեջ նա մեջբերում է 1987 թ. Յըլմազ Չեթինեի հեղինակած հոդվածից չափազանց ուշագրավ մի հատված, որում նա կոչ էր անում կարևորագույն այդ ժամա-նակներում, երբ Թուրքիան «բացվում» էր դեպի Արևմուտք և Արևելք, մեկ-երկու սիմվո-լիկ քրիստոնյա պատգամավոր ունենալու՝ «հայերի ստախտություններն ու հույների

167 Pars Tuğlacı. *Aram Haçadaryan'ın Ünlü Spartaküs Balesi. Yarm İstanbul'da*, Cumhuriyet, İst., 9.09.2001.

168 Քյազըմ Կարաբեկիր թուրք զենեակ, փաշա, օսմանյան ռազմական հանցագործ: 1918-1919 թվականներին եղել է 1-ին, 2-րդ, 15-րդ թուրքական կովկասյան բանակային կորպուսների հրամանատար, մասնակցել Երզնայի, Երզրուտի և Կարսի գրավմանը, հետագայում Արևելյան ռազմաճակատի զորքերի հրամանատար: 1920 թվականի սեպտեմբերին թուրքական զորքերը Կարաբեկիրի գլխավորությամբ ներխուժել են Արևելյան Հայաստան: Գլխավորել է թուրքական պատվիրակությունները Ալեքսանդրապոլի (1920 թվական) և Կարսի (1921 թվական) բանակցություններում: Կարաբեկիրի ցուցումներով Տրապիզոնում սպանվել են Թուրքիայի կոմկուսի ղեկավար գործիչները (1921 թվականի հունվար): 1930-40-ական թվականներին զբաղեցրել է կուսակցական և պետական պաշտոններ: Ունեցել է ընդգծված հակախորհրդային դիրքորոշում, վարել հակահայկական գիծ:



ասնձարձակությունները» զսպելու համար: Ըստ Այշե Հյուրի՝ նմանատիպ առաջարկով Թուրգութ Օզալին դիմել էր նաև թուրք մեծահարուստ Մաքրը Մաբանջըն, որից հետո Օզալը համապատասխան հանձնարարություններ էր արել՝ հարցին լուծում տալու համար: Ավելի ուշ՝ 1995 թ., «Tempo»- ում տպագրված իր հուշերում Մաբանջըն գրում է ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շյուքրու Էլեքթաղի հետ ունեցած գրույցի մասին: «Երբ ես բացատրում եմ մեր դիրքորոշումը Հայկական հարցի կամ Կիպրոսի խնդրի վերաբերյալ, մտքով անցնում է, որ եթե այդտեղ լինեիր գոնե մեկը մեր ազգային փորձառուներս, մենք էլ նրան որպես մեր պատգամավորը ներկայացնեինք, ավելի ուշադիր կլսեին մեզ...»<sup>169</sup>

Լույս է տեսնում «*Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü*»<sup>170</sup>, «*İngilizce-Türkçe Ekonomi ve Hukuk Terimler Sözlüğü*»<sup>171</sup> (Անգլերեն-թուրքերեն տնտեսագիտական և իրավաբանական բառարան)-ի երկրորդ, վերանշակված տպագրությունը:

Ամենամյա ավանդական «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 29-րդ կոնգրեսին, որ հրավիրվել էր Կանադայի Վանկուվեր քաղաքում (հուլիսի 1-8-ը) և 300 գիտնականների էր համախմբել, մեծ հետաքրքրություն է առաջացնում Բարսեղ Թուղլաճյանի «21-րդ դարի մարդու իրավունքները» զեկուցումը: Գիտնական, պատմաբան Բարսեղ Թուղլաճին աներիկյան «Պատվո մեդալ»-ի դափնեկիր է դառնում:

**2003թ.** Միջազգային Կենսագրական Կենտրոնի Հետազոտական Խորհրդի կողմից Բարսեղ Թուղլաճյանը լեզվաբանության, պատմության բնագավառում իր ներդրման համար «Պատվո անդամ» է ընտրվում:

**2003թ.** Բուլղարիա այցելության ընթացքում Բարսեղ Թուղլաճին լինում է մի շարք պատմական վայրերում, ընդունվում տեղի քաղաքապետերի, Թուրքիայի, Հայաստանի դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցիչների կողմից:

Բարսեղ Թուղլաճին շարունակում է մնալ պետական, մշակութային կարևոր իրադարձությունների, տոնակատարությունների պատվավոր հյուր: Այս երեկոները նշանավորվում են պետական և ականավոր այրերի, հետ ջերմ հանդիպումներով: Այսպես օրինակ, Ստամբուլի «Լքարուրքի մշակութային կենտրոնում» Թուրքիայի Համրապետության 80-ամյակի հորեյանի լուսանկարչական արխիվում տեսնում ենք Թուղլաճիի և տարբեր դեսպանների, քաղաքական և մշակութային գործիչների, նաև՝ նախկին նախագահ Թուրգութ Օզալի տիկնոջ՝ Սեմրա Օզալի հետ, ինչը որ նաև ընտանեկան բարի հարաբերությունների դրսևորում կարելի է նկատել, նախկինում նրանց կողմից գիտնականի հետ ունեցած ջերմ ընդունելությունները հիշելով:

1919թ. Ստամբուլում ֆրանսերենով լույս է տեսնում Գևորգ Արղույալի Վիլիելմ II -ի (1888-1918) մասին գրքույկը: Բարսեղ Թուղլաճին այն թարգմանում է թուրքերենի և հրատարակության պատրաստում, **2003թ.** լույս ընծայում<sup>172</sup>:

169 Ա.Հովհաննիսյան, «Հայկական գործունի» շաբաթուրդ Թուրքիայի 2011թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում, *Ժամանակակից Երևանիս*, 1 (1) երևան, 2012թ. էջ 48-49:  
 170 Pars Tuğlacı, *Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü*, İstanbul, 2002.  
 171 Pars Tuğlacı, *İngilizce-Türkçe Ekonomi ve Hukuk Terimler Sözlüğü* İstanbul, 2002.  
 172 Kevork Abdullah, *Kızıl Kayzer, Kaiser Rouge*, Belge Yayınları hazırlayan Pars Tuğlacı, İstanbul, 2003, 79s.

Գրքի հեղինակը միջազգային ճանաչում ունեցող, Օսմանյան կայսրությունում լուսնակարչության նահապետներ, պալատական նկարիչներ Արղույալի եղբայրներից կրտսերն է Գևորգ Արղույալը (1839 – 1918): Գևորգ Արղույալը կյանքի վերջին տարիներն անցկացրել էր Լոնդոնում, զբաղվել գրական, քուրզմանական աշխատանքով: Թուրքերենով, ֆրանսերենով փաստաթղթերի, անգլերենից կատարված թարգմանության հրատարակումը վերաբերում է համաշխարհային պատմության կարևոր էջերին՝ 1850-90թթ.:

Պրուսիայի վերջին կայսեր՝ Վիլիելմ II -ի<sup>173</sup> (1888-1918) մասին «*Կարմիր կայսր*» արտահայտությունը նմանեցվել է Արղույալի մի Բ-ի՝ «*Կարմիր սուլթան*» մականվանը: Վիլիելմ II-ը երբեք անգամ այցելել էր Օսմանյան կայսրություն (1889 և 1898թթ.), երկու անգամ հյուրընկալվել Արղույալի մի Բ-ի կողմից: Հայտնի է, որ նա երրորդ անգամ այցելել է 1917 թվականի հոկտեմբերի 15-ին, որպես սուլթան Մեհմեդ V-ի հյուր: Այս կայսրն էր, որ 1889թ. Կոստանդնուպոլիս իր առաջին այցի ժամանակ համաձայնեցրեց գերմանական հրազանների վաճառքը և կարողացավ գերմանական հրազաններով զինել թուրքական բանակը: Իր երկրորդ այցելության ժամանակ կայսրը երաշխավորեց գերմանական ընկերությունների խոստումը նախագծել Բեռլին-Բաղդադ երկաթգիծը: Հայտնի է Կայսեր ճառը Դամասկոսում, Ումայյահ մզկիթում, (Սմայահ Mosque) նոյեմբերի 7-ին, մեծ սուլթան Սալահադդինի դամբարանի վրա, որտեղ ասաց, թե՝

«...*Տեսնելով այս մեծ հյուրընկալությունը, որը ցուցաբերվեց մեր հանդիպելու համարում եմ, որ պարզավոր եմ շնորհակալ լինել Ձեզ ինձ և Կայսրուհու անունից ջերմ հյուրընկալության համար, որը ես զգացի բոլոր քաղաքներում, ուր որ եղա, հարկապես Դամասկոս քաղաքում: Խորապես ցնցված լինելով այս հիասքանչ ընդունելությունից և զիարկցելով, որ կանգնած եմ բոլոր ժամանակների ամենամեծ առաջնորդներից մեկի, մեծ սուլթան Սալահադդինի դամբարանի վրա, որի նման ասպետը այլևս չի եղել, ես մեծ բավականությամբ իմ շնորհակալությունն եմ հղում բոլորի կողմից Սուլթան Արղույալ Համիդին: Այսուհետ Սուլթանը և նաև երեք հաշյուր միլիոն մտայնամեները, ովքեր համարում են սուլթանին իրենց իսախիլը, կարող են համոզված լինել, որ Գերմանական կայսրությունը միշտ կմնա իրենց բարեկամը»<sup>174</sup>:*



173 Վիլիելմ II, Ֆրիդրիխ Վիլիելմ Վիլհոլմ Ալեկսանդր Ալբրեխտ Գոթ Լոնինցուլերն, Պրուսացի (Wilhelm II, Friedrich Wilhelm Viktor Albert von Preußen).  
 174 The Emperor's father was quest in the house of Shamiyyah, during his visit to Damascus in 1869, see al-Abram, no. 6281, Nov. 18, 1898, 1.p.14-15. Shu Abdel-Rauf Sinno (1998): «The Emperor's visit to the East: As reflected in contemporary Arabic journalism» I Baaibek, Image & Monument 1898-1998, ed. By

**2004թ.** մինչև Խոյանդիայի մայրաքաղաք Դուրլինում (հուլիսի 4-17-ը) «Գիտության, արվեստի և մշակույթի» միջազգային կոնգրեսի մեկնելը, մայիսին, Անկարայի նախագահական «Չանքայա Փենեթ ապարանում»<sup>175</sup> Բարս Թուղլաճիին ընդունում է Թուրքիայի Արագործնախարար Արդուլիս Գյուլը (Abdullah Gül, 1950-):

**2004թ.** լույս է տեսնում 22 տարվա աշխատասիրության արդյունքը հանդիսացած «*Tarih Boyunca Batı Ermeniler*» (Արևմտահայերը պատմության մեջ) ուսումնասիրության Ա և Բ հատորները թուրքերեն լեզվով: Ա հատորն ընդգրկում է 287-1850թթ., իսկ Բ հատորը՝ 1851-1890թթ.:

Ա հատորի (287-1850թթ.) առաջաբանում հեղինակը որպես աղբյուր ներկայացնում է շուրջ 20 երկրների գրադարաններում, քանդաքաններում, արխիվներում կատարած իր հետազոտությունների արդյունքները: Աշխատության աշխարհագրական սահմաններն ընդգրկում են բոլոր այն երկրները, որտեղ երբևէ հայեր են ապրել և ապրում են: Ուսումնասիրությունը շարադրված է ժամանակագրական և փաստագրական կարգով, սկսվում հայոց պատմության մասին համատարակնակալով, 287թ. Տրդատ Գ թագավորի երգվելայում Անահիտ աստվածուհուն մատուցած զոհաբերության պատմությամբ: Երկրորդ հոդվածը Գրիգոր Լուսավորչի մասին է:

Որպես կանոն, տարին ներկայացնող նյութերը սկսվում են Պոլսի, նրա հայաքանակ թաղերի հոգևոր-եկեղեցական, մշակութային, հրատարակչական ասպարեզում իրադրությունների ներկայացմամբ: Մանրամասն տեղեկություններ ենք գտնում քառերական կյանքի շուրջ, փոփ այն Թուրքիայում, թե աշխարհի որևէ հայկական համայնքում, պրոֆեսիոնալ կամ անգամ դպրոցական քառերայնների (հիմնականում հայերեն) ներկայացումների մասին:

Գալով եկեղեցական կյանքին, ապա տեղեկությունները վերաբերում են հայ երեք հարանվանական եկեղեցիներին: Տարին ներկայացնող նյութերը հնարավորինս ներկայացվում են ժամանակագրական կարգով, որը որոշակի խառնաշփոթ է ներկայացնում նույնատիպ նյութերի մեջ: Զանի որ աղբյուրները մեծմասամբ հայկական պարբերականներից են վերցված, ապա տարբեր ժամանակներում մինևույն նյութի շուրջ հրատարակված հոդված-աղբյուրները պատճառ են դառնում նույն փաստի մի քանի անգամյա հիշատակման: Երբեմն դրանք տարբերվում են նյութի հավաստիությամբ, ավելի մաշր՝ ոչ միատեսակ, այլ միմյանցից հարբեր կատար են ներկայացնում:

Արևմտյան Հայաստանի հայաշատ գավառների վանքը ներկայացնող հոդված-

Hélène Sader, Thomas Scheffler and Angelika Neuwirth, Beirut 1998.

175 **Չանքայա սրբատո** (թուրքերեն՝ Çankaya Köşkü, ներկայումս Թուրքիայի վաշտպետի նստավայրն է Անկարայում: Մինչ 2014 թվականը, պալատը համընդհանուր է Թուրքիայի նախագահների նստավայրը: Տաղածրը, որտեղ գտնվում է Չանքայա պալատը ժամանակին պատկանել է հայ առևտրական Զասարյան ընտանիքին: Այնտեղ առկա խաղողի վազերը և տունը 1915թ. խլվել են ընտանիքի ձեռքից, իսկ Զասարյան ընտանիքը փախել է Անկարայից, որպեսզի խուսափի Հայոց ցեղասպանության գոհ դառնալուց: Նրանց ողջ գույքը ու ունեցվածքը քաղաքավել է: Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում Մուստաֆա Բենալ Աթաթուրքը սկսած այդտեղ ապրել են Թուրքիայի 11 նախագահները: 2014թ. խախտելով Թուրքիայի Հանրապետության արդեն 91-ամյա ավանդույթը՝ Դավաթաս ընտրված Էրդուանը որոշում կայացրեց տեղափոխվելու և նախագահական նստավայր դարձնելու «Աթաթուրքի անաստային հողատարածք» անվանումը կրող տարածքի մեջ կառուցված նոր շինություն Աք Սարալ:

ները քանկարծեք փաստեր են ներկայացնում տվյալ նյութի առիվ հայերի հարևան ազգերի հետ, կառավարության, առանձին իշխանավորների ունեցած վերաբերմունքի մասին: Շատ կարևոր են այս հարաբերությունների փաստի արտացոլումը հանրագիտարանում:

Յուրաքանչյուր էջում փորագրանկարներ են, նյութը հարստացնող նկարներ, քարտեզներ, տարբեր երկրներում հայկական հուշարձանների, մեր ժողովրդի ճակատագրում դեր ունեցած տարբեր ազգությունների պատմական դեմքերի, սկանավոր մարդկանց սև ու ճերմակ, գունավոր պատկերներ: Դրանց որոշակի մասն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ և որոշակի աղբյուր, հետաքրքրություն են ներկայացնում: Լուսանկարների մի մասը Բարս Թուղլաճիինն են: Հայոց կարողիկուսների և պատմաարքական արոններում գահակալած դեմքերի կենսագրությունները տրված են առանձին էջերի շրջանակներում: Պատմական իրադարձությունների, Կիլիկյան թագավորության մասին պատմող, տարբեր ժողովուրդների հարձակումների շրջանից հետո անցում է կատարվում 1453 թվականից ի վեր, Օսմանյան կայսրության հաստատումից հետո արևմտահայության պատմությանը, բոլոր կարևոր իրադարձություններին, ժամանակի պարբերականներին, տարբեր հրատարակություններին:

Այս հատորների առավելությունը նաև նրանումն է, որ այն դրամագիտական, հայ գրքի և մամուլի յուրատեսակ մատենագիտություն է: Առանձնակի արժեք են ներկայացնում քարտեզները, սուլթանական ֆերմանների ֆախսիմլիկները, կոնդակները, որոնք դիտում ենք որպես հայ ժողովրդի պատմության կարևորագույն փաստագրական նյութեր: Օսմաներեն այս նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռնում պատմության քաղմաթիվ ճերմակ էջեր լրացնելու, հոմ նյութ հանդիսանալով նորանոր, քաղմաթիվմանի հետազոտությունների համար: Չճանաչանք նշել, որ օսմաներենով նման հազվագյուտ փաստաթղթերի առատությունը պայմանավորված է եղել թուրքական կառավարող և գիտական շրջանակներում Բարս Թուղլաճիի հայ գիտնականի առանձնաշնորհյալ վիճակով: Գրքում առատ փաստական և լուսանկարչական նյութ ենք գտնում բոլոր այն ժողովուրդների մասին, որոնք պատմության տարբեր շրջաններում առնչվել են հայերի հետ: Այնպես որ այս համարագիտարանը շատ ավելի ընդարձակ է իր ներկայացրած նյութով, քան ավելում է տիտոսաբերում: Այստեղ ևս պակաս չկա ընթերցողներին զարնացնող հոդվածներով, նկարներով: Հայաքանակ վայրերի, պատմական հուշարձանների, մասնավորապես վանքերի ու եկեղեցիների նկարները փաստական հազվագյուտ նյութերի մաս են կազմում, քանզի Թուրքիայում երգճերների մեծ մասն այստեղ կամ ոչնչացվել են, կիսավեր են և կամ վերածվել են ստեղծված նյութի ընդհանուր սպասարկող կենցաղային վայրերի՝ մզկիթների, գրադարանների, սպորտային ակումբների, լավակույց դեպքում՝ քանդաքանների:

Լուսանկարչական նյութի մի կարևոր մասը, որը նաև գեղագիտական արժեք է ներկայացնում, պատկանում է եվրոպացի ճանապարհորդներին, արվեստագետներին<sup>176</sup>: Այն

176 Այդպիսի օրինակներից կարող ենք համարել Լոնդոնում 1838 թվականից ի վեր քաղմաթիվ հրատարակություններ ունեցած և մինչև այս պահին աճողորային ստեղծող ցուցակներում եղող անգլիացի գրող, ճանապարհորդ Ջուլիա Պարդոյի (Julia Pardoe 1806-1862) «*Քուճարի գեղեցկությունները*» գիրքը: Գրքի կարևոր մասն են կազմում անգլիացի նկարիչ Վելյան Բարտոլի



ման հետաքրքիր է նրանով, որ դրանց մի մասը հայ գեղուհիների փորագրանկարներ, հայկական նյութ արտահայտող եվրոպացի նկարիչների հեղինակած գործեր են: Մեծ մասամբ դրանք եվրոպական հրատարակություններից են վերցված: Սքանչելի գործեր, որոնք ապացույց են այդ արվեստագետների կողմից հայերի նկատմամբ առանձնակի վերաբերմունքի և հետաքրքրության: Հայտնի է, որ Մտամբուլ և Օսմանյան կայսրության այլ բաղաձեռն այցելած եվրոպացի թագավորի հյուրեր, անվանի դեմքեր, դիմանագետներ, արվեստագետներ, ճանապարհորդներ ընդունվել են և հյուրընկալվել հայ բարձրաշխարհիկ հարուստ ընտանիքներում, երբեմն պալատի խնդրանքով, մասնակցել նրանց կազմակերպած ընդունելություններին, քարեկամական հարաբերություններ ունեցել նրանց հետ: Եթե Ա հաստորում այն հիմնականում հռոմեացիների, քյուզանդացիների, արաբների, օսմանների մասին է, ապա մյուս հաստորներում Եվրոպան է ավելի շատ տեղ զբաղեցնում: Լուսանկարչական հարուստ նյութը կարող է հինք հանդիսանալ հայ թագավորների, հոգևոր առաջնորդների, հայկական ծագումով արաբ հայտնի գործադրամասնատարների, թուրքական սուլթանների մասին հետաքրքիր այբուբեն կազմելու համար:


**2004թ.** «*Tarih Boyunca Batı Ermeniler*» գրքի (563, 8 էջ) Բ հատորը Ստամբուլում հրատարակվում է Թուլլաճի «ParsYay» հրատարակչության կողմից:

**2005թ.** «*Tarih Boyunca Batı Ermeniler*» գրքի (876 էջ) Գ հատորը ևս դրվում է սեղանին: Նրա հրատարակության մասին ազդեր են տպագրվում Թուրքիայի կենտրոնական պարբերականներում: Երրորդ հատորը՝ 1891-1922թթ., այսինքն մինչև Օսմանյան կայսրության անկումը, մինչ Թուրքիայի հանրապետական շրջանն արտացոլող հանրագիտարանը կարծես արևմտահայության տնտեսական, մշակութային, կյանքի ամենատարբեր ասպարեզներում անմխիթնբաց զարգացման հայելին է: Յուրաքանչյուր էջում հայ ճարտարապետների հեղինակած օսմանյան սուլթանների, Եգիպտոսի փոխարքաների պալատների, դղյակների, ման՝ գեղաքանդակ մզկիթների, դամբարանների, քաղաքաշինական, վարչական խոշոր շենքերի, զինվորական հիվանդանոցների և զորանոցների, մավահանգիստների լուսանկարները, արևմտահայ կյանքի ամենատարբեր ոլորտները ցուցադրող լուսանկարներ են՝ տարազներից սկսած մինչև հայ լուսանկարչներից հիշատակ մնացած ընտանեկան, խմբակային, երաժշտախմբերի, տարբեր արհեստներ ներկայացնող, մարզական խմբերի, դպրոցների ու վարժարանների (արական և աղջկանց) աշակերտների, գերեզմանատների ու դամբարանարների նկարներ, Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերի տեսարաններ, որոնց որոշակի մասը շրջանառության մեջ դրվել է որպես Թուրքիայի փոստային բացիկներ: Առանձին հոդվածներ ենք գտնում հայ երևելիների մասին: Անպայման տրվում են տեղեկություններ թուրքական կառավարության կողմից նրանց տարբեր շքանշաններով պատվելու մասին, անգամ ու՞մ ձեռածք են տրվել այդ շնորհները: Դրանց կից օսմաներեն ֆերմանները, պարզակզերը կարևոր

փաստեր են հայ-թուրք հարբերությունների, երկրի կյանքի տարբեր ասպարեզներում հայերի ավանդը պարբերաբար գնահատելու մասին: Հոգևորական դասի բարձրաստիճան ներկայացուցիչները գրքում տրվում են առանձին մեծադիր էջով, մեծ լուսանկարներով ու մանրամասն տեղեկություններով նրանց եկեղեցական, հասարակական կյանքի մասին: Կարևոր են նրանց թողած գրական, պատմական ու եկեղեցու պատմության, ման՝ եկեղեցական հարաբերություններում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների մասին առանձին լրացումները, մաս հաշվետվություն- հրատարակությունները, օգտագործված աղբյուրները: Համարյա ոչ մի գրական, քառերկան գործիչ չի բացակայում հանրագիտարանից: Արտացոլվում է հայ քառերկամբերի և երաժշտախմբերի գործունեությունն ըստ ժամանակագրության, բազմաթիվ ազդագրեր, որոնք անգնահատելի գանձ են քառերկանների, հայ և թուրք քատրոնի պատմությամբ զբաղվողների, արվեստաբանների համար:


Հանրագիտարանի յուրաքանչյուր տարին ավարտվում է աշխարհի տարբեր վայրերում հայ ժողովրդի հետ առնչվող հայերեն, հայաստա թուրքերեն, լատիներեն, իունգրան, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն հրատարակությունների (մաս բարգամությունների) մասին տեղեկություններով: Գիրքն աղեցնում է գրքերի, շապիկների, տիտղոսաթերթերի, պարբերականների առանձին էջերի լուսանկարներով:

Չորրորդ հատորը ներառում է 1923-1966 թվականները: 2004թ. դեկտեմբերի 31-ի թվագրությամբ Թուրքիայի Վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանի ստորագրությամբ Բարս Թուլլաճիին ամանորի երկապույտ բարեմաքանքներով բացվել է եղվում:




Լեզվի, պատմության և մշակույթի բնագավառների ուսումնասիրության իր ողջ կյանքը նվիրած Բարս Թուլլաճին պարգևատրվում է աղամանակոտ «Դա Վինչի» միջազգային շքանշանով: Այն տրվում է ԱՄՆ Միջազգային Կենսագրական Կենտրոնի Հետազոտական և Անգլիա-Ֆեմերիչի Կենսագրական միջազգային կենտրոնի կոնգրեսների 11 տարի անընդմեջ մասնակցած գիտնականին: Խորհրդի կողմից Բարս Թուլլաճին

(William Henry Bartlett, 1809 – 1854) ստամբուլյան, նրտաղեմյան հայրույրից ավել սե ու ճերմակ, գունավոր հայտնի փորագրանկարները: Նշենք, որ գրքում հայկական գերեզմանարարների մասին իր գործերը հայտնող հեղինակը նշում է, որ դրանք այնքանով են յուրատեսակ, որ երբեմն ծաղկանկար դամբարանարների վրա ընդարձակ կերպով գրվում է հանգուցյաի գրազմունքի, մասնագիտության մասին (էջ 157):



գիտության «լեզվաբանության, պատմության բնագավառում իր հաջող գործունեության համար «Պատվո անդամ» է ընտրվում: 2004թ. նույն կազմակերպությունը դիմում է Նորեյսյան մրցանակի կազմկոմիտեին՝ Բարս Թուղլաճիին առաջադրելու խնդրանքով: Գիտնականին է հանձնվում այս առաջադրանքն մասին վկայող մետաղյա սալիկը նյութերի 12-ի թվականով:



2005թ. Բարսեղ Թուղլաճյանը հրատարակում է «Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları. Nejdet Mahfi Ayrall, Jeyan Ayrall Tözüm» (Նեծողթբ Մահվի Այրալ, Փեյան Այրալ Թշոզում. Թուրք թատրոնի անմար աստղերը) գիրքը<sup>177</sup>: Այն հայր և դուստր Այրալների մասին է: Գիրքը գրելու պահանջը, առիթը 2004թ. հունիսին 95-ամյա վարպետի՝ Nejdet Mahfi Ayrall-ի (1908-2004թթ.) մահվան ցավն է եղել: Նա Ստամբուլի դրամատիկական և կոմեդիայի թատրոնի դերասան, բեմադրիչ է եղել, որի ներկայացումներին Թուղլաճին ներկա է եղել դեռևս մանկական տարիներից: Թուրք թատերագետների կարծիքով նա երկրի թե աշխարհում եզակի դերասաններից է եղել, որը դեռ 94 տարեկանում չի լքել բեմը: Գուստրը Jeyan Mahfi Ayrall Tözüm -ը (1934-)<sup>178</sup> նա մեծ ժողովրդականություն է վայելել թատրոնում և կինոյում իր անձնավորում կերպարներով: Հայր և դուստր ճանաչվել են որպես «Թուրք թատրոնի ան-

177 Pars Tuğlacı, *Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları. Nejdet Mahfi Ayrall, Jeyan Ayrall Tözüm*, İstanbul, 2005, 112 s.  
178 Չարմանախորեն նկատել ենք, որ նրա մասին Google-ի էջում որպես ծննդյան թվական նշվում են 1929 և 1934 թվականները:

մար աստղեր»։ Բարս Թուղլաճին գրքի առաջաբանում գրում է, թե «...պատմության բնագավառում հայտնի է, որ բանաստեղծները, նկարիչները, երաժշտության և թատրոնի մարդիկ ձգտում են ազդել խաղաղության և սիրո աշխարհում: Փաստ է, որ արվեստն ազգություն չունի: Անկախ իրենց ծագումից, աշխարհառեակ ստղաններն իրենց արվեստով, վարքով դիմում են աշխարհի մարդկությանը և համարվում նրա սեփականությունը: Հայր և դուստր այս երևույթի կրողներն են եղել իրենց ողջ կյանքում»<sup>179</sup>: Գիրքը ներառում է թատրոնի և ֆիլմերի 253 լուսանկարներ, պիեսների և ֆիլմերի համուտ ցանկ:

Տարեվերջին, դեկտեմբերի 26-ին, Բարս Թուղլաճին Թուրքիայի երկրորդ նախագահ Իսմեթ Ինյունյուի որդու՝ Էրդալ Ինյունյուի (1991-93թթ.-ին վարչապետ, İsmet İnönü, Erdal İnönü) և նրա կնոջ հրավերով հյուրընկալվում է Անկարայում, նախագահական «Pembe köşk» ապարանքում: Անկարայում գտնվելու ընթացքում, նա հինարավորություն է ունենում Էրդալ Ինյունյուի հիմնադրամում աշխատել համարյա արդեն պատրաստ որոշ գրքերի վրա:

2006-2007թթ. հրատարակվում է թուրք օպերային աստղ, *կոլորապուրային սուպրանո* Սունա Բորաթի (*Suna Korad, 1935 -2003*) մասին «Türk Operası'nın Sönmeyen Yıldızı Suna Korad» (Թուրք օպերայի անմար աստղ Սունա Բորաթ) մասին գրույվը, որը նրա կյանքի պատմությունն է<sup>180</sup>: 20-րդ դարի 60-ական թթ., Անկարայի երաժշտանոցում սովորելու տարիներից Սունա Բորաթը իր վրա է գտնում մասնագետների ուշադրությունը: Գեղեցիկ արտաքինը, կապույտ աչքերը և սքանչելի ձայնը նրան օպերային խաղացանկի կոլորատուրային լավագույն դերերգերը կատարելու երջանկություն է պարգևում: Աշխարհի լավագույն բեմերը, բեմադրիչները և խաղընկերները նրա համբավը ճանաչելի են դարձնում շատ երկրներում: Նրա անունը գտնում ենք ֆրանսիական «Larousse» հանրագիտարանում: Միջազգային ճանաչման արժանացած Անկարայի, Ստամբուլի օպերային թատրոնների պրինադոնանս 1981թ. արժանացել է «Ժողովրդական արտիստի» կոչման: Միջազգային մշակութային ասպարեզում նա Թուրքիայի հպարտության առարկաներից է եղել: Սունա Բորաթը Բիլբերքի համալսարանում օպերային երգեցողության դասարան է դեկավարել, որտեղ էլ կայացել է երգչուհու հետ երաժշտի սցո արարողությունը:



Անկախ է Թուղլաճիի նվիրվածությունը թատրոնի, երաժշտության և այն կրողների նկատմամբ: Այս և թատրոնի մարդկանց մասին նրա ուսումնասիրությունները, գրքե-

179 Pars Tuğlacı, «Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları. Nejdet Mahfi Ayrall, Jeyan Ayrall Tözüm», առաջաբան.  
180 Pars Tuğlacı, *Türk Operası'nın Sönmeyen Yıldızı Suna Korad* İstanbul, 2006, 128s.



րը, հողվածները, գեղուցումները վկայում են մանկությունից, պատանեկան տարիներից եկող գեղեցիկ արվեստների նկատմամբ Բարս Թուղլաճիի նվիրվածության և կիսցումի մասին: Ավելի հասուն տարիքում այն վերածվել է լուրջ ուսումնասիրությունների աղբյուրի, իսկ բազմաթիվ արվեստագետների հետ նա բարեկամական ջերմ հարաբերություններ է ունեցել, սիրով կյուրսկալվել նրանց ընտանիքներում: Սա արդյունք է նաև գիտնականի մարդկային բարի հարաբերությունների ստեղծելու և այն պահպանելու տաղանդին:

Թուղլաճին փարբեր երկրներում, մասնավորապես հայկական համայնքների հետ հանդիպումների ժամանակ բազմիցս անդրադարձել է հայ հայրնի անուններին, որոնց նաև նանաչել է, հանդիպումներ ունեցել: Այս առումով ամենից ավելի նա անդրադարձել է Արամ Խաչատրյանին: Տարբեր առիթներով նա հողվածներով և կույրներով հանդես է եկել ծառայում մի շարք հայ արվեստագիտների մասին: Այսպես օրինակ, երբ 1984թ. Մարտիկի Արարուրի անվան մշակույթի կենտրոնում նշվում էր բուրբ օպերային քեմի առաջին մեծուրյան աստղերից 83 այնպիսի Մարի-Լուիզ Գարսագաչի բնական գործունեության կեսադարյա հոբելյանը, Բարս Թուղլաճին մասնավորապես հանդես է եկել պղպասակ կողորսարության սուպրանոյի մասին ընդարձակ հողվածներով, կույր ունեցել նրա հոբելյանական երեկոյին և նրա առաջնորդող հողվածով է Կրպագրվել մեծարան երեկոյի ընդարձակ ծրագիրը<sup>181</sup>:

**2006թ.** հերթական անգամ վերահրատարակվում է «*Büyük Türkçe - Fransızca sözlük*» (Ֆրանս-բուրբերեն մեծ բառարան)-ը:

Ստամբուլում լույս է տեսնում «*Tarih Boyunca Batı Ermeniler*» (Արևմտահայերը պատմության մեջ) ուսումնասիրության Գ-հատորը:

Անգլիայի հնագույն, Օքսֆորդի համալսարանի Ս.Կատարինե կոլեջը, ԱՄՆ Կենսագրական ինստիտուտի և Քեմբրիջի Կենսագրական Միջազգային ինստիտուտի հետ միասին կույրընկալում են «Գիտության, արվեստի և մշակույթի» միջազգային 32-րդ կոնգրեսը:

Ամերիկյան Կենսագրական Կենտրոնի կողմից Թուրքիայի ներկայացուցիչ Բարս Թուղլաճին պարգևատրվում է «Աշխարհի Ազատության մեդալ»-ով: Միաժամանակ, նույն Կենտրոնի կողմից նա ներկայացվում է **2005թ.** Նոբելյան մրցանակի լեզվաբանության, պատմության և մշակույթի ոլորտում անճանկան նվաճումների համար: Թուղլաճին Արքայազն Վիլյամին է նվիրում նրա մոր՝ Դիանայի նկարը: Ավանդաբար այն Բարսեղ Թուղլաճյանի բարեկամ էրով Մարաշյանի վրձնի գործն էր: Սա ավանավոր նկարչի երկրորդ յուղաներկն է, որ նվիրվում է Անգլիայի բազավորական ընտանիքին: Առաջինը 1997թ. Էլիզաբեթ Բ քազուհու դիմանկարն էր:

Հիլդա Էբենթճյանի գիրքը, որ մինչև 2006 թվականն է ներկայացնում, ավարտվում է վերոհիշյալ գիտաժողովում Բարսեղ Թուղլաճյանի մասնակցության, նրա կարդացած գեղուցումներում:

181 Filamenti Konseri Mari Luiz Karakay Jübilesi. Katılanlar: Alis Manukyan, Melek Celiktaş, Erol Urs, Mete Uğur, Elizabetta di Stefano, Pars Tuğlacı. 1 Kasım 1984, Perşembe, saat 18.30. Atatürk Kültür Merkezi, İstanbul Devlet Senfoni Orkestrasının İştirahiyile. Թուրքական արդյունքներ նախկին երկրորդ մասին օրվա թերթի մի համատարապույն հողվածի լուսանկար ենք միայն գտնում:  
182 Pars Tuğlacı. *Büyük Türkçe - Fransızca sözlük*, İst., 2006. 8 baskı.


«Արջին 4 էջերը գրքի հեղինակի օգտագործած հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, շվեդերեն, իտալերեն, ճապոներեն, հունարեն, ռուսերեն, բուրբերեն աղբյուրներին է տրամադրված:

**2008թ.** լույս է տեսնում<sup>183</sup> «*İsmet İnönü, Türkiye Cumhuriyeti'nin İkinci Cumhurbaşkanı*» (Ռանթ Ինյունյու, Թուրքիայի Հանրապետության երկրորդ Նախագահը ) գիրքը, ուր թերեակի շոշափվում է նրա հայկական ծագման խնդիրը<sup>184</sup>:

Գրքի հերոսը, ավարտելով «Կայսերական գինձորական վարժարանը» (*Mühendishane-i Berr-i Hümayûn*) իր գործունեությունը սկսել է 1903թ. որպես հրամուրածից Օսմանյան բանակում, մաս կազմել երիտարբերի ազգայնական «Միություն և Առաջադիմություն» (İttihâd ve Terakkî) կուսակցության: Օսմանյան բանակում ծառայած տարիներին նա Կայսրության դեմ ոտքի կանգնած Ռումելիի և Լեմնի ապստամբությունների ճնշման ղեկավարներից էր, գերապետի աստիճանով Բաղկանյան պատերազմի մասնակից: Նա գործել է Մուստաֆա Քեմալ փաշայի հրամանատարության ներքո Կովկասյան և Պաղեստինյան ճակատներում, Հույն-բուրբական պատերազմի (1919-1922) ժամանակ մի քանի ճակատամարտերում հաղթանակ տարել ու փաշայության աստիճանի վրա:

1922-23թթ. Լոզանի կոնֆերանսում Թուրքիան ներկայացնող հիմնական դեմքը Իսմետ Ինյունյուն էր: Նա ղեկավարում էր բուրբական պատվիրակությունը Լոզանի կոնֆերանսում գրավելով ծայրահեղ անգիջում դիրք Հայկական հարցի վերաբերյալ: Մերժել է Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից բռնի արտաքսված հայերին «Հայկական ազգային օջախ» տրամադրելու առաջարկին, պատճառաբանելով, թե դա կհանգեցնի Թուրքիայի անդամահատմանը: Դեմ է եղել նաև հայ փախստականների՝ իրենց բնօրրան վերադառնալուն:

183 Pars Tuğlacı. *İsmet İnönü, Türkiye Cumhuriyeti'nin İkinci Cumhurbaşkanı*, İst., 2008. 452 s.  
184 Նախագահի հայրը, որ ազգությամբ բուրբ է եղել, ծագումով կապված է Արևմտյան Հայաստանի հայաշատ Բիթլիսի և ապա Մալաթիա վայրերի հետ: Գնում քաղաքիների ապստամբության շրջանում հայերի առջև բռնի մահաճակատամասնում խնդիրն էր լրված: Ինչպես Միմեն Լեհասին է վկայում իր «Ռեպորտիին» գործում, հայաբնակ գյուղերի մի մասի կրոնական և աշխարհիկ պետերը, փկվվելու երկու ուղիներից նախընտրել են դավաճանափոխման ոչ թե բուրբացում, այլ քրոսանդու, դարերից եկող հեթանոսական սովորաբերով մեր ժողովուրդն ավելի մոտ, ու նրանց հավաքուրք աստիճանությամբ հարևան ավելիների դավանանքն ընդունելու միջոցը: Բախանաներն էլ դառնում էին փիթ կրոնական պետեր: Տես Միմեն Լեհասի, *Ռեպորտիին*, Վիեննա, 1936, էջ 153-154: Տես նաև մեր «Հայերի ներդրում...» գրքի էջ 17 (հ. 9 տողապալ):



Մուստաֆա Քեմալ փաշայի աչակից Ինժեյնյուն շուրջ 18 տարի՝ ամենաերկար, վարչապետական մի բանի շրջան է ունեցել: Նրա առաջարկությամբ Մեջլիսը հաստատել է Անկարան Թուրքիայի մայրաքաղաք դարձնելը: 1938թ. Արաբուրդի մահվանից մեկ օր անց (1938թ. նոյեմբերի 11-ից մինչև 1950թ. մայիսի 22-ը), նա ընտրվում է Թուրքիայի երկրորդ Նախագահ, ստանալով «Ազգի առաջնորդ» (Millî Şef) անվանումը:

Գիրքը ուսումնասիրություն է Իսմեթ Ինժեյնյուի, իր և կուսակից, ժամանակի հայտնի քաղաքական գործիչների, Թուրքիայի կառավարման ղեկին գտնված մարդկանց հետ անձնական հարաբերությունների, 1923թ. Լոզանի պայմանագրի, Համաշխարհային երկրորդ պատերազմի, Հիտլեր-Մուսոլինիի շրջանի մասին: Սա էիջոլություններ են տարբեր երկրներ, նաև Հայաստան այցելության մասին: Գրքի 452 էջերում 2-րդ Նախագահ Իսմեթ Ինժեյնյուն ներկայանում է որպես զինվոր, հրամանատար, քաղաքական և պետական ականավոր գործիչ:

**2008թ.** լույս է տեսնում Գրիգոր Ջոհրապի մասին «*Örnek Bir Osmanlı Vatandaşı Kırkor Zohrab Efendi*» գիրքը<sup>185</sup>: Մինչ այդ նա երկար տարիներ անվանի գրողի ու պետական գործչի, Օսմանյան Մեջլիսի ամենահայտնի հայ պատգամավորի, Մտամբուլի լավագույն փաստաբան-իրավաբանի մասին զեկուգումների շարք էր կարդացել արտասահմանյան իր այցելությունների, սվյուռախայ համայնքների հետ իր հանդիպումների ժամանակ:



Բարս Թուղլաճին գրում է, որ հայրն իր երիտասարդության տարիներին անձամբ ճանաչել է Ջոհրապին, տարվել նրա գաղափարներով, եղել նրանով էիացողների բվում: Իսկ չիհանալ այդ պատկանելի անձով՝ անհնարին էր: Ջոհրապը մինչև կյանքի ողբերգական ավարտն անգամ հավատում էր ժողովուրդների միջև բարեկամությանը, հասարակության տարրեր խավերի ու խմբավորումների միջև եղբայրական հարաբերությունների: Նա տիպար հայրենասեր օսմանցի էր, և զեբազույն ջանքեր էր ներդրել երկրում հավասարության, միասնության զերակայության համար: Մտամբուլում, իր առաջին իսկ քաղաքական ելույթում Ջոհրապը այդ մասին է խոսել: Թուրքական Մեջլիսի պատգամա-

վոր ելում շրջանում (28.11.1908–21.05.1915) նա ակտիվ գործունեություն է ծավալել, երկ սպասված բանախոսներից, ամենահարգվածներից ու պահանջվածներից: Գլուղոսմավորական իր գործառույթները նա արտահայտել է երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական, գիտական ու մշակութային կյանքի բարելավման ջանքերով, պաշտպանել գյուղացիների, աշխատավոր մարդու, ինչպես նաև կանանց իրավունքները: Նա այս առումով Թուրքիայի, նրա Մեջլիսի պատմության մեջ եզակի անձնավորություններից է եղել<sup>186</sup>:

Հերթական անգամ Մտամբուլում վերահրատարակվում է «*Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü*»<sup>187</sup> (Թուրք-անգլերեն գիտական և տեխնիկական տերմինների բառարան), որը խոսում է Թուղլաճիի կազմած բառարանների մեծ պահանջարկի մասին:

**2009թ.** օգոստոսին լույս է տեսնում «*Tarih Boyunca Batı Ermeniler*» (Արևմտահայեր պատմության մեջ) ուսումնասիրության 4-րդ հատորը բուրբերեն լեզվով<sup>188</sup>: Այն ընդգրկում է 1923-1966 թվականները:

Կազմված է 812 էջերից և պարունակում է 4 177 նկար: Հեղինակը, ինչպես առաջաբանում է ներկայացնում, պատմում է Թուրքիայի հանրապետության հայերի կրրական վիճակի, լեզվի, գրականության, հրատարակչական, արվեստների և արհեստների, ճարտարապետության, երաժշտության, քաղաքի, կիճոյի, սպորտի և արդյունաբերության ասպարեզում նրանց գործունեության, ներդրման մասին: Մեծ ծանոթ չենք էիչատակված 5-րդ հատորին, իսկ 6-րդ հատորը էեղինակը չի հասցրել ավարտել:



186 Ջոհրապը հարգված և երկնի անձնավորություն էր երկրի քե ազգային, քե համընդհանուր հաստրտական-քաղաքական, մշակութային կյանքում: 1914 թվականից նա բարձրացրեց Թուրքիայում հայկական բարեփոխումների հարցը և այս կապակցությամբ դիմեց եկրոպական տնտրությունների միջամտությանը: Հունվարին Ռուսաստանի և Թուրքիայի միջև ստորագրվեց հայկական բարեփոխումների վերաբերյալ համաձայնագիրը, որը արևմտահայերի Թուրքիայում ապաստել կյանքի երաշխիք էր լինելու: Այդ գործում Ջոհրապի մասնակցությունը յճական էր: Մակայն սկսվեց Լուսաչին համաշխարհային պատերազից, և համաձայնագիրը մնաց քրքի վրա: Թուրքիայի համար տեղիվեցին «նապատավոր» պայմաններ հայերի ցեղասպանությունից իրականացնելու համար: Մեկ գիշերվա ընթացքում, ապրիլի 24-ին, ճերթակալվեց և արտրվեց Գոլյի հայ մտավորականությունը: Ջոհրապը ամեն ջանք գործարքեց ազատելու անձե ազգակիցներից: Նա դիմեց պետական բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնցից շատերի հետ մտերին հարաբերությունների մեջ էր, այդ բվում ներքին գործոց նախարար Թալիսաք փաշային, իտրիդարաին Նախագահ Սաիիջ Հաիմ փաշային: Նրանք բուրդն էլ տալիս էին դրական, հուսադող պատասխաններ: Մակայն շուտով Ջոհրապին և ճերթակալեցին: Նրան էլ սպասվում էր նույն ողբերգական ճակատագիրը, ինչպես իր միլիոնավոր տարարար Թալիսաք փաշային: Նա դաժանորեն սպանվեց 1915 թվականի հուլիսին՝ արարի ճանապարհին:

185 Pars Tuğlacı. Örnek Bir Osmanlı Vatandaşı Kırkor Zohrab Efendi, İst., 2008, 100 s.

187 Pars Tuğlacı. Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü, İst., 2008թ.

188 Pars Tuğlacı. Tarih Boyunca Batı Ermeniler, c.4, İst. 2009. 812s.



### ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բարս Թուղաճին, որ մինչ Միչիգանի (ԱՄՆ) համալսարանական կրթությունը ուսանել էր հայկական վարժարաններում, իր ողջ գործունեության ընթացքում կապված է եղել պոլսահայ համայնքի հետ: Նա աշխատել է հայկական պարբերականներում, մասնակցել համայնքի մշակութային կյանքին, շատերի գլխավոր բանախոսը եղել: Իր կյանքի կարևոր դեպքերի, հրատարակությունների, սփյուռքում հայ համայնքերի հետ հանդիպումների մասին նա միշտ հոգվածներով հանդես է եկել հայաքերբերում: Մյուս կողմից, հայկական պարբերականները միշտ էլ արձագանքել են Թուղաճի բոլոր կարևոր իրադարձություններին, հրատարակություններին, տպագրել դրանք լուրերի կամ հարցազրույցների տեսքով:

**1955թ.**-ից սկսած Բարս Թուղաճին անգլերենից և ֆրանսերենից թարգմանություններ է կատարում Պոլսի «Նոր Լուր» երկօրյա և «Ժամանակ» հայկական օրաթերթերի համար:

Այս ընթացքում պոլսահայ «Ժամանակ» օրաթերթում նա հրատարակում է «Նկարիչը»<sup>189</sup> պատմվածքը:

**1963թ.** Թեփեքաշլի «Պարկ Օթելում» կազմակերպված հինդյանական «Նոր Գպոռցի» 1945թ. շրջանավաժանների հանդիպման երեկոյի բացումը Բարս Բուղաճին է կատարում:

**1964թ.** Բարսեղ Թուղաճյանը Պոլսի հայերեն «Արշավ» շաբաթաթերթի մի բաժնի տնօրեն է կարգվում:



Ամենայն Հայոց կարողիկոս Վազգեն Ա վեհափառը, դասական երաժշտության սիրահար էր<sup>190</sup>: Կարողիկոսը նաև զգայուն էր գայության և այն ստեղծողների նկատմամբ: Նյու-Յորքի հայ առաքելական եկեղեցու Արևելյան թեմի Առաջնորդարանի ս.Վարդան եկեղեցու բացման առիթով ժամանած Կարողիկոսը **1968թ.** առաջին անգամ հանդիպում է պոլսահայ բառարանագրին: Սկսած 1970 թվականից, Հայաստան յուրաքանչյուր այցելության ժամանակ Բարս Թուղաճին ընդունվում է Վեհափառի կողմից: Այդ հանդիպումների մասին են հիշեցնում բազմաթիվ լուսանկարները: Նյու-Յորքից հետո Թուղաճին Ֆրեզնոյում հանդիպում է գրող, Արևմտյան Հայաստանի գազափոստի մասին

մեծարժեք գրքերի, մասնավորապես Խարբերդի 1500 էջանոց պատմության հեղինակ Վահե Հայկի (1896-1983), ապա նաև ակամավոր գրող Վիլյամ Մարոյանի (1908-1981), նաև Հայաստանի Գերագույն Խորհրդի նախագահ Նազուշ Հարությունյանի (1912-1993)<sup>191</sup>, գրող Ջարուհի Գալենբերյանի (1874-1971) հետ: Ամերիկայում Բարս Թուղաճին շարունակում է գիտական իր պրպատումները, որոնք հետագայում մաս էին կազմելու նրա աշխատությունների, հանդիպում երաժշտական աշխարհում հոշակավոր, Պոլսում կինոնարված «Ջիլճյան ծննդանիցը» ստեղծած գերդաստանից Ռոզերտ Ջիլճյանի հետ:

**1968թ.** Նյու Յորք կատարած այցելությունից հետո, վերադարձին, Ստամբուլի թժյակական ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպված «Բալկանյան կոնգրեսի» օրերին հանդիպում է Բուխարեստից Պոլսի հրավիրված ակամավոր գիտնական, քիմիկ, ծերաբան-ծերաբույժ, Ռուսինիայում ծերաբանների և ծերաբույժների դպրոցի հիմնադիր Աննա Ալյանի (1897-1988) հետ: Որպես կանոն, Բարս Թուղաճիի աշխարհի տարբեր վայրերում ունեցած համարյա բոլոր հանդիպումները աղբյուր են հանդիսացել նրա ստեղծագործությունների համար և այս կամ այն չափով արտահայտվել տարբեր հրատարակություններում:

Պոլսի «Ժամանակ» թերթը, նշանավոր մանկավարժ, հրատարակիչ, գրող Հովի. Հինդյանի (1866-1950) հիմնադրած հայտնի «Նոր դպրոցի» շրջանավարտների հորեկյանական մի հավաքին անդրադառնալիս, պատմում է Հ. Հինդյանի հետ նրա արդեն ճանաչված աշակերտի՝ Բարսեղ Թուղաճյանի հանդիպման, երկար սպասված նրանց գրույցի մասին<sup>192</sup>:

**1970թ.** հայաստանյան իր այցելության ժամանակ նա հանդիպումներ է ունենում Գիտությունների Ակադեմիայում, Հայկական Հանրագիտարանում, Մարտիրոս Մարյանի հետ, ընդունվում Վեհափառ Հայրապետի կողմից և Էջմիածնում:

Որպես Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի սրահտնական հյուր, Մոսկվայում այցելում է (Լազարյան) Արևելագիտության ինստիտուտ, ուր հանդես է գալիս բուրբերեն լեզվի մասին զեկուցմամբ: Մոսկվայում հիշարժան հանդիպումներից է լինում անվանի պիոկոնստրուկտոր Արայում Միկոյանի (1905-1970) հետ հանդիպումը: Վերադարձին, հունիսին մահանում է հայրը՝ Միքայել Թուղաճյանը:

Բարս Թուղաճիին իր հետագա ուսումնասիրությունների համար հետաքրքրում էր ռուս-թուրքական, Օսմանյան և Ռուսական կայսրությունների, ինչպես նաև սովետա-ուսական հարաբերությունները: Այս առիթով նա մեկնում է Մոսկվա, Լենինգրադ և 3 ամիս անցկացնում գրադարաններում, արխիվներում: Մոսկվայում նա մի քանի անգամ այցելում է Լազարյան ճեմարանի շենքում գտնվող Արևելագիտության ինստիտուտ, հանդիպում թուրքագիտության բաժնի աշխատակիցների հետ, «*Թուրքիայի բուրբերեն լեզվի մասին*» հաղորդում տալիս: Նրա մասնակցությամբ կոնֆերանսներին, որպես կանոն հրավիրված էին լինում Մոսկվայի համալսարանի, լեզվաբանական և մշակույթի պատմության ինստիտուտների աշխատակիցները, ղեկավարները: Բարս Թուղաճին

189 Բ.Թուղաճը, *Նկարիչը*, «Ժամանակ» օրաթերթ, Պոլսի, 1962թ., 2-3-4 ղեկումները.  
190 Վեհափառ Հայրապետը մայնասկապատակների մեծ, անզին հավաքածու ուներ, որոնց մեծ մասը միլիտարություններ էին, մակագրված ժամանակի օտար և հայ անվանի կատարողների կողմից: Վեհափառի մահվանից հետո այն ոչ թե սիրով պահպանվեց որպես հիշատակ, գրադարանի երաժշտական մաս, այլ փոխյ շարտվեց:

191 Հիլդա Էքմեքճյանի գրքում Նազուշ Հարությունյանի նկարի տակ սխալմամբ գրված է Հայաստանի կոմունիստական կուսակցության (ՀԿԿ) կենտրոնի առաջին քարտուղար (1966-1974 թթ.) Անտոն Քոչինյանի (1913-1990) անունը:  
192 «*Ժամանակ*» օրաթերթ, Պոլսի, 1969թ. մարտի 11.

բարեկամանում է շատ բուրքագետների հետ, ընդունվում Արևելագիտության ինստիտուտի տնօրենի՝ ակադեմիկոս Բոբոջյան Գաֆուրվիի և «Սովետական մեծ հանրագիտարանի» տնօրեն Գիմիտրի Սուլվյովի կողմից: Պոլիս վերադարձից առաջ լինում նաև երևանում, շարունակելով փնտրել իրեն անհայտ շատ հարցերի լուսաբանումները<sup>193</sup>:

**1975թ.** Կունիսիսն, Լոնդոնում եղած ժամանակ նրան հաջողվում է հանդիպել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ին, որն այնտեղ էր Ս.Պետրոս եկեղեցին օձելու համար: Բնականաբար թուղալուծի ևս հրավիրվում է մասնակցելու այս արարողությանը:

Փարիզյան շրջանում նա հանդիպում է Ֆրանսիական Ակադեմիայի անդամ (ամենահներից), օսկարակիր գրող Անրի Թրուայային (Լևոն Թորոսյան 1911-2007), անվանի նկարիչ, նույնպես ակադեմիական ժանեսեմին (Հովհաննես Մեներջյան 1920-2013), նկարիչ Գառգոլին (Գառնիկ Ջուլյանյան 1920-2013), ֆրանսիական բեմավարտի և կինոյի անվանի անուններից Գրեգուար Ալանի (Ալվանյան Գրիգոր Գալուստի 1908 - 1982), Ռոզի Վարդի (Նվարդ Մանուելյան 1923-2012), Շառլ Ազնավուրի (Շահնուր Վաղինակ Ազնավուրյան 1924-2018), հայտնի դրամատուրգ Գաբրիել Արուսի (Գաբրիել Արուստյան, Արուշ 1909-1982 ), քեմադրիչ Հանրի Վերնոյի (Աշոտ Մալաթյան 1920-2002), 1950-ական թթ. Եվրոպայի բոքսի չեմպիոններ Ժակ Հայրապետյանի (1926-) և Ժակ Քեշիշյանի (1939-2018) հետ: Այս անձնավորությունները հայ համայնքի երևելիները լինելուց առաջ եղել են աշխարհի հանրաճանաչ անուններից, մաս կազմել այդ երկրների մշակույթի, գիտության, մարզաշխարհի սերունդից:

ՄԱՀՄ Գիտությունների Ակադեմիայի պաշտոնական հրավերով **1975թ.** հոկտեմբերին իր բարեկամ լուսանկարիչ Արա Գյուլերի հետ միասին «Աերոֆլոտ»-ով մեկնում են Մոսկվա, Լենինգրադ, ապա նաև Թիֆլիս, Երևան, Բաքու, ուր հանդիպումներ են ունենում հայ ժողովրդի լավագույն զավակների, բաղաբական ու գիմնոլոգական, մշակույթի առաջին մեծության ականավոր գործիչների հետ: Արա Գյուլերն իր լուսանկարներում բարեխախտաբար պատմությանն է բողել այդ հանդիպումները: Այս անձիք բացառությունների և ներկայացնելու կարիք չունեն: Հանդիպումներ Խորհրդային միության

ամենաերկարակյաց ու եղիմնակալոր քաղաքական հայազգի գործիչ Անատոս Միկոյանի, նրա եղբոր՝ ավիոնոստորուկտոր Արայոն Միկոյանի, մարշալներ Հովհաննես Թուրքոյանի, Համազասպ Բաբաջանյանի, Երկրորդ համաշխարհային պատերազմի զինվորական ուժերի հրամանատարներից Սարգիս Մարտիրոսյանի, Նվեր Մախարյանի, աշխարհահեռակ գիտնականներ Վիկտոր Համբարձումյանի, Արայոն և Արա-համ Ալիխանյանների, Անդրանիկ Խոսիֆյանի, Գորգուդյանի, Ատոնական կոմիտեի անհազակ Անդրանիկ Պետրոսյանի, Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Յուրի Պետրոսյանի, Լենինգրադի Էրմիտաժի բանգարանի տնօրեն ակադեմիկոս Բորիս Պյոտրովսկու, գրող Մարիետա Շահինյանի, Վարդան և Ժակ Ինժանյան նկարիչ եղբայրների, երգչուհի Ջատա Գոլովանյանի, շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի, կոմպոզիտորներ Արամ Խաչատրյանի, Անոն Բաբաջանյանի հետ: Մոսկովյան օրերին Բարսեղ Թուրքոյանը և Արա Գյուլերը հանդիպումներ են ունեցել նաև բուրք գրող Նազրմ Հիբների երրորդ կնոջ, ծագումով ռուս Վերա Ֆեոնովանի հետ, նրանց ամուսնացում (Nazim Hikmet Ran, 1902-1963): Այս հանդիպմանը Բարսեղ Թուրքոյանին են նվիրել Նազրմ Հիբների բազմաթիվ նկարներ, անգամ Նովոդևիչի գերեզմանատան մահաթանը, գրողի մոր՝ Սառա Հանքմի Պոլիս «Մարտի և Ժուլյան»-նայ լուսանկարչատանն արված լուսանկարը: Երևանյան հանդիպումները ևս բազմավորման են եղել՝ գրողներ, գիտնականներ, կոմպոզիտորներ, ճարտարապետներ, երգչուհիներ Լուսինե Ջաբարյանի, Գոհար Գասպարյանի, իր հայրենակից խմբավար Հովհաննես Չեքիշյանի, ջութակահարներ Ժամ Տեր Մերկերյանի և Անահիտ Յիցիկյանի, մարզիկ-աշխարհի չեմպիոններ Սերգո Համբարձումյանի, Վաղիմիր Ենգիբարյանի, բեմադրիչ Սարգեյ Փարաշանովի (Թիֆլիսում) և այդ ընթացքում Հայաստանում գտնվող ամերիկահայ ականավոր գրող Վլյուս Մարոսյանի, Հովհաննես Շիրազի, Միլվա Կապուտիկյանի հետ: Նա ջերմ ընդունելության է արժանացել Սփյուռքահայության կոմիտեում, Գրողների միությունում, քանգարաններում, գրադարաններում, արխիվներում և բնականաբար ս.էջմիածնում, ուր հանդիպել է Վազգեն Ա կաթողիկոսին: Նկարների առատության մեջ նույնիսկ սխալներ են սպրդել, ինչպես օրինակ՝ Պարոյր Սևակի նկարի տակ գրվել է Հովհաննես Շիրազ, իսկ Վարդգես Համազասպյանի ազգանունը գրվել է Ստեփանյան: Բարվում հանդիպումներ են ունենում Գիտությունների Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Համիդ Արալի հետ, հյուրընկալվում Ուրդուգիական կենտրոնում, կոմպոզիտոր և դիրիժոր Նիյազի Հաջիբեկովի (Hamid Arash, Niyazi Hacibekov 1912-1984): Արա Գյուլերի արած այս լուսանկարները, իրենց բնի պատմական և թե՛ գեղարվեստական, մտերմիկ ու անկեղծ բնույթով որոշակի արժեք են ներկայացնում մեր ժողովրդի պատմության համար: Գրանք Բարս Թուրքոյանի հետ լուսանկարների հերոսների տանն են արված՝ անմիջական, ժպտերես, հարազատի զգացումներ արտահայտող նկարներ: Իրապես, Թուրքոյանի վարպետորեն կարողանում էր անմիջապես իրեն լավագույնս տանադրել դիմադրի մոտ, վաղեմի բարեկամի ու հարազատի ջերմ զգացումներով արձակցել հանդիպումները, բարեկամության վառ հուշեր բողնելով այդ ժամերի վրա: Ավելին, նրանցից շատերը լրացուցիչ ընտանեկան մատուցներ-լուսանկարներ են տրամադրել Բարսեղ Թուրքոյանին, որը և գտնում ենք

193 Հայաստանյան առաջին իսկ այցերից սկսվել է Բարս Թուրքոյանի բարեկամությունը հորեղբոր՝ Արևոյան Հայաստանի մշակույթի լավագույն մասնագետներից մեկի՝ Գառնիկ Մտեփանյանի հետ, որը եղիչն Չարենցի անվան Գրականության և Արվեստի բանգարանի տնօրենն էր: Բարս Թուրքոյան «արևմտահայոց քաղաղ հանրագիտարան» էր անվանում իր ավագ քարեկամին: Հնտասպայում նրանք հանդիպում էին հորեղբոր Գեոտոսի ափի բնակարանում: Թուրքոյանի գլխի էր նախապես մի քանի էջ հարցեր նախապատրաստած: Հանդիպումները մի քանի ժամ էին տևում, մինչև հորեղբայրս չափազանց հոգնում էր: Երբեմն մասնակցել են այդ հանդիպումներին՝ սորմ հրաձգեցողի պատճառով, երբեմն էլ հանդիպել Թուրքոյանին հարցերին սպառել պատասխաններ տալուց մասնորոշ երջանակի դեմքով: Վերջին շրջանում ինչու են, մի անգամ հորեղբայրս հարցերը Բարսեղին, թե ինչպիսի՞ն են նրա օժանդակների ինստիտուտը: Պատասխանն ապշեցրեց Գառնիկ Մտեփանյանին:

-Օժանդակներն բոլորովին չպիտեն, սակայն չեն անհանգստանում, քանզի 8 քարտուղարուհիներ ունեն:

Իրականում, քացի ուր մասնագետներից, աշխատում էին նաև նույնքան քարտուղարներ և մերենակողմիներ, լուսանկարիչ-մեկտրողներ: Նման հսկայական աշխատանքը, որ ենթադրում էր գիտական մի իտեր անմեակագլուի ներկայություն, փաստորեն այս փոքր աշխատանքային խմբի ուժերով մի քանի տարի շարունակ, ինչպես ինքն է խոստովանում, օրը 16 ժամյա աշխատանքով է եղել պայմանավորված:



կենսագրական այս հատորում: Այս առումով հետաքրքրական են Արամ Խաչատրյանի և աներիկահայ ակամավոր կինոբեմադրող Ռուբեն Մամուլյանի, Բելգիայի բազուկի Էլիզաբեթի, Արթուր Ռուբինշտեյնի և Պաբլո Ներտոյայի, Սերգեյ Պրոկոֆևի և Գմիտրի Շեստակովիչի, ջութակահար Դավիթ Օյստրախի հետ հայտնի նկարները, խաչատրյանական ընտանեկան մթնոլորտում արված բազմաթիվ մտերմիկ լուսանկարները: Թուղլաճի մասին գրի բազմաթիվ էջեր լեցուն են շրջագայած վայրերի հուշարձանների հայտնի և անհայտ, տեղի ու անտեղի բազմաթիվ լուսանկարներով, անգամ հին փորագրանկարների արտատպումներով (օր. 1870-ականների ֆրանսիական «Le monde illustre», ռուսական «Всемирная иллюстрация» և նման ամսագրերից վերցված): Իհարկե դրանցից որոշները շատ հետաքրքրական են:

**1977թ.** մա հայ համայնքի հրավերով Վիեննայում դասախոսություն է կարդում հայ մեծ քանատեղծ Ավետիք Խասիկյանի մասին: Պոսի «Milliyet Sanat Dergisi» հանդեսի մարտյան համարում գրում է «Արամ Խաչատրյան, Պետք է թուրքիայում հաստատել Արթուրի անվան Արվեստի միջազգային մրցանակ» հոդվածը<sup>194</sup>: Բարս Թուղլաճին գրում է, որ ամենից շատ սեր, հրաշքություն և հրաշալի մրգեր է սիրում: Իսկ այդ ամենը թուրքիայում կա:

**1977թ.** դիմելով Թուրքիայի նախագահ (1973-80թթ.) Ֆահրի Հոթուրյուրքին (*Fahri Sabit Korutürk*; 1903- 1987), առաջարկում է, որպեսզի Թուրքիան ճանաչելի դառնա իր արվեստով և թուրքերն էլ չփվեն համաշխարհային երաժշտական մշակույթի հետ: Բարսեղ Թուղլաճյանի միջնորդությամբ, Նախագահի հրավերով աշխարհահռչակ երաժիշտ Արամ Խաչատրյանը հրավիրվում է Թուրքիա, երաժշտական միջազգային ֆեստիվալում կատարելու իր ստեղծագործությունները: Այս մասին գրում է նաև Պոսի «Ժամանակ»-ը<sup>195</sup>:

**1979թ.** հունվարին Ստամբուլի Բեյոլլու բաղի «Շան» կինոթատրոնում նշվում է «Ժամանակ» հայերեթի 70-ամյա հորելյանը: Բարս Թուղլաճին շարունակում էր մնալ թերթի խմբագիրներից և հանդես է գալիս բանախոսությամբ:

Սկսած 1979 թվականից Թուղլաճին ոչ շատ ընդարձակ հոդվածներով հանդես է գալիս Թուրքիայում հայկական բատերիայների, դերասանապետների, դերասանների մասին: Այն սկսվում է հայ իրականությունում առաջին օպերայի՝ 1865թ. «Արշակ Երկրորդի» ստեղծմամբ, հեղինակի՝ Տիգրան Չոխաջյանի (1837-1898) 1866թ. «Օսմանյան օպերային միության» ստեղծման պատմությամբ<sup>196</sup>: Հոդվածի համար հիմք էր ծառայել

հորեղբորս, արևմտահայ բատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ Արևմտահայ բատրոնի պատմության» եռախատոր ուսումնասիրությունը, որ անդրադարձ կա նաև խալաֆի բատերագետ, որոշ ժամանակ Ստամբուլում ապրած և բատերական կյանքն ու վաճառություններն ուսումնասիրած Աղոյի Թալաստյի «Օսմանյան բատրոնը»: Ֆրանսերենով հրատարակված իրաշալի ուսումնասիրությանը<sup>197</sup>: Այս գործում ողջ շեշտադրման արված է հայկական տարբեր բատերախմբերի գործունեության վրա, առանձին-առանձին դերասանների, դերասանուհիների և ռեժիսորների, եվրոպական բեմերի առողերի հետ նրանց համեմատության, հայ բեմի, մասնավորապես դերասանուհիների նկատմամբ մեծարանքի ու սքանչացման արձանագրմանը: Թալաստն հայ դերասանուհիներից նմանեցնում է եվրոպական բեմերի աստղերից Շնայդերին, մադամ Կոլրին, Մարի Նվարդին գերադասել է որպես ամենաբնական խաղի վարպետ, հիացել էր այդ դերասանուհիների քանդակային գեղեցկությամբ, Պետրոս Ադամյանին համարել է Արևելքի Մունե-Սյուլի», իսկ Նակո Վարդուկյանին վերաբերվել որպես իզոթ դերասանապետի, որին ժողովուրդը լեզնեղ էր դարձրել: Բարս Թուղլաճին չի անդրադառնում այս կարևոր մանրամասներին: Նրա հոդվածը հիմնականում ճանաչողական արժեք ունի, ուր արևմտահայ բատրոնի հիշարժան տարբերակի արձանագրում է: Ավետոս, որ շատ-շատ բան կարելի էր գրել նույնիսկ համառոտ հոդվածում, մանավանդ որ կարելի էր այդ ամենն ասել օտարի կողմից, որպեսզի հավելանտություն մտա ազգամյային: Թուղլաճին չի խոսում այն բանի մասին, թե ինչպիսի հսկայական ներդրում է ունեցել հայ բատրոնը Օսմանյան կայսրության կյանքում, ապագա Թուրքիայի համար: Այն դարձել է թուրք լուսավորիչների մի ողջ սերունդ ծնող ուժ, թուրքական գրականության, դրամատուրգիայի, նոր գրական բատրոնի լեզվի, եվրոպական հեղափոխական գաղափարախոսության շեփոխարար, կրմանց էմանսիպացիան սկզբնավորող ինստիտուտ: Անգրագիտության համատարած վիճակում հայկական բատրոնը հայերեն և թուրքերեն ներկայացումներով գրական ճաշակ է տարածել, եվրոպական բատրոնի դասականներին ծանոթացրել կայսրության քաղաքներում և գավառում: Որպես կանոն, հոդվածները գերծ են մնացել կարևորագույն մաս հանդիսացող եզրակացությունների, ուսման-վերլուծական մասից: Այսպես կարելի էր գրել, երբ այս մասին ապագայում մի ուսումնասիրություն, գիրք պիտի հրատարակես... Բարս Թուղլաճիի հոդվածները որքան էլ որ կարևոր տեղեկատվություն են պարունակել, այնուամենայնիվ մի կարևոր բաց ունեն: Բացարձակապես բացակայում են ուսումնասիրության աղբյուրները, որն ինչ ուր չափով նվազեցնում է գրության արժեքը:

**1984թ.** դեկտեմբերին Ստամբուլի «Պիլեղի» հանդեսում հրատարակում է «Arpaçay ve Yöresi»<sup>198</sup> (Արվաչայը և տարածաշրջանը) պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը ներկայացնող Արմեն Գուլյանյանի լիբրետոյով հնչել է հայերեն: Գալով «Օսմանյան օպերային միության» ստեղծման տարեփվին, ապա այն 1866 թվականին է եղել, և ոչ թե հոդվածում նշված 1874թվականը: Ցավոք սրտի նման վրիպումներ շատ են հանդիպում, մասնավորապես Բարս Թուղլաճիի արևմտահայ պատմությանը նվիրված համընդհանրապես հատորներում: Այս մասին տես Հասմիկ Ստեփանյան, *Հայերի մերթուրում* ... Եր., 2011, էջ 559-563.

195 «Ժամանակ» օրաթերթ, Ստամբուլ, 1977թ, մայիսի 24.

196 «Արշակ Երկրորդը»: Ստամբուլում ներկայացվել է իտալերենով և միայն 1945թ. Երևանի Օպերային

197 Thalasso Adolphe. *La revue Théâtrale, numero spécial sur le Théâtre Turc*. Paris, 1904, N6 . Այս մասին տես նաև Հայերի ներդրում..., Եր., 2011, էջ 507.

198 Pars Tuğlaç, *Arpaçay ve Yöresi*, İst., 1984, 45s.

րությունը: Տպագրվում է առանձին գրքով՝ անգլերեն և թուրքերեն լեզուներով, 45-ական էջ: Առաջարկվում է թուրք ակադեմիկոս պետական գործիչ Քյազըմ Գյուլքեր (Kazım Göklek, 1905-1996): Գիրքը մանրամասն նկարագրությունն է Արվաչայի հովտի, Ղարսի շրջանի բնակավայրերի, գետերի, լճերի, բնակչության, պատմական վայրերի, դրանց ստպոնիմիկայի: Պատմական ակնարկները ժամանակակից մի քանի դար են ներառում, այդ նյութը ուսումնասիրության առարկա դարձրած գիտնականների, ճանապարհորդների մասին տեղեկություններով համեմատ՞:

Անիին վերաբերող հատվածը V-IXդդ. հայ թագավորական տների, տոհմերի համառոտ պատմությունն է, որ օգտագործված են պարսկական և արաբական աղբյուրները: Հնագիտական հայտնագործությունների աղբյուրում երևան են եկել քարանձավային պատկերներ, որոնք այս շրջանի պատմությունն ընդարձակում են մինչև մշակութային նեոլիթի դարաշրջանը: Աշխատության կարևոր մաս են կազմում աշխարհագրական հին ու նոր անվանումների, Անիի ճարտարապետությունն ըստ քաղաքաշինական և ճարտարապետական մոտեցումների զարգացման երեք շրջանների ներկայացումը: Այն է՝ Կամարականների (IV-VIIդդ), Բագրատունիների՝ (X-XIIդդ.), Ջաբարյանների (XI-XIIդդ.), նաև՝ արաբական արշավանքների (VIII-IXդդ.) և սելջուկների (XII, երկրորդ կեսի -XIII, վերջը) շրջանների: Հիշվում են Անիի ուսումնասիրողները, որոնցից ծագումով լեռ, ավստրիացի բյուզանդագետ պրոֆ. Յոնեֆ Ստրիգովսկին, (*Josef Strzygowski*, 1862-1941) Անիի ճարտարապետական վաճառությունները համարում էր վաղ քրիստոնեական գուտ հայկական արձաններ ունեցող մեծավորարևելյան մշակույթ, որը տարածվելով դեպի Եվրոպա, մեծ ազդեցություն էր ունենալու արևմտաեվրոպական, մասնավորապես բյուզանդական, գոթական ճարտարապետության վրա: Առաջին հնագիտական պեղումները երկրաչափից ավերված հայկական մայրաքաղաքում արվել են ռուս-թուրքական պատերազմի (1877-1878թթ) շրջանում, ապա՝ ս.Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկոլայու Մառի (*Николай Яковлевич Марр, 1864-1934*) կողմից 1892-1893, 1904, 1906-1913 թվականներին: Բարս Թուղլաճիի այս գիրքը կարելի է Անիի, մասնավորապես՝ Ռուսական աշխարհագրական ընկերության» կողմից ուսումնասիրությունների մասին գրքույկ համարել: Այն է ըաղմիրներից մինչև 1904թ. ակադ. Ն. Մառի կողմից Անիում հենարանական թանգարանների հիմնադրումը և տարիներ անց Էրմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ներդրումն այս հարցում: Վերջինս երեք աշխատություն է նվիրում Անիին (1909թ., 1910թ., 1911թ.), այդ բոլորն նաև կազմում է Անիի թանգարանի կատալոգը: Այս շրջանում Ռուսաստանի տարբեր կողմերից մասնագետների և գրտաչրիկների խմբեր են այցելել Անի: Պարզվում է, որ ռուսական և օսմանյան կայսերական պալատները տարիների ոչ միայն պաշտոնական, այլև զաղտ-

նի հարաբերություններ, փոխադարձ կապ են ունեցել: Այդպիսի օրինակ կարող է լինել իրիմյան Հայրիկի կարողիկոսական գաղին ընտրվելու հարցը, որի վերաբերյալ ատկա են երկու պալատների մանրամասն գաղտնի մասնակազմության փաստեր: Ռուսական «Կայսերական աշխարհագրական ընկերությունը», ռուսական արշավախմբերը ստորինը շարունակ աշխատել են, պեղումներ կատարել, քանզի Բեռլինի կոնգրեսից հետո կայ ռուսական տարածք է եղել: Ռուսական արշավախմբերի կարևորագույն գործերից է եղել Թուրքիայում տարբեր հանքավայրերի հայտնագործումը, դրանց քարտեզագրումը: Նման արշավախմբերում եղել են նաև հայ մասնագետներ<sup>200</sup>:

Հայտնի է, որ հայկական ճարտարապետությունն ուսումնասիրելու համար Անի է գնացել նաև Պոլիսը շենացնող Պալան ճարտարապետական գերդաստանի ակադեմիկոս ներկայացուցիչներից Սարգիս Պալանը: Այսօր Անին Թուրքիայի ճանապարհորդական քարտեզի կարևոր մասն է կազմում: Այն աշխարհի հազարավոր տուրիստների այցելության վայր է դարձել:

«*Yillar Boyu Tarih*» հանդեսի մարտյան համարում Բարս Թուղլաճին հրատարակում է Օսմանյան կայսրությունում տպագրական, հրատարակչական գործի սկզբնավորողներից, լավագույն որակի տեր Հովհաննես Մյուսենդիսյանի մասին հոդված, այն վերնագրելով «*Թուրք Գուրբանբեղ Մյուսենդիսյան Էֆենդին*»<sup>201</sup>: Հոդվածն իրենից ներկայացնում է 250-ամյա արևմտահայ տպագրության ուրվագիծը: Իհարկե, այն Թեոդիկի «*Şhay ni Sunn*»-ի համառոտ տարբերակն է: Այն հոդված է պոստահայ սքանչելի հրատարակիչ գերդաստանի մասին, սուլթանական և կառավարող շրջանակների կողմից նրանց նկատմամբ ցուցադրած երախտագիտության, քարեկանության և զենահատանի՝ մի շարք շքանշանների, անգամ 1923 թվականին հանրապետական շրջանակների գնահատանքի եզակի ցույցի արդյունք «*Maarif Madalyasi*» շնորհելու մասին:

Իհարկե, ճշվում են նաև հայ այլ հրատարակիչների անուններ: Սակայն այն մնում է որպես թուրքերենով տեղեկատու, կարևոր հոդված, որը փորձում է մոռացության չմատնել արևմտահայության ներդրումը կայսրության գրախրատարակչական գործի զարգացման գործում:

Հայ մշակութային ներդրումների մասին հոդվածներին հաջորդում են սուլթաններ Մահմուդ Երկրորդի, Աբդուլմեջիդի, ապա նաև Աբդուլազիզի ժամանակների թուրքերեն լեզվի և գրականության մասին հոդվածները Ստամբուլի «*Milliyet Sanat Dergisi*» հանդեսում<sup>202</sup>, Մյանք հանրագիտարանային որակի հոդվածներ են, որոնք նոր գրականության, լուսավորիչների անունները մեկտեղելով, խոստովանում են, որ նրանք զրել են արաբական թերակամության օրենքներով, պարսկական իզաֆեթի (սեռական կազմության) հիման վրա: Այսօրյա ընթերցողի համար այդ գրքերը հասանելի են նոր գրական թուրքերենի քարգմանելուց հետո միայն: Մենք տարբեր առիթներով

199 Այս առումով հավազյուտ արժեքի, կորոլային ուսումնասիրություն է համարում խաբրերից Գարեգին Գեջյանի (1868-1964) 5001-յանոց «*Türkiye 'de Balık ve Balıkçılık*» (Չուկը և ձկնորսությունը Թուրքիայում) գիրքը, որը հրատարակվել է 1906թ. Պոլսում և 1915թ. տպագրվել օսմաներենով, իսկ 1929թ. քաղգմանել է ֆրանսերենով, ունեցել մի քանի վերահրատարակություններ: Այն մինչ օրս իր հետաքրքրությունը պահպանում և վերահրատարակվող գիտական գործերից է: Ըստ նրա քոռ, վտանգանիկ ֆրանսիացի ակադեմիկոս քաղաքական գործիչ Պատրիկ Գեջյանի (1944-2020) մեզ հայտնած տեղեկության, գիտնականի շնորհաբարկված գործեր են պահպանվում իր ընտանեկան արխիվում: Այս մասին տես՝ Հ.Ստեփանյան, Հայերի ներդրումն ... Եր., 2011, էջ 136-137:

200 Հանքերի հայտնագործման արշավախմբերի աշխատանքները ղեկավարել է ցարական Ռուսաստանի հայտնի մասնագետներից, ցարական կառավարության շքանշանակիր, նախագետ-երկաթյան Ալունի Գրիգորի Մարտայանը:  
201 Pars Tuglaci. *Türk Gütenberg i Mühendisyen Efendi*. İst., Yillar Boyu Tarih, 03.1980.  
202 Pars Tuglaci. *Sultan Abdülmecid Devrinde Dil ve Edebiyat*. İst., Milliyet Sanat Dergisi 04.1980.  
Pars Tuglaci. *Sultan Abdülaziz Devrinde Dil ve Edebiyat*. İst., Milliyet Sanat Dergisi, 06.1980.



ապացուցել ենք, որ Թանգիմաթի շրջանից սկսվող թուրք լուսավորիչների սերունդը չի կարողացել հաղթահարել ժամանակի պահանջը, այսինքն նրանց օգտագործած լեզուն հեռու է եղել նոր գրական թուրքերենի հիմքը հանդիսանալուց: Մինչդեռ հայատառ թուրքերեն գրականությունը, պարբերականների մեծ մասի լեզուն, որով կատարվել են ժամանակի հրատարակությունները, եվրոպական և համաշխարհային գրականության դասակարգման բարգձման բարձրագույն կետերը, հատուկ բատրոնի համար կատարված քարգձմանությունները այսօր անգամ առանց քարգձմանության հասկանալի են բոլորին: Հայկական բատերլասիների թուրքերեն ներկայացումների լեզուն այնքան պարզ ու ընթրնելի է եղել, որ այն հավասարապես հասկացել են թատրոն հաճախող տարբեր ազգությունների ու խավերի հանդիսատեսները՝ գրագետ կամ անգրագետ: Բնականաբար խոսքը չի վերաբերվում պալատական պատվերներով հրատարակված հայատառ թուրքերեն որոշ գրքերին, ինչպիսին են օրինակ արևմտահայ անվանի մտավորական, պետական պաշտոնյա և գրող Հովսեփ Վարդան փաշայի երկու գործերը՝ «Նապոլեոն Բոնապարտի պատմությունը» և «Արևելյան պատերազմի պատմությունը» գրքերը: Ի տարբերություն իր մաս ստեղծագործությունների, որոնք լույս են տեսել հասկանալի թուրքերեն լեզվով, այս գործերը հատուկ գովել են պալատում ընդունված խրքին, ծեծծեղուն հայատառ օսմաներեն լեզվով: Հողվածուս ասվում է նաև պալատական, դիվանային գրականության ավանդույթների շարունակման, պալատում ավելի քան 20 աշուղների գոյության մասին:

Բարս Թուղլաճին իր հիմնական ուսումնասիրություններին զուգահեռ համրամատչելի հոդվածներ է տպագրում թուրքական (իլիմնականում Ստամբուլի «*Yillar Boyu Tarihi*» հանդեսում) և պոլսահայ պարբերականներում: Դրանց մեծ մասը վերաբերում է Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր ասպարեզներում արևմտահայության ունեցած ներդրումներին: Այդ հոդվածներից են՝ թուրքական բենուս առաջին օպերայի, օպերային թատրոնի մասին<sup>203</sup>, Օսմանյան կայսրության առաջին նկարիչ, պալատական լուսանկարիչների Գևորգ, Հովսեփ, Վիլեն Աբդուլլահ երգայրների մասին<sup>204</sup>, որոնք իրենց ժամանակին դարձան Ստամբուլի այցեբարտերից, հեղինակեցին երկիրն իր տարբեր կողմերով ներկայացնող մեծարժեք պլյաններով:

Բարս Թուղլաճին մի քանի հոդված է գրում Թանգիմաթի շրջանի հայ թատրոնի ու նրա դերասանապետների մասին:

Թուրքիայում հրավիրված գիտաժողովներին և նրա զեկուցումների հիմնական նյութը արևմտահայերի մշակութային ներդրումներին և նվերաբերում, ինչպես օրինակ՝ «Օսմանյան կայսրությունում հայկական տպագրական գործը և նրա ներդրումը թուրքական տպագրության զարգացման գործում»<sup>205</sup>, հայ-թուրքական հարաբերություններում նշանակալի դեր խաղացած առանձին անհատների ծառայությունների մասին հայտնի գրականագետ-լեզվաբան, թուրք և պարսկական գրականության լավագույն մասնագետ Ստեփան Կուրտլիյանի, հանրապետության հիմնի մշակույթ և գործիքավո-

րող, հայտնի երաժիշտ Էդգար Մանասի, Աբաթուրքի պաշտոնական ստորագրության հեղինակ Վահրամ Չերչյանի, մարզաշխարհի տարբեր քնազավառները (բոքս, ֆուտբոլ, աղետիզմ, հեծանվավազք) ներկայացնողների մասին: Հետաքրքիր էլ իշխուս թուրքական մշակութային հասարակայնությանը քանդակագործ Երվանդ Օսկանի մասին՝ «Առաջին արձանագործ վարպետը» հոդվածը<sup>206</sup>: Վերջինս էլ իր բարեկամ Օսման Համի բեյի հետ հիմնադրել Արվեստների Ակադեմիան (այսօր այն կոչվում է Միմար Սինանի<sup>207</sup> անվան, 1883թ.), պատրաստել նրա արձանային հավաքածուի ողջ կադավարները, Ստամբուլի ամենահետադրյալ թանգարաններից՝ Հնագիտության թանգարանը, թողել բազմաթիվ աշակերտներ:

Այս հրատարակությունները կարելի է դիտել որպես Թուրքիայում արևմտահայության ներդրման մասին համառոտ ակնարկներ :

Բարս Թուղլաճին թուրքական իշխանությունների համար նաև հայ համայնքը ներկայացնող անձ էր, որի հետ համատեղ մասնակցում էին տարբեր հայկական միջոցառումներին (օր. Ստամբուլի քաղաքապետի հետ միասին 1980թ. մարտի 1-ին նա է կատարում «Մարալ» հայկական պարալիմբի համերգի բացումը «Շան» կինոթատրոնի սրահում և նման բազմաթիվ ադիբների դեպքում):

**1981թ.** լույս է տեսնում Պալյան մեծատաղանդ ճարտարապետների գերդաստանի 9 հանճարեղ անունների պատմությունը, որն այսօր նույնպես է Ստամբուլի ճարտարապետության լավագույն հուշարձանների պատմության հետ, անբակտելի մաս կազմելով հայկական ճարտարապետության: Նրանք գործել են Մուստաֆա Գ-ից մինչև Աբդուլհամիթ Բ սուլթանների օրոք<sup>208</sup>:

**1983թ.** լույս է տեսնում մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն (1817-1900) նվիրված «Այվազովսկին Թուրքիայում»<sup>209</sup> գիրք-ալբոմը: Սա նաև պատմություն է Ստամբուլում Այվազովսկու և հայ համայնքի փոխհարաբերությունների մասին: Հայտնի է, որ այս շրջանում տաղանդաշատ նկարիչ Սլյուտիչ Ֆիլվանյանն այքան է հրապուրվում մեծ ծովանկարիչի արվեստով, որ մեկնում է Ս.Մետեբուրգ, կատարեագործելու իր արվեստը, ծանոթանալու գեղանկարչության ռուսական դպրոցին, որը ներկայացնում էր Հովհաննես Այվազովսկին:

**1984թ.** նոյեմբերին Ստամբուլի Աբաթուրքի անվան Մշակույթի կենտրոնում մեծ շուքով նշում էին թուրքական օպերային առաջին մեծության աստղ, պրինսդոննա, կոլորատուրային սուպրանո Մարի Լուիզ Գարագաչի (1901- ) գործունեության կեղտարյա հոբելյանը: Հայրը Աբդուլհամիդ Երկրորդի օրոք Ստամբուլի առաջին ծաղկավաճառողն էր բացել: Առնավուտ գյուղի Ամերիկյան աղջկանց կոլեջի շրջանավարտը ծայրը մշա-

203 Pars Tuğlacı, Sahnelerimizde İlk Türk Operası, *Yillar Boyu Tarihi* տարեգիրք, 1st., 10.1979.  
 204 Pars Tuğlacı, *Türkiyemizi İlk Fotoğrafçıları, Yillar Boyu Tarihi* տարեգիրք, 1st., 1979, Բ սուրբ, էջ 9. Հայ մշակութային ներդրումների շուքը հոդվածների մասին տես՝ գրքի առաջին գլխում:  
 205 Այս մասին տես Պոլսի «Ժամանակ» օրաթերթի 1979թ. դեկտեմբերի 20-ի համարում:

206 Pars Tuğlacı, *İlk Heykel Ustamız*, 1st., Yillar Boyu Tarihi, 01.1980. Երվանդ Օսկանի մասին տես մեր ժամանակի ակադեմիոր պոլսահայ արվեստաբան Գարո Զորթրեանի մեծարժեք գրքում (Garo Körkman, *Osmanlı İmparatorluğunda Ermeni Ressamları*, 1st., 2004, 2 cilt, 988s.), ինչպես նաև մեր՝ «Հայերի ներդրումը...գրքում»:  
 207 2020թ. Ստամբուլի Աբաթուրքի անվան մշակույթի կենտրոնի բացումը նախատեսվում էր անել Միմար Սինանին նվիրված «Քոչա Սինան» (Մեծ Սինան) ժամանակակից օպերայով, որը պատվիրվել է երկրի նախագահ Թայիպ Էրդողանի կողմից:  
 208 Այս մասին տես գրքի Ա գլխում:  
 209 Pars Tuğlacı, *Avazovski Türkiyece*, İstanbul, 1983.



կել էր մասնատրոներ Scarcelli և Achille Talarico հայտնի պրոֆեսորների մոտ, գլխավոր դերերգներով և համերգներով հանդես եկել Մտամբուլի առաջնակարգ թատրոնների բեմերում, հյուրախաղերով հանդես եկել եվրոպական բազմաթիվ օպերային թատրոններում: 1929 թվականից բեմ բարձրացած երգչուհին 1934թ. արդեն փայլել է դասական օպերաներում, կատարելով Աբդուլի «Տրավիատա»-ում Մարգարիտայի դերերգը: Երգել է համարյա բոլոր դասական օպերաների գլխավոր հերոսուհիների դերերգերը: Վերապատրաստվել է Իտալիայում, 1940-80թթ. նաև դասավանդել, երգիչների մի ողջ սերունդ դաստիարակել: Բարսեղ Թուղլաճյանը մեծարժան էրեկոյի գլխավոր բանախոսն է եղել: Նրա երկարաշունչ խոսքը ոչ միայն երգչուհու և նրա վաստակի, գործունեության ուղու մասին է եղել, այլ նաև թուրքական իրականությունում օպերային արվեստի, հայկական ներդրման մասին, սկսած սուլթան Սեյիմ Գ-ի շրջանից: Բարսեղ Թուղլաճյանի հավուր պատշաճի գրված այս հոդվածները «Ժամանակ» օրաթերթի արվեստաբան-լրագրողի, մշակութաբան գիտնականի հրապարակումներ են: Դրանք պարունակում են նաև հայ մասնագետների անուններ, որոնք այնքան են խամրել ժողովրդի հիշողության մեջ, որ շնորհիվ այս և նման գրությունների դրանք կրկին վեր են հանում անուններ, որոնք իրենց ժամանակին կարևոր և հայտնի անձիք են եղել, որոշակի՝ թուրքական մշակույթում իրենց ներդրմամբ: Սեր կարծիքով այս հանգամանքները կրկնակի արժեքալի են հոդվածները: Դրանց մի մասն էլ որպես բանախոս հանդես եկած Բարսեղ Թուղլաճյանի խոսքերն են<sup>210</sup>: Նման աղիթները քիչ չեն եղել մշակութային աշխույժ կյանք ունեցող պուլսահայերի մոտ: Հետագայում Բարսեղ Թուղլաճյանը մի քանի անգամ ևս անդրադարձել է Օսմանյան կայսրությունում օպերայի հիմնադրման մեջ հայկական ներդրմանը, ինչպես նաև օպերային թուրք աստղերին նվիրված հոդվածներ, գրքեր է հրատարակել:

Բարսեղ Թուղլաճյանը մամուլում և գիտական հանդեսներում գրականության մասին հանրագիտարանային, դասագրքային որակի, համրամատչելի հոդվածներ է հրատարակում<sup>211</sup>: Մտամբուլի թուրքական «Yillar Boyu Tarih» (Դարերի պատմություն) ամսագրում հանդես է գալիս Օսմանյան կայսրության առաջին լուսանկարիչների՝ Աբդուլահի եղբայրների մասին ընդարձակ հոդվածով<sup>212</sup>: Պալատական նկարիչ և լուսանկարիչ

Գևորգ, Հովսեփ, Վիչեն եղբայրները լուսանկարչության ասպարեզում Թուրքիայում մշակութային հեղափոխության հեղինակները դարձան: Նրանց գերազանցեցին իրենց մասնագիտական և գեղարվեստական որակով օտար լուսանկարիչներին և նախընտրելի դարձան պալատական շրջանակների, Աբդուլազիզ և Աբդուլմեջիդ սուլթանների, երկիր այցելող կարևոր հյուրերի համար: Նրանց մոտ լուսանկարվելը նաև զգացական որոշակի որակ էր ներշնչում մարդկանց: Եղբայրները լուսանկարել են Ֆրանսիայի թագուհի էմմանյուել, Իտալիայի թագավոր Վիկտոր Էմմանուելին, Եգիպտոսի Խուսիմի (փոխարքան), Ավստրիայի թագավոր Ֆրանց ժոզեֆին, Անգլիայի թագավոր Էդուարդին, Իրանի Շահ Նասրեդդինին, սերբ իշխան Միլանին, Բուլղարիայի արքայազն Ֆերդինանդին և այլն: Ավստրիայի թագուհի Ավգուստան Իզմիր իր այցելության ժամանակ նրանց հրավիրել է և որսորդական պալատում տարբեր դիրքերով նկարվել: Այդ նկարներից մեկը (պրոֆիլով) հինք է ծառայել մեղայի համար, որն այսօր պահվում է Վիեննայի Արվեստի պատմության թանգարանի նուսնիզմատիկայի (դրամների և մեդալների) բաժնում: Նկարիչ եղբայրներն իրենք էլ բազմաթիվ շքանշանների ու մեդալների են արժանացել: Այս հոդվածում հանդիպում ենք եղբայրներից Վիչենի կոմսափոխության տիտուր փաստին, որը հոդվածագիրը պատճառաբանում է նկարչի չափազանց ծանր նյութական վիճակում գտնվելու հանգամանքով:

Այս հոդվածին, նույն տարեգրքում, հաջորդում է Օսմանյան կայսրությունում հայերի մշակութային ներդրման մասին հաջորդ հոդվածը, որը պատմում է թուրքական բեմում առաջին օպերայի մասին<sup>213</sup>: Հոդվածի հիմնական մեխը Թանգիմարի շրջանի մեծազույց կոմպոզիտոր, իտալական երաժշտական կրթությամբ Տիգրան Չուխաշյանն է (1837-1898): Նա է 1874թ. հիմնադրել Osmanli Opera Kumpanyasi (Օսմանյան օպերային միությունը), նույն թվականին Տիգրան Գալեբեյանի հետ միասին, հուլիսին, մեկ ամսում 40-50 հոգիանոց օպերային խումբ կազմել, Բեյազիդի քաղի Պատերազմական մախարություն շենքի 800 տեղանոց արահում սկսել իրենց գործունեությունը: Մեկ շաբաթվա ընթացքում ներկայացումներ են տրվել նաև Քաղբրություն, Բեյոլլյուս: Օսմանյան կայսրության այս առաջին օպերային խմբի հետ է կապված թուրք լուսավորիչ Շինասի գործերի հիման վրա գրված «Բանաստեղծի անունությունը», «Գարոցական վարպետը», «Գարոցական շրջան», (Şair evlenmesi, Meklep Ustasi, Meklep Seyri) կոնիկական օպերաները, Թագվոր Նայսին և չուխաշյանական հայտնի «Իրիֆի խարդախությունները», «Ջյուս Քեհյա», «Լեբլեբիջի Հոր Հոր աղա» օպերաները<sup>214</sup>: 1875թ. 40 000-ով վարձելով Ֆրանսիական թատրոնը, 1876թ. հունվարին շքեղ ղեկորացիայով և հազուտաներով ներկայացվում է «Լեբլեբիջի Հոր Հոր աղա»-ն, որի հաջողությունը չափազանց մեծ է լինում: Այս ներկայացումը, երգերով հանդերձ, տարիներ շարունակ մտնում է հայ մյուս քստերախմբերի խաղացանկում ևս: Թուղլաճին նույն հոդվածում անդրադառնում է նաև որոշ ժամանակ Մտամբուլում ապրած, թուրք թատրոնի պատմության հեղինակ Աբդուլ թալատի գործին, հայ թատրոնի ու նրա դերասան-դերասանուհիների, իրասանապետների մասին հրաշալի հիշողություններ ներկայացրած քստերագետի

210 Այդ քվին է պատկանում «Ժամանակ» օրաթերթի (որ պաշտոնավարում էր Բարս Թուղլաճին) 75-ամյա հոբելյանին Բարս Թուղլաճի երկարաշունչ խոսքը, որ մշվել է նախ Պեռայի հայտնի «Օրել-Փալատում» և ապրիլի 28-ին Արաբուրդի անվան մշակույթի պալատում թուրք կատարող և մտավորական շրջանակների հետ: Այստեղ ևս նկատում ենք կարևոր պատմական սպորտմեներ: Որպես առաջին հայտնաբերած թուրքերեն մամուլ է ներկայացվում է «Մանգուլեջի էֆենդի» (1866-1896, 1901-1909, 1912-1917թթ.), մինչդեռ այն 20-րդն էլ այդ շարքում: Հասկանալի է, քանախոսը ցանկացել է տպավորություն գործել հանդիսատեսների վրա և «Ժամանակ»-ի պատմությունը կապել Կարապետ Փառնոսյանի ստեղծած հայտնի օրաթերթի հետ, որը 1910 թվականից խմբագրապետ, իսկ հետո որպես արտոմատեր ունեցել է «Մասնակ»-ի հիմնադիր Միսաք Քոչունյանին (Քասիմ): Մակայն այն կարելի էր անել քանավոր, և չիրապարակել նման քյուրիոսությունների քեղող փաստերով: Համերգի ծրագիրը ներառում է Բարս Թուղլաճի առաջնորդող խոսքը, իսկ ազգայրերից ու նկարներից հետո, վերջում՝ հաստիվածներ են տարբեր երկրների կենտրոնական պարբերականներում երգչուհու հյուրախաղերի, ելույթների մասին: Տես՝ «Մասնակ» օրաթերթ, Մտամբուլ, 28.04.1984. Տես նաև Pars Tuğlacı, *Kambıyo Servisinden Opera Sahnelerine. Yillar Boyu Tarih*, Ist., 1984թ. ocak.

211 Pars Tuğlacı, *Romanyada Yeni Bir Osmanlı Tarihi Yayınlandı*, Milliyet Sanat Dergisi, Ist., 25.06.1979.  
 212 Pars Tuğlacı, *Türkiyenin İlk Fotografçıları, Yillar Boyu Tarih* տարեգիրք, Ist., 1979թ. Բ տարի, էջ 9.

213 Pars Tuğlacı, *Sahnelerimizde İlk Türk Operası, Yillar Boyu Tarih* տարեգիրք, Istanbul, 1979թ. Բ տարի, հոկտեմբեր:  
 214 Հիշեցնենք, որ այս երեք օպերաների լիբրետոները գրված են եղել հայտատու թուրքերիմով:



չուխաշյանական օպերետների երաժշտության, եվրոպական ոճի դաշնավորման, ներկայացումների մասին կարծիքներին: «Լեդերիչի Հոր Հոր աղա»-ն ամենաբուն ընդունելության է արժանացել Եգիպտոսում, տարբեր երկրներում հյուրախաղերի ժամանակ, ելույթ ունենալով օպերետի հունարեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն թարգմանություններով: Օպերային խումբը ներկայացրել է նաև իտալական գործեր, իսկ «Օլիմպիա» (Արչակ Բ) օպերայից հատվածներ են կատարվել նրանց համերգային ներկայացումների ժամանակ:

Բարս Թուղլաճին մի ընդարձակ հոդված է գրում 123 տարի առաջվա հայ թատրոնի մասին<sup>215</sup>: Հոդվածը Թանզիմաթի շրջանում երկրի եվրոպականացմանն ուղղված երկու եվրոպացի սուլթանների՝ Աբդուլազիզի և Աբդուլմեջիդի շրջանում հայկական թատերախմբերի, դերասանապետների մասին է: Անուրանայի է հայկական թատերախմբերի դերը որպես Օսմանյան կայսրության լուսավորության, եվրոպական հեղափոխական գաղափարների ներթափանցման, անգրագիտության դեմ պայքարի, համաշխարհային գրական լավագույն գործերի թատերականացման հետ կապված ընդհանուր զարգացմանը միտված առաջամարտիկի առաքելությունը: Հոդվածն ավարտվում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական բեմում առաջին մուսուլման կին, ոչ պրոֆեսիոնալ դերասանուհի Աֆիֆեյի (Afife -1941) և 1923թ. թուրքական բեմում, 30 ամյա, առաջին րուբը մուսուլման դերասանուհու անվան հիշատակմամբ՝ Բեղիա Մուվահիթի (Bedia Muvahhit, Emine Bedia Şekir 1897-1994թթ.):

Մինչ Թուղլաճի այս հոդվածը թուրք լավագույն թատերագետ Մեթին Անդը (*Metin And*, 1927- 2008), թուրքերենի թարգմանելով Գառնիկ Մսեփանյանի երեք խառորները, 1972թ. սեղանին դրեց իր «*Tanzimat ve İstibdat Döneminde Türk Tiyatrosu*» ( Թանզիմաթի շրջանի ( 1839-1908թթ.) թուրք թատրոնի պատմությունը) գիրքը<sup>216</sup>, ուր համարյա ամեն էջում բարեխղճորեն հիշում է Գ.Մսեփանյանի «*Պարմությունը*»: Հորեղորս Թուղլաճիին նվիրած հատորները վերջինս Մեթին Անդին էր տրամադրել, փոխարենը հետո բերելով Մեթին Անդի գիրքը:

Թուրքական տպագրության 250 ամյակին նվիրված Ստամբուլում ղեկոններյան կոնգրեսին Բարս Թուղլաճին հանդես է գալիս «Օսմանյան կայսրությունում հայկական տպագրական գործը և նրա ներդրումը թուրքական տպագրության զարգացման գործում» զեկուցմամբ<sup>217</sup>: Մարտին, նույն «Yıllar Boyu Tarih» տարեգրքում լույս է տեսնում «*Թուրքական Գույեհերը՝ Մյուհենդիսյան Էֆենդին*» հոդվածը<sup>218</sup>:

Այն համառոտագույն պատմություն է Օսմանյան կայսրության մեջ գրատպության սկզբնավորման, նաև՝ օսմաներեն, լատինատառ թուրքերեն գրակառության, թարգմանական գործի, պարբերականների, գրամուկական, անգամ թղթադրամների ստեղծման ասպարեզում հայերի անուրանալի դերի մասին: Հիշատակվում են այս բնագավառի հայ հայտնի դեմքերը, նրանց գործը, սուլթաններ Աբդուլհամիդ Բ-ի և Մեհմեդ Ռեշադի կողմից նրանց մեծարան, պարգևատրումների մասին:

215 Pars Tuğlacı, *123 Yıl Önce Türk Tiyatrosu. Yıllar Boyu Tarih* տարեգիրք, Իստ.,06.1980.

216 Metin And, *Tanzimat ve İstibdat Döneminde Türk Tiyatrosu*, Իստ.,1972.

217 Մյուս մասին տես Պոլսի «*Փասնանակ*» օրաթերթի 1979թ. դեկտեմբերի 20-ի համարում:

218 Pars Tuğlacı, *Türk Gutenberg’i Mihendisyân Efendi*, Իստ., *Yıllar Boyu Tarih*, 1980թ.

Պոլսի «*Փասնանակ*» օրաթերթի<sup>219</sup> առաջին էջում Բարս Թուղլաճին հրատարակում է «Հանրապետության 57-րդ տարեդարձը և Թուրքիայի հայերը» թուրքերեն հոդվածը: Արարուրի կողմից լատինատառ թուրքերեն այբուբենի ընդունումից հետո, երբ անհրաժեշտ եղավ Արարուրի պաշտոնական ստորագրությունը ընտրելու խնդիրը, ապա անխընդարտությունը արվեց Վահրամ Չերչյանին: Չցանկանալով կանգնել մինչ արարուրյան հայ-թուրքական հարաբերությունների վրա, Բարս Թուղլաճին հիշեցնում է հայտնի լեզվաբան, պարսկական գրակառության մեծ մասնագետ Ստեփան Կուրտիկյանի երկու բանաստեղծությունները, նվիրված Հանրապետությանը: Հոդվածագիրը հանրապետական շրջանում երկրին կարևոր ծառայություններ և ներդրում ունեցած հայագի հանահատներին է թվարկում՝ հանրապետության հիմնի մշակող և գործիքավորող, հայտնի երաժիշտ Էդգար Մամասին, դոկ. Մամիկոնյանին, որի դեկավարած քառածայն հայկական երգչախմբով Հարիչյեի «Բացօթյա թատրոնում» *առաջին անգամ* կատարվեց այդ քայլերգը: Հիշվում է թուրքական մարզաշխարհի տարբեր բնագավառները (րոբս, խոտրոլ, աղեխոփ, հեմանվակար) ներկայացնողներ Արքին Սենեթյանին, Կարալիս Ջաքարյանին, Կարալիս Իսթանբուլյանին, Ջարեհ Քալիպաղչյին, Հակոբ Յավրումյանին, Գրիգոր Ջամբազյանին, կյանքի և մշակույթի ամենատարբեր ասպարեզներում արևմտահայության ունեցած ծառայություններին: Այս օգտակար հոդվածը թուրքերենով հայերեն օրաթերթում կարելի է հիշեցնում համարել մեր ժողովրդի լավագույն դերակատարությանը Թուրքիայում, որպես հայրենակիցների, քաղաքացիների<sup>220</sup>:

Բոլոր այս հոդվածների համար հարստագույն աղբյուր են հանդիսացել հայկական նյութերը: Ափսոս, որ հեղինակը որպես կանոն դրանց մասին չի իշխատակում:

Թուրքիայի Հայոց Պատրիարքարանի, Պատրիարք Շնորհք Գալուստյանի ստորագրությամբ 1984թ. պաշտոնական մի մանակ է ուղղվում Բարսեղ Թուղլաճյանին, ուր գնահատելով նրա վատասկը և գիտելիքները, առաջարկվում է Ստամբուլի հայկական եկեղեցիների մասին գիրք հրատարակել, որը «օգտակար պիտի լլլայ ոչ միայն մեզի, Թուրքիոյ մէջ ապրողներուս համար, լլլան անոնք հասարակ ընթերցողներ և կան պատնական ու հնագիտական ուսումնասիրողներ, այլ նաև արտասահմանի ընթերցողներու եւ հնագիտական պրպտումներու համար»<sup>221</sup>:

Ի պատասխան Թուրքիայի Հայոց պատրիարքության գահակալ Շնորհք Գալուստյանի, 1991թ. թուրքերեն, անգլերեն և հայերեն լեզուներով լույս լույս է ընծայվում «*Խորանալույի Հայոց եկեղեցիները*» գիրք այրում<sup>222</sup>: Գրքում առկա են գտել 686 գումաղոր և սև ու ճերմակ լուսանկարներ, երկու քարտեզ, 108 գծագրեր: Գրքում պատմվում է 301թ. հայ ժողովրդի թրիստոնեության ընդունման մասին: Գրքում արևմտահայության պատ-


219 Pars Tuğlacı. *Cumhuriyetimizin 57 Yıldönümü ve Türkiye Ermenileri*, «*Փասնանակ*» օրաթերթ Ստամբուլ, 20.10.1980.

220 Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի հանրապետությունում կյանքի տարբեր բնագավառներում, մասնավորապես մշակույթի ասպարեզում պատմական արժեքի ներդրումի մասին Թուղլաճիի թուրքական պարբերականներում հրատարակած հոդվածների և հարցազրույցների մասին տես «Բարս Թուղլաճին և արևմտահայ իրականությունը» գլխում:

221 Նաանակը գրվել է 1984թ. հունիսի 27-ին: :

222 Pars Tuğlacı, *Istanbul Ermeni Kiliseleri, Armenian Churches of Istanbul*, Բարսանուլուի Հայոց եկեղեցիները, Իստ., 1991, 452 էջ:

մոլորյուն է, հայ կրոնի և հոգևոր կենտրոնների մասին: Առանձին գլուխներ է հատկացվել Էջմիածնի, Նրուսաղեմի, Թուրքիայի հայ հոգևոր կենտրոններին, ապա՝ Պոլսի 33



և գավառի 6 կանգոն (Արևմտյան Հայաստանի) եկեղեցիներին, հայկական գեղեզմանոցներին: Օսմանյան կայսրության կազմավորման ժամանակ, Ստամբուլի գրավումը հետո Սուլթան Ֆարսիի կողմից Թուրքիայի Հայոց Պատրիարքության հաստատման և առաջին պատրիարքի՝ Բուրասցի Հովակիմի մասին<sup>221</sup>: Ժամանակի ընթացքում հայ առաքելական եկեղեցու կողքին ևս երկու հարանվանական եկեղեցիների կազմավորումը՝ (կաթոլիկ և բողոքական) մաս է կազմել արևմտահայության պատմության: Գիրքը մասամբ նաև ճարտարապետության պատմությունն է: Հայկական եկեղեցիները մաս են կազմում Ստամբուլ քաղաքի հուշարձաններին: Գիրքը նաև դրանք կառուցող ճարտարապետների մասին է: Նույն այն ճարտարապետների, որոնք ստեղծել են Թուրքիայի ամեն

ագեղեցիկ պալատները, դղյակներն ու ապարանքները, մզկիթները, աշտարակները, դամբարանները, գորանոցներ, վարչական շենքեր և այլն: 1840 թվականից, այսինքն Թանգունաթի շրջանի բարեփոխումների արդյունքում, կարծես թե մեղմանում են ոչ մտալուծան հպատակների նկատմամբ կամոնակարգումները, ինչպես նաև նրանց շինությունների վերաբերյալ գործող ստորացուցիչ օրենքները<sup>222</sup>: Վերագրվում են եվրոպական ճարտարապետական, հայկական ոճերի, գմբեթների, զանգակատների, շինությունների վրա տարածվող սահմանափակումները:

Հեղինակն օգտվել է Էջմիածնի, Նրուսաղեմի պատրիարքարանների, Ստամբուլի հայկական եկեղեցիների, ինչպես նաև Թուրքիայի վարչապետարանի արխիվներից, ձեռագիր և տպագիր աղբյուրներից, պարբերականներից, առանձին գրքերից: Գալով Թուրքիայի Վարչապետարանի և թուրքական արխիվային այլ յուրօրինակ, ապա դրանք

221 Բուրասցի Հովակիմի Պոլսո առաջին պատրիարք լինելու տարակարծությունների մասին տես հայտնի Ֆրանսահայ հայագետ Հայ Պերպերյանի հիշատակին ձուլված հոդվածում՝ Գևորգ Բաղդակյան, Պատմաբանասիրական հոդվածներ, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Ժառանգ, 2018, էջ 48-59:

222 Հայի տունը չպետք է ավելի բարձր լիներ հարևան մահմեդականի տնից: Հայկական եկեղեցիների գմբեթները չպետք է ավելի բարձր լինեին շրջակա մահմեդական շինություններից: Այսպես օրինակ, երբ Պալատները դիմել են Սուլթանին, որպեսզի թույլ տա իրենց կառուցող Դոմարտակչի շինարարությունից մնացած շինանյութերն օգտագործել Պեշիկթաշի եկեղեցու կառուցման համար, համաձայնությունը եղել է այն պայմանով, որ եկեղեցու գմբեթը դրսից չերևա: Տաղանդավոր ամիրա ճարտարապետների հեղինակած այս վտորկի եկեղեցին այսօր էլ ապշեցնում է իր ճաշակով ու գեղեցկությամբ:

փաստեր և վավերագրեր են, արևմտահայության հետ առնչվող, պատմական և քաղաքական արժեք ներկայացնող սուլթանական ֆերմաններ, կոնդակներ, որոնք վկայում են արևմտահայության նկատմամբ օսմանյան տարբեր սուլթանների օրոք երկրի վարած քաղաքականությունը: Գիրքը արևմտահայության կյանքի տարբեր կողմերի մասին է, բոլոր-հայ հարաբերությունների, առանձին եկեղեցիների, նաև գեղեզմանատների ու այնտեղ հանգչող անվանի մարդկանց մասին, որոնք հայտնի են եղել իրենց գործունեությամբ, երկրում ունեցած իրենց կարևոր ներդրումներով հանդերձ:

Պատմական հարուստ փաստեր պարունակող այս ուսումնասիրությունն իր հերթին կարևոր ներդրում է համարվել բուլքական մշակույթի զարգացման ուսումնասիրության բնագավառում: Գիրքը ջերմ ընդունելության է արժանացել թուրք և հայ շրջանակներում, որի ապացույցներից են մի շարք գրախոսականները<sup>223</sup>: Գրավաճառային ազդեցություններ են ունեցել, որ գիրքը հրատարակվել է Ստամբուլի Հայոց Պատրիարքության աջակցությամբ:

Գրքի մասին հրատարակված բազմաթիվ գրախոսականներից է «Cumhuriyet» թերթում Alpay Kabacalı-ի ընդարձակ հոդվածը: Այն սկսվում է Օսմանյան կայսրությունում հպատակ ժողովուրդներից հույների և արևմտահայության համար կարևորագույն երևույթից՝ հունական տիեզերական պատրիարքության և հայոց պատրիարքության հաստատումից, բուրասցի Հովակիմին պատրիարք կարգելու մասին Սուլթան Ֆարսիի 1461թ. որոշումից: Հեղինակը մանրամասնում է, որ հայ համայնքի գլխավոր հոգևոր հովիվը սկսել է «պատրիարք» կոչվել Սուլթանյան Քանունիի ժամանակաշրջանից՝ 1543 թվականից<sup>224</sup>: Ի թիվս օգտագործված աղբյուրների, նշվում է, որ հեղինակը աշխատել է նաև Թուրքիայի կառավարության արխիվում ևս: Հոդվածագիրը նկարագրելով գրքի բոլոր գլուխները, անդրադառնում է նաև հայ կաթոլիկ համայնքին, Պոլսում 12 կաթոլիկ եկեղեցիների թվում հայկականներին: Հոդվածում գտնում ենք 1961թ. հուլիսին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի և պատվիրակության լուսանկարը՝ Թուրքիա այցելության ժամանակ հյուրերի հուշանմուշներում ստորագրելիս:

Բարս Թուղլաճին Օսմանյան կայսրության և Թուրքիայի համար այս չափազանց կարևոր բնագավառներում հայերի ներդրումներին անդրադառնալով, կարծես հիշեցնում է նաև հայ-թուրք բարի վաճառությունների շրջանների մասին, որն այնքան կարևոր հանգամանք է հանդիսացել երկրի զարգացման, եվրոպականացման ճանապարհին:

1987թ. վերջին, ղեկավարելով ամսին Աքարուրթի մշակութային կենտրոնում տեղի է ունենում պոլսահայ «Քուլիս» քառերակն հայալեզու ամսագրի 40-ամյա (1946-1996) հորեկյանը: Որպես հիմնական բանախոս ելույթ է ունենում Բարս Թուղլաճին: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ավարտից հետո, դերասան, դրամատուրգ, բեմադրիչ, կինոյի, քառերակն սրահար Հակոբ Այվազը (1911-2006) 1946թ. ղեկավարել է 15-ին հիմ-

223 Alpay Kabacalı, Pars Tuğlacı'nın yeni bir büyük boyutlu çalışması 'İstanbul Ermeni Kiliseleri', Cumhuriyet օրաթերթ Ստամբուլ, 30.04.1992. Այս հեղինակը հավանորեն Թուղլաճի գործի գնահատողներից է և իր հոդվածներով անդրադառնում է նրա մի շարք հրատարակությունների կենտրոնական պարբերականներում: Տես նաև՝ «Cumhuriyet»-ի լրագրողի հիացական հոդվածը կղզիների մասին գրքի առթիվ. Alpay Kabacalı, Pars Tuğlacı'dan bir yapıtı, Tarih Boyunca İstanbul Adaları, Cumhuriyet, İst., 18.06.1992.

224 Alpay Kabacalı, İstanbul Ermeni Kiliseleri, Cumhuriyet», İst., 1991.



նադրում է տարածաշրջանում կինոարվեստի ու թատերարվեստի մասին այս հրաշալի անսպասելի, որի նաև խմբագիրն է հանդիսանում<sup>227</sup>: «Քուլիս»-ը սիրելի էր ոչ միայն հայ ընթերցողներին, այլև ճանաչում է ունեցել Թուրքիայի արտիստական շրջանակի կողմից: Մև և ճերմակ տպագրությամբ ամսագիրն աչքի է ընկել իր գուժովը շապիկներով, թուրք, հայ կինոյի, թատրոնի աստղերի, արվեստագետների նկարներով, որոնց գերակշիռ մասը մակագրված էր շատ շատերի խաղղուններ եղած Հակոբ Այվազին: Ամսագիրն անդրադարձել է ոչ միայն Թուրքիայի կինոյի ու թատրոնի աստղերին, այլև սփյուռքի և Հայաստանի արվեստագետներին, նրանց Ստամբուլի հյուրիաստիների մասին արվեստաբանական հոդվածների հրատարակությամբ, հարցազրույցներով:

Բարս Թուրլաճիի ամուլը տեղ է գտնում հայ գրողների մասին հատորներում, ինչպես օրինակ 1990թ. Ստամբուլում Սահակյան սամուց միության «Արա Գյուլդիի Ոսպանահեղեն Հայ գրողներ» գրքում (էջ 26-27): Իր հերթին, գիտնականը շարունակում է հայ մշակույթի, անվանի անհատների, գրատպության և ճարտարապետության մեջ հայկական ներդրումների մասին գրել թուրքական կենտրոնական պարբերականներում, գիտա-հանրամատչելի ամսագրերում: Դրանց մեջ հսկայական փաստագրական նոր նյութ կա: Նյութեր և ամուլներ, որոնք թուրքական հասարակության որոշակի խավեր փորձել և փորձում են մոռացության տալ, խեղաթյուրել, բուրբացնել: Այնպես որ նրա այս ջանքերը միշտ չէ որ երախտագիտական զգացումներ են առաջացնում Թուրքիայում, նույնիսկ առաջադեմ և դեմոկրատ հորջորջվող մտավորականության շրջանակներում: Բարս Թուրլաճիի որոշ հրապարակումներ, ինչպես օրինակ նրա «Հայկական հանրագիտարանում» ևս հայկական հրատարակչական տների ու տպարանների մասին նրա հոդվածը, Թուրքիայի տարածքում հայկական տպարանների, պարբերականների ու գրքերի ցուցակը կարևոր փաստաթուղթ է, որ ներառում է 1565-1923 թվականները: Այն ակամա տեսանելի է դարձնում հայ բնակչության նկատմամբ եղած կրոնական և ազգայնական բացահայտ քաղաքականությունը: Ափսոսում ենք, որ մնա կարևոր նյութերում, ցանկերում, մատենագիտություններում սպրդել են բազմաթիվ անճշտություններ, կապված նույն հրատարակության տարբեր տարիքների, հեղինակների անունների, տիտղոսաբերքերի, տպարանների շփոթության հետ, որը գուցե բացատրելի է նման առեղծիքի հրատարակչական նյութերի հետ աշխատելիս:

Անկարելի է չհաստատել այս իրողությունը, որ իր գործունեության ողջ ընթացքում գիտնականի համար կարևոր ուղեմիջոցներից է եղել թուրք-հայ հարաբերությունների միջև ժամանակի բացած ըջմամանքի որոշակի վիճը, որի անճնացայտում դրսևորվում էր 1915թ. Հայոց ցեղասպանությունն էր, որը ամենևին չամոքված տարիների ընթացքում է և որպես ժառանգություն անվատահույս սև սպի մնաց երկու ժողովուրդների համար: Այս իմաստով ողջունելի է տարիներ շարունակ Թուրքիայում, առավել ևս նրա

սահմաններից դուրս որոշ թուրք առաջադեմ մտավորականների վերաբերմունքը, այդ մեծ ողբերգությամբ ճիշտ գնահատական տալու և սեփական ժողովրդի մեղքի ընդունումը: Գաղով Բարս Թուրլաճիին, մա ուսումնասիրողի իր անասիրտությամբ հավասար աններքելի փաստերի հիման վրա հրատարակված բուրբերեն և անգլերեն գրքերով, հոդվածներով անընդհատ փորձել է արևմտահայության ունեցած մեծագույն ներդրումը, թուրք-հայ փոխհարաբերությունների, փաստության ու հարգանքի ժամանակներն ի ցույց դնելով՝ մեղմել այդ ըջմամական գիտակցությունը: Ժամանակի աս ժամանակ թուրքական պարբերականներում ակամատես ենք լինում այս զգացողության ու գործունեության ապացույցներին: Նման հոդվածներից կարելի է համարել Հայաստան այցելած կարևոր պաշտոններ ունեցած թուրք պետական այլերի մասին հոդվածը<sup>228</sup>: Հողվածում պատմվում է Մսակալյում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի (Volkan Vural) 1991թ. ապրիլի, վարչապետ Իսմեթ Ինյունյուի ժամանակ (İsmet İnönü) 1935թ. հուլիսին, Թուրքիայի 6-րդ նախագահ Ֆահրի Էրուրուլուրի (Fahri Korutürk) 1964թ. սաստոյա այցելությունների, 2008թ. Թուրքոս Գյուլի «Ֆուտբոլային դիվանագիտական» երևան այցելության մասին<sup>229</sup>: Վերջինիս այցը որպես «դավաճանություն» էր ընկալվել ազգայնական բուրբերի կողմից:

Թուրքական հասարակությանը և կառավարական շրջանակներից հետաքրքրել են Ս.Է.Կյմիսձում կաթողիկոսական և Պոլսում պատրիարքական ընտրությունները: Այս աթոլի կենտրոնական պարբերականներում թուրք լրագրողները հարցազրույցներ են ունեցել ոչ միայն Պատրիարքարանի հոգևոր խորհրդի անդամների, այլև աշխարհական հայտնի դեմքերի հետ, այդ թվում Բարս Թուրլաճիի հետ: Վերջինս մնա հարցազրույցներում առիթ է ունեցել խոսելու հայ ժողովրդի քրիստոնեության ընդունման, կրոնական երեք հարանվանությունների պատմության, Պոլսի հայոց պատրիարքարանի պատմության մասին: Կարևոր էր ինչևէ Կոստանդնուպոլսի գրավումից հետո Սուլթան Ֆաթիհի կողմից Թուրքիոյ Հայոց պատրիարքարանի հիմնադրման մասին՝ հունական Տիգեբրական պատրիարքության և քիչ ավելի ուշ՝ հրեական Խալխաճուրյան հաստատման հետ միասին: Կարևոր էր նաև ինչևէ, որ Սուլթան Ազիզի տիրապետության շրջանում 1863թ. վավերացվեց Օսմանյան կայսրությունում «Արևմտահայերի ազգային սահմանադրությունը», որի նպատակն էր ժողովրդավարական հիմքերի վրա դնել Կ.Պոլսի պատրիարքարանի գործունեությունը, կարգավորել Օսմանյան պետության և արևմտահայության փոխհարաբերությունները: Բարս Թուրլաճին նույնիսկ հոդված է տպագրում «Թուրքիայի հայերը և ս.Էջմիածնի կաթողիկոսությունը» վերնագրով, պատմական ակնարկից անցնելով Լոզանի խորհրդարանում, ապա Վազգեն Ա Անճնայի հայոց կաթողիկոսի ընտրության պատմությանը, որին մասնակցում են 5 պոլսահայեր: Հոդվածի ավարտին հեղինակն ակնկալում է, որ առիթ չի լինի հարըը շարչկելու և հակապոպազանդիստական ելույթներին սնունդ տալու<sup>230</sup>: Այս թեմայով նույն օրը հարցազրույց է տպագրում նաև «Cumhuriyet» օրաթերթը:

228 Pars Tuğlacı. *Ermenistanı Ziyaret Eden İlk Türk Yetkili Kimdir ? Cumhuriyet*, İst., 28.04.1991.  
 229 Այս այցելությունների մասին հեղինակը մասնավորում է: «Երևանի պատմությունը» հայերեն 308 էջանոց գրքի 187-188 էջերում, այցելուների վկայությունների մասին բաժնում:  
 230 Pars Tuğlacı. *Türkiye Ermenileri ve Eçmiadın Başpatrikliği, «Milliyet»*, İst., 9.03.1995.

227 Հակոբ Այվազն իր թատերական գործունեությունը սկսել է 1929թ., մասնակցել հայկական թատերականների բուրբերն ներկայացումներին: 1946 թվականին, երբ վերադառվել է Ստամբուլի հայկական թատրոնը, Այվազը խաղացել է «Երիտասարդաց թատերախմբում»: Իսկ արդեն 1956 թվականին կազմակերպել է Մշակութային միության «Փոքր թատերախումբը», բեմադրել մի շարք պիեսներ: «Քուլիսի» 50 տարիների տպագրության զարգացումը հետո քրթակել է Ստամբուլի թուրքալեզու և մասամբ հայալեզու «Ակոս» թերթին, հուշեր գրել սուրբեր ակամավոր գործիչների մասին:

**1991թ.** Պոլսի Մխիթարյան սանուց միության հրավերով հունվարին Թուղլանին զեկուցում է կարդում «Գրիգոր Չոհրապի կյանքը և գործերը» քննադով: Ավելի ուշ, 2008թ. զիտնականն այս մասին զիրք էր հրատարակելու:


Հայագիտական տարրեր բեմաներով նա զեկուցումներ է կարդում Կանադայում, Մոնրեալի «Պոլսահայերի միությունում», Նյու-Յորքում, Դեբրոլդում, Բուարնում հանդես գալիս այդ քաղաքների հայ ռադիոլսողների համար, հանդիպումներ ունենում հայ բարեգործականի անդամների, մասնավորապես նրա նախագահ Ալեք Մանուկյանի հետ: Ի պարզիվ նրա ամենուր կազմակերպվում են սեծարաների երկուներ:

Նյու-Յորքում նա հանդիպումներ է ունենում Թուրքիայի Մշակույթի նախարարությունում հանդիպած իր ծանոթ բուրք գործիչների, Նյու-Յորքի քաղաքապետ Կոլի (Kohl) հետ, քննարկում Թուրքիա, մասնավորապես Սրասնուլի կղզիներ շրջապայության կնդր խմբերի հարցը: Նյու-Յորքյան հանդիպումներից հետո նա այցելում է Գրիգոր Չոհրապի դպրերը Դոլորես Լիբերանին (մարտին):

**1992թ.** «Сем» հրատարակչատունը լույս է բեմայում «*Ermeni Edebiyatı'ndan Seçkiler*» (Հայ գրականության ընտրանի) հատորը<sup>21</sup>: Իրականում այն իմենակամում հայաստանարակ ժամանակակից գրողների ստեղծագործությունների ծաղկարալ է:

Գրքի բնագրեմը Մուշեղ Իշխանի խոսքերն են՝ «...Հայերեն լեզուն հայերի դունն է, հայերի հայրենիքը...» Գրքի առաջին 12 էջերը բուրք հայտնի գրողների, մտավորականների ակնարկներն են հայ գրականության մասին (Mehmed Emin Yurdakul, Talat Halit Salman, Aziz Nesin, Yaşar Kemal, Melih Cevdet Anday, Necati Cumalı, Tarik Dursun K., Şahabettin Süleyman, Hamdullah Subhi, Abdullah Cevdet, Süleyman Nazif): Այս հողվածները հայ գրականության համառոտագույն, բայց ոչ բուռնի, հետաքրքիր, անալիտիկ պատմություններ են ներկայացնում, սկզբից մինչև մեր օրերը՝ անգամ՝ բուրքական գրականության հետ զուգահեռներ, մտայություններ փնտրող: Սկսվում է բուրք նշանավոր պատմաբան, գրականագետ, պետական գործիչ (1950-55թթ. արտգործնախարար) և «Թուրքիայի պատմական ընկերության» երկարամյա անդամ Ֆուադ Քյոփրուլուի (Fuad Köprülü 1890-1966) հայ գրականության մասին հայտնի հողվածների մեքերքմամբ: Ինչպես հայտնի է, բյուրքագիտության գիտական այս գաղափարախոսի մասծումները շատ հեռու են իրականից: Նա հայտնի է որպես բուրք պատմագրության մեք պանրուրքիստական ուղղության կողմնակից, փործել է ցանկացած նկատում վերագրել «բուրք ժողովրդի տաղանդին»՝ սկսած հայ աշուղական գրականությունից, մասնավորապես հայատառ բուրքերեծում մեք հասած ստեղծագործությունները և դրանց հեղինակներին որպես բուրքական աշուղական մշակույթի մաս ներկայացնելը:

Գալով մյուս բուրք գրողների մտածումներից, ապա դրանք հայ գրականության մասին բավականին իրազեկ, հետաքրքիր մտքեր ու համեմատություններ են ներկայացնում: Այսպես օրինակ, «Սասունցի Դավիթ» էպոսը «Դեղն Քորբուղ»-ի հետ է համեմատվում: Հայ ինն և միջնադարյան գրականության մասին հատվածում անգամ անդրադարձ կա կին երգահան Սահակաղուխտ Սյունեցուն (8-րդ դ): Ափսոսանքի խոսքեր կան, որ հայերենից բուրքերեն և բուրքերենից հայերեն շատ բարգամություններ չեն



© Faris Tuğlacı  
Dizayn: Çiğdem Kızılaylıoğlu / Faris Tuğlacı  
Baskı: Dostluk Yayınevi  
İstanbul, 1992

կատարվել: Այս էջերում տեղ են գտել Բարս Թուղլանիի և բուրք գրողների, նաև՝ Վիլյամ Մարտյանի հետ ստեղծիկ նկարները: Բարս Թուղլանիի առաջարանին հաջորդում են հայերեն լեզվի և գրչության ծագման մասին շուրք 50 էջանոց մանրամասն պատմությունը՝ տարրեր դարերի մեր գրականության, հայատառ բուրքերենի, պատմիչների, գրողների մասին և կրկին՝ բուրք և եկրուպացի մտավորականների կարծիքները հայ գրականության մասին, բազմաթիվ լուսանկարներ, գրքերի շապիկների նկարներ...

Հայ գրականության մասին ընդարձակ ներկայացումից հետո, 103 էջից սկսվում են հարվածներ հայ գրողների ստեղծագործություններից: Նախ՝ հեղինակի նկարն է՝ համառոտ ներկայացմամբ, ապա հարված որևէ ստեղծագործությունից: Հարբուրիցը սկսվում է այբբենական (բուրքերենի) կարգով՝ Ռաֆայիլ Արամյանի «Թագավորի 7 արևալները» պատմվածքով: Նրան են հաջորդում՝ Գևորգ Արշակյանը, Չապիկ Ասարտը, Արիկ Ավագյանը, Վիկտոր Բալայանը, Հակոբ Պարոնյանը, Արտզես Պերոյանը, Կահն Պողոսյանը, Տեղիշ Չարինը, Արշակ Չոպանյանը, Արմեն Դորյանը (Հրաչյա Մուրենյան), Չապիկ Եսայանը, Սերգեյան Կուրբիկյանը (Հայաստանի գրողներից), Խաժակ Գյուլնազարյանը, Ռուբեն Հովսեփյանը, Ավերիք Իսահակյանը, Մուշեղ Գալշոյանը, Չորալր Խալաֆյանը, Հրաչյա Քոչարը, Լևոն Լարինը, Հրանդ Մաքրոսյանը, Հովհաննես Մելրոնյանը, Մանուկ Մնացականյանը, Հակոբ Մելնուրի, Սայաթ Նովան, Երվանդ Օրբանը, Ռուբեն Սևակը, Գեղամ Սևանը, Երովանը (Երվանդ Սրմաբեղյանյան), Շահան Շահնուրը, Հովհաննես Շիրազը, Հովհաննես Թուանյանը, Պերոս Դուրյանը, Ռուբեն Չարդարյանը, Պերն Չեյրունցյանը: Ավարտ

231 Pars Tuğlacı, *Ermeni Edebiyatı'ndan Seçkiler* İst., 1992, 420s.



վում է *Գրիգոր Չոհրապով* և *Բարս Թուղյանիի Չոհրապի դարեր՝ Դոլորեսի հեթ լուսանկարով*:

Թուրքերենով այս գրքում ոչ միայն ժամանակակից գրողների հասընտիր պատահիկներ են, հայ դասականների գործեր, որոնց կազմողը ծանոթացնում է թուրք և բրբախտ շրջանակներին, այլև համոզված է, որ այն «բարեկամության ճանապարհ է», լավագույն միջոց իրար կողքի ապրող ժողովուրդներին միմյանց ճանաչելու, գնահատելու համար: Գրքում անդրադարձ կա այն թուրք գրողներին, մտավորականներին, որոնք առնչվել են «հայ գրականության» երևույթի հետ, ազդվել նրանից (Mehmed Emin Yurdakul, Abdullah Cevdet Karlıdağ, Şahabeddin Süleyman, Hamdullah Suphi Tanrıöver): Բիբլիոգրաֆիայում հայ և օտար հայագետների աճուններն ու գործերն են: Գիրքը ողջունել են թուրքական մամուլի էջերում: Այս այնքան տարբեր ու զարմանալի ընտրությամբ հայ գրողների ընտրանին կարող է մասնագիտական մոտեցման, մասնավորապես ընտրված գործերի ու դրանց բարգձմանության (արձակ և չափածո երկերի) որակի առումով: Հրատակության անդրադարձել են բազմաթիվ մտավորականներ, հայտնի գրողներ, այդ թվում՝ պրոֆ. Թալաթ Սաիի Հալմանը (Talat Sait Halman, 1931-2014), Ազիզ Նեսինը (Aziz Nesin, 1915-1995), Յաշար Բենալը (Yaşar Kemal, 1923-2015), Մելի Անդեթ Անդայը (Melih Cevdet Anday, 1915-2002), Օքթայ Աքբալ այր (Oktay Akba, 1923-2015), Գյունգոր Դիլմենը (Güngör Dilmen, 1930-2012), Նեչաթի Ջումալը (Nacati Cumali, 1921-2001), Թարիք Դուրսուն Բ. (TariK Dursun K.,1931-2015) և ուրիշներ: Նրանք ողջունելով հանդերձ համաընտիրը, խտատվանում են, որ իհարձ են 1500-ամյա հայ գրական հարստության համատարա բարգձմանությանը, այն կարևոր է և հարկ է շարունակել, երկու ժողովուրդները պիտի ճանաչեն միմյանց մշակույթը: Հատընտիրը նորովի ճանաչել է տալիս Անատոլիայի տարածքում ապրող ժողովուրդների գրականությունը, ստիպում է անցածը և գոյություն ունեցած մշակույթը (Անիի օրինակով նկատելու ունեն ման ճարտարապետությունը) հիշել, ի հեճուկս «պետական մշակույթի» քաղաքականության, որ հայ թատրոնը թուրք գրականության մարդկանց է կյանք մղել և այս անձնի համար պետք է ողջունել հատընտիրի կազմող Բարս Թուղյանիին<sup>232</sup>:

**1993թ.** լույս է տեսնում Պալյան ճարտարապետական գերդաստանի մասին գրքի Բ տպագրությունը՝ 743 էջով<sup>233</sup>: Բարս Թուղյանին հաճախ է հրավիրվում Պոլսի վարժարանների կողմից հանդիպումների և դասախոսություններ կարդալու: Այսպես օրինակ, էլսայան վարժարանի նախաձեռնած «Հայկական տպագրության և պարբերական մամուլի 200-ամյակին» նվիրված սեմինարին գիտնականը զեկույցում է կարդում «*Թուրքիայի գրագրությունն անցյալում և այսօր*» բեմայով: Այս գիտական հավաքին

232 Թուրքական հեռուստատեսության 6-րդ ալիքով գրող Սունայ Աքբը (Sunay Akın) ներկայացնում է «*Ermeni Edebiyatı'ndan Seçkiler*» գրքից բանաստեղծություններ (12.12.1994): Նույն ամսին Ստամբուլի *Tarih ve Toplum* գիտահանրամատչելի ամսագրում լույս է տեսնում զիանակալի «*Հայ տպագրությունն այսօր և վաղը*» րոլքերին հղվածը (Ermeni Basımın Dünü ve Bugünü, 12.1994թ.):  
233 Այսօր Թուրքիայի համալսարաններում որպես գիտական բեզերի նյութ հանդիպում ենք Ստամբուլի ճարտարապետության, Պալյանների, առանձին պալատների Յըզըզի, Գոմարսալեյի, քաղաքաշինական քննմանի շուրջ գործեր: *Şua Düruba Kocaisik*. «T.C. Yıldız Teknik Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Sanat ve Tasarım Ana Bilim Dalı Sanat ve Tasarım Yüksek Lisans Programı Yüksek Lisans Tezi II. Abdülhamid'in Yıldız Sarayı / Mimari Mekânlar ve Dönemin...

անդրադառնում է Պոլսի «Ժամանակ» օրաթերթը<sup>234</sup>:

1995թ. Սան Ֆրանցիսկոյում «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 23-րդ կոնգրեսին<sup>235</sup> Բարս Թուղյանին իր զեկույցման մեջ անդրադառնում է ամերիկահայ ամվանի գրող Վիլյամ Մարոյանի, Երկրորդ աշխարհամարտի հայ հերոս գեներալ Ջորջ Մարտիկյանի կերպարներին: Սան Ֆրանցիսկոյում նա հյուրընկալվում է Սեդոմո Թեֆլիյանի եղբոր դստերը՝ տիկ. Հնազանդին. լինում հայկական շրջանակներում:

1995թ. մարտի 23-ից ապրիլի 4-ը, Այվազուկու ֆոնդի և Թանգարանի հատուկ հրավերով լինում է Ֆեդոսիայում: Ֆեդոսիայից Թուղյանին մեկնում է Երևան, որպես պատվավոր հյուր ապրիլի 7-ին մասնակցելու Ձեյթուն Բաղամասուն Ռուբեն Սևակի անվան դպրոցի բացման արարողությանը՝ բանաստեղծի դստեր՝ Շասիրամի հետ միասին: Ապրիլ 9-ին ս.Էջմիածնում նա ներկա է գտնվում նորընտանի Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, համաճարել աստղաֆիզիկ Վիկտոր Համարոնյանը, կատաղեմիկոս Գուրգոյանի հետ միասին (ապրիլի 13-ին): Ապրիլ 19-ին իր գիտական վաստակի, պատմագիտության մեջ ունեցած իր ներդրման համար նա ընտրվում է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի Պատվավոր անդամ: Նա նաև հանդիպումներ է ունենում քաղաքական գործիչների հետ: Մենք նկատի ունենք Նախագահական նստավայրում Հայաստանի նախագահ Լևոն Տեր Պետրոսյանի և նրա խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի, ապա նաև արտգործնախարար Վահան Փափազյանի հետ, որը քննարկվել են Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական, տնտեսական և մշակութային հարաբերությունները հաստատելու հնարավորության հարցերը: Ապրիլի 22-ին ս.Էջմիածնում Բարս Թուղյանին ընդունում է Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Ա Հայրապետը, որը մինչ այդ Կիլիկիոյ Մեծի Տանն Կաթողիկոսն էր: Մեծ մտավորական, հոգևոր գործիչ Գարեգին Ա-ի հետ Թուղյանին ծանոթացել էր դեռևս 1976թ. Անթիլիաս այցելության ժամանակ: Մեկժամյա մտերմիկ առանձնագրույցից հետո նրան էր նվիրել իր երկու գրքերը: Ս.Էջմիածնում հանդիպումից հետո Արամ Խաչատրյանի մասին իր հուշերով, անդես է գալիս կոմպոզիտորի անունը կրող երևանյան տուն-թանգարանում: Նրա պատմական հանդիպումների շարքում՝ Մատենադարանում և Ազգային գրադարանում կազմակերպված ընդունելություններն էին, ապա՝ հանդիպում ամերիկահայ հայագետներ, պրոֆեսորներ Վահագն Դադրյանի և Ռիչարդ Հովհաննիսյանի հետ: ՀՀ ԳԱ Փիլիսոփայության ինստիտուտը նրան ընտրում է «Ակադեմիական խորհրդակցությունների ինստիտուտի անդամ»: Բարս Թուղյանին, իր երբին հարցազրույցի է ունենում Լևոն Տեր Պետրոսյանի գլխավոր խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի հետ, որը տպագրվում է օրեր անց Ստամբուլի «Cumhuriyet» թուրքերեն օրաթերթում (14.05.1995) և անգլերեն լույս տեսնող «Turkish Daily News» թերթում (22.06.1995): Հեղվածագիրը մտահոգիչ է համարում երկու հարևան երկրների միջև քարի հարաբերությունների հաստատման ուղղված ջանքերի անարդյունք լինելը, այն համարելով Թուրքիայում նախաստանյան տեսակետների, քաղաքականության բյուր, միտումնա-

234 Տես «Ժամանակ» օրաթերթ, Ստամբուլ, 15.10.1994թ.  
235 Տարիներ շարունակ ամենամյա այս կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու համար Բարս Թուղյանին պաշտոնական հրավերներ է ստացել, ելույթներ ունեցել զեկույցումներով:

վոր խելաբարյությունը, անհիմն լուրերի տարածումը, թշնամանքի մթնոլորտի ստեղծումը: Թուրքական Չ-ըդ հեռուստակայանը հատուկ հաղորդում է նվիրում այս հարցազրույցին, որն այնուհետև կրկնվում է մի այլ հաղորդաշարում: Հոդվածն ամբողջությամբ տպագրում է նաև «Քուլիս» ամսագիրը<sup>236</sup>:

**1997թ.** Բարս Թուղլաճին Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Սիրիայի մասնաճյուղի հրավերով մեկնում է Գամասկոս, Հալեպ<sup>237</sup>: Հանդիպումներ է ունենում Թուրքիայի դեսպան Ուրար Ջիլալ (Uğur Ziyal)-ի հետ, հյուրընկալվում հայկական դեսպանատանը: Արժանահիշատակ է երկու երկրների դեսպանների և նրանց կանանց հետ համատեղ լուսանկարը (26.05.1997): Սիրիական օրերն անցնում են լեցուն ծրագրով հայկական դպրոցներ, միություններ, եկեղեցիներ, մտավորականներ, ինչպես նաև այցելություն Սիմանի կառուցած սգկիթները, դասախոսություններ:

Հունիսի մեկին Թուղլաճին Սիրիայից Երևան է մեկնում: Երևանյան օրերը ևս խիստ ծրագրված են լինում: Կարևոր հանդիպումներից պետք է հիշել Հայաստանի նախագահ Լևոն Տեր Պետրոսյանի, արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի<sup>238</sup>, Վեհապետ Հայրապետ Գարեգին Ա-ի, բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի, արվեստաբան Ռուբեն Ջառյանի, Հրայա Քոչարի ընտանիքներին, Պետական երգչախմբի ղեկավար, պոլսեցի խմբավար Հովհաննես Չեքիճյանի, Արցախում Նաիրա Մեյրումյանի, Լեոնարդ Պետրոսյանի, հոգևոր առաջնորդ Պարզև սրբազանի, Երևանում մի խումբ բուրբ նկարիչների ցուցահանդեսին և այլն: Հրայա Քոչարի կրտսեր դստեր՝ մարդաբան Նվարի Քոչարի հետ այցելում է Քաղաքային Պանթեոնում մեծ լեզվաբան Հրայա Աճառյանի շիրիմին: Թուղլաճին է հանձնվում Հայոց Փիլիսոփայական ակադեմիայի խորհրդակցանների ինստիտուտի անդամի դիպլոմը՝ անվանի փիլիսոփա, ակադեմիկոս Գևորգ Բրուտյանի ստորագրությամբ: Սևանում, հոգևոր ճեմարանում ևս արևմտահայության մասին զեկուցում է կարդում: Նրան «Պատվավոր պրոֆետոր»-ի դիպլոմ են շնորհում: Ուղղաթիռով թռչում է Արցախ, ուր նրան ընդունում է Հանրապետության վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը (1953-1999):

Երևանյան յուրաքանչյուր այցելության ժամանակ նա անպայման մի քանի անգամ գալիս էր Գեղատի ավիան ավարդ հորեղորս, Գամեկի Ստեփանյանի տուն, ուր իրեն հարազատի նման էր զգում՝ միշտ իր հարցերով լեցուն տեսարկների հետ, որոնք մինչև չէր լրացնում, չէր զնում:

**1999թ.** Կիպրոսի Մեյքոնյան կրթական հաստատության 1951թ. շրջանավարտ Բարսեղ Թուղլաճին մեյքոնյանցիների և ՀԲԸՄ հրավերով մեկնում է Լատնակա (բուրբ. Լեքոչա), դասախոսությունների շարք կարգալու և հանդիպումներ ունենալու համար: Չեկուցումների բեմաներն էին՝

- Տիգրան Չուխաչյան, հայկական օպերայի հիմնադիրը
- Պալան ընտանիքի դերը Օսմանյան ճարտարապետության մեջ
- Պոլսահայ եկեղեցիների մասին
- Օսմանյան կայսրության մեջ արևմտահայերը և հայ ժողովրդի անկախությունը
- Կիպրոսից հետո ՀԲԸՄ-ի հրավերով Աբենք է այցելում: Նրան ընդունում է Ալադեմիայի հախազան պրոֆ. Յորգոս Միթոսպոլոսը (*Giorgos Mitsopolos*): Աբենքի հայ համայնքի «Արարատ» կենտրոնում նա զեկուցումներ է կարդում Գրիգոր Չոխրապի և Պալան ճարտարապետական գերդաստանի մասին:

Պալերնոյում միջազգային գիտաժողովից հետո նա 1999թ. Եգիպտոսի ՀԲԸՄ-ի հրավերում այցելում է Կահիրե:

Բարս Թուղլաճին տեղի Ամերիկյան համալսարանում «Պալան ընտանիքի դերը օսմանյան ճարտարապետության մեջ» թեմայով զեկուցում է կարդում: Հայկական շրջանակների համար նա դասախոսում է «Պալան ընտանիքի դերը օսմանյան ճարտարապետության մեջ», «Գրիգոր Չոխրապը որպես հասարակական և քաղաքական անձ», «Հայկական օպերայի հիմնադիր Տիգրան Չուխաչյանի կյանքը և գործը», «Հուշեր Արամ Խաչատրյանի մասին»: Հայ համայնքի հետ հանդիպումներում արժանահիշատակ է անվանի ժողովրդագրիչ Ալեքսանդր Սարուխանի հետ հանդիպումը: Եգիպտոսում նա հյուրընկալվում է բուրբական և հայաստանյան դիվանագետական և հյուպատոսական ներկայացուցչություններում<sup>239</sup>, լինում հայ եկեղեցու առաջնորդարանում, թեթրիի խմբագրություններում, դպրոցներում, գերեզմանոց, օպերայում, քանդակարաններում, այցելում բուրբերը, մեծ թաղաքներում հայերի հետ կապված վայրեր, փողոցներ: ՀԲԸՄ-ում կազմակերպված հրավերի ժամանակ եգիպտահայ միությանն է նվիրում պոլսահայ նշանավոր նկարիչ Էրոլ Սարաֆյանի վրձնի պատկանող Պողոս Նուբար փաշայի յուղաներկ դիմանկարը:

**2000թ.** սեպտեմբերին Ռուսիայի հայ համայնքի հրավերով մեկնում է Բուխարեստ, շրջում Եվրոպայում ամենախիտ հայկական գաղթավայրերից մեկի պատմական, հայաշատ վայրերով:

Բարս Թուղլաճին միշտ զգայուն է եղել ստամբուլահայ համայնքի, մասնավորապես մշակութային կյանքի նկատմամբ: Նա առավել ևս ուշադիր է եղել Թուրքիայի մշակութային մթնոլորտում հայերի շարունակվող ներդրմանը, հայ արվեստագետների հաջողություններին և առիթը չի կորցրել այդ մասին խոսելու, գրելու բուրբական կենտրոնական, ամենաշատ կարդացվող պարբերականներում: Այսպես օրինակ, **2005թ.** երիտասարդական «Փայլող աստղեր» երաժշտական մրցույթում աչքի ընկած

236 «Քուլիս», Ստամբուլ, 1995, հ.1088, օգոստոս, էջ 19-33:  
 237 Վերադարձին նա մի ընդարձակ հոդված է նվիրում Հայիսի պատմական «Քարոն» հյուրանոցին և այնտեղ իլեկանած պատմական ամանաց: Տես Pars Tuğlaçı, *Unluler Oteli:Barons. «Cumhuriyet»,* İst., 28.09.1997.  
 238 ՀՀ Արտգործնախարար Ալեքսանդր Արզումանյանի հետ հունիսի 27-ի իր ընդպաճակ հարցազրույցը նա տպագրում է *Yeni Yüzyıl* պարբերականում «Երեք միասին ջնջենք անգլայի սխալները» վերնագրով: Տես Pars Tuğlaçı, «Ermenistan Disisleri Bakani Arzumanyan: Geçmiş Hatalari Birlikte Silelim» İst., 5.08.1997.



հայազգի սուլթան Սիրել Յակուբովի մասին «Cumhuriyet»-ի էջերում<sup>240</sup> գրելով, հիշում է արվեստագետ այս ընտանիքի հայտնի անուններին՝ օրիորդի մորը, ճանաչված օպերային ասող մեցցոսոպրանո ժակլին Չարքըլչին և մեծ հորը՝ 1960-ականների օպերային մեներգիչ, իտալական, վիեննական լավագույն կրթություն ստացած, շատ երգիչներ դաստիարակած ժիրայր Չարքըլչին: 22-ամյա Սիրելն այս երաժշտական գերդաստանի երրորդ ճյուղն է, որ հաջողությամբ շարունակում է իր ընտանիքի ավանդույթները, միաժամանակ կրթվելով Միմար Սիմանի անվան Գեղարվեստի համալսարանի երաժշտանոցում:

Գիտնականը հանդգնում է, որ սեր, հաճույք և քերկրանք պարզևող արվեստագետները ազգություն չունեն: Նրանք ոչ միայն իրենց ծնված երկրին են, նրանք աշխարհին են պատկանում:



## ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Գիտնականի համար ուսումնասիրությունները չեն սահմանափակվում սեփական գրասեղանով, աշխատավայրով ու իր քաղաքի, երկրի գրադարաններով, արխիվային նյութերով, քանզարաններով: Գալով ստեղծագործական գործունեությանը, հայտնագործություններին, ուսումնասիրություններին, հարկ է, որ այն սահմաններ չճանաչի, որպեսզի հեղինակը դառնա միջազգային գիտական հասարակայնության մաս, մասնակցի գիտժողովների, սիմպոզիումների: Այն ելույթների, զեկուցումների, ճանաչելու, ճանաչվելու, քննարկելու, մասնագիտական շրջանակների կողմից ընդունվելու կամ մերժվելու, ինչպես նաև գնահատելու, գնահատվելու հնարավորություններ կտա:

Բարս Թուղլաճին տարիներ շարունակ բախտ է ունեցել Թուրքիան ներկայացնել աշխարհով մեկ գիտական, միջազգային տարբեր հավաքների, տարիներ շարունակ գիտական որոշակի շրջանակներում հանդիսանալով իր երկիրը ներկայացնող միակ գիտնականը:

Ի պատիվ Բարս Թուղլաճի պետք է խոստովանել, որ նա կարողացել է լավագույնս ներկայացնել թուրքական բազմալեզու և բազմադեմ բառարանագիտությունը, հանրագիտարանային գրականությունը, լեզվաբանությունը, պատմությունը, մշակութային մի շարք բնագավառներ, ինչպիսիք են ճարտարապետությունը, գեղարվեստը, երաժշտությունը, քատրոնը, լուսանկարչությունը և նրա մարդկանց, քաղաքների ու Մարմարայի Իշխանաց կղզիների պատմությունը, քաղաքական դեմքերի մասին, մարդու իրավունքների հարցերին: Բարս Թուղլաճիի ուսումնասիրությունների մի կարևոր ճյուղը ներկայացնում է արևմտահայության պատմության ու մշակույթի շատ հարցեր: Այն է՝ հրատարակչական գործ, Օսմանյան կայսրության և Թուրքիայի կյանքի ամենատարբեր բնագավառներում արևմտահայության ունեցած ներդրումների մասին, կատարել է քարզմանություններ, աշխատակցել Ստամբուլի հայաբերթերին:

Շնորհիվ իր զարմանալի աշխատունակության, գործի հրաշալի կազմակերպման, նպատակալացության և հետաքրքրությունների լայն շրջանակի, նա հանդիսացել է իր երկրի, ժամանակի ամենահայտնի և ընդունված տիպար-գիտնականներից:

Գալով միջազգային գիտական հարթակներում Բարս Թուղլաճիի գործունեությանը, ապա դժվար թե գտնվի Թուրքիայում մի այլ գիտնական, որն այնքան հայտնի է եղել ողջ աշխարհում, սպասված ու հարգված հյուր կարևորագույն գիտական կենտրոնների կողմից: Այդ են վկայում նրա ունեցած միջազգային բազմաթիվ կոչումները, պարգևները, համալսարանական ու ակադեմիական շրջանակների կողմից նրան «պատվավոր անդամի ու պատվավոր դոկտորի» ընտրությունները: Ստորև համառոտագույնս ներկայացնում ենք միջազգային գիտական հարթակներում նրա հաջողությունները ժամանակագրական կարգով:

\*\*\*

**1980թ.** Բուլղարական կառավարությունն ազգային տոնի առթիվ Բարս Թուղլաճիին շնորհում է **Ոսկե մեդալ**:

**1987թ.** Անգլիայի, Քեմբրիջի Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից տպագրվող «Ով ո՞վ է» գրքում հրատարակվում է Բարս Թուղլաճիի կենսագրությունը, տրվում դիպլոմ, իսկ **1990թ.** հունիսին Լոնդոնի «Գիտական ուսումնասիրությունների» ինստիտուտը նրան **Պատվավոր դոկտորի** աստիճան է շնորհում: Սեպտեմբերին Քեմբրիջի «Միջազգային կենսագրական բառարանում» տպագրվում է Թուղլաճիի կենսագրությունը: Հոկտեմբեր ամսին Ամերիկյան «Կենսագրական ինստիտուտը» նրան պատվում է «**Արծաթե հուշամեդալով**»:

**1988թ.** Բարս Թուղլաճին իր ուսումնասիրություններն է կատարում Փարիզի Ազգային գրադարանում: Տարեվերջը նշանավորվում է միջազգային գիտական կենտրոնների կողմից նրա երկերի գնահատման, դիպլոմների շնորհման շրջալով: Հոկտեմբերին բառարանների և հանրագիտարանների համար «Ամերիկյան Կենսագրական ինստիտուտ»-ի կողմից նրան շնորհվում է «**Հանուն միջազգային մշակույթի» դիպլոմը, և ցմահ անդամ է ընտրվում Raleigh-ի Կենսագրական ինստիտուտի**: Նույն այդ ինստիտուտի կողմից **1990թ.** հայտարարվում է «**Տարվա մարդ**»: Գեկտեմբերին, Անգլիայի, Քեմբրիջի Կենսագրական միջազգային կենտրոնը հասարակությանը առանձնահատուկ ծառայության համար նրան «**Արժանապատվության» դիպլոմ է շնորհում<sup>241</sup>: Բարս Թուղլաճիի անունը տեղ է գտնում նաև բուրբակյան «Ով ո՞վ է» կենսագրական հատորում:**

**1991թ.** ընտրվում է Բրյուսելի «Վավերագրերի և Եվրոպայի ուսումնասիրության» ինստիտուտի անդամ: Տարեվերջին Փարիզի «Ռենիվերսալ ինտելեկտուալների» Ակադեմիայի անդամ է ընտրվում<sup>242</sup>: «Համաշխարհային խաղաղության դաշինքի» (AUPAC) «Ուսումնասիրությունների կենտրոնական ինստիտուտի» պատվավոր պրոֆեսոր է ընտրվում: «Ապետի» շքանշանով է մեդալով է պարգևատրվում Գերմանիայի Gendchengoaddach քաղաքի «Lof Sensus Ursinus komitee» կողմից:

Նույն ամսին, ԱՄՆ Լոս-Անջելեսի բարեգործական միության հրավերով մեկնում է Կանադա, Ամերիկա: Նա հյուրընկալվում է Մոնրեալի, Տորոնտոյի, Գետրոյի, Բոստոնի, Նյու-Յորքի, հայկական միություններում, հեռուստատեսային և ռադիո հաղորդումներում, զեկուցումներ է կարդում ամերիկյան մի շարք համալսարաններում, հայկական ուսումնական հաստատություններում, հանդիպումներ ունենում ամերիկյան հայ և օտար գիտնական-հայագետների, այդ օրերին Լոս-Անջելեսում գտնվող Բոլոնիայի (Իտալիա) համալսարանի Միջնադարյան հնագիտության ֆակուլտետի դեկան Գարրիելա Ուլուհոյանի հետ: Ողջ ընթացքում նա գտնվում է լրատվամիջոցների ուշադրության կենտ-

րոնում, նրան պատվում են մեծարանքի ճաշկերույթներ կազմակերպելով: Նրա զեկուցումները ամենատարբեր նյութերի շուրջն են եղել՝ «Հայերն Օսմանյան կայսրությունում և հայ-թուրք հարաբերությունները», «Ժողովուրդների բարեկամությունը և աշխարհում խաղաղությունը», Գրիգոր Ջոհրայի, Տիգրան Գուլաշյանի, Արամ Խաչատրյանի մասին և այլն: Addison համալսարանում նրան պատվավոր դոկտորի կոչում են շնորհում: Մասաչուսեթի Brownell համալսարանում Թուղլաճիին շնորհվում է «**Պատմության դոկտորի**» կոչում:

**1989թ.** Իսպանիայի Բարսելոնա քաղաքի «Ապետների բարձրագույն խորհրդի» կողմից Բարս Թուղլաճիին գիտական հետազոտությունների համար շնորհվում է «**Ապետի**» աստիճան: Վերադարձին, «Կղզիների Ռոբարի» մատնական ակումբում զեկուցում է Էշխանաց կղզիների մասին և **շնորհակալագիր** ստանում: Մտամբուլի մատնական մի այլ՝ «Dalyan Lions klub»-ը ևս նրան շնորհակալագիր է տալիս:

**1989թ.** հունիսին Լոնդոնի Կիրառական հետազոտությունների ինստիտուտը Բարս Թուղլաճիին շնորհում է «**Հումանիտար գիտությունների պատվավոր դոկտորի**» աստիճան:

Հուլիսին Փարիզի «Ռենիվերսալ հումանիտար գիտությունների ակադեմիան» (Academi des science humaines universelles) նրան շնորհում է «**Պատվավոր պրոֆեսորի**» կոչում:

Սեպտեմբերին Քեմբրիջի Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից լեզվաբանության, լեքսիկոգրաֆիայի և պատմական հետազոտությունների համար նրան «**20-րդ դարի նվաճումների համար» դիպլոմ են տալիս**: Հետագա բոլոր տարիների կենսագրական հատորներում Կենտրոնը շարունակվում է հրատարակել Բարս Թուղլաճիի կենսագրությունը:

Կալիֆորնիայի համալսարանը նրան շնորհում է «**Փիլիսոփայության և լեզվաբանության պատվավոր դոկտորի աստիճան**»:

**1992թ.** հունիսին Բարս Թուղլաճիին «**Գրականության պատվավոր դոկտորի**» կոչում է շնորհվում: Օգոստոսի Փարիզի «Հումանիտար ումիվերսալ գիտությունների Ակադեմիայի» և «Համալսարանական կրթության միջազգային բարձրագույն խորհուրդը» Բարս Թուղլաճիին «**Լեքսիկոգրաֆիայի**»-ի դիպլոմ է շնորհում: Սեպտեմբերին նրան շնորհվում է «**Երուսաղեմի Ս.Սալա ուխտի ասպետի**» կոչում: Նոյեմբերին նա ընտրվում է **Ավստրալիայի «Հետազոտությունների կենտրոնի» ցմահ «Պատվավոր պրոֆեսոր**»: Նույն նոյեմբեր ամիսը Բարս Թուղլաճիին բերում է **Ռոսեմիայի թագի «Քարոնի» կոչում**: Մշակույթի և գիտության բնագավառում ունեցած ծառայությունների համար արժանանում է ԱՄՆ-ի Կենսագրական ինստիտուտի «**Աշխարհի 5000 անձինք**» գրքում լինելու և «**Վերջին 10 տարիների ամենամեծ հիացմունքի արժանացած մարդ**», «**Միջազգային նվաճումների դեսպան**», «**Միջազգային Պատվո գավաթ» արցանակներին**: ԱՄՆ-ից հետո Իրանիական այցելության ժամանակ նրան շնորհվում է **Իրանիայի «Շավադի արժվի զեկուրական լեզունի Կապիտանի» աստիճան**:

**1993թ.** Բոմբեյի միջազգային համալսարանը Բարս Թուղլաճիին «**Պատմագրության դոկտորի**» աստիճան է շնորհում: Հունվարին Ըվեյցարիայի «Ordine di Ciriaco» մատ-

241 Բոլոր դիպլոմները, հրավերները, որոշ կարևոր հարցազրույցներ, հոդվածներ գտնում ենք Թուղլաճիին նվիրված Է.Էրմերյանի հատորում, ժամանակագրական կարգով:  
242 1907թ. Փարիզում հիմնադրվել է «Ռենիվերսալ ինտելեկտուալների միությունը», որն աշխարհի ճանաչված 599 հայտնիներից անդամ է ընտրել 23-ին: Դրանց բոլուն են եղել Կարդինալ Ռոմանոսի (ինտագրալում) (Հովհաննես XXIII պապը), Ֆրանկլին Ռուզվելտը, Ջոն Բենդինգ, Ժորժ Պոնտիլյոն, Ալբերտ Եյնշտայնը և այլք:



նական ուխտի Մեծ վարպետի ստորագրությամբ ստանում է «**Կոմսի**» աստիճան: Այս մասին գրում են Ստամբուլի «Cumhuriyet» (11.05.1993), «Sabah» (12.05.1993), «Milliyet Sanat» (1.07.1993) պարբերականները: Մարտին Քեմերիջի համալսարանը նրան ընտրում է «**1993թ. տարվա ինտելեկտուալ մարդ**»: Մերսիկայի Գվադալաբա քաղաքի համալսարանը Բարս Թուղլաճին պատմական հետազոտությունների (հունիսին), ապա նաև լեզվաբանության (սպրիլին) «**Պատվավոր դոկտորի**» կոչումներ է տալիս: Քեմերիջի համալսարանի Կենսագրական կենտրոնի կողմից տպագրվող «**Առաջին 500»** ջգրքում, ապա նաև նույն գրքի շքեղ հրատարակության մեջ տեղ են գտնում Բարս Թուղլաճիի **կենսագրությունը** և **լուսանկարը**: Լոնդոնի Կիրառական հետազոտությունների ինստիտուտը նրան շնորհում է «**սոցիոլոգիայի**» և «**իբրավուների**» պատվավոր դոկտորի աստիճաններ: «**Պատվավոր դոկտոր**» է հռչակել նրան նաև Հարավ-Արևելյան Ատլանտայի համալսարանը:

**1993թ.** Բարս Թուղլաճին պարգևատրվում է գիտության ասպարզում ամենաեղիմնակավոր մրցանակներից մեկով՝ «**Ալբերտ Այնշտայնի անվան գիտության համաշխարհային մրցանակով**»<sup>243</sup>:

**1994թ.** «Միջազգային անվտանգության և խաղաղության պաշտամենտը» Բարս Թուղլաճիին **դիվանագիտական անձնագիր** է տալիս: Նա Բրյուսելի «Փաստաթղթերի և գիտական հետազոտությունների Եվրոպական ինստիտուտի» **օսմանյան գրականության պրոֆեսոր** է ընտրվում:

Բարս Թուղլաճին գիտաժողովների, միջազգային կոնգրեսների մասնակցության բազմաթիվ հրավերներ էր ստանում: Այսպես, հուլիսին Շտուլանդիայի մայրաքաղաք Էդինբուրգում հուլիսի 3-10-ը տեղի ունեցած «Արվեստի և հաղորդակցության Միջազգային XXI» կոնգրեսում մասնակցության համար ի թիվս աշխարհի 150 անվանի անունների, Բարս Թուղլաճին ևս պաշտոնական հրավեր է ստանում: Այն կազմակերպվել էր Ամերիկյան կենսագրական ինստիտուտի և Քեմերիջի կենսագրական միջազգային կենտրոնի հետ համատեղ: Պատվո իյուրերի թվում էին Նորվեգիայի քաղաքի Հերնոլուն և Սոնիա քաղաքին<sup>244</sup>: Թուրքիայի պատվիրակ Բարսեղ Թուղլաճյանը Անգլիայի քաղաքում է նվիրում օրեր առաջ լույս տեսած Պալյան գերդաստանի մասին իր գիրք-ալբոմը: Վերադարձին ստանում է Թագուհու շնորհակալական մամակը: Նրան ընտրում են **Քեմերիջի կենսագրական միջազգային կենտրոնի ցմահ անդամ**:

**Ամերիկյան կենսագրական ինստիտուտը ևս նրան ինստիտուտի ցմահ անդամ** է ընտրում:

Տարեվերջին նա ընտրվում է **Արգենտինայի Գիվանագիտական ակադեմիայի անդամ**:

Գերմանիայի Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիայի երկրամասի Մյունխեն-Բերգիշ-

Գալդեաի քաղաքների Արվեստի և Գիտության հիմնարկի կողմից պարգևատրվել է լեգենդար արքա Պերսիվալի անունը կրող **Սուրբ Գրասլի մեծ Մագիստրոսի օրդենով** (1994թ. փետրվար):

«**Բարոնի**» տիտղոս **Բահեմիայի քաղաքական թագի կողմից**:

Փարիզի Միջազգային հարաբերությունների ինստիտուտը նրան «**Ինստիտուտի պատվո անդամ**»-ի դիպլոմ է շնորհում:

Բրյուսելի ինստիտուտի կողմից հայտարարվում է **Օսմանյան գրականության պրոֆեսոր**:

Փարիզի միջազգային Երրորդ կուլեջի կողմից շնորհվում է «**Պատվավոր վարպետի**» և «**Պատվավոր դոկտորի**» կոչում:

Բրյուսելի Բարձրագույն Տեխնիկական կրթության ինստիտուտի և Եվրոպական փաստաթղթային գիտական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից «**Պատմության և Օսմանյան մշակույթի պրոֆեսորի**» կոչում է տրվում:

Բարս Թուղլաճիի կենսագրությունը հրատարակվում է Անգլիայի Քեմերիջի Կենսագրական կենտրոնի «Կենսագրական քառարան»-ում և «Միջազգային Կենսագրական քառարան»-ում, շնորհվում է **Առաքինության աստիճան**, իրենց Կենտրոնի անդամ ընտրում, ինչպես նաև ընտրում է **1993թ. Տարվա Մտավորական**, պարգևատրում «**XX դարի Բացառիկ հաջողությունների համար**» վկայականով: Նրան շնորհվում է «**Միջազգային վաստակի շքանշան**»:

Ստամբուլի Հրատարակչական միության **Բարձրագույն Խորհրդի անդամ** է ընտրվում:

ԱՄՆ Կենսագրական ինստիտուտի կողմից «**Պատվավոր գավաթ**» է ստանում, ընտրվում է 1994 տարվա մարդ»: Նրան շնորհվում է առաջնակարգության «**5 աստղանի**» մրցանակ:

Բուենոս-Այրեսի Գիվանագիտական Ակադեմիան նրան **Ակադեմիականի դիպլոմ** է շնորհում:

**1995թ.** հունիսին, «Հանուն կյանքի պաշտպանության» Միջիլիա-Պալերմոյի մահանգների խորհրդի որոշմամբ և համաձայն Վիեննայի կոնվենցիայի, Բարս Թուղլաճիին Մարտո իրավունքների պաշտպանության համար շնորհվում է «**Սենատորի**» կոչում:

Հուլիսին Լատինամերիկյան և Կարիբյան ավազանի պետությունների (Caricom) խորհուրդը «**Ապկետի**» կոչում և «**Արժանիքի**» դիպլոմ է շնորհում Բարս Թուղլաճիին:

Հուլիսին, իսրայելության և պատմագրության բնագավառում գործադրած ջանքերի համար **Շոտլանդիայի «Լորդ»ի կոչում** է ստանում:

Հոկտեմբերին Հունաստանի Մշակույթի նախարարության կողմից Բարս Թուղլաճին հրավեր է ստանում հետազոտություններ կատարելու Աթենքի պետական գրադարաններում և մեկնում Հունաստան: Մինչ այդ, օգոստոսին նա հյուրընկալվել էր Ստամբուլում Հունական Տիեզերական պատրիարք Բարթոլոմեոսին: Գիտնականին պատմական ուսումնասիրություններ կատարելու համար սիրով թույլատրվել էր օգտվել Պատրիար-

243 *Albert Einstein World Award of Science*: Սա ամենամյա մրցանակ է, որ տրվում է Համաշխարհային Մշակութային Խորհրդի կողմից 1984թ. ի վեր: Այն հուշամեդալ է, դիպլոմ և 10 000\$... Այն կոչված է քաջալերելու գիտատեխնիկական ուսումնասիրությունները, որոնք մարդկությանն օգուտ և քարեկեցություն են բերում:

244 Այս մասին ընդարձակ անդրադարձ է հրատարակում «Cumhuriyet» օրաթերթի *Derzi* հավելվածը, Ստամբուլ, 18.09.1994.

քարանձի գրադարանից: Այս և Հունաստան այցելությունն ավելի քան ուղղված էր ակադեմիական ճանապարհով երկու հարևան երկրների միջև բարի հարաբերությունների հաստատման ջանքերին: Նրան ընդունում են Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտը, Մշակույթի նախարարը, թուրք դիվանագիտական անձնակազմի ղեկավարները, լրատվամիջոցները, հանդիպում Հունաստանում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանի հետ, հայ համայնքի հյուրը լինում:

**1997թ.** Լոնդոնում լեզվաբանության, լեքսիկոգրաֆիայի, պատմագրության, մարդու իրավունքների և հանուն խաղաղության գործունեության Բարսեղ Թուղաճյանը Քենթրիջի «Կենսագրական կենտրոնի» կողմից պարգևատրվում է «**Golden Scroll of Excellence**» («Գերազանցության ոսկե մագաղաթ»)-ով և արձնագրվում գլխավոր տնօրինության **պատվո ջուջակում**: Նրա անունը մտնում է ԱՄՆ-ում հրատարակվող «**Աշխարհի 5 000 անհատականություններ**»-ի ցանկում: Այս կազմակերպությունը 1999թ. Բարսեղ Թուղաճյանին ընտրում է «**2000թ. մարդ**»:

**1998թ.** ԱՄՆ Կենսագրական ինստիտուտը ընտրում է նրան «**Հետազոտությունների բաժնի ցմահ փոխտնօրեն**»:

**2000թ.** ապրիլ ամսին ԱՄՆ-ի Օհայո դեպարտամենտում «Գրողների և արվեստագետների միջազգային Տոլդոյ միության» կողմից պարգևատրվում է «**Մտավոր և հոգևոր զերազանցության մրցանակով**» և ընտրվում այդ միության անդամ:

**2001թ.** ռումինահայ համայնքի իրավերով Բարս Թուղաճյան մեկնում է Ռումինիա, լինում հայաշատ Բուխարեստ, Կոնստանցիա, Մուչալա, Յաշ, քաղաքներում կարդում ենք Բուխարեստի «Նոր Կեանք» ամսագրում և Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթում<sup>245</sup>:

**2004թ.** նոյեմբերին Բարս Թուղաճյան Անգլիա-Քենթրիջ Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից պարգևատրվում է միջազգային «**Գա Վինչի**» **ադամանդակու մեդալով**: Այն «Բնական Գիտությունների Եվրոպական Ակադեմիայի Նախախազանության» կողմից է տրվում, «Բազմակողմանի տաղանդի» համար:

ԱՄՆ Գիտությունների Միջազգային Ակադեմիայի կողմից հունիսի 3-ին Բարս Թուղաճյանին շնորհվում է «**Մասուր**»-ի **դիպլոմ**: ԱՄՆ-ի Կոնգրեսը հունիսի 21-ին գիտնականին է **2004թ. Խաղաղության միջազգային մեդալ**» է շնորհում, իսկ նոյեմբերի 12-ին հանդես գալիս նրան Նորբյան մրցանակի թեկնածու առաջադրելու պաշտոնական առաջարկի հայտարարությամբ:

**2002թ.** Վանկուվերում (Կանադա) տեղի ունեցած «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 29-րդ կոնգրեսին Միջազգային Կենսագրական միությունը և Ամերիկյան Կենսագրական ինստիտուտը բանասեր և պատմաբան Բարս Թուղաճյանին «**Ամերիկայի Պատվո Մեդալ**» (American Medal of Honor Resipient) է շնորհում (7.06.2002թ.): Գիպլոմում նշվում է, որ այն 100 անվանական մեդալներից 37-րդն է: Միաժամանակ, ակտիվ գործունեության համար նա պարգևատրվում է «**Կոնգրեսի հիմնադրման մեդալով**» և «**Բնակության վկայական**»-ով (Certificate of residence):

Հոկտեմբեր ամսին «Միացյալ նշակության կոնվենցիա» կազմակերպության կող-

մից (United Cultural Convention) Բարս Թուղաճյանին շնորհվում է «**Միջազգային խաղաղության մրցանակ**»:

**2006թ.** Ամերիկյան Կենսագրական ինստիտուտը Բարս Թուղաճյանին «**The World Medal of Freedom**» (**Աշխարհի ազատության մեդալ**) է շնորհում: Բարս Թուղաճյան ստանում է Քենթրիջի Կենսագրական Միջազգային ինստիտուտի «**Պատվո Գլխավոր տնօրեն**»-ի «Certificate of appointment» (աբստոնազիդ նշանակման մասին)<sup>246</sup>:



245 Նոր Կեանք, 10.10.2001թ. և Շամանակ, 10.10.2001թ.

246 Աբստոնազիդը ստորագրված է 2006թ. մարտի 1-ին:



**ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԱԸՆՅԱՆԻ ՍՏՆՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ  
ՊԱՐԳԵՎՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ**

*«Պարզավոր պրոֆեսորի» կոչում՝*

1. Փարիզի Ունիվերսալ Հումանիտար Ակադեմիա
2. Լոս Անջելեսի Ադոլֆոսի անվ. Պետական Համալսարան
3. Լոնդոնի համալսարանի «Գրական Դոկտորանտուրա» կիրառական ուսումնասիրությունների ինստիտուտ
4. Ավստրալիայի միջազգային կոորդինացիոն-գիտահետազոտական ինստիտուտ

*«Միջազգային պարզավոր պրոֆեսորի» կոչում*

5. -ԱՄՆ-ի Միջազգային Կենսագրական ինստիտուտ
6. «Բարոնի» տիտղոս Բոնեմիայի բազալոլոգական բազի
7. «Մովային արծիվ» զինվորական կոչում
8. «Երուսաղեմի Մուրբ Խաչի» շքանշան

**1980թ.** Բուլղարական կառավարությունն ազգային տոնի առթիվ Բարս Թուղլաճիին շնորհում է **Ոսկե մեդալ**:

**1987թ.** Անգլիայի, Քենթրիջի Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից տպագրվող «Ով ո՞վ է» գրքում հրատարակվում է Բարս Թուղլաճիի կենսագրությունը, տրվում դիպլոմ, իսկ **1990թ.** հունիսին Լոնդոնի «Գիտական ուսումնասիրությունների» ինստիտուտը նրան **Պատվավոր դոկտորի** աստիճան է շնորհում: Մեպտեմբերին Քենթրիջի «Միջազգային կենսագրական բառարանում» տպագրվում է Թուղլաճիի կենսագրությունը: Հոկտեմբեր ամսին Ամերիկյան «Կենսագրական ինստիտուտը» նրան պատվում է «**Արծաթե հուշամեդալով**»:

**1988թ.** Բարս Թուղլաճին իր ուսումնասիրություններն է կատարում Փարիզի Ազգային գրադարանում: Տարեվերջը նշանավորվում է միջազգային գիտական կենտրոնների կողմից նրա երկերի գնահատման, դիպլոմների շնորհման շրջառվ: Հոկտեմբերին Իտալիայի Կոլոմբոյի և հանրագիտարանների համար «Ամերիկյան Կենսագրական ինստիտուտ»-ի կողմից նրան շնորհվում է «**Հանուն միջազգային մշակույթի» դիպլոմը, և ցմահ անդամ է ընտրվում Raleigh-ի Կենսագրական ինստիտուտի**: Նույն այդ ինստիտուտի կողմից **1990թ.** հայտարարվում է «**Տարվա մարդ**»: Դեկտեմբերին, Անգլիայի, Քենթրիջի Կենսագրական Միջազգային կենտրոնը հասարակությանը առանձնահատուկ ծառայության համար նրան «**Արծառնապատվության» դիպլոմ է շնորհում: Բարս Թուղլաճիի**

անունը տեղ է գտնում մահ քուրթական «Ով ո՞վ է» կենսագրական հատորում:

**1991թ.** ընտրվում է Բյուրսեյի «Կավերագրերի և Եվրոպայի ուսումնասիրության» ինստիտուտի անդամ: Տարեվերջին Փարիզի «Ունիվերսալ ինստիտուտայնների» Ակադեմիայի անդամ է ընտրվում: «Համաշխարհային խաղաղության դաշինքի» (AUPAC) «Ուսումնասիրությունների կենտրոնական ինստիտուտի» պատվավոր պրոֆեսոր է ընտրվում: «Ասպեկտ» շքանշանով և մեդալով է պարգևատրվում Գերմանիայի Mönchengradbach քաղաքի «Lof Sensus Ursinus komitee» կողմից:

Նույն ամսին, ԱՄՆ Լոս-Անջելեսի բարեգործական միության հրավերով մեկնում է Կանադա, Ամերիկա: Նա հյուրընկալվում է Մոնրեալի, Տորոնտոյի, Դետրոյթի, Բոստոնի, Նյու-Յորքի, հայկական միություններում, հեռուստատեսային և ռադիո խաղաղություններում, գեկուցումներ է կարդում ամերիկյան մի շարք համալսարաններում, հայկական ուսումնական հաստատություններում, հանդիպումներ ունենում ամերիկյան հայ և օտար գիտնական-հայագետների, այդ օրերին Լոս-Անջելեսում գտնվող Բյուրսեյի (Իտալիա) համալսարանի Միջնադարյան հնագիտության ֆակուլտետի դեկան Գարբիելա Ուլտիոջանի հետ: Ողջ ընթացքում նա գտնվում է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, նրան պատվում են մեծարանքի ճաշկերույթներ կազմակերպելով: Նրա գեկուցումները ամենատարբեր նյութերի շուրջն են եղել՝ «Հայերն Օսմանյան կայսրությունում և հայ-թուրք հարաբերությունները», «Ժողովուրդների բարեկամությունը և աշխարհում խաղաղությունը», Գրիգոր Զոհրապի, Տիգրան Չոխաջյանի, Արամ Խաչատրյանի մասին և այլն: Addison համալսարանում նրան պատվավոր դոկտորի կոչում են շնորհում: Մասաչուսեթի Brownell համալսարանում Թուղլաճիին շնորհվում է «**Պատմության դոկտորի**» կոչում:

**1989թ.** Իսպանիայի Բարսելոնա քաղաքի «Ասպետների բարձրագույն խորհրդի» կողմից Բարս Թուղլաճիին գիտական հետազոտությունների համար շնորհվում է «**Ասպետի» աստիճան**: Վերադարձին, «Կղզիների Ռոթարի» մասնական ակումբում գեկուցում է Իշխանաց կղզիների մասին և շնորհակալագիր ստանում: Ստամբուլի մասնական մի այլ «Dalyan Lions klub»-ը ևս նրան շնորհակալագիր է տալիս:

**1989թ.** հունիսին Լոնդոնի Կիրառական հետազոտությունների ինստիտուտը Բարս Թուղլաճիին շնորհում է «**Հումանիտար գիտությունների պատվավոր դոկտորի» աստիճան**:

Հուլիսին Փարիզի «Ունիվերսալ հումանիտար գիտությունների ակադեմիան» (Academi des science humaines universelles) նրան շնորհում է

*«Պատվավոր պրոֆեսորի» կոչում:*

Մեպտեմբերին Քենթրիջի Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից լեզվաբանության, լեքսիկոգրաֆիայի և պատմական հետազոտությունների համար նրան «**20-րդ դարի նվաճումների համար» դիպլոմ են տալիս**: Հետագա բոլոր տարիների կենսագրական հատորներում Կենտրոնը շարունակվում է հրատարակվել Բարս Թուղլաճիի կենսագրությունը:

Կալիֆորնիայի համալսարանը նրան շնորհում է «**Փիլիսոփայության և լեզվաբանության պատվավոր դոկտորի աստիճան**»:

**1992թ.** հունիսին Բարս Թուղլանիին «**Գրականության պատվավոր դոկտորի**» կոչում է շնորհվում: Օգոստոսին Փարիզի «Հումանիտար ունիվերսալ գիտությունների Ալգոնմիայի» «Համալսարանական կրթության միջազգային բարձրագույն խորհուրդը» Բարս Թուղլանիին «**Լեքսիկոգրաֆ**»-ի դիպլոմ է շնորհում: Սեպտեմբերին նրան շնորհվում է «**Երուսաղեմի Մխչադ ուխտի ասպետի**» կոչում: Նոյեմբերին նա ընտրվում է **Ավստրալիայի «Հետազոտությունների կենտրոնի»** ցմահ «**Պատվավոր պրոֆեսոր**»: Նույն նույններ ամիսը Բարս Թուղլանիին բերում է **Բոհեմիայի թագի «Բարոնի»** կոչում: Մշակույթի և գիտության բնագավառում ունեցած ծառայությունների համար արժանանում է ԱՄՆ-ի Կենսագրական ինստիտուտի «**Աշխարհի 5000 անձինք**» գրքում լինելու և «**Լեքսիկոն 10 տարիների ամենամեծ հիացմունքի արժանացած մարդ**», «**Միջազգային նվաճումների դեպոզիտ**», «**Միջազգային Պատվո գավաթ**» մրցանակների: ԱՄՆ-ից հետո Ֆրանսիա այցելության ժամանակ նրան շնորհվում է Ֆրանսիայի «**Ճովալան արժի գինձորական լեզուների Կապիտանի**» աստիճան:

**1993թ.** Բոմբեյի միջազգային համալսարանը Բարս Թուղլանիին «**Պատմագրության դոկտորի**» աստիճան է շնորհում: Հունվարին Շվեյցարիայի «Ordine di Ciriaco» մասնական ուխտի Մեծ վարպետի ստորագրությամբ ստանում է «**Կոմսի**» աստիճան: Այս մասին գրում են Ստամբուլի «Cumhuriyet» (11.05.1993), «Sabah» (12.05.1993), «Milliyet Sanat» (1.07.1993) պարբերականները: Մարտին Քենթրիջի համալսարանը նրան ընտրում է «**1993թ. տարվա ինտելեկտուալ մարդ**»: Մեքսիկայի Գվադալարա քաղաքի համալսարանը Բարս Թուղլանիին պատմական հետազոտությունների (հունիսին), ապա նաև լեզվաբանության (ապրիլին) «**Պատվավոր դոկտորի**» կոչումներ է տալիս: Քենթրիջի համալսարանի Կենսագրական կենտրոնի կողմից տպագրվող «**Առաջին 500»** ջրգրում, ապա նաև նույն գրքի շքեղ հրատարակության մեջ տեղ են գտնում Բարս **Թուղլանի կենսագրությունը** և **լուսանկարը**: Լոնդոնի Կիրառական հետազոտությունների ինստիտուտը նրան շնորհում է «**սոցիոլոգիայի**» և «**իբրավոների**» պատվավոր դոկտորի աստիճաններ: «**Պատվավոր դոկտոր**» է հռչակել նրան նաև Հարավ-Արևելյան Ասիանուտայի համալսարանը:

**1993թ.** Բարս Թուղլանին պարգևատրվում է գիտության ասպարզում ամենաեղիմակավոր մրցանակներից մեկով՝ «**Արքիտ Անճուայնի անվան գիտության համաշխարհային մրցանակով**»<sup>247</sup>:

**1994թ.** «Միջազգային անվտանգության և խաղաղության պառլամենտը» Բարս Թուղլանիին **դիվանագիտական անձնագիր** է տալիս: Նա Բրյուսելի «Փաստաթղթերի և գիտական հետազոտությունների Եվրոպական ինստիտուտի» **օսմանյան գրականության պրոֆեսոր** է ընտրվում:

Բարս Թուղլանին գիտաժողովների, միջազգային կոնգրեսների մասնակցության թափանքով հրավերներ էր ստանում: Այսպես, հուլիսին Շտալանդիայի մայրաքաղաք Էդինբուրգում հուլիսի 3-10-ը տեղի ունեցած «Արվեստի և հաղորդակցության Միջազ-

գային XXI» կոնգրեսում մասնակցության համար ի թիվս աշխարհի 150 անվանի անունների, Բարս Թուղլանին ևս պաշտոնական հրավեր է ստանում: Այն կազմակերպվել էր Ամերիկյան կենսագրական ինստիտուտի և Քենթրիջի կենսագրական միջազգային կենտրոնի հետ համատեղ: Պատվո հյուրերի թվում էին Նորվեգիայի քաղաքի Վերնոլդը և Սոմիա թագուհին<sup>248</sup>: Թուրքիայի պատվիրակ Բարսեղ Թուղլանյանը Անգլիայի թագուհուն է նվիրում օրեր առաջ լույս տեսած Պալան գերդաստանի մասին իր գիրք-ալբոմը: Վերադարձին ստանում է Թագուհու շնորհակալական նամակը: Նրան ընտրում են **Քենթրիջի կենսագրական միջազգային կենտրոնի ցմահ անդամ**:

**Ամերիկյան կենսագրական ինստիտուտը** ևս նրան ինստիտուտի ցմահ անդամ է ընտրում:

Տարվերջին նա ընտրվում է **Արգենտինայի Դիվանագիտական ակադեմիայի անդամ**:

Գերմանիայի Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիայի երկրամասի Մյունխեն-Բերգիշ-Գլադբախ քաղաքների Արվեստի և Գիտության հիմնարկի կողմից պարգևատրվել է լեզվագրար արքա Պերսիվալի անունը կրող **Սուրբ Գրասյի մեծ Մագիստրոսի օրդենով** (1994թ. փետրվար):

«**Բարոնի**» տիտղոս **Բոհեմիայի թագավորական թագի կողմից**:

Փարիզի Միջազգային հարաբերությունների ինստիտուտը նրան «**Ինստիտուտի պատվո անդամ**»-ի դիպլոմ է շնորհում:

Բրյուսելի ինստիտուտի կողմից հաստատարվում է **Օսմանյան գրականության պրոֆեսոր**:

Փարիզի միջազգային Երրորդ կուլեջի կողմից շնորհվում է «**Պատվավոր վարպետի**» և «**Պատվավոր դոկտորի**» կոչում:

Բրյուսելի Բարձրագույն Տեխնիկական կրթության ինստիտուտի և Եվրոպական փաստաթղթային գիտական ուսումնասիրությունների կենտրոնի կողմից «**Պատմության և Օսմանյան մշակույթի պրոֆեսորի**» կոչում է տրվում:

Բարս Թուղլանի կենսագրությունը հրատարակվում է Անգլիայի Քենթրիջի Կենսագրական կենտրոնի «Կենսագրական քառարան»-ում և «Միջազգային Կենսագրական քառարան»-ում, շնորհվում «**Առաքինության աստիճան**», իրենց Կենտրոնի անդամ ընտրում, ինչպես նաև ընտրում «**1993թ. Տարվա Մտավորական**», պարգևատրում «**XX դարի Բացառիկ հաջողությունների համար**» վկայականով: Նրան շնորհվում է «**Միջազգային վաստակի շքանշան**»:

Ստամբուլի Հրատարակչական միության **Բարձրագույն Խորհրդի անդամ** է ընտրվում:

ԱՄՆ Կենսագրական ինստիտուտի կողմից «**Պատվավոր գավաթ**» է ստանում, ընտրվում «**1994 տարվա մարդ**»: Նրան շնորհվում է առաջնակարգության «**5 աստղանի**» մրցանակ:

247 *Albert Einstein World Award of Science*: Սա ամենամյա մրցանակ է, որ տրվում է Հանաշխարհային Մշակութային Խորհրդի կողմից 1984թ. ի վեր: Այն հռչակվել էր, դիպլոմ և 10 000Տ. Այն իրավունք է քայքայելու գիտատեխնիկական ուսումնասիրությունները, որոնք մարդկությանն օգուտ են արժեկեցություն են բերում:

248 Այս մասին ընդարձակ անդրադարձ է հրատարակում «Cumhuriyet» օրաթերթի *Dergi* հավելվածը. Ստամբուլ, 18.09.1994.



Բունուս-Այրեսի Գիվանագիտական Ակադեմիան նրան **Ակադեմիականի դիպլոմ** է շնորհում:

**1995թ.** հունիսին, «Հանուն կյանքի պաշտպանության» Սիջիլիա-Պալերմոյի մահանգների խորհրդի որոշմամբ և համաձայն Վիեննայի կոնվենցիայի, Բարս Թուրլաճին Մարդու իրավունքների պաշտպանության համար շնորհվում է «**Մենատորի**» կոչում:

Հուլիսին Լատինամերիկյան և Կարիբյան ավազանի պետությունների (Caricom) խորհուրդը «**Լապատի**» կոչում և «**Արժանիքի**» դիպլոմ է շնորհում Բարս Թուրլաճին:

Հուլիսին, իսպաղոթյան և պատմագրության բնագավառում գործադրած ջանքերի համար **Շոտլանդիայի «Լորդ»ի կոչում** է ստանում:

Հոկտեմբերին Հունաստանի Մշակույթի նախարարության կողմից Բարս Թուրլաճին հրավեր է ստանում հետազոտություններ կատարելու Աթենքի պետական գրադարաններում և մեկնում Հունաստան: Մինչ այդ, օգոստոսին նա հյուրընկալվել էր Ստամբուլում Հունական Տիեզերական պատրիարք Բարթոլոմեոսին: Գիտնականին պատմական ուսումնասիրություններ կատարելու համար սիրով թույլատրվել էր օգտվել Պատրիարքարանի գրադարանից: Այս և Հունաստան այցելությունն ավելի քան ուղղված էր ակադեմիական ճանապարհով երկու հարևան երկրների միջև բարի հարաբերությունների հաստատման ջանքերին: Նրան ընդունում են Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտը, Մշակույթի նախարարը, թուրք դիվանագիտական անձնակազմի ղեկավարները, լրատվամիջոցները, հանդիպում Հունաստանում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսյանի հետ, հայ համայնքի հյուրը լինում:

**1997թ.** Լոնդոնում լեզվաբանության, լեքսիկոգրաֆիայի, պատմագրության, մարդու իրավունքների և հանուն խաղաղության գործունեության Բարսեղ Թուրլաճյանը Քեմբրիջի «Կենսագրական կենտրոնի» կողմից պարգևատրվում է «**Golden Scroll of Excellence**» («Գերազանցության ոսկե մագաղաթ»)՝ ով և արձնագրվում գլխավոր տնօրինության պատվո գրուցակում: Նրա անունը մտնում է ԱՄՆ-ում հրատարակվող «**Աշխարհի 5 000 անհատականություններ**»-ի ցանկում: Այս կազմակերպությունը 1999թ. Բարսեղ Թուրլաճյանին ընտրում է «**2000թ. մարդ**»:

**1998թ.** ԱՄՆ Կենսագրական ինստիտուտը ընտրում է նրան «**Հնազոտությունների քաժնի ցմահ փոխտնօրեն**»:

**2000թ.** ապրիլ ամսին ԱՄՆ-ի Օհայո նահանգի դեպարտամենտում «Գողմերի և արվեստագետների միջազգային Տոլեդո միության» կողմից պարգևատրվում է «**Մուսվոր և հոգևոր գերազանցության մրցանակով**» և ընտրվում այդ միության անդամ:

**2001թ.** ռուսիահայ համայնքի իրավերով Բարս Թուրլաճին մեկնում է Ռուսմիա, լինում հայաշատ Բուխարեստ, Կոնստանցիա, Մուչավա, Յաչ, քաղաքներում կարդում ենք Բուխարեստի «Նոր Կեանք» ամսագրում և Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթում<sup>249</sup>:

**2004թ.** նոյեմբերին Բարս Թուրլաճին Անգլիա-Քեմբրիջ Կենսագրական միջազգային կենտրոնի կողմից պարգևատրվում է միջազգային «**Գա Վիենի**» ադամանդե մեդալով:

Այն «Բնական Գիտությունների Եվրոպական Ակադեմիայի Նախախազանության» կողմից է տրվում, «Բազմակողմանի տաղանդի» համար:

ԱՄՆ Գիտությունների Միջազգային Ակադեմիայի կողմից հունիսի 3-ին Բարս Թուրլաճին շնորհվում է «**Մաստեր**»-ի դիպլոմ: ԱՄՆ-ի Կոնգրեսը հունիսի 21-ին գիտնականին «**2004թ. Խաղաղության միջազգային մեդալ**» է շնորհում, իսկ նոյեմբերի 12-ին համընդհանուր նրան Նորբյան մրցանակի բեկնածու առաջադրելու պաշտոնական առաջարկի հայտարարությամբ:

**2002թ.** Վանկուվերում (Կանադա) տեղի ունեցած «Արվեստի և հաղորդակցության» միջազգային 29-րդ կոնգրեսին Միջազգային Կենսագրական միությունը և Ամերիկյան Կենսագրական ինստիտուտը բանասեր և պատմաբան Բարս Թուրլաճին «**Ամերիկյան Պատվո Մեդալ**» (American Medal of Honor Resipient) է շնորհում (7.06.2002թ.): Գիպլոմում նշվում է, որ այն 100 անվանական մեդալներից 37-րդն է: Միաժամանակ, ակտիվ գործունեության համար նա պարգևատրվում է «**Կոնգրեսի իմնադրման մեդալով**» և «**Բնակության վկայական**»ով (Certificate of residence):

Հոկտեմբեր ամսին «Միացյալ մշակութային կոնվենցիա» կազմակերպության կողմից (United Cultural Convention) Բարս Թուրլաճին շնորհվում է «**Միջազգային խաղաղության մրցանակ**»:

**2006թ.** Ամերիկյան Կենսագրական ինստիտուտը Բարս Թուրլաճին «**The World Medal of Freedom**» (**Աշխարհի ազատության մեդալ**) է շնորհում: Բարս Թուրլաճին ստանում է Քեմբրիջի Կենսագրական Միջազգային ինստիտուտի «**Պատվո Գլխավոր տնօրեն**»-ի «Certificate of appointment» (արտոնագիր նշանակման մասին)<sup>250</sup>:



249 Նոր Կեանք, 10.10.2001թ. և Ժամանակ, 10.10.2001թ.

250 Արտոնագիր ստորագրված է 2006թ մարտի 1-ին:

## ԳԻՏԱԿԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒՅՈՒՆՆԵՐ

1. Pars Tuğlacı. İngilizce Türkçe Tâbirler Lûgatı, İstanbul, 1961
2. Pars Tuğlacı. The Medical Dictionary English-Latin-Turkish. İstanbul, 1964, 595s.
3. Pars Tuğlacı. Türkçede Anlamdaş ve Karşıt Kelimeler Sözlüğü. İstanbul, 1965, p. unuı' 1967.
4. Pars Tuğlacı. Büyük Türkçe-Fransızca sözlük. İstanbul, 1966
5. Pars Tuğlacı. Büyük Türkçe-İngilizce Sözlük. İstanbul, 1966
6. Pars Tuğlacı. A Turkish-English Comprehensiv Dictionary. İstanbul, 1966
7. Pars Tuğlacı. İngilizce- Türkçe İktisadi ve Hukuki Terimler Sözlük. İstanbul, 1966
8. Pars Tuğlacı. Büyük Türkçe -Fransızca Sözlük. İstanbul, 1968.
9. OKYANUS 20. Yüzyıl Ansiklopedik Türkçe Sözlük,
10. Pars Tuğlacı Türkiye Tarih ve Kültür Ansiklopedisi.
11. Pars Tuğlacı. Tıp Sözlüğü. İstanbul, 2 baskı, Ankara 1973.
12. Tuğlacı, Türkiyenin İlk Fotoğrafçıları, *Yıllar Boyu Tarih* unarbağhp. İstanbul, 1979p.
13. Pars Tuğlacı « Arpaçay ve Yöresi », İstanbul, 1984, 45s.
14. Pars Tuğlacı. Osmanlı Mimarlığında Batılılaşma Dönemi ve Balyan Ailesi. İstanbul, 1981, 352s.
15. Pars Tuğlacı. Ayvazovski Türkiyede. İstanbul, 1983.
16. Pars Tuğlacı. Osmanlı Döneminde İstanbul Kadınları. İstanbul, 1984, 215s
17. Pars Tuğlacı. Türkçe- İngilizce Sözlük. İst., 1984.
18. Pars Tuğlacı Bulgaristan ve Türk-Bulgar İlişkileri. İstanbul, 1984. xv,558 s.
19. Pars Tuğlacı. Osmanlı Saray Kadınları. İst., 1985. 351s
20. Pars Tuğlacı. Osmanlı Şehirleri. İst., 1985.
21. Pars Tuğlacı. Geleneksel Türk Süsleme Sanatı'nda Bir Kadın Sanatçı, Arşaluy Ütücüyan. İst., 1985.
22. Pars Tuğlacı. *Mehterhane'den Bando'ya*, 1986, İstanbul, 248 s.,
23. Pars Tuğlacı. Türkçede Anlamdaş ve Karşıt Kelimeler Sözlüğü, Ankara, 1987, 3 baskı.
24. Pars Tuğlacı. English-Turkish Comprehensiv Dictionary, İst., 1987.573s.
25. Pars Tuğlacı. Tarih Boyunca İstanbul Adaları. İst., 1c. 1989. 576 s. Բ հստորրդ՝ 1995թ. 576էջ.
26. Pars Tuğlacı. Karsanların Dünyası, İst., 1988, 95s.
27. Pars Tuğlacı. *Çağdaş Türkiye. İst., 1987, c.1, 669s.*
28. Pars Tuğlacı. *Çağdaş Türkiye. İst., 1989, c.2, 805.*
29. Pars Tuğlacı. *Çağdaş Türkiye. İst., 1990, c.3, 543s.*
30. Pars Tuğlacı, İstanbul Ermeni Kiliseleri. İngilizce, Türkçe, Ermenice parallel, *İst., 1991, 451 s.*
31. Pars Tuğlacı. Resimli Türkçe- İngilizce Sözlük. İst., 1991, 4 baskı. 573s.
32. Pars Tuğlacı. Çırağan Palase. İst., 1992, 69s. «Cumhuriyet», İst., 1992.69 s.
33. Pars Tuğlacı. «Ermeni Edebiyatı'ndan Seçkiler» İst., 1992, 420s.
34. Pars Tuğlacı. Dadyan Ailesinin Osmanlı, Toplum, Ekonomi ve Siyaset Hayatındaki Rolü. İst., 1993, 460s.
35. Pars Tuğlacı. Büyük Türkçe- İngilizce Sözlük. İst., 1995, 5 baskı.
36. Pars Tuğlacı, İngilizce- Türkçe İktisadi Ticari Hukuki Terimler Sözlüğü. İstanbul, 1998, 639s.
37. Pars Tuğlacı. Türkçe- İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü., İstanbul, 2001 u 2002p.
38. Pars Tuğlacı. Tıp Sözlüğü., İst., 2002.9 baskı.
39. Pars Tuğlacı. «Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü» İst., 2002.
40. Pars Tuğlacı. İngilizce- Türkçe Economi ve Hukuk Terimler Sözlüğü İst., 2002.
41. Pars Tuğlacı. Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları. Nejet Mahfi Ayrıl, Jeyan Ayrıl Tözüm. İst., 2005.
42. Pars Tuğlacı. *Türk Operası'nun Sönmeyen Yıldızı Suna Korad» İst., 2006. 128s.*
43. Pars Tuğlacı. İsmet İnönü, Türkiye Cumhuriyeti'nin İkinci Cumhurbaşkanı İst., 2008. 452 s.
44. Pars Tuğlacı. Örnek Bir Osmanlı Vatandaşı Kirkor Zohrab Efendi İst., 2008, 100 s
45. Pars Tuğlacı. Türkçe- İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü., İstanbul, 2008.
46. Pars Tuğlacı. «Tarih Boyunca Batı Ermeniler» (5 cilt) (6.cildi tamamlamadı...).2004-09. 812s.

Բարս Թուղլաճիի Թուրքիայում հրատարակած գրքերը լույս են տեսել հետևյալ 10-ից ավել հրատարակչական տների, տպարանների կողմից՝

1. ABC KİTABEVİ YAYIN VE DAĞITIM (3)
2. İNKILAP KİTABEVİ (3)
3. ETİK YAYINLARI (2)
4. SAY YAYINLARI (2)
5. YENİ ZAMANLAR SAHAF (2. El Kitaplar) (2)
6. İNKILAP KİTABEVİ-KAMPANYA (2)
7. BELGE YAYINLARI (1)
8. PARS TUĞLACI YAYINLARI (1)
9. REMZİ KİTABEVİ (1)
10. TÜRKMEN KİTABEVİ (1)

Երբեմն նույն գիրքը, նրա տարբեր տպագրությունները հրատարակել են տարբեր հրատարակչություններ: Գրքերի մասին ազդագրերը և գրախոսականները լույս են տեսել հիմնականում «CUMHURİYET», «MİLLİYET» կենտրոնական պարբերականներում:





Համակի Ստեփանյան, Բարս Թուղաճի և դիրիժոր Արա Պետրոսյան (Ստամբուլ, Ֆերի գյուղի հայկական կենտրոնում 14 դեկտեմբեր 2005թ.)

### ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՆԱՐԵՆ

2005թ. դեկտեմբերին Ստամբուլի, Ֆերի գյուղի սրահներից մեկում նկարչական ցուցահանդեսի և պարերով մի փոքրիկ բեմադրության էինք հրավիրված: Հանդիպեցինք Թուղաճիին: Ձերն հանդիպում էր, հիշեցինք, խոսեցինք, նկարվեցինք: Այն հին բարեկամի հետ մեր վերջին հանդիպումներից էր:

Կարծեմ մահվանից 1-2 տարի առաջ էր: Նրան հանդիպեցի Երևանում, Ալադեմիայից դուրս գալիս: Վերադարձանք, մի տեղ նստեցինք ու երկար-երկար հիշեցինք անցյալի տարիները, գովեց աշխատանքներս: Չհիշեց, որ համատեղ աշխատություն պիտի հրատարակեինք և ես իմ բաժինը տվել էի... Հիշեց հորեղբորս: Խոսատովանեց, որ տարիներ շարունակ հոր պես օգնել էր իրեն, երբ ոչ ոք բացի նրանից չէր կարող լուսաբանել իր գործում առկա հազարավոր անհայտները... Թուղաճին հուզված էր:

Նա ասած, որ արդեն հոգնել է և առանց ավելորդ ձևակառույցյան խոստովանեց, որ այնուամենայնիվ սպասում է, թե Հայաստանի Ալադեմիան իրեն արտասահմանյան անդամ կդարձնի: Աշխարհի բազմաթիվ գիտական կենտրոնների, ակադեմիաների ու համալսարանների պատվավոր անդամի ու պատվավոր դոկտորի համար այնուամենայնիվ թանկ ու բաղձալի էր մնալ գնահատանքի արժանանալ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի կողմից:

Վիկտոր Համբարձումյանի մախազահության օրոք նրան Ալադեմիայի պատվավոր անդամ էին ընտրել: Ինքն էլ պատրաստ էր իր ողջ գրադարանը ժառանգել Հայաստանի Ալադեմիային:

Այս ցանկություններից և ոչ մեկը, ափսոս, չիրականացավ: Երբ 2019թ. դեկտեմբերին Պոլսում հանդիպեցի Սայաթ Թուղաճիին, պատմեց, որ մահվանից երկու տարի առաջ հոր մոտ այցիների հիվանդություն էր սկսվել:

-Որքան էլ որ փորձում էր քաքցնել, աննկատ դարձնել, մայրս և ես, որ գիտեինք նրա բնավորությունը, զգում էինք այն:


Բարսեղ Թուղաճյանն իր մահկանացուն կնքեց 2016թ. դեկտեմբերին Պոլսում: Հոգեհանգստյան արարողությունը կատարվում է 2016թ. դեկտեմբերի 17-ին Ֆերի գյուղի Սուրբ Վարդանանց եկեղեցում:

Նրա աճյունը հանգչում է Ստամբուլի Բալլըջըլ հայկական գերեզմանոցի ընտանեկան դամբարանում:



## VEFAT

Bayan Irma Tuğlacıyan, Bay Sayat Tuğlacıyan,  
 Bay Murat Tuğlacıyan, Bay ve Bayan Valhe-Ayda Tuğlacıyan (Paris),  
 Bay ve Bayan Seta Durtıay ve evladı (Paris),  
 Bayan Araksı Toutghalian (Paris), Bayan Josette Stepanian (Paris),  
 Bay ve Bayan Garen-Apı Akaeren Candan ve evladı,  
 Tuğlacıyan (USA), Sirunyan (Avusturalya), Zakarian (New York),  
 Zada (Toronto), Çiçekyan (Toronto) ve Kavafyan (New York)  
 ailelerinin çok sevgili eşi, babaları, kuzenleri ve akrabaları



# PARSEĞ TUĞLACIYAN (PARS TUĞLACI)

**(TARİHÇİ, DİLBİLİMCİ, ARAŞTIRMACI VE YAZAR)**

vefatını sayın akraba ve dostlara derin teessürle bildirir.  
 Cenaze merasimi 17 Aralık 2016 Cumartesi günü saat 14.30'da  
 Feriköy Surp Vartanants Ermeni Kilisesinde icra olunup,  
 Balıklı Ermeni Mezarlığındaki aile kabristanına defnedilecektir.  
 Taziyeler ve Giragnamudk duası Kilisenin Nazar Şirinoğlu  
 Sabitliğinde yapılacaktır.

Vahan Civanıyan Cenaze servisi 0536 3234848

Բարսեղ Թուղլազյանի մահվան լուրը մամուլում



Բարսեղ Թուղլազյանի որդու՝  
 Սարգսի հետ Կ. Պոլսի  
 «Կեղրոնական վարժարանում»  
 2019 թ. դեկտեմբերին:



016

21-88

h2

### ՀԱՍՏԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ



Թուրքագետ, աղբյուրագետ: Ծնվել է 1950 թվականին Երևանում: 1972 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1972-1997 թթ. և 2005 թվականից ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող: 1992-1993 թթ. միաժամանակ աշխատել է Հայաստանի արտաքին գործերի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի վարչությունում: 1995-1998 թթ. աշխատել է ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպություններին աղընթեր ՀՀ մշտական ներկայացուցչությունում և Շվեյցարիայում Հայաստանի գլխավոր հյուպատոսությունում (Ժնև):

Կատարել է հյուպատոսի պարտականությունները: Պատմական գիտությունների դոկտոր է(2005).

Նա «Հայատառ թուրքերեն գրականություն» և «Օսմանյան կայսրության մշակույթ» առարկաներն է դասավանդել Երևանի պետական համալսարանում, Հրաչյա Աճառյանի անվ. համալսարանում, զեկուցումներով հանդես եկել միջազգային գիտաժողովներում: Աշխատությունները նվիրված են հայատառ թուրքական գրականությանը, մատենագիտությանը, պարբերական մամուլին[3][4], Օսմանյան կայսրությունում արևմտահայության ներդրմանը: Երկերը՝

- Գևորգ Բամպուրճյան, Եր., 2018.
- Լուզինյան թագավորական տան հայ ժառանգները (հոդվածների ժողովածու). Եր., 2016.
- Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում (թուրքերեն), Եր., 2014.
- Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում (ռուսերեն), Եր., 2013. ԱՊՀ երկրների Գրան Պրի մրցանակ (2013, Մոսկվա, Մինսկ).
- Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Բ. տպ., Եր., 2012.
- Հայատառ թուրքերեն գրականությունը (ֆրանսերեն), Եր., 2012.
- Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Ա. տպ., Եր., 2011. ՀՀ Նախագահի մրցանակ (2011).
- Ցուցակ հայերէն ձեռագրերի հայատառ թուրքերէն նիւթերի եւ հայատառ թուրքերէն ձեռագրերի, Երեւանի Մաշտոցի անվան մատենադարանի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրեր, Ա մաս, Եր., 2008.
- Հայատառ թուրքերէն գրքերի եւ հայատառ թուրքերէն պարբերական մամուլի մատենագիտութիւն (1727-1958), քառալեզու, Ստամբուլ, 2005.
- Հայատառ թուրքերեն գրականությունը: (Աղբյուրագիտական հետազոտություն), Եր., 2001.
- Հայատառ թուրքերեն պարբերական մամուլ, Եր., 1987.
- Հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտություն 1727-1968, Եր., 1985.